<sup>4</sup> Ըստ այլ տուեալների՝ հայերի առաջին խումբը Խարթում է եկել Թուրքիայից 1902ին՝ որի շարժառիթը եղել է թուրքերի ոտնձգութիւններից հեռու լինելն ու հանգիստ գտնելը, ինչպէս նաեւ առեւտրի լայն շուկայ ձեռք բերելը: Միքանի տարի անց Խարթում է ժամանել հայերի առաւել նշանակալի խումբ Եգիպտոսից: Սրանք բոլորը զբաղուել են առեւտրով կամ ունեցել են հումքի մշակման ոչ-մեծ ձեռնարկութիւններ, որոնք Սուտանի բնակչութեան մէջ գտել են աշխատուծ: Հայերի եւ սուտանցիների յարաբերութիւնները սկզբից եւեթ եղել են բարիդրացիական, որի հետեանքով էլ եւս միքանի խումբ հայեր ցանկացել են բնակութիւն հաստատել Սուտան: Բնութագրական է, որ եկածների մօտ 95 տոկոսն ընդունել է սուտանական քաղաքացիութիւն: Չնայած դրան, սուտանահայերը չեն փոխել իրենց կենցաղը, հայկական սովորութիւնները, կենսակերպը, մշակոյթը:

թեան, համայնքի ղեկավար մարմինն էր եօթ հոգուց բաղկացած «Վարչական ժողով»ը որն ընտրուում էր տեղի հայերի ընդհանուր ժողովում, երկամեայ դրութեամբ, իսկ սկսած 1958ից՝ եռամեայ դրութեամբ: Ըստ կանոնադրութեան, վարչական ժողովի նախագահը հայերի ներկայացուցիչն էր տեղական իշխանութիւնների մօտ եւ իրաւասու էր կարգադրել կրօնական ու ազգային բոլոր հարցերը: Համաձայն համայնքի կանոնադրութեան՝ կուսակցական գործունէութիւնը գաղութում արգելուած էր, սակայն դա չի նշանակում, որ կուսակցականներ գաղութում չկային:

Սուտանի հայօճախի վարչութեան նախագահ Շաւարշ Վանեանը Եգիպտոսի հայոց առաջնորդ, Մամբրէ սրբ. Սիրունեանին 1949 Յուլիսի 27ին գրած նամակով տեղեկացնում է, որ 1949 Յունիսի 19ին կայացած ընդհանուր ժողովում ընտրուել է ղեկավարելու նոր վարչութիւնը<sup>5</sup>, որը պաշտօնավարելու է երկու տարի՝ 1949-1951:

1954-65՝ աննշան փոփոխութիւններով, եռամեայ պաշտօնավարութեամբ վերընտրուել է վարչութեան հետեւեալ կազմը.- Գրիգոր Պոտուրեան (ատենապետ), Թորոս Պարսամեան (փոխատենապետ), Տիգրան Յարութիւնեան (ատենադպիր), Եփրէմ Պենկեան (փոխատենադպիր), Նազարէթ Էօմիրեան (գանձապահ), Վաղինակ Լուսինեան (փոխգանձապահ), Լեւոն Չոլաքեան (խորհրդական):

1983 Նոյեմբերի 10ին տեղի է ունենում սուտանահայ համայնքի ընդհանուր ընտրական ժողով, որը 1983-86ի համար ընտրում է նոր վարչութիւն, հետեւեալ կազմով.- Կարօ Վանեան (նախագահ), Պետրոս Տոլանճեան (փոխնախագահ), Հրաչ Հեքիմեան (ատենադպիր), Սուրէն Իսքենտէրեան (փոխատենադպիր), Հրաչ Մարտիկեան (գանձապահ), Գրիգոր Լուսինեան (փոխգանձապահ), դոկտոր Ասատուր Էքմէքճեան (խորհրդական): Ժողովը, Կարօ Վանեանի առաջարկով, Էտուարտ Ճերէճեանին<sup>6</sup> ընտրում է սուտանահայ գաղութի վարչութեան ցկեանս պատուոյ նախագահ:

Առաջին հայկական դպրոցը Սուտանում բացուել է Կետարէֆում, 1930ին: Կետարէֆի ազգային վարժարանի (տարրական նախակրթարան, երկսեռ աշակերտութեամբ) համար ուսուցչի ընտրութեան հարցում հաշուի

---

<sup>5</sup> Այն բաղկացած էր Վանեանից (նախագահ), Արտուշ Ղազարեանից (փոխնախագահ եւ ատենադպիր), Երուանդ Մարկոսեանից (գանձապահ), Յակոբ Փանոսեանից (փոխգանձապահ), Կարապետ Չոլաքեանից (խորհրդական):

<sup>6</sup> Ազգանունը նշում է նաեւ «Ճորճեան»: Էտուարտը որդին է Գէորգ եւ Պարկեշտուհի Ճերէճեանների: Գէորգ Ճերէճեանը քիմիագէտ, Յիւրիսի համալսարանի դոկտոր-փրոֆեսոր էր. Պարկեշտուհին դուստրն էր Սուտանի հայօճախի առաջին նախագահ՝ Նազարէթ Քիւրքճեանի եւ քոյրը լոնտոնաբնակ Սարգիս Քիւրքճեանի: Է. Ճերէճեանը 1939ին եկել է Սուտան, Խարթումում գործելու իր հօր եւ եղբոր հիմնած հաստատութեան մէջ, որը շնորհիւ իր անխոնջ ջանքերի, մեծ վերելք է ունեցել: Նկատի ունենալով նրա վաստակը, Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակով, նրան շնորհուել է Ներսէս Շնորհալի շքանշանը:

են առնուել մի շարք հմտություններ եւ ունակություններ: Այսպէս, Կետարէֆի հայերի վարչութեան նախագահի՝ Գահիրէի հայոց առաջնորդարանին յղած 1937 Մայիսի 24ի նամակում ասում է որ «Նախընտրելի է, որ ուսուցիչն իմանայ նաեւ անգլերէն ու արաբերէն լեզուները, որպէսզի ի վիճակի լինի տալու նշուած լեզուներու նախնական իմացութիւնը: Ամսավճարը պիտի լինի շուրջ 8 ոսկի, բացի բնակարանն ու Եգիպտոս-Կետարէֆ երթելեկէն»: Ուսուցիչ գտնելու հարցը խիստ դժուար է եղել առաջին հերթին կլիմայական պայմանների պատճառով եւ դիմորդներ քիչ են եղել:

Քանի որ հայերի գերակշիռ մասը հանդիսանում է Սուտանի քաղաքացի, հայ բնակչութեան քաղաքացիական կացութեան աքթերի գրանցումը կատարում է, ընդունուած կարգի համաձայն, Սուտանի պետական հաստատություններում: Այդուհանդերձ, հայօճախում այդ բոլոր աքթերը գրանցում են նաեւ հայկական եկեղեցու մատեաններում եւ ուղեկցում համապատասխան եկեղեցական քրիստոնէական ծիսակարգով:

Սուտանում հայերի թիւը սկզբնական շրջանում եղել է շուրջ 200 հոգի: Հայօճախը իր ծաղկման շրջանում՝ 1940ականներին, ունեցել է շուրջ 1000 հայ: Այդ շրջանին, հայօճախն ունէր երգչախումբ եւ թատերական խմբակ: Ազգային տօների առթիւ համայնքի անդամների համար կազմակերպւում էին դասախօսություններ, երեկոյթներ եւ այլ միջոցառումներ: Դաստիարակչական գործունէութիւն էին ծաւալում Հայ Երիտասարդաց Միութիւնը (ՀԵՄ), Հայուիւեաց Բարեսիրաց Միութիւնը (հիմն. 1938), որոնք կազմակերպւում էին մարզահանդէսներ եւ թատերական ներկայացումներ, ինչպէս եւ ծաւալում բարեսիրական գործունէութիւն:

Յետագայում՝ 1950-60, սուտանահայերի թիւը նուազել է 800ի: Այդ շրջանին հայօճախի մշակութային եւ կազմակերպական աշխատանքները ղեկավարել է ընդհանուր ժողովի կողմից ընտրուած կոմիտէն: 2 Փետրուար 1953ին ՀԵՄի Հրանտ Մարգարանի ներսում կազմակերպւում է ընթերցասրահ-մատենադարան, որտեղ մէկտեղուած գրքերով տեղի երիտասարդութեանը պիտի «ճանաչեցնեն հայ ազգի, հայրենիքի եւ եկեղեցիի պատմութիւնը, հայի դիմագիծը անաղարտ պահելու նպատակով»:

1989ի տուեալներով Սուտանում հայերի թիւը չէր անցնում 350ը, որոնք մեծ մասամբ բնակւում էին մայրաքաղաք Խարթումում: Այստեղ առկայ էին խառն ամուսնութիւնները: Հայերը հիմնականում վաճառականներ էին, մի փոքր մասն աշխատում էր պետական հիմնարկութիւններում, կային նաեւ գրասենեակային աշխատողներ եւ արհեստատրներ: Երկրի քաղաքական կեանքին հայերը չէին մասնակցում:

Հայերի թոփ նկատելի նուազումը հիմնականում բացատրւում է Սուտանում տարրուղ սեփական ձեռնարկութիւնների ազգայնացման քաղաքականութեամբ: Արդէն 1970ականներին Սուտանի կառավարութիւնը օրէնք էր ընդունել խոշոր ձեռնարկութիւնների ազգայնացման մասին, որի հետեւանքով հայկական ձեռնարկութիւնների մեծ մասն ազգայնացուել էր: Ունե-

նալով նման զգալի կորուստներ հայերի մեծամասնությունը լքել է երկիրը: Արտագաղթի երկրորդ մեծ հոսքը եղել է 1970ականների վերջին, երբ երկրում ընդունուել են իսլամական օրէնքներ: Հայերը հիմնականում արտագաղթել են Միացեալ Թագաւորութիւն, Քանաւտա, Աւստրալիա, ԱՄՆ եւ այլ արեւմտեան երկրներ:

Սուտանի հայօճախի կեանքի մասին հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում Սարգիս սարկաւազ Մանուկեանը՝ արքեպիսկոպոս Չինչինեանին իր գրած 1985 Հոկտեմբերի 21 թուակիր նամակում. «...*Խարթումի ազգային, եկեղեցական, ընկերային կեանքը կը շարունակուի բնականոն ընթացքով, կրելով անշուշտ երկրին քաղաքական-տնտեսական վերիվայրումները: Այս տարի խարթումի Ստեփանեան Ազգային երկսեռ վարժարանի աշակերտութեան թիւը 17ն է, չունինք ասարտական՝ 5րդ դասարանի աշակերտներ: Գաղութի անդամներու քանակի պակասով, գոյացած է նաեւ որակի պակաս, ազդելով գաղութի մշակութային կեանքին, ուր ամէն անգամ նմանօրինակ ձեռնարկները կը հանդիպին լուրջ դժուարութիւններու: Եկող շաբաթ հաւանաբար սկսին միարարնոց թատրոնի փորձերը եւ շաբաթական հայագիտական դասախօսութիւններու երեկոները: Կարապետ քահանայ Մենէճեանը պիտի փորձէ Կիրակի օրերը, պատարագէն յետոյ, երկրասարդութեանը բացատրել ազգային, եկեղեցական սովորութիւններն ու ասանդոյթները, բայց տակաւին յայտնի չէ թէ երբ»:*

Խարթումի հայկական Ստեփանեան վարժարանի եւ Պարսամեան մանկապարտէզի սեփական շէնքը կառուցուել է 1930ին<sup>7</sup>: Դպրոցը 1973ին ունեցել է 40 աշակերտ: Այն փակուել է 1977ին՝ Սուտանի իշխանութիւնների կողմից: Ուսման վարձը խիստ խորհրդանշական էր՝ տարեկան 2 սուտանեան ֆունտ: Աշակերտները ապահովուում էին ծրի սննդով, դասագրքերով եւ փոխադրամիջոցով, որը յատուկ առանձնացուած էր աշակերտների երթելեկութեան համար:

Խարթումն ունի նաեւ իր հայկական եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որը կառուցուել է 1937ին: Ինչպէս վերը ասուեց, այդ թուականներին են հիմնուում նաեւ սուտանահայ մշակութային եւ երիտասարդական կազմակերպութիւնները: Վերոյիշեալ երեք հաստատութիւններն էլ գտնուում են սուտանահայ ազգային վարչութեան հովանաւորութեան տակ:

Խարթումի նորակառոյց եկեղեցին կահաւորելու նպատակով, սուտանահայերից շատերը նուիրաբերութիւններ են արել ի նպաստ եկեղեցու՝ ա-

---

<sup>7</sup> Դպրոցը ամէնօրեայ էր, դասաւանդումը կատարում էր հայերէն: Դպրոցին կից գործում էր եռամեայ մանկապարտէզը, որի շրջանաւարտները ուսումը շարունակում էին դպրոցում, ուր ուսումնառութիւնը տետում էր հինգ տարի: Դպրոցի շրջանաւարտները հիմնականում յաճախում էին Խարթումի անգլիական «Կոմբոն» քոլէճը, ուր պարտադիր կարգով հայ աշակերտները շաբաթական երկու անգամ ունենում էին հայոց լեզուի պարապմունք: Կային նաեւ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում սովորող աշակերտներ:

նօթներ ու նկարներ, սպասք, արծաթեայ խաչեր, աշտանակներ, բուրվառներ, մասնատուփեր, խնկամաններ, արծաթեայ ավետարան, սուրբ գրքեր են.: 1956ին հայօճախի ղեկավարութիւնը նամակ է յղել Մամբրէ Եպիսկոպոս Սիրունեանին, որ նորակառոյց եկեղեցին, ի պատիւ իր բարերար, հանգուցեալ Գրիգոր Սեֆէրեանի՝ կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ եկեղեցու օժման արարողութեանը անպայման ներկայ գտնուեն Սեֆէրեան ընտանիքի անդամներ:

Նախկինում եկեղեցու բոլոր հոգեւոր հովիւները եկել են Միջին Արեւելքի հայ համայնքներից: Պաշտօնապէս եկեղեցին ենթակայ է Եգիպտոսի հայ եկեղեցու առաջնորդութեանը: Եկեղեցու հովիւը՝ քահանան, պէտք է լինէր ներկայանալի եւ կարող ներկայացնելու գաղութը կառավարական եւ օտար պաշտօնական շրջանակներում եւ այս նպատակի համար կարողանար արտայայտուել անգլերէն եւ արաբերէն: Կարող լինէր դպրոցում դասաւանդելու կրօն, պատմութիւն եւ անգլերէն, օժտուած լինէր վարչական կարողութեամբ եւ կարողանար պահպանել ու տեսականացնել եղած համերաշխ մթնոլորտը գաղութում:

Սուտանի հայօճախը բարեկեցիկ է: Ոչ-լրի տուեալներով, 1976ին ազգապատկան միջոցները կազմում էին՝ շուրջ 120,000 սուտանական ֆունտ կանխիկ դրամ եւ շուրջ 500,000 սուտանական ֆունտ անշարժ գոյք: Այս միջոցները հիմնականում գոյացել են ունեւոր անձանց նուիրատուութիւններից<sup>8</sup>: Ստացուող եկամուտները լիովին ծածկում էին դպրոցի, մանկապարտէզի, ակումբի, պահպանութեան եւ այլ միջոցառումների ծախսերը: Տրում էին նաեւ նպաստներ՝ համայնքի առաւել կարիքաւոր ընտանիքներին:

Սուտանի հայ համայնքում կարելի է առանձնացնել որոշ յարգաւած անձնաւորութիւնների, որոնք մեծ դեր են ունեցել գործարար աշխարհում: Դրանցից է Գրիգոր Պոտուրեանը, որը զբաղուել է Արեւմտեան Գերմանիայից, Միացեալ Թագաւորութիւնից եւ այլ երկրներից դեղերի ներմուծմամբ եւ ունեցել իր դեղագործական գործարանը: Պոտուրեանը յաճախ եղել է համայնքի նախագահը: Վերջինիս ամենայն հայոց Վազգէն Ա. կաթողիկոսի կողմից շնորհուել է ոսկէ մետալ եւ Հայաստան այցելութեան անձնական հրաւեր: Նշանաւոր այլ դէմք է հանդիսացել Պարսամեանը՝ «Պարսամեան Մոթօքար» ընկերութեան ղեկավարը, որը զբաղուում էր մարդատար ինքնաշարժների եւ երկաթգծի սարքաւորումների առքով Միացեալ Թագաւորութիւնում ու իր հիմնարկի միջոցով ապահովում էր Սուտանում սննդի մէջ օգտագործուող թղթի պահանջարկի 80 տոկոսը: Միւս նշանաւոր դէմքը

---

<sup>8</sup> Սուտանի հայերից շատերը բազմիցս նուիրատուութիւններ են կատարել: Այսպէս, օրինակ՝ Յունաստանի Կոս կղզում մահացած Գարեգին Զատուրեանի կտակի համաձայն, Խարթումի եկեղեցուն եւ Ազգային վարժարանին կտակուել է 500 սուտանական ոսկի: Նախկին սուտանահայ բարերար Ֆիլիփ Աբգարեանը Խարթումի Ազգային վարժարանին է նուիրել Օմտուրմանի իր շէնքն ու հողը:

Էտուարտ Ճորճեանն էր, որը Արեւմտեան Գերմանիայի Bauer ընկերութեան գործակալն էր, Aspirin դեղագործական ընկերութեան ներկայացուցիչը: Նա սպասարկում էր Սուտանը դեղօրայքով եւ քիմիական արդիւնաբերութեան այլ ապրանքներով, գործակցում Լեհաստանի եւ Չեխոսլովաքիայի առեւտրական կազմակերպութիւններին: Նշանաւոր էին նաեւ.-

- Նորայր Չոլաքեանը, որը ունէր ալիմիւնի կերպընկալ նիւթի, ամանեղէնի եւ մետաղեայ իրերի գործարան, որտեղ ալիմիւնէ եւ արծնապատ ամանեղէնի ընկերութեան եկամտի 25 տոկոսը իրենն է: Չոլաքեանը կաշուի, ալիմիւնի, արտադրութեան գործարանատէր:
- Կարօ Վանեանը, որը «Արարատ» միջազգային ընկերութեան, ֆրանսական Peugeot ընկերութիւնների ղեկավարն էր, ճափոնական մղաններ եւ հողափորիչների վաճառքի ներկայացուցիչ:
- Հրաչ Մարտիկեանը՝ գերմանական Wolkswagon եւ Mercedes ընկերութիւնների ներկայացուցիչ, ինչպէս նաեւ ճափոնական եւ անգլիական ելեկտրաձին մեքենաների վաճառական:
- Ճոն Պոտտութեանը Aspro դեղագործական ընկերութեան ներկայացուցիչն էր:
- Տիգրան Բարձիկեանը National Engineersի տեղական մասնաճիւղի պետական ներկայացուցիչը, միջազգային մի շարք ընկերութիւնների ներմուծող-արտահանող:
- Վարուժան Չիրքինեանը՝ կաշուի եւ կօշիկի գործարանատէր:
- Պետրոս Քոլանճեանը՝ ֆրանսիական Lancome օճանելիքի ընկերութեան ներկայացուցիչ:
- 1902ին հայերը հիմնել են «Քիւրքեան Եղբարք» նաւահանգստային ընկերութիւնը, որը իր մասնաճիւղերն է ունեցել Սուտանի բոլոր խոշոր քաղաքներում:
- Գրիգոր Պալճեանը 1903ին հիմնել է Սուտանում առաջին գիւղատնտեսական քոլէճը:

Սուտանում բամպակի արտադրութեան մէջ հանրաճանաչ է եղել յայտնի «բամպակի արքայ» Իզմիրլեանը, որը միեւնոյն ժամանակ Խարթումում բացել է գիւղատնտեսական սարքերի վերանորոգման գործարան:

Նիւ Եորքի Քիւրքեան շինարարական ընկերութեան Սուտանի մասնաճիւղը, որտեղ աշխատում էին հայ մասնագէտներ, կառուցել է ճանապարհներ, կամուրջներ, էլեկտրակայաններ, գործարաններ:

Սուտանի անկախացումից յետոյ էլ (1956) հայօճախը ապրել է լիարժէք կեանքով ու իր գործունէութիւնը ծաւալել, տեղի իշխանութիւնների վստահութիւնը վայելելով: Վարուժան Վանեանը, Գրիգոր Գափանճեանը, Եզնիկ Թերզեանը, Ահարոն Մալխասեանը, Արտուշ եւ Պետրոս Դանիէլեան եղբայրները, Ենովք Թագուորեանը, Մինաս Պէրպէրեանը զբաղեցրել են պետական պաշտօններ:

Այսօր Սուտանում մնացած մօտ 50 հայերը Կիրակի օրերը երեկոյեան են եկեղեցի այցելում, քանի որ հիմնականում մահմետական բնակչութեամբ այդ երկրում Կիրակին աշխատանքային օր է: Պատարագից յետոյ նրանք Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու բակում սուրճ են ըմպում եւ վերջիշում հին օրերը, երբ հայկական համայնքն ամէլի մեծ էր: Գործում է եկեղեցուն կից կիրակնօրեայ դպրոցը՝ միքանի աշակերտներով: Դպրոցի կազմակերպական հարցերով զբաղւում է եկեղեցու քահանայ, հոգեւոր հովիւ հայր Գաբրիէլ Սարգսեանը:

Սուտանահայերը անմասն չեն մնացել հայ ժողովրդի կարեւոր ու նշանակալի իրադարձութիւններից: Նրանք կազմակերպել են հայոց Յեղասպանութեան յուշատօնի (բանախօս՝ եգիպտահայ Յակոբ Համբիկեան), Սարդարապատի հերոսամարտի, Հայաստանի անկախութեան, նուիրուած ձեռնարկներ: Հայօճախը սզացել է նաեւ 1988 Դեկտեմբերին Հիսիս-արեւմտեան Հայաստանին հարուածած երկրաշարժի զոհերին:

### **ARMENIANS OF SUDAN (Summary)**

**Anna Avakian**

annaavagyan\_07@gmail.com


The Armenian community of Sudan took shape in the late 19<sup>th</sup> century and gradually grew in the early 20<sup>th</sup> century. The first Armenian settlers came from the districts of Arapgir and Kharpert and the province of Tokat in Sebastia district. After 1915 Armenian Genocide survivors settled in Sudan, and the community grew in number from 200 to 800, mostly living in the capital, Khartoum.

Until 1957 the spiritual needs of the community were catered to by the Prelacy of Cairo, through visiting clerics. The Armenian school of Khartoum was founded in 1942 and the church in 1957. The land of both buildings was donated by the Sudanese state. The construction of the church was financed by Krikor Seferian, a benefactor from Milano.

The community had its youth union, women's association and church board. The community was involved in Pan-Armenian fundraising and maintained a line of contact with the Committee of Cultural Relations with Diaspora Armenians, mostly concerning educational and cultural issues.

# Փոքրապատում Սուտանի Հայոճախի ՀԲԸՄ մասնաճիւղի<sup>1</sup> (1909-1945, 1957)

Անդրանիկ Տազէտեան  
adakessian@haigazian.edu.lb



ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղի առաջին անդամական ժողովը. 26 Դեկտեմբեր 1910

Սուտանի մէջ ՀԲԸՄ մարմին մը գոյութիւն ունեցած է 1909ին, ատենադպրութեամբ Յովհաննէս Սեքսէնեանի, "գանձապահութեամբ" Ս. Քիւրք-

<sup>1</sup> Փոքրապատումը շարադրած ենք հիմնուելով ՀԲԸՄ Գահիրէի արխիւին մէջ Սուտանի վերաբերող եւ պայմանականօրէն «Խարթում 50» եւ «7» վերնագրած թղթապանակներուն վրայ: Առաջինին մէջ կան էջեր, որոնց մեկանը գունատած ըլլալով գրեթէ անընթեռնելի են: Ան կ'ընդգրկէ 10 Յունուար 1911--22 Նոյեմբեր 1941 շրջանին վերաբերող 735 փաստաթուղթ: Երկրորդ թղթապանակը կը հաշուէ 160 փաստաթուղթ եւ կ'ընդգրկէ 31 Յունուար 1941--30 Յունուար 1957 շրջանը: Թղթապանակները չեն պարունակեր գաղթօճախին նուիրուած որեւէ տեղեկագիր, նիւթերը մասնակի, պարագայական լրատուութիւններ են, երբեմն միակողմանի՝ սկզբնական կամ պատասխան նամակի բացակայութեան պատճառով: Երբեմն կողմնակի արտայայտութենէ մը կ'իմանանք դպրոցի գոյառումը, կամ ազգային մարմինի կազմումը, կամ զաւակներու Մելգոնեան Կրթական Հաստատութիւնի դրկուիլը: Ոչինչ կը գտնենք համագաղութային ձեռնարկներու մասին: Տուեալներու ընդմիջումներու պատճառով կարելի չէրաւ վերականգնել նոյնիսկ մասնաճիւղին գործունէութեանց յարաբերաբար ամբողջական շղթան: Ծնորհակալութիւն կը յայտնենք ՀԲԸՄ Գահիրէի պատկան մարմիններուն, որոնք ազնուօրէն արտօնեցին այս եւ Եթովպիոյ հայօճախին վերաբերող նիւթերուն օգտագործումը:

ճեանի<sup>2</sup> եւ ատենապետութեամբ Գէորգ Ճիլէրճեանի: 26 Դեկտեմբեր 1910ին, Օմտուրմանի մէջ, ներկայութեամբ տեղի եւ Խարթումի ՀԲԸՄ 34 անդամներէն 16ին<sup>3</sup>, կը զումարուի անդամական ժողով, ուր նոր մարմնի անդամներ կ'ընտրուին Ճիլէրճեան (15 քուէ), Սեքսէնեան (12 քուէ), Քիրքճեան (7 քուէ), Սեդրակ Ճորճ (5), Գէորգ Իշխանեան եւ Պետրոս Գոլանճեան (3ական քուէ), Գրիգոր Գրիգորեան (2) եւ Կարապետ Օհանեան (1)<sup>4</sup>:

Այդ օրերուն Սուտանի մէջ ՀԲԸՄիութեան անդամները կը բնակէին.- Աթաբար՝ Գէորգ Յարութիւնեան, Խարթում՝ Տիգրան Գմգմեան, Օննիկ Թումանեան, Խաչիկեան, Իսմայիլ Հաճիվելի<sup>5</sup>, Ճիլէրճեան, Ս. Ճորճ, Ստեփանեան, Ս. եւ Ս. Վանեան, Սահակ եւ Փայլակ Տէրունեան, Հալֆայա՝ Գոլանճեան, Թորոսեան, Մալումեան<sup>6</sup>, Կարապետ Փ. Փափագեան, Օհանեան, Տուէմ Յարութիւն Նազարէթեան, Փորթ Սուտան՝ Լուսառատ Խաչատուրեան, Քամիլի՝ Տիգրան Գասպարեան, Քոտորք՝ Յովսէփ եւ Փիլիպոս Աբգարեան, Օմտուրման՝ Ասատուր Գրիգորեան, Գ. Կ. Գրիգորեան, Իշխանեան, Իսկենտէրեան, Նազարէթ Խանճեան, Սալէրեան, Սեքսէնեան, Ղ. Սոլաքեան եւ որդի, Հ. եւ Ս. Քիրքճեան եւ Օպէյտ-Քորտոֆան՝ Սարգիս Իզմիրլեան:

27 Յունուար 1911 թուակիրով ՀԲԸՄ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը (ԳԿՅ)<sup>7</sup> կը վաւերացնէ նորընտիր մարմինը, որով կեանքի կը կոչուին ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղն (ՍՄ) ու անոր վարչութիւնը (ՍՎ), Ճիլէրճեանին կը դրկուի կնիք ու տեղեկագրեր: ՍՄն որոշ իրաւականութիւն ձեռք կը բերէ նաեւ շնորհիւ Խարթումի քաղաքային դատաւոր Ն. Աբգարեանի:

<sup>2</sup> Փաստաթուղթերէն անցողակիօրէն կը յիշատակուի, թէ Սուտանի գաղթածախը յառաջացած է հոն հաստատուած միքանի հայ վաճառականներու շնորհիւ (որոնց շարքին Նազարէթ Քիրքճեան), որոնց յետոյ միացած են ուրիշներ:

<sup>3</sup> Ներկայ անդամներն էին.- Գոլանճեան, Գ. Գրիգորեան, Աբրահամ Թորոսեան, Իշխանեան, Կարապետ Իսկենտէրեան, Յակոբ Խաչիկեան, Ճիլէրճեան, Ս. Ճորճ, Վահրամ Մալումեան, Գրիգոր Սալէրեան, Սեքսէնեան, Սոլաքեան եւ որդի, Յակոբ Ստեփանեան, Ս. եւ Ս. Վանեան, Հ. Քիրքճեան, Ս. Քիրքճեան, Օհանեան: Կը բացակայէին Ասատուր Գրիգորեան եւ Աւետիս Տէրտէրեան:

<sup>4</sup> Քուէախոյզ մարմինը անդամներ՝ Սալէրեան, Հ. Քիրքճեան եւ Իսկենտէրեան:

<sup>5</sup> Ան թուրք էր, իր անդամակցութիւնը կը դադարեցնէ 1918ին:

<sup>6</sup> Նիւթերուն մէջ կը հանդիպինք Մալլեան-Մալումեան, Սալլեան-Սալէրեան, Պրճիկեան-Պիճիկեան, Փեշտըմալճեան-Փեշտիմալճեան եւն. տարբերակներուն: Բոլորը միօրինականացուցած ենք:

<sup>7</sup> Այնուհետեւ եւս, ՍԿն միշտ կ'ենթարկուի ԳԿՅի վաւերացման: Մինչեւ 18 Նոյեմբեր 1925ի ՀԲԸՄ ԺԸ. ընդհանուր ժողով, ԳԿՅն կը պահէ իր այս անուանումն ու գործադիր հանգամանքը, որմէ ետք ան կը վերածուի Շրջանակային Յանձնաժողովի (ՇՅ), որուն ենթակայ կ'ըլլան Եգիպտոսի, Սուտանի, Հնդկաստանի, Միջագետքի, Պաղեստինի, Սուրիոյ, Թուրքիոյ եւ Յունաստանի մասնաճիւղերը եւ հոն գործող որբախնամ, նպաստի եւ այլ հաստատութիւնները:

Յարաբերաբար դիրքին կ'ըլլայ կազմումը ՍՄին, որովհետեւ հոն արդէն կային բաւական թիւով ՀԲԸՄի անդամներ, մինչ նախորդ ազգային կազմակերպութիւններ չբաջալերող տպաւորութիւն թողած էին<sup>8</sup>: ՍՄի հիմնումով ներսուտանահայ յարաբերութիւններու առողջ ցանց մը եւ ՍՄ-ԳԿՅ ամուր գործակցական հաղորդակցութիւն մը կը յառաջանայ<sup>9</sup>: Միաժամանակ, ՍՄն կ'ամուրջ կը ծառայէ սուտանահայերու կողմէ այլ հայկական հիմնարկներու (Պոլսոյ Միացեալ Ընկերութիւն, Պոլսոյ Ազգային Հիւանդանոց, Համազգային) հետ հաղորդակցելու համար<sup>10</sup>:

ՍԿն գործի լծուելով կ'արձանագրէ 17 բաժանորդ՝ «Միութեան հրատարակուելիք ամսաթերթին»<sup>11</sup>, եւ կ'անդամագրէ նոր անդամներ՝ Յարութիւն Առաքելեան, Աղազար Եկէնեան, Յակոբ Զուլալեան, Լիւթֆիկ Խանճեան, Պետրոս Մարաշլեան, Յակոբ Խաչիկեան, Փայլակ Տէրունեան, Յարութիւն Տիարպեքիրեան, որով առաւել կ'ընդարձակուի ՍՄի աշխարհագրական

---

<sup>8</sup> Սեքսէնեան, օրինակ, 1911ին պիտի գանգատէր թէ սուտանահայերէ կը հաւաքուէին ուշագրաւ գումարներ՝ նպատակներու համար (օրինակ՝ «ինքնապաշտպանութեան» համար հաւաքուած էր շուրջ 200 ոսկի) որոնց հեղինակները կը մնային անձանօթ: Ան կը հաւաստէր թէ կարելի է գումարներ հաւաքել ծանօթ հասցէներով, ինչպէս է ՀԲԸՄը: Հուսկ, 1916ին՝ ՍԿ ատենապետը պիտի յայտարարէր՝ «Սուտանի մէջ հայ չկայ որ չէ անդրամագրուած ՀԲԸՄին»:

<sup>9</sup> Յետազգային պէտք պիտի ըլլար միջնորդութիւններ ուզել եգիպտահայ ազդեցիկ դէմքերէ սուտանահայ կարգ մը հայերու աշխատանքի բարենպաստ պայմաններ յառաջացնելու համար:

<sup>10</sup> Սուտանահայեր Պոլիս կ'երթան պսակուելու, ոմանք իրենց ընտանիքները կը թողուն Գահիրէ, ոմանք - կը բաժանորդագրուին *Արեւելեան Մամուլին*, ուրիշներ՝ *Հայաստանի կոչնակին*: ԳԿՅն եւս գաղութի անդամներու առնչուող հարցեր կը կարգաւորէ ՍՄի միջոցով, ինչպէս՝ որբուհիներ Մարթա Չեփրմէճեանի եւ Մարի Աւետիսեանի (16-18 տարեկան), աւելի ետք՝ 1934ին Յ. Ստեփանեանի՝ ՀԲԸՄին կատարած կտակին պարագաները: Աւելի ետք, 1941ին, Մանչեսթըր արձանագրուած The Northern Sudan estates Ltd. ընկերութեան եւ Սուտանի Soc. du Naphte S.A. A.J. Mantacheffe հաստատութեան նուիրատուութիւնները պիտի ստացուէին ՀԲԸՄ Պէյրութի մասնաժողովին կողմէ:

<sup>11</sup> *Միութիւնը* – հակառակ «թերի եւ անկանոն առաքումներու» հիմնական տեղեկատուն պիտի ըլլար ՀԲԸՄի եւ ընդհանրապէս հայկական իրադարձութեանց: Ան տարեկան դրութեամբ պիտի հրատարակէր անդամացանկերը մասնաճիւղերուն, նուիրատուութիւններն ու որբի որդեգրումները, որոնց ուշադրութեամբ կը հետեւէին տարբեր գաղութներու անդամներն ու լայն շրջանակներ:

*Միութեան* բաժանորդներու թիւը սկզբնական 18էն կը բարձրանայ 22ի՝ 1912 Ապրիլին ու կը հասնի 59ի՝ Դեկտեմբեր 1912ին, կը նուազի 45ի՝ 1913ի աւարտին, 1914ին՝ 28ի, 1915ին՝ 24ի, 1917ին՝ 20ի, 1918ին՝ 17ի: Աւելի ետք, 1926ին *Միութիւնի* բացառիկէն 40 օրինակ կը դրկուի Սուտան՝ առ ի տեղեկատուութիւն եւ ծանուցում: 1927ին բաժանորդներուն թիւը կը բարձրանայ 38ի:

ընդգրկումը<sup>12</sup>, մինչ իր շարքերուն մէջ կը հաշուէ ասպարէզով դերձակ, երկրագործ, ժամագործ, լուսանկարիչ, ճաշարանապետ, մեքենագետ, յանձնակատար, պաշտօնեայ, վաճառական են.:

ՍՎԻ եւ ԳԿՅԻ միջեւ պարբերական հաղորդակցութիւնները կ'առնչուին անդամավճարներէն գոյացած գումարներու առաքման, ԳԿՅԻն կողմէ հանգանակութիւններու, գործունէութեանց համակարգման եւ պարագայական հարցերու: ԳԿՅԻ ՍՎԻն կը յուշէ ՀԲԸՄ օրակարգի հրատապ կէտերէն միքանին. «նպաստի անհատնում խնդիրքներ, մին քան միւսը ստիպողական, դժբախտաբար կը մնան առանց նկատարման, միութեան տակաւին համեստ միջոցները չներելով պէտք եղած գոհացումը տալ գէթ ամէնէն անհրաժեշտներուն... Սատունի եւ առ հասարակ Մուշի շրջանակի գիւղացի ժողովուրդը յետին ծայր թշուառութեան մատնուած է, եւ որպէսզի Միութիւնը կարենայ օգնութեան հասնիլ եւ արմատական միջոցներ գործադրել այդ խանդաղատելի համայնքին ի նպաստ, անհրաժեշտ է որ Միութեան բոլոր մասնաճիւղերը իրենց անվերապահ եւ խանդավառ աջակցութիւնը նուիրեն ժողովու...»: Սակայն ՍՎԻ միջոցները սահմանափակ էին. գաղութը փոքրաթիւ էր, անդամները ցրուած տարբեր քաղաքներ եւ անդամավճարներու գանձումն իսկ դժուար կը կատարուէր:

1910ականներուն սուտանահայոց թիւը կը բարձրանայ 110ի, նոր դէմքեր կը յայտնուին գաղութին մէջ<sup>13</sup>, ինչպէս՝ վաճառականեր Աւետիս Գաբրիէլեան, Կարապետ Թոքթաթեան, Գալուստ Խաչատուրեան, Սայիտ Հիւրմիւզ, Յակոբ Ղազարեան, Յակոբ Յովհաննէսեան, Ֆիլիփ Տէրունեան, Քեչեան եղբայրներ եւ Խաչիկ Քիրքեան, պաշտօնեաներ Արշակ Զեքիեան, Գէորգ Պէրպէրեան, Արտաշէս Տէրմատթէոսեան, մասնագէտ երկրագործ Գրիգոր Յ. Պոզաճեան եւ սրճարանապետ Յակոբ Հեքիմեան: Ասոնք կ'անդամակցին ՍՄԻն, անդամներուն թիւը բարձրացնելով 47ի<sup>14</sup>: 1911ին ՍՎԻ կը գումարէ 7 վարչական եւ մէկ անդամական ժողով, կը գոյացնէ աւելի քան 4080ե.դ.՝ մուտքի տուրք-անդամավճար-նուիրատուութիւններէ:

<sup>12</sup> 1912ին անոր աշխարհագրական տարածքը կ'ընդգրկէ Աթպարա, Թեւֆիքիյէ, Խարթում, Կետարէֆ, Հալֆայա, Վատ Մետանի, Տուէմ, Ռեճաֆ, Փորթ Սուտան, Քամիլն, Քոտոք, Օմտուրման, Օպէյտ-Քորտոֆան:

<sup>13</sup> Այս շրջանին գաղութ ժամանած եւ անկէ մեկնած անձերուն թիւը մեծ չի թուիր. 1912ին գաղութէն կը մեկնի 5 հոգի՝ Գուլանճեան կը մահանայ, Լուպֆիլ Խանճեան կը մեկնի Սամսոն, Հեքիմեան՝ Աղեքսանդրիա, Յակոբ Յովհաննէսեան՝ Նիկոսիա եւ Օննիկ Թումանեան (անձնաթ.): 1916ին եգիպտահայ Օննիկ Պաշպեղիկեանեան եւ Պոզոս Շահինեան կը հաստատուին Սուտան, մինչ երեք անդամներ կը հեռանան Սուտանէն:

<sup>14</sup> Որոնց 22ը կը բնակէր Խարթում, 13ը՝ Օմտուրման, 2ը՝ Հալֆայա, 2ը՝ Քոտոք, 1ական՝ Աթպարա եւ Վատ Մետանի, Յակոբ Տուէմ եւ Օպէյտ:

24 Դեկտեմբեր 1911ի անդամական ժողովը կը գումարովի Ասլանեան եղբայրներու Խարթումի բնակարանը<sup>15</sup>, ուր կ'առաջարկովի հասութաբեր ձեռնարկներ կազմակերպել: Կ'ընտրովի հնգանդամ երկու ցանկ: ԳԿՅն կը հաստատէ Ճիլերճեան-Սեքսէնեան-Իզմիրլեան-Փափազեան-Տէրունեան կազմը<sup>16</sup>, որ կ'ընտրէ իր դիւանը՝ Ճիլերճեան ատենապետ, Սեքսէնեան ատենադպիր եւ Իզմիրլեան գանձապահ:

Միամեայ գործունէութենէ ետք (որուն ընթացքին ճիգ կը տարովի աւելի մանրամասն ծանօթանալու ՀԲԸՄ գործունէութեան, կ'ուզովին Միութեան խորհրդանիշ-կոճակներ), յաջորդ վարչութեան ընտրովիները կը կատարովի 22 Դեկտեմբեր 1912ին, Հաճընլեան եւ Գրիգորեանի Խարթումի գրասենեակին կից սրահին մէջ, ներկայութեամբ 25 անդամի: Կ'ընտրովին հետեւեալ երկու հնգանդամ ցանկերը.-

Յ. Սեքսէնեան	23 քուէ	Փ. Տէրունեան	18 քուէ
Տ. Հաճընլեան	23 քուէ	Ն. Խանճեան	17 քուէ
Գ. Ճիլերճեան	22 քուէ	Գ. Գրիգորեան	14 քուէ
Ս. Իզմիրլեան	21 քուէ	Գ. Սալէրեան	13 քուէ
Ս. Վանեան	20 քուէ	Օ. Քեչեան	[անընթ.]

Դիւանը կը կազմովի Ճիլերճեանի ատենապետութեամբ, Ն. Խանճեանի գանձապահութեամբ եւ Գ. Գրիգորեանի ատենադպրութեամբ:

Վարչովիները կ'իրագործէ առաջին դաշտահանդէսը՝ 23 Նոյեմբեր 1913ին (կարգադիր յաճնախումբ՝ Վահրամ Գազազ եւ Մարտիրոս Իշխանեան), «Խարթումի թաղապետական պարտէզ»ին մէջ<sup>17</sup>: Աննախընթաց այս ութժամեայ ձեռնարկին «երկսեռ երգեցիկ խումբ մը զարգացեալ երիտասարդներէ եւ նազելաշուք տիկիններէ ու օրիորդներէ» բաղկացած, հայրենասիրական «հոգեցունց» երգեր կ'երգէ: Դաշնամուրի վրայ օր. Քիւրքճեան հայկական եւ եւրոպական երգեր կը նուագէ, տեղի կ'ունենան «մրցախաղեր, ատենախօսովիներ, արտասանովիներ», կ'երգովին «Կռունկ»ը, «Ի բիր ծայնից բնութեանց»ը, ճաշկերոյթէն<sup>18</sup> ետք կը ներկայացովի «Առաւ-փախաւ եւ ընկ.» միարար գաւեշտը, կը կատարովի թոմպոլա, Փիլիպոս Վանեան կ'ատենախօսէ ՀԲԸՄի գործունէութեան մասին եւ Պօղոս Նուպարը կը նկատէ «հայ կեանքի իրականութեան մութ ու մռայլ գիշերին մէջէն ... ազ-

<sup>15</sup> Այս մասին Փ.Ս.Վանեանի ստորագրութեամբ թղթակցովիներ մը լոյս կը տեսնէ *Քիզանդիոնի* 29 Դեկտեմբեր-11 Յունուար 1912ի թիւին մէջ:

<sup>16</sup> Միւս թեկնածուներն էին.- Ա. Շորճ, Ս. Քիւրքճեան, Ս. Վանեան, Գ. Իշխանեան, Գ. Գրիգորեան:

<sup>17</sup> «Հանդիսատես» ստորագրութեամբ թղթակցովիներ տե՛ս՝ *Յուսաբեր* 2 Դեկտեմբեր 1913:

<sup>18</sup> Մատնանշելի է ճաշացուցակը. «Տարակի ապուր, գառնափոր Նուպարեան, աղջկաբերան Ճերմակ-Նեղոսի, խորոտիկ Օշականի, աղճան համերաշխութեան, ծնեբեկ Արարատեան, ձաւարակոռ Կիլիկեան, քրէմ Մալէզեան, սառնագունդ ափրիկեան, մրգեղէն շիրակաբոյր, կեպենէ սուտանական»:

գային գոյութեան ապահովագոյն ուղին գծող անշէջ փարոս»: Կ'արծարծուի Խարթումի մէջ եկեղեցի կառուցելու հարցը: Հակառակ անոր որ Սուտանի ծայրամասերու հայերէն ոմանք չէին կրցած մասնակցիլ, շուրջ 100 հայեր ներկայ կ'ըլլան, որոնց շարքին՝ դատաւոր Աբգարեան: Դաշտահանդէսին հասոյթով ՍՄին տարեկան մուտքը կը բարձրանայ 11446,5 ե.դ.ի: Այդ տարի ՍՄն կը հաշուէր 61 անդամ. արձանագրուած էին 11 նոր անդամներ<sup>19</sup>, «նիւթական անձկութեան» պատճառով դադրած 4, մեկնած՝ 6 անդամներ<sup>20</sup>, ՍՎն գումարած էր 8 վարչական ժողով, թէեւ չունէր գրասենեակ, «ոչ ալ կարասիք»: Անդամներուն 32ը վաճառականութեամբ կը զբաղէր, 1ը՝ երկաթագործ էր, 2ը՝ ճաշարանապետ, 1ը՝ սրճարանապետ, 15ը՝ պաշտօնեայ, 4ը՝ ժամագործ, 1ը խանութպան, 1ը՝ մեքենագէտ, 2ը՝ դերձակ, 1ը՝ պատկերահան, 1ը եգիպտական բանակի բժիշկ, 1ը՝ յանձնակատար: Անոնցմէ 20ը կը բնակէր Խարթում, 21ը՝ Օմտուրման, 4ը՝ Օպէյտ, 1ը՝ Րեճէֆ, 1ը՝ Օաքըմ, 2ը՝ Մրովապա, 4ը՝ Հալֆայա, 2ը՝ Կետարէֆ<sup>21</sup>, 1ական՝ Մալաքալ, Քամլէն, Աթպարա, եւ Վատ Մետանի:

ՍՄի յաջորդ անդամական ժողովը կը գումարուի 21 Դեկտեմբեր 1913ին, Ա. եւ Ս. Վանեաններու Խարթումի բնակարանը, ներկայութեամբ 32 անդամի: Քուէարկուած հնգանդամ զոյգ ցանկերէն դուրս կը մնայ Ճիյէրճեան, ինչ որ կ'արտացոլացնէ երկապառակութեան մը փաստը, թէեւ Ճիյէրճեան ամէնէն գործուն անդամներէն էր ՍՎին<sup>22</sup>: Նոր վարչութիւնը կ'ունենայ հետեւեալ կազմը.- Տէրունեան (ատենապետ), Մինաս Պէրպէրեան (ատենադպիր), Սիմոն Վանեան (զանձապահ), Իզմիրլեան եւ Մարտիրոս Իշխանեան (խորհրդականներ):

Առաջին համաշխարհայինի սկսնաւորումին, ՀԲԸՄը կը դիմագրաւէ նիւթական դժուարութիւններ, քանի որ Միութեան «դրամն ու արժեթուղթերը պահ» դրուած էին Քրետի Լիոնէ դրամատան մէջ, իսկ «առօրեայ վճարումներու համար ...աննշան գումար մը [կար] Օսմ. Առետր. Դրամատան մօտ, մինչ,- դրամատունները իրենց վճարումները դադրեցուցած եւ առձեռն գտնուած չէքերն ալ անգանձելի» կը դառնան, իսկ մասնաճիւղերն իրենց

<sup>19</sup> Որոնք են.- վաճառական Արտաշէս Գասպարեան՝ Քամլէնէն, պաշտօնեաներ Բարսեղ Բալուբեան-Ս. Իշխանեան-Հայկ Ճանպետէնեան՝ Օմտուրմանէն, պաշտօնեայ Զարեհ Երէզ-դերձակ Ճապրա Մելիքեան՝ Խարթումէն, վաճառականներ՝ Աբրահամ Իշխանեան Մալաքալէն, Եագուպ Արթին՝ Կետարէֆէն եւ Բենիամին Եսայեան՝ Մրովապայէն:

<sup>20</sup> Որոնք են.- մեքենագէտ Տիգրան Գմզըմեան-պաշտօնեաներ Տօնիկ Գրիգորեան-Բարթիկ Վարդանեան՝ Գահիրէ, վաճառականներ Տիգրան Գասպարեան՝ Կ. Պոլիս, Յակոբ Զուպլեան՝ Զակագիլ եւ Ա. Տէրմատթէնեան՝ Վիեննա:

<sup>21</sup> 1945ին Կետարէֆի մէջ կը յիշատակուին Հայ Կրթական եւ Հայ Տիկնանց Միութիւնները:

<sup>22</sup> ԳԿՅն Ճիյէրճեանը Միութեան Սուտանի պատուիրակ կը կարգէ, փափաքելով որ ան յաճախակի խորհրդակցի եւ հաղորդակցի իրեն հետ:

դրամական առաքումները ստիպողաբար կը դադրեցնեն<sup>23</sup>: Այս պայմաններուն տակ, ԳԿՅն 27 Օգոստոս 1914ին կը թելադրէ ՍՎին՝ գանձումները շարունակել եւ ապահովագոյն «հնչուն դրամ հասցնել Կեդրոն»: ՍՎն յաջորդ գումարները կը դրկէ Գ. եւ Կ. Մելգոնեանի հաշիւին, իսկ ամանորեայ շնորհատրագրով կը բարեմադթէ «յոյսի եւ խաղաղութեան տարի» մը եւ սփոփանք՝ «հայութեան դարաւոր ցաւեր»ուն<sup>24</sup>:

Պատերազմը հետեւանքներ կը պարտադրէ նաեւ ՍՄին. վարչականներ ամիսներով կը բացակային Սուտանէն, ուրիշներ՝ կը մեկնին<sup>25</sup>, կը հաստատուի նամակագրական գրաքննութիւն, բայց անդամներուն թիւը կը մնայ գրեթէ անփոփոխ:

17 Յունուար 1915ի անդամական ժողովը կը գումարուի Վահրամ Մալումեանի Օմտուրմանի բնակարանը, ներկայութեամբ 28 անդամներու, որոնք ունէին 39 ձայնի իրաւունք: Նախորդ շրջանի երկպառակութիւնը կը գոյատեւէ նոր պատճառներով<sup>26</sup>. ԳԿՅի հաստատած նոր վարչութենէն հրաժարած Ճիլերճեան-Իզմիրլեան-Սալէրեան-Ս. Ճորճը կը փոխարինեն Տէրունեան, Գ. Գրիգորեան, Գ. Իշխանեան եւ Գրիգոր Պոզաճեան<sup>27</sup>: Կը կազմուի դիւանը, յանձնիս Տէրունեանի (ատենապետ), Իշխանեանի (գանձապահ) եւ Գրիգորեանի (ատենադպիր): ՍՎն կը յաջողի գանձել աւելի քան 7290ե.դ., 30 *Ոսկեմալութեան*ներէն ծախել 22ը, Պօղոս Նուպարի 29 Յունուար 1915 թուակիր «հարիւր հազար հայ դժբախտ գաղթականներու ինպաստ ձեռնարկած հանգանակութեան» համար հաւաքել 401ե.ո., իսկ ԱՇՊՄիհանգանակութեան, տեղի տալով «հայրենիքէն հասնող վրդովիչ լուրերուն» կը հաւաքուի 1300ե.ո.<sup>28</sup>:

18 Փետրուար 1916ին ատենապետ Տէրունեանի Խարթումի բնակարանը կայացած անդամական ժողովին վարչականներ կ'ընտրուին Ֆիլիփ Վանեան (17 քուէ), Յարութիւն Փափազեան (13): Վարչութիւնը կը կազմուի ատենապետութեամբ Տէրունեանի, ատենադպրութեամբ Վանեանի, գան-

<sup>23</sup> 7 Սեպտեմբեր 1916էն դրամատնային փոխանցումները կը վերականգնին:

<sup>24</sup> 1914 տարեշրջանին մասնաճիւղին անդամներուն թիւը եղած էր 63, ՍՎն ունեցած էր 6 նոր անդամ, մինչ մեկնած էին 5 անդամներ:

<sup>25</sup> Ինչպէս Պետրոս Մարաշլեանը՝ Մերսին, Սիոն Օհանեանը կամատրագրուելով՝ Կիպրոս (աւելի ետք ան կը վերադառնայ ու կը հաստատուի Վատ Մետանի): 13 Փետրուար 1916ի վարչական տեղեկագիրը եւ կը նշէ 15 անդամներու նուազում (որոնցմէ երկուքը մահացած էին, մին մեկնած Ամերիկա եւ մին՝ Ֆրանսա, հինգը դադրեցուցած էին իրենց անդամակցութիւնը, առնուազն վեց հոգի անցած էին Գահիրէ), եւ անդամացանկը նուազած էր 51ի:

<sup>26</sup> Անհամաձայնութեան պատճառ էր «Ազգային Շահերու Պաշտպանութեան Մարմին»ին (ԱՇՊՄ) համար կատարելի հանգանակութիւնը:

<sup>27</sup> Կառավարական պաշտօնեայ էր Շամպաթի մէջ:

<sup>28</sup> 10 Մայիս 1917 թուակիրով ԱՇՊՄ Սուտանի մասնաճիւղը (փոխատենապետ Իզմիրլեան, ատենադպիր Գրիգորեան) 200ե.ո. չէք մը կը դրկէ Գահիրէ:

ծապահութեամբ Իշխանեանի. խորհրդականներ կը դառնան Ս. Ճորճ ու Փափագեան եւ... երկպառակութիւնը կը շարունակուի:

Իտես ներքին այս պառակտումներուն եւ ՀԲԸՄի դէմ ուղղուած ներհայկական քայլերուն ու համահայկական մարտահրաւերներուն («հայ ազգը կ'ենթարկուէր մեծ աղէտներու»), ՀԲԸՄ վարիչ-քարտուղար Վահան Մալէգեան 18 Մարտ 1916ին կը գրէ Սեքսէնեանին. «Վաղուան համար եղբայրական օգնութեան եւ Հայրենիքի վերաշինութեան այնքան մեծ գործ կայ տեսնելիք, որ պարզապէս կը սահմուկիմ ու կ'անճուկիմ, տեսնելով շատ փոքր մեր միութիւնը ահագին կարիքներու հետ բաղդապելով: Ու երբ կը խորհիմ որ, դուրսի հակառակորդներուն կատարած աղտոտ դերը որպէ՛ս թէ [հերի՛ք] չէր, ներսէն եւս Միութեան բարեկամները իրար կը բզկտեն...»: ՍՍէն ներս անհամերաշխութեան յաւելեալ բարդացումներէ խուսափելու համար ոմանց անդամակցութիւնը կը փոխանցուի Գահիրէ<sup>29</sup>:

Մայիս 1917ին ՍՍ անդամացանկը կը հաշուէր 51 (իսկ 1918ին 61) անդամ, որոնց շարքին՝ մէկ թղթավաճառ (Ս.Ս. Մելիքով), երկու լուսանկարիչ (Անտոն Գազանճեան ու Օ.Պ. Արամ), 3 ժամագործ, 2 դերձակ եւ 4 սրճարանապետ-ճաշարանապետ: Յունիս 1917ին կազմուած նոր վարչութիւնը (Զենոբ Խաչիկեան-Պոզաճեան-Սալէրեան-Փ. Վանեան) կ'ատենապետէ Սեքսէնեան: ՍՎն - աննախընթաց՝ մասնաճիւղին պատմութեան մէջ - կը կազմակերպէ «սինեմայի ներկայացում» մը 14 Փետրուար 1918ին<sup>30</sup>, որմէ գոյացած 15266,5ե.դ. կ'ոգեւորէ անդամները եւ յոյս կը յայտնուի որ «յետայսու մասնաճիւղս ապահոված կրնայ նկատուիլ ամէն տարի այս տեսակ հասութեաբեր ներկայացում մ'ունենալ հոս ի Խարթում»: ՍՎն 1918ի ընթացքին ԳԿՅին կը փոխանցէ 24179,5ե.դ.: Սակայն, ԳԿՅն աւելին կ'ակնկալէ «մանաւանդ [երբ] նկատի առնուի ազգին ներկայ ճգնաժամուն սրտեղծած բազմադիմի կարիքները եւ մեր սիրելի Միութեան ստանձնած ձեռնարկներուն ծանրութիւնը»:

Շրջանցած չըլլալով ներքին տագնապը. սինեմայի ձեռնարկէն ետք, ՍՎն միառժամանակ անգործութեան կը մատնուի, որուն իտես, ԳԿՅն կը ցափ ՍՍէն լուրեր չունենալուն, մինչ «ճիշտ հիմա պէտքը կը զգանք Սուրանի կտրիճ գաղութին անվերապահ աջակցութեան, որպէսզի կարենանք ընդառաջ երթալ այն բազմադիմի պահանջներուն զոր ներկայ հանգամանքները սրտեղծած են: ՀԲԸՄիութեան համար աւելի քան երբեք ընդարձակ գործունէութեան թուական մը սկսած է...»:

<sup>29</sup> Աւելի ետք, 1918ին Ճիյերճեան միառժամանակ կը փոխադրուի Աղեքսանդրիա:

<sup>30</sup> Ծանուցումը իբրեւ լրատուութիւն կը հրատարակուի Խարթումի հաւանաբար *Sudan Daily Herald*փն մէջ: Ներկայացումը կը վայելէր հովանաւորութիւնը Խարթումի կառավարիչ Ր. Մորի, որուն շնորհակալական նամակ կը դրկէ ՀԲԸՄ փոխնախագահ Եագուպ Արթին փաշա 21 Մարտ 1918ին:

1918ի լաւատեսական հայկական շունչը կ'ազդէ նաեւ սուտանահայութեան. ՍՄի անդամներէն ոմանք սիրալոյսով կ'աւելցնեն իրենց անդամավճարները, կ'արձանագրուին նորեր, ինչպէս՝ Տիգրան Գասպարեան, Ստեփան Թարթընճեան, տորթ. Միհրանեան, Իմաստուն Մոմճեան, Նահապետ Նահապետեան, Գ. Շեքէրճեան, Արամ Սեքսէնեան, Օննիկ Տէյիրմենճեան, իսկ Քիւրճեան եղբայրները, որոնք իրենց անդամակցութիւնը փոխադրած էին Գահիրէ, վերստին կը միանան ՍՄի:

ՍՎն կը ծրագրէ նախորդ տարուան սինեմայի ձեռնարկը կրկնել, սակայն ընդառաջելով ԳԿՅի թելադրանքին՝ 1919ի ձմեռէն առաջ «նոր հայ տարագրեալներու ինպաստ հանգանակութեան մը ձեռնարկել»ու, կը խորհի «բոլորովին լայն ու ընդհանրական բնոյթ տալ ... նպաստի գործին» ու լաւագոյն կը համարէ դիմել «տեղւոյն Նպաստամատոյցի Մարմնոյն», որուն հետ գործակցաբար ամբողջ գաղութի հայութիւնը ներգրաւել հանգանակութեան: Այդ առթիւ կը սարքուի «concert մը, [որ] մեծ» յաջողութեամբ կը պսակուի, գոյացնելով աւելի քան 1000ե.ո., որուն 300ը կը փոխանցուի ՀԲԸՄ Հանդերձարանին:

25 Մայիս 1919ին, Իզմիրլեանի Խարթումի բնակարանը տեղի կ'ունենայ անդամական ժողով՝ «առիթը ընծայելու որպէսզի նոր ուժեր ստանձնեն գործին վարչութիւնը», խորքին մէջ՝ պառակտումը վերացնելու միտումով (որ չի յաջողիր): Ներկաները «բացարձակապէս» կը մերժեն վարչութեան հաւաքական հրաժարականը, կը յայտնեն իրենց «չափազանց գոհունակութիւնը մասնաժողովին գործունէութեան համար», իսկ քաղաքէն բացակայող Պոզաճեանը կը փոխարինեն Թարթընճեանով: ՍՎի նոր շրջանի գործունէութեան կը ներգրաւուի իգական սեռը:

1919 Մայիս-1920 Փետրուար շրջանին, մասնաճիւղը կը հաշուէ 55 անդամ. թէեւ արձանագրուած էին 13 նորեր, սակայն եղեր էին մեկնողներ<sup>31</sup> ու դադրողներ, գումարուեր էին պաշտօնական եւ անպաշտօն բազմաթիւ նիստեր, չէր կայացած որեւէ հրապարակային ձեռնարկ:

ՍՎն, եռամեայ պաշտօնավարութենէ ետք, կը հրաժարի: Անդամական ժողովին կ'առաջարկուի վարչութեան թիւը նուազեցնել երեքի, ատենապետը կը պարզէ «որբախնամ գործին ահագնութիւնը», որուն ի պատասխան Աբգարեան եղբայրներ կը ստանձնեն մէկ որբի ծախքերը<sup>32</sup>: ԳԿՅն Ապրիլ

<sup>31</sup> «...Պէպի հայրենիք գաղթելու հոսանք» մը յառաջացած էր. կային նաեւ Գահիրէ մեկնողներ՝ ինչպէս՝ Աբրահամ եւ Սեդրակ Իշխանեան, Ճանպետէնեան:

<sup>32</sup> Աւելի առաջ, 12ական ե.ո.ի մեկենասութեամբ Մարի Իզմիրլեան եւ Բարսեղ Բալուկեան ստանձնած էին «մէյմէկ որբի պաշտպանութիւնը»: Աւելի ետք՝ Տէրունեան, Ձենոբ Խաչիկեան եւ Պոզաճեան միասնաբար կ'ապահովեն «ամենաչքատր հայ» որբի մը քառամեայ խնամքի ծախքերը (48ե.ո.): Շուտով այդ թիւը կը հասնի 7ի, յանձինս՝ տէր եւ տիկ. Գ. Գրիգորեան (2 որբի)-փոքրիկն Կարօ Գրիգորեան (1)-Ֆիլիպի Վանեան (1)-տիկ. Կ. Սոլաքեանի (1): Վերջինս փափաք կը յայտնէ օր մը իր որբուիին պաշտօնապէս որդեգրել: Բոլորին կը դրկուի «որբերուն լուսանկար»

1920ին կը հաստատէ նոր վարչութիւնը, որ 8 Մայիսին կ'ընտրէ իր դիւանը, Սեքսէնեան՝ ատենապետ, Պէրպէրեան ատենադպիր եւ Խաչիկեան գանձապահ:

Առաւել կանոնաւորելու համար անդամացանկին գոյավիճակը ՍՎն կը նախընտրէ ներկայացնել բոլոր այն սուտանահայերը, որոնք անդամ էին ՀԲԸՄին, որպէսզի ԳԿՅի հետ յառաջանայ երկուութիւն՝ անդամավճարներու եւ այլ միութենական հարցերով: Սակայն այս հարցը չի լուծուիր, դժգոհ ձգելով ՍՎն որ կ'առարկէ թէ «կնճռոտութեանց նոր դուռ պիտի բացուի», եւ կը դանդաղեցնէ իր գործունէութիւնը:

1922ին ԳԿՅ ներկայացուցիչներ Ինայթեան եւ Հաճընլեան կ'ուղղուին Խարթում՝ որպէսզի ՍՎի գործակցութեամբ թափ տան Նահր Օմարի «որբերու պաշտպաններ» արձանագրելու աշխատանքին: Ապարդիւն այս փորձէն ետք, 3 Մարտ 1923ին, Սուտան վերահաստատուած Ճիյէրճեան անդամական ժողով կը գումարէ ներկայութեամբ Ինայթեանի եւ Հաճընլեանի՝ «Սուտանի մասնաժողովը վերակազմելու նպատակաւ»: Կ'ընտրուի առժամեայ վարչութիւն՝ Ճիյէրճեան, Յարութիւն Փափազեան, Տէրունեան, Գ. Իշխանեան, Սալէրեան: Յունիս 1923ին ԳԿՅն կը հաստատէ նոր ՍՎն, որ կը լծուի նախորդ բացթողումին առկախեալ հաշիւները փակելու գործին: Յանձնաձում չի կատարուիր եւ ՍՎն լաւագոյն կը համարէ գանձումներն սկսիլ 1923 տարեշրջանէն, իրաքանչիւր անդամի թողլով իր յետնեալ հաշիւներու փակման պարագան: Վերակազմութեան խնդրով, Ճիյէրճեան, Տէրունեան, Պետրոս Չոլաքեան, Կարապետ Շահպազեան եւ Գրիգոր Սեյոնքեան կը փոխանցուին ՍՄին: Գաղութիւնը կը համալրուի նոր անդամներով եւս, մինչ ԳԿՅն նոր յառաջադրանքներու կը մղէ ՍՎն, թելադրելով 2 Դեկտեմբեր 1923ի Կիրակին «որբերու օգնութեան գործին հանգանակութիւն» կազմակերպել, աւելի ետք կը դրկուի Ստեփան Տամատեանի *Քիչ մըն ալ ժամանց* հատորէն<sup>33</sup> 10 օրինակ եւ կ'ակնկալուի որ հասոյթը փոխանցուի որբախնամ գործին:

Կը թուի՝ 17 Յունիս 1923-26 Նոյեմբեր 1924 շրջանին ՍՎն առնչուելով սուտանահայ նորայայտ «ազգային մարմիններ[ու] եւ ուրիշ կազմակերպութիւններ[ու]», կը սահմանափակէ իր գործունէութիւնը:

Մայիս 1924ին ՍՎ կը դրկուի «Հայաստանի վերաշինութեան հանգանակութիւն» մը սկսելու մասին Պօղոս Նուպարի կոչը, նաեւ՝ ՀՕԿի նոյնիմաստ շրջաբերականէն օրինակներ, իսկ աւելի ետք՝ ՀԲԸՄ 17րդ տարեշրջանի (1922) տեղեկագրէն 10 օրինակ իբրեւ շօշափելի յաւելեալ ապացոյց՝ ՀԲԸՄ

---

ներն ու այլ մանրամասնութիւններ»: Որբերու որդեգրումին սակը Յուլիս 1924ին պիտի բարձրանար 25ե.ո.:

<sup>33</sup> Գիրքը՝ «ոտանաւոր եւ պատմուածքներ», տպուած էր 1923ին, Գահիրէ՝ 1000 օրինակ, կը հաշուէր 94 էջ: Աւելի ետք՝ Սեպտեմբեր 1937ին կը դրկուի նաեւ Արշակ Սեդրոսեանի *Առեւտուր եւ հաշիւ* գիրքը:

գործունէութեան, հուսկ՝ 1925 տարուան պատի օրացոյց<sup>34</sup>, ուր «ՀԲԸՄիութեան կեանքն ու գործը յիշեցնող նկարագարդ եւ գեղեցկատիպ խորհրդապատկեր մը...» կար: 14 Դեկտեմբեր 1924ին, Ճիլէրճեան ԳԿՅին կը դրկէ ՍՄին անդամացանկը եւ անդամավճարները, որով եւ կը կանոնաւորուին վճարումները: Անդամներուն 3ը՝ դրամատան պաշտօնեայ էր, 18ը՝ վաճառական, 3ը՝ ժամագործ, 10ը՝ փոքրիկներ էին, 1ը փոխադրող, 5ը՝ պաշտօնեայ, 1ը՝ կահագործ, 1ը՝ ճարտարապետ, 2ը՝ ելեկտրագէտ: Անդամներէն 12ը կը բնակէր Օմտուրման, 33ը՝ Խարթում<sup>35</sup>:

ՀԲԸՄ որբանոցային յանձնառութիւնը կարեւոր օրակարգ էր. Միութիւնը «ստանձնած է[ր] ծանր բեռը որբերու պահպանումին եւ գաղթականներու կարօտութեանց ամոքումին»: ՀԲԸՄ Տիկնանց Կեդրոնական Յանձնախումբը (ՏԿՅ) գործնապէս կը լծուի այդ խնդրի մատակարարման. 17 Փետրուար 1925 թուակիրով ԳԿՅն ՏԿՅի ձեռնարկած վիճակահանութեան տոմսերէն (հատը 20ե.դ.) 40 հատ կը դրկէ ՍՎին, իսկ աւելի ետք կը դիմէ վաստակաշատ որբահաւք, հանգուցեալ Ռուբէն Հերեանի «Յուշարձանի ֆոնտ»ին մասնակցելու առաջարկով: Սակայն ՍՎն դանդաղկոտութիւն ցուցաբերելով հանդերձ եւ թէեւ չէր յաջողած «Միութեան շուրջ բոլորել սուտանահայ ազգակիցները»<sup>36</sup>, կը ձեռնարկէ Կիրակի 6 Դեկտեմբերի «Որբերու Կիրակի»ի հանգանակութեան, գործակցելով «տեղի ազգային մարմիններուն եւ միութիւններուն հետ...[եւ] օգնութեան ձեռք կարկառելով] ...հազարաւոր անտիրական որբերուն»: ԳԿՅն հետետողականօրէն կը հետապնդէ ՍՎի հաղորդակցութիւնը, զինք մղելով գործունէութեան: ԳԿՅի բազմաթիւ

<sup>34</sup> Սուտան դրկուած է ՀԲԸՄի 45 պատի օրացոյց, 1926ին՝ 40, 1927ին՝ 60, 1928ին՝ 27, 1931ին՝ 66, 1932ին՝ 56, 1933ին՝ 77, 1935ին՝ 30, 1936ին՝ 48, 1937ին՝ 55, 1938ին՝ 44, 1939ին՝ 80, 1942ին՝ 105, 1943ին՝ 100, 1944ին օրացոյց չի դրկուիր, 1957ին կը դրկուի 100 գրպանի օրացոյց:

<sup>35</sup> Մասնաճիւղին անդամ խարթումաբնակներն էին.- Գրիգոր Գաբանճեան, Լեւոն Գասպարեան, Գրիգոր եւ փոքրիկն Կարօ Գրիգորեան, Արշակ եւ Կարապետ Չեքիեաններ, Թարթըճեան, Սարգիս եւ փոքրիկներ Սօնա եւ Աօ Իզմիրլեաններ, Գէորգ եւ փոքրիկն Հրանդ Իշխանեան, Չենոբ, Մեսրոպ (եւ փոքրիկն Բաբկէն) Խաչիկեաններ, Ճիլէրճեան, Արշակ եւ Սեդրակ Ճորճ, Սէթիկխան (եւ փոքրիկն Վահէ) Մելիքոֆ, Առաքել Յարութիւնեան, Սողոմոն Նաճարեան, Պերճ Սարգիսեան, Ս. եւ Ս. (եւ փոքրիկն Վարուժան) Վանեան, Սահակ եւ Փայլակ Տէրունեան, Յակոբ Փանոսեան, Յարութիւն եւ Ստեփան Փափազեան, Խաչիկ եւ Յովհաննէս (եւ փոքրիկներ Գուրգէն ու Տիգրան) Քեչեաններ, Գասպար Քելլեկեան, Կարապետ, Սողոմոն եւ Կարապետ Մ. Օհանեաններ: Իսկ օմտուրմանաբնակները՝ Ֆիլիպ Աբգարեան, Աստիկ Գալայճեան, Կղեմէս Թարաքճեան, Մալումեան, Երուանդ Մարկոսեան, Մինաս Պէրպէրեան, Գրիգոր (եւ փոքրիկն Պետրոս) Սալէրեան, Յարութիւն Տիարպէքիբեան, Մատթէոս եւ Նազարէթ Քիւրքճեան:

<sup>36</sup> Վերականգնումի եւ վերաշխուժացումի փորձ կը կատարէ Կետարէֆէն Ֆիլիպ Գալիաքեան առաջարկելով վարչութիւն մը գոյացնել Կետարէֆի փոքրաթիւ համայնքէն եւ Օմտուրման եւ Խարթում բնակող հայերու ներկայացուցիչներով:

նորութիւններ, ձեռնարկումներ եւ ծրագրեր կը փոխանցուին ՍՎին, որոնց կարգին՝ կտակներու եւ նուիրատուութեանց մասին ՀԲԸՄ հրատարակած գրքոյկը<sup>37</sup>:

Շուտով հաղորդակցութեան այլ նիւթ կը դառնայ Կիպրոսի նորաբաց Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) Սուտանէն սաներ ղրկելու պարագան, որուն գրեթէ զուգահեռ կը գուժուի Շիրակի 1926ի երկրաշարժին լուրը. ՇՅն կը ցաւի որ «գերմարդկային ճիգերով վերաշինուած Ալեքսանդրապոլը իր շրջակայ 30է ատելի գիւղերովը քարուքանդ եղած է եւ մեր ազգակիցներէն ատելի քան 100,000 անձեր, ապրուստի ամէն միջոցներէ զրկուած անտուն եւ անպատասպար մնացած են»: Ան կը մանրամասնէ Պօղոս Նուպարի ձեռնարկած համահայկական հանգանակութեան մասին եւ կը թելադրէ որ ՍՎն եւս լծուի այս «ազգանուէր» աշխատանքին: Վերջինս կը յետաձգէ «Որբերու Կիրակի»ի հանգանակութիւնը, մինչ սուտանահայութիւնը կ'անցնի հանգանակութեան եւ «Վարչութիւն Սուտանի Հայկ. Գաղութի»ն անուամբ, 180ե.ո. կը ղրկէ ՇՅին<sup>38</sup>:

ՍՎի գործունէութիւնը բարելաւելու մտօք, ՇՅի ներկայացուցիչ Ինայէթեան անձնական ծրագրով Խարթում գտնուելով, 6 Ապրիլ 1927ին կը գումարէ անդամական ժողով, որով Սիմոն Վանեան, Գասպար Քեշկէկեան, Օննիկ Ծալեան, Ահարոն Մալխասեան եւ Եզնիկ Թերզեան կը նշանակուին նոր վարչութեան անդամներ: Սակայն վարչականներէն ոմանք «անձնական եւ տեղական ազգային գործերով արդէն ծանրաբեռնուած» ըլլալով կամ «գործին ծանրութեան պատճառով» կը հրաժարին: Հուսկ, կը կազմուի նոր վարչութիւն՝ Սալէրեան (ատենապետ), Սարգիս Ն. Քիւրքեան (փոխա-

---

<sup>37</sup> Սուտանահայութեան մէջ արդէն կային ՀԲԸՄի բարերար եւ պատուոյ անդամներ: Կը ղրկուի նաեւ Վ. Քիւրքեանի ՀԲԸՄիութեան քսանամեակը գիրքէն 20 օրինակ՝ անդամներուն եւ համակիրներուն բաժնուելու:

<sup>38</sup> Հանգանակութեան 2500ե.դ.էն մինչեւ 20դ. գումարով կը մասնակցին շուրջ 58 անձեր, որոնց շարքին.- տորթ. Լ. Ի. Ալեանաք, Կ. Այնաճեան, Նիքոլա Անթոնաքիս, տիար Անտրէա, Աննա Սթարք & Co., Սատուրք Ապտըրրահման, Մ. եւ Յ. Ասլանեան, Բ. Ատուրեան, Լ. Գասպատայեան, Ս. Գասապեան, Ս. Գոճանեան, Պ. Գրիգոր, Գ. Գրիգորեան, Ա. Թաղէոսեան, Ա. Թարթըճեան, Իլիաս Թիֆոյու, Ն. Թրփանճեան, Իզմիրլեան, Գ. Իշխանեան, Բենիամին Իսա, շէյխ Թահր Իպրահիմ, Լուկա եւ Կուլիա, Յ. Խազումեան, Բ. եւ Փ. Խաչատուրեան, Մ. Խաչիկեան, Մ. Ծաղիկեան, Գ. Ծատուրեան, Յ. Կուրտիկեան, Քալունճի Համշունի, Հիւսիսեան, Ս. Ծորճ, Ա. Մալխասեան, Վ. Մալխսեան, Յ. Մարկոսեան, Յ. Մելքոնեան, Ա. Մինասեան, Գ. Մուրատեան, Ա. Յովհաննէսեան, տեարք Շամմահ եւ Թինուլի, Էլիաս Շաշաթի, Կ. Պալապանեան, Սուտոն Պիննօ, Սալէրեան, Մարի եւ Պ. Սարգիսեան, տորթ. Գ. Սեյօնքեան, տորթ. Ս. Սրապեան, Վանեան եղբարք, Ս. եւ Փ. Տէրունեան, Պ. Տուտաքեան, Յ. Փանոսեան, Յ., Խաչատուր, Մարի եւ Վարդուի Փափազեաններ, Փափատելլի եւ Ճորճիու, Ճորճ Քասթանիաս, Քեչեան եղբարք, Գ. Քեշկէկեան, Յ. Քիւրքեան, Կրիկորի Քսոմիտիս, տիկ. Կ. եւ Կ. Օհանեան, Օհանեան եղբարք, Ա. Օրագեան եւն.:

տենապետ), Ծալեան (ատենադպիր), Քեշկէկեան (գանձապահ) եւ Մալ-  
խասեան (խորհրդական):

7 Յունիս 1927 թուակիրով, ՇՅՆ ՍՎին կը յղէ հետեւեալ նամակը.-

Գահիրէ, 7/6/1927

թիւ 30307/183

Մեծայարգ Տիար Ատենապետ

Հ.Բ.Ը.Միութեան Տեղ. Մասնաժողովի

Խարթում

Տիար ատենապետ,

Անշուշտ լրագիրերէն տեղեկացած էք թէ Ազգերու Ընկերակցութեան Աշխատանքի ճիւղը, Լիբանանի կառավարութեան համաձայնութեամբ ձեռնարկած է Պէրութի, Հալէպի եւ Ալեքսանտրէթի քեմիերուն մէջ խոնուած հայ գաղթականութիւնը տեղաւորելու երկրագործական շրջաններու մէջ: Առ այս, արդէն յանձնախումբեր կազմուած են Ալեքսանտրէթի, Հալէպի եւ Պէրութի մէջ, որոնց կ'անդամակցին նաեւ մեր Միութեան կողմէ պատուիրակներ:

Տեղաւորման սոյն գործին նիւթապէս օժանդակելու յանձնառու եղած են Լիբանանի կառավարութիւնը, որ արդէն 25,000 անգլիական ոսկի գումար մը տրամադրած է, եւ անգլիական հայասիրական կազմակերպութիւնները, ձեռնարկելով մեծ հանգանակութեան մը Անգլիոյ եւ գաղթավայրերու մէջ: Ազգերու Ընկերակցութեան Աշխատանքի ճիւղը մեր կեդրոնին դիմած ըլլալով, Միութեան եւս օժանդակութիւնը ապահովելու համար, Կեդրոնական Վարչական Ժողովը որոշած է 10% չափով մասնակցելու այն հանգանակութեան, զոր ինչպէս վերը ըսինք, Անգլիոյ հայանպաստ ընկերութիւնները բացած են, օգնելու համար տեղաւորման գործին: Սոյն հանգանակութիւնը փոթով յառաջ տարուած է բաւական գոհացուցիչ արդիւնք տուած ըլլալով, անգլիական կազմակերպութիւնները Մարտ 7ին 2500 եւ Ապրիլ 8ին դարձեալ 2500 անգլիական ոսկի յանձնած են Աշխատանքի Միջազգային Պիւրոյին: Համաձայն Միութեան յանձնառութեան, Կեդրոնական Վարչական Ժողովն ալ Մայիս 23ին նոյն պիւրոյին վճարած է 500 անգլիական ոսկի, որ կը ներկայացնէ անգլիացիներու ցարդ վճարած գումարին 10%ը:

Ուրախ ենք այս առթիւ անցնելու թէ Կեդրոնական Վարչական Ժողովի այս որոշումը շատ լաւ տպաւորութիւն թողած է գործին վարիչ շրջանակներուն վրայ: Աշխատանքի Միջազգային Պիւրօն գրած է Կեդրոնական Վարչական Ժողովին՝ «Հայ կազմակերպութեանց առատաձեռնութիւնը էական տարրը կը կազմէ Սուրիոյ եւ Լիբանանի հայերուն տեղաւորման համար եղած կոչերուն արդիւնաւորման, եւ Բարեգործական Միութեան Կեդրոնական Վարչութեան որոշումը անշուշտ խրախոյս մը պիտի ըլլայ անգլիական կազմակերպութեանց փոյթեռանդն կերպով յառաջ տանելու այդ հանգանակութիւնը»:

Պարտականութիւն նկատեցինք յօգուտ հայ գաղթականներու Միութեանս ստանձնած սոյն նոր յանձնառութեան նկատմամբ վերոյիշեալ տեղեկութիւնները հաղորդել Պատ. Մասնաժողովիդ, լիայոյս ըլլալով որ անոնք նոր խրախոյս մը պիտի ըլլան կրկնապատկելու ձեր ջանքերը, զորս ի գործ կը դնէք մեր սիրելի Միութեան բարգաւաճման եւ զօրացման համար:

Սպասելով ձեր սրտապնդիչ հաղորդագրութեանց,

Խորին յարգանքով

ՍՎն կը գործէ «կազմալուծուած» դրութեամբ<sup>39</sup>. կը հետապնդէ *Միութիւնի* բաժանորդագրերը, անդամնալճարներու գանձումին կը ձեռնարկէ 1927 տարեշրջանի հաշիւներով եւ «Որբերու Կիրակի»ին հանգանակուած 5657 ե.դ.ն կը փոխանցէ ՇՅին<sup>40</sup>: Աւելի ետք, ՇՅն ՍՎին կը թելադրէ «պատշաճ շուքով տօնել» ՀԲԸՄ տարեդարձը, լծուիլ անդամարշափ, եւ կը դրկէ Ազգերու Ընկերակցութեան մօտ ՀԲԸՄ պատուիրակ Լ. Բաշալեանի ներկայացուցած տեղեկագրին օրինակը: 20 Դեկտեմբեր 1929 թուակիրով ՇՅն կը յայտնէ թէ «Սուտանի Հայկ. Գաղութի Վարչութիւն»էն (ատենապետ՝ Իգմիրլեան, ատենադպիր՝ Սեքսէնեան) ստացած է «Որբերու Կիրակի»ի հանգանակութեան գումարը՝ 3701 ե.դ.:

Յունիս 1930ի վերակազմութեան փորձը կը յաջողի եւ 14 Յունիսին ՇՅն կը հաստատէ ՍՎի կազմը (Հիւսիսեան՝ ատենապետ, Փ. Տէրունեան՝ դերատենապետ, Ճիյէրճեան՝ ատենադպիր, Սարգիս Քիւրքճեան՝ դերատենադպիր, Սալէրեան՝ գանձապահ, Գ. Իշխանեան եւ Մալումեան՝ խորհրդականներ) եւ կը դրկէ թղթաբանական նիւթերը, իսկ կնիքը կը թելադրէ ստանալ նախկին վարչականներէն: ՍՎն կը վերսկսի գործել. Յուլիս 1930ին, Պօղոս Նուպարի մահուան առթիւ Օմտուրմանի եւ Խարթումի մէջ հայեր կը փակեն իրենց վաճառատուները, կը կատարուին նուիրատուութիւններ՝ այդ եւ այլ առիթներով<sup>41</sup>. անդամներուն թիւը կը բարձրանայ 60ի:

ՍՎն կը սպառէ նաեւ ՀԲԸՄ 1931ի պատի օրացոյցները, կը լծուի *Միութիւնի* բաժանորդագրումին, կը կազմէ տիկնանց առժամեայ յանձնախումբ. վերջինս կը մասնակցի «Որբերու Կիրակի»ի հանգանակութեան, որուն կը

---

<sup>39</sup> Վարչական գործունէութիւնը կը նուազէր ամառնային արձակուրդին բերմամբ:

<sup>40</sup> Ուշագրաւ է տէր եւ տիկ Մ. Թաղէտեանի որդի Գրիգորի պսակը որդեգիր Զապէիի հետ, 2 Ապրիլ 1927ին, որուն առթիւ ծնողքը 10 ոսկի կը նուիրէ «որբուհիներու ամուսնութեան ֆոնտին»:

<sup>41</sup> Նուիրատուներն են.- Վահան եւ Ֆիլիփ Աբգարեան, Յարութիւն Առաքելեան, Ասլանեան եղբարք, Բարսեղ Ատուրեան, Խորէն Գազազեան, Անտոն Գազանճեան, Արտաշ Գասպարեան, Գարագաշեան եղբարք, Գրիգոր Գրիգորեան, Մարտիրոս Դշխոյեան, Գառնիկ Եկաւեան, Մարտիկ Զարպիանէլեան, Թաղէտեան ընտանիք, Հայկ Թոփճեան, Նշան Թրփանճեան, Սարգիս Իզմիրլեան, Գ. Իշխանեան, Մեսրոպ Խաչիկեան, Արթիւր Կէօշերեան, Թորոս Կիւլեան, Գրիգոր Հայկունի, Երուանդ Հիւսիսեան, Գէորգ Ճիյէրճեան, Գաբրիէլ Ճիտճեան Միիրան Ծաղիկեան,, Մալումեան եղբարք, Երուանդ Մարկոսեան, Յակոբ Մելքոնեան, Կարապետ Չոլաքեան, տղքթ. Միիրան Պիճիկեան, Մանուկ Պողիկեան, Հայկ Պոտուրեան, Պոտուրեան եղբարք, տղքթ. Գրիգոր Սալէրեան, Գրիգոր Սեյօնքեան, Սիմիթեան ընտանիք, Տէրպետրոսեան եղբարք, Վահան Տերվիշեան, Աբգար Տէրյարութիւնեան, Փայլակ Տէրունեան, Աւետիս Տէրտէրեան, Յարութիւն Տիարպէքիւրեան, Փեշտիմալճեան եղբարք, Կարապետ Քալանճեան, Գասպար Քելէկեան, Քեշեան եղբարք, Սարգիս, Յակոբ եւ Տելմաք Քիւրքճեաններ, Մանուկ եւ Սողոմոն Օհանեան, Օհանեան եղբարք, Յաբէթ Օտապաշեան:

մասնակցին Խարթումէն 67<sup>42</sup> (3460ե.դ.), իսկ Օմտուրմանէն՝ 21<sup>43</sup> հոգի (1260ե.դ.): Փետրուար 1931ին ՍՄն կը հաշուէ 50 անդամ, 16ը՝ Խարթումէն, 17ը՝ Օմտուրմանէն, 4ը՝ Ֆատլապէն, 1ը՝ Մալաքալէն: Ասոնցմէ 13ը վաճառական էին, 1ը՝ ճարտարապետ, 11ը՝ պաշտօնեայ, 2ը՝ յանձնակատար, 3ը՝ լուսանկարիչ, 1ը՝ սրճագործ, 1ը՝ ոսկերիչ, 3ը՝ դպրոցական, 2ը՝ փոքրեր: Յունիս 1931ին ՍՄն կը տօնէ ՀԲԸՄի արծաթեայ յոբելեանը: Այդ առթիւ կը վաճարուին Նուպարի մեծադիր նկարները, զարդակոճակներ եւ ՀԲԸՄ զանազան դէմքերու բացիկներ:

1932ի սկիզբէն, ՍՎն կը դիմագրաւէ ոչ միայն «մութ ուժեր[ու] ջլատ[իչ]... ջանքերը», այլեւ երկրին տնտեսական ճնշիչ տագնապը, մանաւանդ որ «մինչեւ իսկ նիւթական համեմատաբար բարուօք վիճակի մէջ գտնուող ազգայիններ... կը թերանան իրենց պարտականութիւնը կատարելու», ուրիշներ կը հրաժարին անդամակցութենէ: ՍՎն ՇՅին կը դրկէ ցանկը «Որբերու Կիրակի»ի<sup>44</sup> հանգանակութեան մասնակիցներուն եւ զումարը՝ 4683ե.դ., որ հաւաքուած էր Խարթումի, Մալաքալի, Քոտոքի եւ Վատ Մետանիի մէջ<sup>45</sup>: Անդին, Օպէյտի մէջ, Վերժին Խաթանասեան, Ազնի Ատուրեան, Երուանդանուշ Քիրքճեան եւ Նուարդ Իսա Նոյն նպատակով վիճակահանութիւն կը կազմակերպեն եւ կը զոյացնեն 1500ե.դ.:

---

Armenag Parseghian, a horologist, was an optician too; his son Albert trained as an optician with Rodenstock in Germany in the 1960s and expanded the business by concentrating on optics. Yeghia Chorbadian was an expert optician. His son Raffi, who followed in his father’s footsteps, currently practices his expertise in Melbourne, Australia. Tavit Ahakinian and Alex Iskenderian, trained by Yeghia Chorbadian, eventually each started their own businesses.

### ***Traders***

Armenians were well entrenched commercially in both Harar and Addis Ababa. In the early 1900s, 35% of the traders in Addis Ababa were Armenians. The rest were Frenchmen, Arabs, Greeks, and Indians.

Matig Kevorkoff owned one of the most significant outlets in the center of Addis Ababa, supplying various items like foodstuffs, spirits, paints, and construction materials from 1910. He also had outlets in Dire Dawa and Djibouti. In 1920 Matig Matigian supplied paint, metalware, hosiery, hats, perfumes, cars, bicycles, and accessories. Nishan Hurmuzian, also in 1920, dealt in paints and metalware.

A year later, Khatchig Sakadjian established a shop supplying metalware, glassware, and lamps. In the same year, Hagop Derederian also dealt in metalware and paints. Z. Zaderian opened his establishment, “Au Bon Marché”, with the same items, in 1924. Samuel Behesnlian, and later his sons Antranik, Haig, and Joseph, dealt in general imports starting in 1925. The imported items included firearms, ammo, and ready-made clothing. Dikran and Manoug Khoudanian specialized in electrical goods, sanitary ware, water pipes, and ironware. Manoug continued as the representative of Philips until Philips opened its own distribution center. Haroutioun Adanalian, an ironware, bicycle, and accessories dealer, started his business in 1931. David, Hagop, Kegham,

and Ohan Israelian dealt in the export of coffee, wax, hides, and skins. They imported textiles, shoes, clothing, and perfumes.<sup>21</sup>

Hovhannes Assadourian dealt mainly in alimentary supply with his nephew Khatchig Assadourian. Others specializing in alimentary supplies in the 1920s were Sarkis Kenadjian, Garabed Kotandjian, H. and Y. Yeghiazarian, and Touloumbadjian. Hagop Manuelian specialized in sausages. Likewise, Vahe Tarpinian owned the “Epicerie Economique.” Later, Eugenie Ekneian had a specialized grocery store.

Garabed Atamian, in Hirna (400 kilometers southeast of Addis Ababa), exported coffee. Mardiros Aznavorian produced and sold spirits in his outlet. Many other traders and merchants in Addis Ababa, like Yervant Aghlaghanian, Massis Aznavorian, Ardashes Baghdassarian, Yeghia, and Roupen Behesnlian, were general importers in the town. Krikorios Boghossian mainly supplied the palace. Hrant Minassian, the brother-in-law of Matig Kevorkoff, had a vast trading network in Dire Dawa, Harar, Djibouti, and Chercher. He was one of the first involved in vehicle imports. Between 1927 and 1934, he imported 33 vehicles.

Mihrtad Boghossian, Garbis Ebeyan, Zaven Khatchadourian and Yeghia Kralian dealt mainly in spices. Vahram Geokdjian was a specialized textile supplier. Others who dealt with textiles were Noubar Pogharian, Alex, and Vahak Karibian, who also dealt in carpets. Edward Garabedian, besides fabrics, imported spirits and foodstuffs, and his brother Berdj managed the business. A few traders covered the hinterland, for example, Ohan Israelian, who had outlets and collection centers in Jimma and Sidama. Boghos Ebeyan was in the Welega region, whose main center is Nekmpt.

Shemavon and Vahan Kevorkian traded in Jimma; Bedros Bedrosian, Melidos Ohannesian, and Sarkis Vetsmadian at Gore; Artin Vorperian, Metu (an agent of Seferian & Co.), and Hrant Papazian in Bure; Hovhannes Pogharian in Yirgalem; and Zadig Stepanian and Kotilian in Harar. Boghos Kaypakian traded in the south, mainly in Soddo. Garabed Hakalmazian had a shop in Asebe-Teferi. Aghassi Boghossian, Jirayr Ekneian, Hagop Erzingatsian, Garabed Ghazarian, Mihran Haladjian, Ghazar Kassabian, Sarkis Melikian, Nerses Nedourian, Haig Pamoukian, Bedros Papazian, Vahan Pogharian, Ardashes Purzetian, Terenig Sarlian, Sarkis Semerdjibashian, and Setrag Terzonts were traders in Addis Ababa. Ras Teferi decorated Mihran Hazarian for importing the first sewing machine to Ethiopia. There was an Armenian hairdresser, Minas Aghazarian, and later a barbershop owned by Sarkis Demirdjian. Haroutioun Guevherian owned the “Nouveautés Artin,” a haberdashery.

---

<sup>21</sup> There are no records regarding the date of starting their business.

Mihran Mouradian established an import-export company in 1913; it later became Seferian & Company. Seferian & Co. dealt in the export of coffee, hides and skins, and the import of vehicles; as the sole dealer of Volkswagen, they established a vast, modern service center with high standards. Seferian & Co. also dealt in diesel and electrical motors, grinding mills, and pumps. The company had branches in Jimma, Gore, Gambella, Yirgalem, Dire Dawa, Asmara, and Djibouti. Antranik Geotcherian, Yervant Husussian, and Haroutioun Ibishian managed the company in Ethiopia and joined Seferian & Co. in Milan. Berdj Babayan, David Garabedian, Kevork Israelian, and Edward Kevorkian operated Seferian & Co. until it was recently sold to a local company.

Levon Erzingatsian and Hagop Behesnilian jointly opened a firm in Addis Ababa called Lerbes. They dealt in tools, sanitary ware, building materials, grinding mills, diesel, electrical motors, and accessories. When the partnership broke up, Leon's Mercantile and Hagbes emerged. Leon's Mercantile diversified into the supply of paints, and later into vegetable farming and fruit orchards. Nevertheless, these were short-lived because the communist regime nationalized all the farms without any compensation.

At the same time, Hagbes expanded into manufacturing with the National Mills of Debre Zeit. Under Hrayr Behesnilian, Hagbes further expanded into sales and the supply of vehicles, engineering equipment, and accessories. Moreover, as the sole distributor of Yamaha motorcycles, Haig Kherbekian organized a servicing facility, with Johny Parseghian assisting him. Hagbes, with its subsidiaries, still has its doors open.

Moushegh Yerevanian dealt in tools, locks, and building materials. Benon Geovdjelian initially specialized in gasoline lamps and lanterns, then gradually expanded into building materials, tools and hardware. Aram Sarafian, the son of Armenag who also owned an engineering supply outlet, carried on his father's business, expanding it with a hardware store and also supplying tools, measuring instruments, and industrial inputs. Hrayr Varjabedian manages the enterprise to date. Garbis (Inekdjian) Haigazian, through Seferian & Co., became the representative of the famous German company Grundig. Apart from selling radios, record players, and tape recorders, he had the accessories and service point for the equipment, with Hagop Hagopian as the head of the repair facility. Garbis was the first to distribute recorded Ethiopian music to the public. The agent for Akai was Vartkes Bilemdjian, who also had the accessories and a repair facility for all equipment from Akai.

### ***Restaurateurs and Movie Theatres***

Hovsep Gulesserian owned a popular café in the central area of the Piazza in Addis Ababa in 1921. Avedis Kurkdjian also owned a café centrally located. Artin Ghazarian owned the "Café International" while Apraham Panossian

owned a dairy restaurant and Nazareth Kenadjian owned a trendy café. In the 1960s, Manuel and Ovsanna Keoshgerians opened a shish-kebab outlet that served people in cars; later, they opened the famous “Omar Khayam” restaurant, serving Mediterranean cuisine. Manuel Keoshgerian opened a very modern self-service restaurant, which was too much in the vanguard for the Ethiopian market.

Similarly, Ardavazt and Zaroug Djerrahian started with a small outlet but later opened a popular restaurant. Nerses and Marie Kizirian owned the “Chez Nerses,” which served Mediterranean cuisine in the center of the Piazza. Anna Yazedjian Marcerou owned a hotel in Adama, the “Itegue Hotel,” with an excellent restaurant specializing in French cuisine. Varoujan Antranikian was a restaurateur who located his restaurant strategically. Initially in Modjo, he later transferred it to Adama; it was a trendy restaurant with good food and was patronized by many truck drivers on their way to the ports.

Paylag Yazedjian ran the “Grand Hotel” in Bishoftu, Debre Zeit. The hotel was a popular weekend destination. Yeprem Keshishian ran a restaurant in Sebeta, 25 kilometers west of Addis Ababa. In the 1960s, Artin Avakian opened the luxurious “Stereo Club” with live music and shows. In the 1980s the “Ararat” Armenian Sporting Club commissioned Robert and Zemroukhd Djerrahians to run the kitchen, which they did for a brief period. Vahan Djerrahian later took over, making it a popular restaurant. After he left, the club’s board ran the kitchen and continues to do so to the present. In the late 1990s, Araxi and Tamar Kevorkian established the “Aladdin” restaurant, which currently serves Armenian and Mediterranean specialties. Stepan Dumbekdjian was a baker who started business in the late 1950s and continued until the family emigrated to Canada.

Robert Djerrahian ran the Adua Cinema and Artin Avakian the Cinema Empire; they jointly ran the Ambassador Theatre.

### ***Rentiers and Real Estate Developers***

Many Armenians owned estates and rooms for rent in the center of the Piazza. Arousiag Baghdassarian, Garbis Ebeyan, Kevork Mekhdjian, and Vahram Terzian owned shops and rooms for rent. Similarly, Massis Aznavorian, Marie Baghdasarian, Krikorios Boghossian’s heirs, Sirvart Bablanian, Vartanoush Chilingirian, Missak Melikian, and Moushegh Terzian owned centrally located shops for rent.

Kaloust (Bardakdjian) Mavoulian and Edward Ghazarossian built three-floor buildings, some of the first with shops and apartments in Addis Ababa. APP built a multi-story building in the center of Addis Ababa with shops and apartments, and Aramazt Baghdassarian had a four-floor building, also with shops and apartments. Paylag Yazedjian owned a block of shops, a cinema

theatre (Cinema Empire), and a vast real estate development in the old airport area. At the location of the old airport, Garbis Haigazian built and sold many villas; he also constructed a four-floor building where he had his Grundig workshop and outlet. Nevert Israelian, with her sons Kevork and Sarkis, owned a modern five-floor apartment building with shops on the ground floor. Hagbes purchased a two-floor building with shops near the Municipality of Addis Ababa.

The Dergue regime nationalized all of the above on the 7<sup>th</sup> of May 1975.

More recently, the Armenian Community of Ethiopia built a 5-floor building with shops next to the Sourp Kevork Armenian Church to cover the expenses of the church and community. The bulk of the funds came from sales of the Dikran Boudoushian estate, which the community inherited. Hagbes, with its subsidiary “Sevita,” owns multi-story buildings near Bole International Airport and Theodoros Square. The Nalbandian family, presently in a joint venture, is developing a twelve-floor high-rise building in the Bole area.

## EPILOGUE

Armenians served Ethiopia, with honor, as exemplary citizens, imparting their skills and knowledge without any expectations or impositions.

Armenians helped build Addis Ababa, turning a vast empty area without inhabitants into a thriving metropolis. Addis Ababa today is not only the capital of Ethiopia but also the capital of the African continent.

Armenians stood by Ethiopia, serving Emperors and fellow Ethiopians for five centuries, and yet there are no monuments, avenues, or streets honoring any Armenians. Even the country’s history ignores and overlooks the positive input of the Armenians, wrongly and maliciously remembering the “Sebara Babour” or naming Minas “Ferashi Minas.”<sup>22</sup>

Armenians thrived in Ethiopia, establishing businesses, constructing houses, and securing a future. Unfortunately, the totalitarian regime of Mengistu Haile Mariam deprived them of all the savings of various decades. As Kevork Vorperian explained, “Ethiopia is like a flask where you enter thin, grow fat, and when you want to come out, you lose everything you gained.” The faith of all Armenians of Ethiopia.

This brief compendium about the Armenians of Ethiopia may help acknowledge the sacrifice and the dedicated work of the Armenians of Ethiopia. Perhaps there will be a full acknowledgement one day.

---

<sup>22</sup> Sebara in Amharic means broken and the engine is known for being broken. Ferashi means demolisher, Minas demolished illegal huts built during the weekends. He is only remembered as “Minas the demolisher” but not for the buildings, bridges, churches and roads he has built in Ethiopia.

**ԵԹՈՎՊԻՈՅ (ԿՈՆՏԱՐ, ԱՏՈՒԱ, ԱՆՔՈՊԵՐ, ՀԱՐԱՐ, ԱՏԻՍ ԱՊ ԵՊԱ) ՀԱՅՈՑ  
ՀԱՄԱՌՕՏ ՀԱՄԱՊԱՏՈՒՄ (1515-2020)  
(Ամփոփում)**

**Վարդգէս Նալպանտեան**  
vartkes@sassounent.com

Հիմնուելով անձնական, ընտանեկան, բանաւոր ու գրաւոր վկայութիւններու, պատմութեան եւ արձանագրութիւններու, ինչպէս նաեւ տպագիր նիւթերու վրայ, հեղինակը համառօտ համապատումը կը կատարէ Եթովպիոյ հայօճախին:

Աշխատասիրութիւնը կը նկարագրէ հայ-եթովպական հնագոյն առնչութիւնները, որոնք զօրացած էին երկու եկեղեցիներու դաւանաբանական նոյնանման ըմբռնումներուն պատճառով: Հուսկ, ան լուսարձակի տակ կ'առնէ ԺԵ.-ԺԹ. դարերու հայ դէմքեր, որոնք ծառայած են Եթովպիոյ գահակալներուն, սատարած Եթովպիոյ միջազգային յարաբերութիւններու մշակումին, եւ կը մանրամասնէ անոնց գործունէութիւնը:

Ապա համապարփակ կը ներկայացուին եթովպահայ ԺԹ. եւ Ի. դարերու դէմքերը, որոնք անգնահատելի նպաստ բերած են երկրին պետական, տնտեսական, շինարարական, արդիւնաբերական, ճարտարարուեստի, առետրական, մշակութային, արուեստի վերելքին: Անոնց կենսագործունէութիւնը ներկայացնելու ընթացքին կը պարզուին նաեւ հայօճախին ընդհանուր կենցաղային, ընկերատնտեսական եւ մշակութային երեսակները: Առանձին բաժիններով տրուած են հայօճախին դպրոցին, եկեղեցիին, ազգային հաստատութիւններուն եւ վարչութիւններուն պատումները:

Հուսկ, հեղինակը կ'ընդգծէ որ երկրին քաղաքական վերիվայրումները, մանաւանդ Հայլէ Սելասիէ կայսրին գահընկեցութիւնը եւ անոր յաջորդած քաղաքական, տնտեսական եւ ապահովական անկայունութիւնը, մանաւանդ հայապատկան արդիւնաբերական կեդրոններու, ընկերութիւններու, գործարաններու եւ սեփականութիւններու պետականացումը անվերականգնելի հարուած պատճառած է հայօճախին, մղելով մեծամասնութիւնը արտագաղթի: Ներկայիս հայօճախը կը հաշուէ մէկ տասերորդը իր փայլուն օրերու թուաքանակին:

# Հայ Ուղեգիրները Եթովպիայի եւ Հայ-Եթովպական Յարաբերութիւնների Մասին

Արտակ Մաղալեան  
artak\_77@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայ-եթովպական յարաբերութիւնները սկսում են դարերի խորքից: Դրան մեծապէս նպաստել է հայ եւ եթովպացի ժողովուրդների դաւանակից լինելը:

ԺԷ. դարում Եթովպիա թափանցած կաթոլիկութեան դէմ կատաղի պայքարից յետոյ, կայսր Ֆասիլիտէսի (1632–67) հրապարակած օրէնքով, մահուան էին դատապարտում Եթովպիա մուտք գործած օտարերկրացիները: Այդ օրէնքը չէր տարածում միայն հայերի եւ յոյների վրայ: ԺԷ.-ԺԹ. դարերում Եթովպիա են այցելել միքանի հայ գործիչներ, որոնք շարադրել են իրենց ուղեգրութիւնների նկարագրութիւնները:

Այս ուսումնասիրութեան մէջ քննարկուած են 1678ին Եթովպիա մեկնած Յովհաննէս արքեպիսկոպոս Թութունջիի, ԺԷ. դարավերջին այդ երկրում եղած ճանապարհորդ Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցու, 1764ին Եթովպիա այցելած վաճառական Յովհաննէս Թովմանցի (Թովմանցեան) եւ 1867ին միջնորդական առաքելութեամբ այնտեղ մեկնած Երուսաղէմի միաբան Տիմոթէոս վրդ. Սափրիչեանի ուղեգրութիւնները որպէս Եթովպիայի եւ հայ-եթովպական առնչութիւնների պատմութեան սկզբնաղբիւր:

## 1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒԹՈՒՆՋԻԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ

1678ին քաղաքական առաքելութեամբ Եթովպիա է մեկնել Կ. Պոլսի նախկին պատրիարք եւ Աղթամարի նախկին կաթողիկոս Յովհաննէս արքեպիսկոպոս Թութունջի, որը թողել է «Պատմութիւն Հապաշըստանայ գնալոյ եւ գալոյ ճանապարհին ի թուին Քրիստոսի 1678» վերտառութեամբ ուշագրաւ ուղեգրութիւնը: Այս աշխատութիւնը էջմիածնի մատենադարանում յայտնաբերել է յայտնի հայագէտ Կարապետ Տէրմկրտչեանը եւ հրատարակութեան յանձնել *Христианский Восток* հանդէսին, որտեղ էլ լոյս է տեսել 1914ին, ակադեմիկոս Ն. Մառի ռուսերէն զուգադիր թարգմանութեամբ եւ նշանաւոր եթովպագէտ Բ. Տուրանի ծանօթագրութիւններով<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Еп. Карапет, “Путешествие архиепископа Хованэса в Абиссинию, (Армянский текст, открытый и подготовленный для издания еп. Карапетом, с русским переводом Н. Я. Марра и с примечаниями Б. А. Тураева),” (Կարապետ եպս., Յովհաննէս արքեպիսկոպոսի ճանապարհորդութիւնը Հապէշիստան (հայերէն բնագիրը յայտնաբերեց եւ հրատարակութեան պատրաստեց Կարապետ եպիս-

Տարիներ անց պատմաբան Արշակ Ալպոյաճեանը Կ. Պոլսի Անտոնեան միաբանության մատենադարանում յայտնաբերել եւ հրատարակել է Թութունջիի ուղեգրության մէկ այլ տարբերակը՝ նրա հապէշական առաքելութեանը նուիրուած իր մեծարժէք աշխատութեան մէջ<sup>2</sup>: Յետագայում հայագիտութեան մէկ այլ երախտատուր՝ Յակոբ Անասեանը, Թութունջիի ուղեգրութեան այս երկու տարբերակները հրատարակել է ԺԷ. դարի արեւմտահայ ազատագրական շարժումների պատմութեանը նուիրուած իր ուսումնասիրութեան յաւելուածում<sup>3</sup>: Իսկ վերջերս բանասէր Արշակ Մադոյեանը հրատարակել է Թութունջիի ուղեգրութեան աշխարհաբար թարգմանութիւնը<sup>4</sup>: Ենթադրում է, որ Թութունջին ուղեւորուել է Եթովպիա՝ այդ երկիրը հակաթուրքական պայքարի ներգրաւելու նպատակով: Այդ կապակցութեամբ Ալպոյաճեանը կարծում է, որ «Յովհաննէս Թութունջիի դէպի Հապէշիստան այս առաքելութիւնը կապ ունէր Թութերու դէմ մղուած պայքարին եւ Թութքին վրայ գալու նախապատրաստութիւն մըն էր...»<sup>5</sup>:

Յովհաննէս Թութունջին իր ուղեւորութիւնը սկսել է 1678 Սեպտեմբերի 17ին Մարից (Գահիրէ)<sup>6</sup>, եւ Կարմիր ծովով՝ Սովակին (այժմ՝ Սուտանի տարածքում) ու Մուսովա (Ժամանակակից Էրիթրէայի տարածքում) նաահանգիստների վրայով, հասել Հապէշստանի սահմանին գտնուող Դիարպատ քաղաքը: «Ի Դիարպատու Հապաշի թագաւորին վեզիրն վասն մեր արզ արաւ թագաւորին,– գրում է Թութունջին,– եղել հրաման գնալու. տեղէն 30 օր հասաք ի Դումպիա, որ է դախսի Հապէշու թագաւորին»<sup>7</sup>: Այնուհետեւ յաջորդում է Հապէշստանի աթոռանիստ Դումպիայի հակիրճ նկարագրութիւնը. «Իսկ քաղաքն Դումպիոյ երկու չափ մեծ է քան զՍտամբուլ առանց պարսպի, եւ թագաւորին տունն է միայն պարսպով»<sup>8</sup>:

Կարեւոր գիտական նշանակութիւն ունեն Եթովպիայի պետական կարգի մասին Թութունջիի հաղորդած տեղեկութիւնները: «Եւ երկրի լայնութիւնն ասեն 5 ամսէն ճամբիայ է,– գրում է նա,– եւ այսքան երկրումն 6 թագաւորութիւն կայ քրիստոնեայ. բայց զլուխն Դումպիոյ թագաւորն է իբրեւ իմփերայթօր. միսք թագաւորքն հնազանդին սմա եւ որ ինչ տղայք ծնա-

կոպոսը, ռուսերէն թարգմ.՝ Ն. Մառ, ծանօթ.՝ Բ. Տուրաւեւ), *Христианский Восток*, I(III):1914, Փետրոկրատ, էջ 6–16:

<sup>2</sup> Ա. Ալպոյաճեան, *Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշիստան ԺԷ. դարուն*, Տպ. «Նոր աստղ», Գահիրէ, 1946, էջ 3-11:

<sup>3</sup> Յակոբ Անասեան, *XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 301-11:

<sup>4</sup> ԺԵ.-ԺԸ. դարերի ուղեգրութիւններ, գիրք Բ., թարգմ., առաջաբան եւ ծանօթ.՝ Ա. Մադոյեանի, «Նայիրի» հրատ., Երեւան, 2005, էջ 93-97:

<sup>5</sup> Ալպոյաճեան, էջ 112:

<sup>6</sup> Նոյն, էջ 3. նաեւ, էջ 306:

<sup>7</sup> Նոյն, էջ 4. նաեւ, Անասեան, էջ 302:

<sup>8</sup> Նոյն, էջ 4-5. նաեւ, Անասեան, էջ 302:

նին այս 6 թագաւորքն եւ թագուհիքն, ուղարկեն Դումպիոյ թագաւորին մօտն, որն որ կամի զայն, զայն թագաւոր դնէ իւրեանց հօր տեղն»<sup>9</sup>: Այնուհետեւ հեղինակը թուարկում է նաեւ այդ թագաւորութիւնները. «Եւ անուն թագաւորաց քաղաքին մեծի ասի Թումպիա. երկրորդին Տիգրէ. երրորդին Աշղաւ. 4. Բագա. 5. Հասէ. 6. Ճիլկա»<sup>10</sup>:

Թութունջին անմիջական շփումներ է ունեցել Եթովպիայի թագաւորի հետ, ուստի նրա ուղեգրութեան առաւել արժէքաւոր հատուածներից են տեղի արքայի մասին հաղորդումները. «Եւ ինքն թագաւորն է յուժ աստուածասէր եւ բարեպաշտ. տեսլեամքն գեղեցիկ եւ հասական Բ (2) կանգուն բարձր, քան զամենայն մարդիկք: Իսկ զգեստն երբեմն է զարպաֆ եւ երբեմն ֆութայով ծածկած եւ ականակուռ թագն ի գլուխն: Եւ ինչ տեղ որ նստի, Ա (1) թօփուզ, Ա (1) թուր եւ Ա (1) խանչար աթոռովն առջեւն դնեն, եւ մին խանչար միշտ ի մէջքն է»<sup>11</sup>: Թէեւ Թութունջին չի նշում այդ գահակալի անունը, սակայն նրա այցելութեան ժամանակ Եթովպիայի կայսրը (նեկուսը) եղել է Ֆասիլիտէսի որդին՝ Յոհաննիս Ա.ը (1667–82):

Այնուհետեւ Թութունջին ներկայացնում է հապէշ միապետի իրականացրած դատավարութիւնը, որին, անտարակոյս, ներկայ է գտնուել նաեւ ինքը: «Եւ ամէն օր երկու անգամ ի դիւան կու նստի (թագաւորը – Ա.Մ.) առաւօր եւ երեկոյ,– գրում է նա,– 12 դատով (դատաւորով – Ա.Մ.) եւ 2 մեծ վեզիրով, 2 մեծ թուր ի ձեռաց երկու վեզիրն: Դատաստանագիրքն առաջեւն են, այս օրէն դատաստանն վաղն չեն ձգել, թէ չէվիշ (քաղաքացիական – Ա.Մ.), թէ կամանել (ակնյայտ վրիպակ է, պետք է կարդալ կրիմինալ՝ քրէական – Ա.Մ.)»<sup>12</sup>:

Թութունջիի ուղեգրութեան՝ Ալպոյաճեանի հրատարակած տարբերակում առկայ է նաեւ Եթովպիայի թագաւորի ընթրիքի պատկերաւոր նկարագրութիւնը. «Եւ յորժամ թագաւորն նստի ի սեղան,– շարունակում է Թութունջին,– 2 աւագերէց մինն յաջ եւ մինն յահեակն կու կանգնին, եւ 2 վեզիր առաջեւն եւ թագաւորին ձեռաց մին ճոթ կայ, եւ ինչ կերակուր վեզիրքն հրամայեն՝ չաշնի գիրն (սեղանապետը – Ա.Մ.) զայն կերակուրն դնէ հացին վրայ ուրէ թագաւորն, նոյնպէս եւ ըմպելն, որ ինչ վեզիրքն հրամանեն»<sup>13</sup>: Այս տողերը գալիս են փաստելու, որ այն ժամանակ, երբ օտարերկրացիները մուտք չունէին Եթովպիա, Թութունջին ոչ միայն արժանացել է կայսր Եոհաննիս Ա.ի ընդունելութեանը, այլեւ առիթ է ունեցել մասնակցելու արքայական ճաշկերոյթին:

<sup>9</sup> Նոյն, էջ 5. նաեւ, Անասեան, էջ 302:

<sup>10</sup> Նոյն, էջ 9. նաեւ, Անասեան, էջ 302:

<sup>11</sup> Անասեան, էջ 302-303:

<sup>12</sup> Ալպոյաճեան, էջ 5. նաեւ, Անասեան, էջ 303:

<sup>13</sup> Նոյն, էջ 6:

Եթովպիայի ընկերատնտեսական կեանքի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի հեղինակի այն հաղորդումը, թե այդ երկիրը «բնաւ սքայ (սիքէ, դրամ – Ա.Մ.) չունի, այլ աղով կ'անեն ալիշ վերիշն (առեաւորը – Ա.Մ.)»<sup>14</sup>:

Թութունջին հաղորդում է նաեւ սեղմ տեղեկութիւններ Եթովպիայում բնակուող այլ ժողովուրդների մասին. «Եւ երկիրն շատ հրէայք կան բնիկք<sup>15</sup> եւ թուրք որ յետոյ են եկել»<sup>16</sup>:

Հեղինակը թէւ իր այցելութեան ժամանակ Եթովպիայում բնակուող հայերի մասին ուղղակիօրէն ոչինչ չի հաղորդում, սակայն տալիս է մի յուժ ուշագրաւ տեղեկութիւն, որն ունի կարևոր նշանակութիւն հայ-եթովպական նախընթաց յարաբերութիւնների ուսումնասիրութեան համար: «Եւ են 2 ազգ.– գրում է նա,– մինն ասի Թելմանոսք, որ ի յազգէն հրէից են յառաջ եկեալ. եւ մինն Թադէոսեանք, որ յազգէն հայոց են յառաջ եկեալ: Թելմանոսեանքն ունին ճՌ (100.000) վանք, թող զգեղօրէից եկեղեցիքն, եւ Թադէոսեանքն ունին ՁՌ (80.000) վանք, թող զգեղօրէիցն»<sup>17</sup>:

Այս մշուշապատ տեղեկութիւնը, որի հիմքում ընկած է Եթովպիայի նախընթաց պատմութիւնը, կարիք ունի լրացուցիչ մէկնաբանութեան: Բանն այն է, որ Թութունջիի յիշատակած Թելմանոսը ոչ այլ ոք է, եթէ ոչ հապէշ նշանաւոր կրօնական գործիչ Թակլա-Հայմանօթը: Ըստ հայ-եթովպական յարաբերութիւնների հմուտ գիտակ Յարութիւն Թուրշեանի՝ «Թակլա-Հայմանօթը հապէշ սրբերի մէջ գրաւում է առաջին տեղը, որպէս Աքսումի ինն երանելիների՝ քրիստոնէութեան փարածողների գործի շարունակողը, որովհետեւ նա կարողացաւ ԺԳ. դարում քրիստոնէութիւնը փարածել հարաւի հեթանոսական Շօա նահանգում. այդ նրա մեծագոյն գործն էր, եւ այդ պատճառով նրան մեծարում է Հապէշ եկեղեցին եւ ժողովուրդը: Միւս կողմից նրա օգնութեանը եւ ջանքերին է վերագրում Իկունօ-Ամլակի Սողոմոնեան քրիստոնէական հարստութեան վերականգնումը երկրում»<sup>18</sup>:

Իսկ Սողոմոնեան հարստութիւնը, այդ վերականգնուած արքայատոհմի առաջին գահակալ Իկունօ-Ամլակից (1270–85) սկսած<sup>19</sup>, առանցքային

<sup>14</sup> Նոյն, էջ 5. նաեւ, Անասեան, էջ 304:

<sup>15</sup> Խօսքը եթովպական հրեաների՝ ֆալաշաների մասին է:

<sup>16</sup> Ալպոյաճեան, էջ 7:

<sup>17</sup> Նոյն. նաեւ, Անասեան, էջ 304:

<sup>18</sup> Յարութիւն Թուրշեան, «Հապէշ կրօնական գործիչ Ս. Եատաթէոսը եւ հայ եկեղեցին», էջմիածին, IV–V:1956, էջ 101:

<sup>19</sup> Б. Тураев, “«Богатство царей». Трактат о династическом перевороте в Абиссинии в XIII веке,” (Բ. Տուրաեւ, «Արքաների հարստութիւնը», տրակտատ Հապէշստանում ԺԳ. դարի դինաստիական յեղաշրջման մասին), «Записки Восточного отделения Императорского Русского археологического общества», հիդր. XIII, Սանկտ Պետերբուրգ, 1901, էջ 157–71. նաեւ՝ *The Cambridge History of Africa, Volume 3: From c.1050 to c.1600*, edited by Roland

դեր է ունեցել Եթովպիայի պատմութեան ողջ ընթացքում: Բաւական է նշել, որ Եթովպիայի վերջին կայսր, հռչակատուր Հայլե Սելասիէ Ա.ը (1930–74) համարում է այդ հարստութեան 85րդ գահակալը:

Ինչ վերաբերում է Թութունջիի յիշատակած Թադէտսին, ապա նա հապէշ սրբերի շարքը դատուած երկրորդ մեծ կրօնական գործիչ Մակաբա-Էկզիէն է, որն առաւել յայտնի է Եատաթէոս անունով<sup>20</sup>: Նրա գործունէութիւնը այնքան սերտօրէն է կապուած եղել Հայ Եկեղեցու հետ, որ նրան յաճախ հայ են անուանել ինչպէս կենդանութեան օրօք, այնպէս էլ յետագայում: Եատաթէոսի ուսմունքի մէջ հիմնականը նրա պայքարն էր Թակլա-Հայմանոթի հետետորդների Դաբրա-Բիզանոսեան դպրոցի դէմ: Նրա սկսած շարժումը հայկական է անուանել ոչ միայն Թութունջին, այլեւ Թակլա-Հայմանոթի համախոհները: Պատահական չէ, որ Եատաթէոսի հետետորդներից մէկը նրան ուղղակի անուանում է «հայ քահանայ»<sup>21</sup>:

Եատաթէոսը երեք անգամ եղել է Կիլիկիայի Հայոց Թագաւորութիւնում: Նա վերջին անգամ Կիլիկեան Հայաստան է ժամանել 1344ին, եւ այնտեղ մնալով 14 տարի, իր մահկանացուն է կնքել 1358ին ու թաղուել հայկական եկեղեցում: Մահուան մահճում նա իր աշակերտներին պատուիրել է վերադառնալ Եթովպիա եւ այնտեղ հաղորդել Հայ Եկեղեցու առաքելականութիւնը<sup>22</sup>: Եթովպիայի պատմութեան մէջ կարեւոր նշանակութիւն ունեցած հենց այս իրողութիւններն են, որոնք իրենց արտացոլումն են գտել Թութունջիի ուղեգրութեան սեղմ եւ առաջին հայեացքից անհասկանալի թուացող տողերում:

Նրա երկի կարեւորագոյն արժանիքներից մէկն էլ Կապոյտ Նեղոսի կամ, ինչպէս եթովպացիներն են անուանում, Աբբայ գետի ակունքների տեղադրութեան ճշտումն է: Այդ կապակցութեամբ Թութունջին մասնաւորապէս գրում է. «*Ի Յունիսի ամսոյն մինչեւ Հոկտեմբեր ամիսն ձմեռն է որ բարձր սարերն ձիւն կու գայ. եւ այս 4 ամիսս ամէն օր 2 անգամ անձրեւ կու գայ եւ գիշերն մինչեւ լոյս. եւ որքան անձրեւ որ կու գայ ամէն կու հաւաքին ի ծովակ մի (Թանա լիճը – Ա.Մ.), որ պարէ 15 օր. եւ Նիլ գետոյ ակն այս ծովակիս մօտ է. կու մտնու այս ծովակիս մէջ, եւ այս ծովակիս*

---

Oliver, Cambridge University Press. 1977, էջ 133. նաեւ՝ Д. Бакстон, *Абиссинцы. Потомки царя Соломона* (Դ. Բակստոն, Հապէշներ. Սողոմոն թագաւորի սերունդները), Մոսկուա, 2002, էջ 45:

<sup>20</sup> Նրա մասին մանրամասն տե՛ս՝ Թորշեան, «Հապէշ կրօնական գործիչ Ս. Եատաթէոսը եւ հայ եկեղեցին», *Էջմիածին*, IV–V:1956, էջ 101-3, VI:1956, էջ 53-7: Եատաթէոսի մասին տեղեկութիւնները վերցուած են այս յօդուածից:

<sup>21</sup> Նոյն, էջ 102-3:

<sup>22</sup> Նոյն, էջ 103:

ջուրն կ'ելնէ 2 սարամիջով կու գնայ Մար, որ Մարայ երկիրն շէն կու պահէ. եւ թէ Հապաշի թագաւորն կամենայ կարէ կտրել զՄարու ջուրն»<sup>23</sup>:

Յետագայում Թութունջին իր տեսածի մասին պատմել է Աբբա լը Մասկրիէին, որն այդ առիթով գրել է. «Երկու իրարու մերձաւոր լեռներու կտրծքէն, որոնց վերեւ երկու բարձրադիր դղեակներ կը տեսնուին, կ'իջնէին երկու խոշոր վտակներ, որոնք կ'իյնային դաշտին մէջ եւ կը միանային Կամպէա լիճին, ուրկէ յետոյ կ'ելլէր այս հոչակաւոր գետը՝ սկիզբները փոքր գետակի մը ձեւին տակ: Այս տեղեկութիւնը ինծի հաստատեց հայ եպիսկոպոս մը՝ որ Եթովպիոյ արքունիքը գտնուելով թագաւորէն արտօնութիւն ստացած էր տեսնելու Նեղոսի աղբիւրները»<sup>24</sup>: Ինչպէս տեսնում ենք, Աբբա լը Մասկրիէն Կապոյտ Նեղոսի ակունքների յայտնաբերող է համարում Յովհաննէս Թութունջին: Այսպիսով, «Յովհաննէս Թութունջի կը գտնէր Նեղոսի աղբերակները, առաջին սպիտակամորթը հանդիսանալով այս բաղձալի ակը տեսնող»<sup>25</sup> գրում է Ալպոյաճեանը:

Սակայն, ժամանակակից գիտութիւնը այս կարեւոր աշխարհագրական գիտը վերագրում է սկոպտիացի նշանաւոր ճանապարհորդ Ճէյմս Պրուսին, որի գլխաւորած արշաւախումբը Կապոյտ Նեղոսի ակունքներին է հասել Թութունջիից գրեթէ մէկ դար անց՝ 1770ին: Մեծն Բրիտանիա վերադառնալուց յետոյ Պրուսը 1790ին Լոնտոնում հրատարակեց իր հնգատոր մեծարժէք ուղեգրութիւնը<sup>26</sup>: Սակայն, հարկ է նշել, որ Պրուսի հրատարակած հատորները որեւէ կերպ չեն կարող մթագնել Յովհաննէս Թութունջիի ուղեգրութեան սեղմ տողերի գիտական արժէքը: Անկախ ամէն ինչից, հայ ուղեգիրը լիովին արժանի է, որ նրա անունը եւս յիշուի Ափրիկէ մայրցամաքում կատարուած աշխարհագրական յայտնագործութիւնների պատմութեան մէջ:

Թութունջին Եթովպիայում մնացել է չորս ամիս, եւ, ծանձրանալով հապէշ հոգեւորականութեան՝ հաւատաքննութիւն յիշեցնող հարցերից, եւ, հաւանաբար, համոզուելով նաեւ իր առաքելութեան անիրագործելիութեան, բռնել է վերադարձի ճանապարհը: «Եւ իմ կացեալ ի Հապաշստան

<sup>23</sup> Ալպոյաճեան, էջ 6-7. նաեւ՝ Անասեան, էջ 304: Ի դէպ, Թութունջին այստեղ կրկնում է Եթովպիայի արքաների կողմից Կապոյտ Նեղոսի ջուրը կտրելու մասին՝ Եգիպտոսում տարածուած ասանդութիւնը (այդ մասին տես Կ. Лукницкий, “Абиссиния с древнейших времен до эпохи империализма,” *Абиссиния (Эфиопия)*, *Сборник статей* (Կ. Լուկնիցկի, Հապէշստանը հնագոյն ժամանակներից մինչեւ կայսերապաշտութեան դարաշրջանը, «Հապէշստան (Եթովպիա)», յօդուածների ժողովածու), ՍՍՄ ԳԱ հրատ., Մոսկուա-Լենինկրատ, 1936, էջ 358):

<sup>24</sup> Նոյն, էջ 100:

<sup>25</sup> Նոյն, էջ 125:

<sup>26</sup> James Bruce, *Travels to Discover the Source of the Nile, in the Years 1768, 1769, 1770, 1771, 1772 and 1773, in Five Volumes*, Լոնտոն, 1790:

Դ (4) ամիս. խնդրեցի հրամանն ելանելոյ,- գրում է նա,- զի ոչ կարացի կեալ վասն վշտացուցանելոյ զմեզ քահանայիցն յաղագս հարցափորձի բազմիցս օրինաց մերոց եւ հաւապոց համար»<sup>27</sup>:

Այդ կապակցութեամբ Ալպոյաճեանը իրաւացիօրէն նկատում է, որ «Հապէշ կղերը եւ հաւանօրէն նաեւ ժողովուրդը նոյնպէս շար համակիր չէին կրնար եղած ըլլալ Յովհաննէս Թիֆլինճիի քաղաքական առաքելութեան, որուն նմանները անցեալին ալ փորձուած եւ Հապէշիստանի համար օգտակար չէին եղած»<sup>28</sup>:

Այսպիսով, Թութունջին 1680 Սեպտեմբերի 27ին<sup>29</sup>, այսինքն՝ իր ուղեւորութեան սկզբից երկու տարի եւ տասը օր անց, ցամաքային ճանապարհով Սեննարի (Sennar) վրայով վերադարձել է Գահիրէ: Սրանով էլ ասարտում է Թութունջիի ավիրիկեան ողիսականը:

Յովհաննէս Թութունջիի հապէշական ուղեգնացութիւնը հայ-եթովպական յարաբերութիւնների առաւել ուշագրաւ էջերից է, իսկ նրա առաքելութեան շնորհիւ ստեղծուած ուղեգրութիւնը հանդիսանում է ոչ միայն երկու դաւանակից ժողովուրդների պատմական կապերի մասին վկայող մեծարժէք գրական յուշարձան, այլեւ, չնայած իր սեղմ ծաւալին, ունի կարեւոր եթովպագիտական նշանակութիւն:

## 2. ԱԻՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅՈՒ ՈՒՂԵՑՈՅՑԸ

ԺԷ. դարի վերջին, Եթովպիայում է եղել հայ մշակութային գործիչ, աստղագէտ, տոմարագէտ եւ ճանապարհորդ Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցին, որի աշխատութիւնները «յայտնի են 1684–1719 թուականներից»<sup>30</sup>: Նրա կազմած «Աշխարհացոյցում» յատկապէս կարեւոր գիտական նշանակութիւն ունի «Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ, այսպէս է» վերնագրով հատուածը: Այդ ուղեցոյցը առաջին անգամ հրատարակուել է 1897ին հայր Ղեւոնդ Ալիշանի աշխատասիրութեամբ՝ *Բազմավէպում*<sup>31</sup>, այնուհետեւ լոյս է տեսել նաեւ իտալերէն<sup>32</sup>: Իսկ մէկ տարի անց՝ 1898ին, յայտնի հայագէտ Գրիգոր Խալաթեանցը Մոսկուայում լոյս է ընծայել Աւետիք Տիգրանակերտցու ուղեցոյցի ռուսերէն թարգմանութիւ-

<sup>27</sup> Ալպոյաճեան, էջ 9. նաեւ՝ Անասեան, էջ 305:

<sup>28</sup> Նոյն, էջ 111. նաեւ՝ Վ. Վարդանեան, *Աղթամարի կաթողիկոսութեան պատմութիւն*, Ս. Էջմիածին, 2017, էջ 179-80:

<sup>29</sup> Ալպոյաճեան, էջ 10-11:

<sup>30</sup> Յ. Անասեան, «Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցու աշխատութիւնները», *Մանր երկեր*, Լոս Անճելըս, 1987, էջ 829:

<sup>31</sup> Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, «Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ, այսպէս է», *Բազմավէպ*, 10:1897, էջ 459-63:

<sup>32</sup> P. L. Alishan, *Un viaggiatore armeno traverso l'Abissinia*, Dagli Atti del R. Istituto Veneto di scienze, lettere ed arti, Tomo VIII, Serie VII. 1896–1897, Վենետիկ, 1897.

նը<sup>33</sup>: Դա Եթովպիայի առաջին աշխարհագրական նկարագրություններից մեկն է, որն ազգագրական բնույթի հետաքրքիր տեղեկություններ է պարունակում այդ մեկուսացած երկրի բնակիչների մասին:

Աւետիք Տիգրանակերտցին եւս իր ճանապարհորդութիւնը սկսել է Մարից (Գահիրէ)<sup>34</sup>, եւ ժամանակակից Սուտանի տարածքում գտնուող Տունկուլայի ու Սեննարի թագաւորութիւնների վրայով անցել Եթովպիա:

Նրա ուղեցոյցում մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Եթովպիայի հինգ աստատիրական իշխանապետութիւնների հակիրճ նկարագրութիւնները: «Տունճիէն 5 օրն կ'երթայ մինչ ի Համէճ,- գրում է Տիգրանակերտցին,- որ սոցա թագաւորն կին է, հաստատունկ եւ արաս պէ: Համէճու 8 օրն կ'երթայ ի Ահմարային մեծ քաղաքն, որ են քրիստոնեայք, եւ եպիսկոպոսութիւն է. եւ է այս Առաջին Հէպէշ, որ են զարմ Սողոմոնի, եւ է այս Դշխոյն հարաւոյ ի երկիրն. եւ անուն թագաւորին է Յեսու. եւ թագաւորանիստ քաղաքքն այս են՝ Կօնտար, Խաթամա, Տումպիս»<sup>35</sup>:

Կարծում ենք, այս տողերից ակնյայտ է դառնում, որ Տիգրանակերտցին եղել է Եթովպիայի այն ժամանակուայ մայրաքաղաք Կոնտէրում, երբ այնտեղ իշխում էր Սողոմոնեան հարստութեան ներկայացուցիչ («զարմ Սողոմոնի»), մեզ նախաձանօթ Եոհաննիս Ա.ի որդին՝ Յեսու Ա.ը կամ Յեսու Աեծը (1682–1706): Շատ հաւանական է, որ նա եւս, Թութունջիի նման, արժանացել է Եթովպիայի նեկուսի ընդունելութեանը:

Այնուհետեւ, Աւետիք Տիգրանակերտցին տալիս է Եթովպիայի մնացած իշխանապետութիւնների տեղորոշումներն ըստ Ամհարայից ունեցած աշխարհագրական դիրքի կամ հեռաւորութեան, ինչը նշանակում է, որ նա շրջել է այդ բոլոր թագաւորութիւններում: «Ահմարային ի յաջ դիհն ազգ մի կայ,- գրում է նա,- Ակով ասեն ազգին, որ է Ե (5) Հէպէշ. քրիստոնեայ են. իրեանց թագաւոր ունին, Ահմարային հնազանդին. բայց այս Ակովիս շարն ջոուր են»<sup>36</sup>: Նշուած «Ակով» ազգը հիւսիսային Եթովպիայում բնակուող ակաու (ակաւ) ցեղախումբն է, որի մէջ, իրօք, մեծ թիւ էին կազմում յուդայադասան ֆալաշաները<sup>37</sup>:

<sup>33</sup> *Армянский памятник XVII-го века с данными о географии Абиссинии и северной Африки вообще. Itinerarium Аветика Багдасариана, чтеца из Тигранакерта*, Изложил Г. А. Халатьянц. (Մէ. դարի հայկական յուշարձան Հապէշիստանի եւ առհասարակ Հիսիսային Ափրիկէի աշխարհագրութեան մասին. Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցու Itinerariumը. թարգմ.՝ Գ. Խալաթյանց), Типография А. И. Мамонтова, [Մոսկուա, 1898], 6 էջ:

<sup>34</sup> Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, էջ 459:

<sup>35</sup> Նոյն, էջ 460:

<sup>36</sup> Նոյն:

<sup>37</sup> Ֆալաշաները Աքսումի թագաւորութեան այն տարրերի յետնորդներն են, որոնք իրաժարվուեցին քրիստոնէութիւն ընդունել: Նրանք նախկինում յայտնի էին որ-

Յետագայ շարադրանքում հեղինակը ներկայացնում է Եթովպիայի յայտնի Թիկրէի իշխանապետութիւնը: «*Ահմարային ձախ դին են ազգն Թգռէլաց,- գրում է Տիգրանակերտցին,- որ են Դ (4) Հէպէշ. որ հայոց Թադէոս վարդապետն է դարձուցեր. ունին մեծ թագաւոր, բայց Ահմարային հնազանդեն: Աստից մինչ ի Կարմիր ծովն 20 աւուր ճանապարհ՝ լայն եւ արձակ երկիր է. Թգռէլ կ'ասեն ազգին կամ Թգռուր*»<sup>38</sup>: Նշուած «հայոց Թադէոս վարդապետը» ոչ այլ ոք է, եթէ ոչ հապէշ կրօնական գործիչ Եստաթէոսը, որին ժամանակակիցները պարզապէս հայ են անուանել: Փաստօրէն, Աւետիք Տիգրանակերտցին եւ նրան հայ է համարում:

Ամհարայից հեղինակը ճանապարհում է դէպի Կալլաների երկիրը<sup>39</sup>, որոնց մասին հաղորդում է հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնները. «*Եւ Ահմարայէն դէպ յարեւելս 5 օրէն ճանապարհ հուքմ ունի, մինչ ի Կալլայու ազգաց երկիրն. որ են Կալլացիք Գ (3) Հապաշ. եւ են սակաւ, բայց ծիաւոր են եւ զօրաւոր. ամէն Հապաշի թաթարն սոքա են. սահմարացիք սոցանէ կու վախեն. քէնքուլների մէջն ածիլած է, եւ սուննէթ չունին. այլ ամէն ազգն ունին սուննէթ եւ մկրտութիւն*»<sup>40</sup>: Տիգրանակերտցուց առաջ միայն հաշուած օտարերկրացիներ էին եղել ռազմատենչ կալլաների երկրում:

Այնուհետեւ նա հակիրճ ներկայացնում է Նարիայի իշխանութիւնը. «*Դարձեալ, Ահմարայէն դէպ ի հարաւ՝ 20 օրէն ճանապարհ է մինչ ի Նարիա մեծ թագաւորութիւնն, որ են Բ (2) Հէպէշ. ուժով են շատ. քրիստոնեայ են. ճերմակ են. մինչ ի ծովեզրն հարաւոյ Նարիա թագաւորութիւնն է, նոքա կու թագաւորեն*»<sup>41</sup>: Հեղինակի մատնանշած Նարիայի իշխանութիւնը համապատասխանում է Եթովպիայի հարաւում գտնուող Էնարիա (Enarya) գաւառին:

Ինչպէս տեսնում ենք, **Տիգրանակերտցին ճանապարհորդել է գրեթէ ողջ Եթովպիայով՝ հանդիսանալով այդ հեռաւոր երկրի առաջին աշխարհագրական նկարագրութիւններից մէկի հեղինակը: Նրա կազմած Հապէշստանի ուղեցոյցը մնայուն էջ է հայ-եթովպական յարաբերութիւնների պատմութեան մէջ:**

Եթովպիայից Տիգրանակերտցին անցել է Ֆոռի թագաւորութիւնը, որը հանդիսանում է ժամանակակից Սուտանի տարածքում գտնուող յայտնի Տարֆուր նահանգը: «*Դարձեալ, ի Սիլովանիէ մինչ ի Ֆօռի ազգի թագաւորութիւնն 20 օրէն ճանապարհ է դէպ արեւմուտք,- գրում է նա,- այն 20*

պէս Եթովպիայի «սեւ հրեաներ», իսկ իրենք իրենց անուանում են «բետա Իսրայէլ» կամ «տունն Իսրայէլի» (Бакстон, էջ 22):

<sup>38</sup> Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, էջ 460-61:

<sup>39</sup> Կալլաների մասին տես՝ Դ. Ольдерогге, “Население и социальный строй,” (Դ. Օլդերոգգէ, Ազգաբնակչութիւնը եւ հասարակական կարգը), *Абиссиния (Эфиопия)*, էջ 107-23:

<sup>40</sup> Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, էջ 461:

<sup>41</sup> Նոյն:

օրն երկու տեղ ջուր կայ. գնացողն պիտի ըղպով ջուր տանի... Այլ եւ Տօռ ազգն որ ասացի՝ գեղեցիկ են, եւ մեծ թագաւոր են, զօրեղ եւ մէրպում են (քաջ այր). արաս պէն. **հայասէր են** (ընդգծումը մերն է – Ա. Մ.). հագուն կապուն Օսմանցու պէս»<sup>42</sup>: Դժուար է ասել, ինչով էր պայմանաւորուած հեղինակի կողմից տարֆուրցիներին տրուած «հայասէր» բնորոշումը. արդեօք դա հետեւանք էր հենց իր հանդէպ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի՞, թէ՞ նրանից առաջ եւս հայեր էին անցել այդ անկոխ ճանապարհներով:

Տարֆուրից Տիգրանակերտցին ճանապարհուում է դէպի Թգռուրի թագաւորութեան Տարսլէի քաղաքը, որի վերաբերեալ մասնաւորապէս գրում է. «Եւ ի Տօռայ երկրէն մինչ ի Թգռուրի թագաւորութեանն քաղաքն՝ որ անունն է Տարսլէի, 20 օր է. թագաւորն արաս պէ, անունն Սուլթան Մահմէտ է. 40 տղայ ունի. մէկ կնկան համար զմէկ տղան սպանեց, ի մեր ժամանակն, որ մեք հոն էաք: Եւ այս Թգռուր ազգն գեղեցիկ են եւ սիրուն տեսլեամբ, մահմետականք են եւ արաս»<sup>43</sup>:

Իր ճանապարհորդութեան աւարտին Աւետիք Տիգրանակերտցին եղել է նաեւ Հիւսիսային Ափրիկէի երկրներում՝ Թունիսում («Թոնուզ»), Ալժիրում («Ճեգայիր») եւ Մարոքում («Մաղրուպ»), հասել մինչեւ Ճիպրալթարի նեղուց<sup>44</sup>:

Այս ճանապարհորդութիւնն իրականացնելու ժամանակ նրան ուղեկցել է խարբերդցի Աստուածատուր վարդապետը, ինչպէս տեղեկանում ենք սոյն ուշագրաւ աշխատութեան վերջում բերուած յիշատակարանից. «Արդ, փոքր ի շարէ գայսքան երկիրս որ գրեցի, տեսածս եւ շուրջ եկածս տեղեկացայ եւ գրեցի՝ իբրեւ աշխարհացոյց: Թէ տեսնէք եւ կարդայք կամ օրինակէք, յիշէք զաշխարհութիւնս իմ, եւ Աստուած ողորմին մի խնայէք. որ ես նուաստ գրիչս Աւետիք ընթերցող՝ ծնունդ Տիգրանակերտեան, ի հետ խարբերդցի Աստուածատուր վարդապետին՝ մականունն Թըմպուկ կոչեցեալ, չափեցաք զայս երկրներս»<sup>45</sup>:

Դժուար է ասել, թէ ինչն է ստիպել Աւետիք Տիգրանակերտցուն ձեռնարկելու նման մի վտանգաւոր ուղեւորութիւն, սակայն ակնյայտ է, որ նրա իրականացրած ճանապարհորդութիւնը Եթովպիայով եւ Հիւսիսային Ափրիկէի երկրներով իր ժամանակների համար մի համարձակ գիտական սխրագործութիւն էր:

### 3. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՃԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1764ին Եթովպիա է այցելել հայ վաճառական Յովհաննէս Թովմաճանը (Թովմաճանեան, 1717–1806), որի ինքնակենսագրութեան «Ուղեւորու-

<sup>42</sup> Նոյն, էջ 462-63:

<sup>43</sup> Նոյն:

<sup>44</sup> Նոյն, էջ 463:

<sup>45</sup> Նոյն:

թին յԵթովպիա» գլուխն ունի կարեւոր Եթովպագիտական նշանակութիւն: Այն առաջին անգամ 1937ին հրատարակել է հայր Եղիա Փեչիկեանը՝ *Քազմավէպում*<sup>46</sup>: Այնուհետեւ Թովմաճանի ուղեգրութեան այդ հատուածը Վրէժ Ներսիսեանի թարգմանութեամբ եւ նշանաւոր փորհկագէտ Ռիչերտ Փենքըրսթի ծանօթագրութիւններով լոյս է տեսել *Journal of Ethiopian Studies*ում<sup>47</sup>: Իսկ բանասէր Արշակ Մադոյեանը 2005ին հրատարակել է այդ գլխի աշխարհաբար թարգմանութիւնը<sup>48</sup>:

Իր ինքնակենսագրութիւնը Թովմաճանը շարադրել է 1790ին, Ս. Ղազարում, 74 տարեկան հասակում, Մխիթարեան միաբանութեան արքահայր Ստեփանոս Մելգոնեանի առաջարկութեամբ, ինչպէս տեղեկանում ենք նրա երկի առաջաբանից. «Այս ինչ յայտ առնեմ, որ այս Թովմաճանեան Տէր մահտեսի Յովհաննէս երբ եմուտր ի վասս, խօսակցելով զըրջագայեալ տեղեաց նորալուր պատմութեանցն, յարմար երեւեցաւ տալ գրել նմա զպատմութիւնս ի ծննդենէ մինչեւ ի եօթանասուն չորս ամ հասակի իւրոյ զամենայն անցսն՝ որք անցին ընդ նա: Որովհետեւ եւ զերիս մասն աշխարհիս՝ յԵրոպիա, յԱսիա, եւ յԱփրիկէ՝ զերեսուն ինքնիշխան պետութիւնս եւ զթագաւորութիւնս շրջագայեալ էր: Վասն որոյ Գերյարգելի Ստեփանոս Երկրորդ Աբբայն Մելգոնեան, եւ հոգեւոր խրատաւորու Հայրն առաջարկին նմա գրել զպատմութիւն իւր ըստ կարգի...»<sup>49</sup>:

Թովմաճանը 1762ին, Կոստանդնուպոլսից իր որդի Պողոսի հետ մեկնում է Եգիպտոս՝ այնտեղից Հնդկաստան անցնելու նպատակով: Սակայն ճանապարհին, Ճետտայում հանդիպում է Երուսաղէմից վերադարձող հապէշ թագաւորի եղբորորդի Այտու Պիճօ Ռաֆայէլին, որն էլ նրանց առաջարկում է իր հետ գնալ Եթովպիա:

Նրանք 1764 Յունուարի 11ին նաակով դուրս են գալիս Ճետտայից եւ Եմէնի ափերի մօտից անցնելով Կարմիր ծովը ու բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարելով՝ Փետրուարի 19ին հասնում են Եթովպիայի առաջին գիւղաքաղաքը՝ Տիբսէ<sup>50</sup>: Վեց օր այնտեղ մնալուց յետոյ ուղեւորները շարունակում են ճանապարհը եւ Մարտի 5ին հասնում են Ատուա փաշայանիստ քաղաքը<sup>51</sup>:

<sup>46</sup> Հ. Եղիա Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի ուղեգրութիւն յԵթովպիա», *Քազմավէպ*, Վենետիկ, 6-9:1937, էջ 142-55. նաեւ՝ 12:1937, էջ 316-23:

<sup>47</sup> “The Visit to Ethiopia of Yohannes Tovmacean, an Armenian Jeweller, in 1764-66,” translated by V. Nersessian, edited and annotated by Richard Pankhurst, *Journal of Ethiopian Studies*, August, 15:1982, էջ 79-104:

<sup>48</sup> ԺԵ.-ԺԸ. *Պարերի ուղեգրութիւններ, գիրք Բ.*, էջ 226-45:

<sup>49</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Քազմավէպ*, 6-9:1937, էջ 138:

<sup>50</sup> Նոյն, էջ 146:

<sup>51</sup> Նոյն:

Թովմաճանը ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում այդ քաղաքի ճգնաթի<sup>52</sup>, այսինքն՝ փաշա Միքայէլի մասին: «Եւ այս ճգնաթի Միքայէլն յուժ բուռն զօրութեամբ եւ անողորմ մարդ է,– գրում է նա,– քանզի գործեալ յանցանքն յանցաւորաց առ որ անդամ մարմնոյն վերաբերի, զնոյն հատանէ. զոր օրինակ եթէ աչօք է՝ հանէ զաչսն, եթէ ձեռօք կամ ոտիւք՝ հատանէ զնոսին, ըստ այսմ իմա եւ զմնացեալսն»<sup>53</sup>: Այստեղ խօսքը Եթովպիայի քաղաքական կեանքում կարեւոր դեր ունեցած Թիկրէի իշխան ռաս Միքայէլ Սեհուլի մասին է<sup>54</sup>:

Ատուայի փաշային Թովմաճանը ներկայանում է որպէս բժիշկ եւ բժշկում է ճգնաթի Միքայէլի կնոջը, ինչից յետոյ վերջինս արգելում է նրանց մեկնել իր քաղաքից: Այս անորոշ վիճակը շարունակում է յիսուն օր, մինչեւ մայրաքաղաք Կոնստէրից ստացում է Եթովպիայի թագուհու նամակը ճգնաթի Միքայէլին, թէ՛ «Այն նորեկ Թովմաճանն ընդ Այտոյ Պիճոյին թոյլ տացես զալ առ մեզ, զի մեք հրաւիրեալ ենք զնա միջնորդութեամբն մեր Այտու Պիճոյին: Այլ եւս ահա զերկուս ջորիս առաքեցաք, զմինն տացես Թովմաճանին, եւ զմիան որդւոյն Պօղոսին եւ փոթով առաքեսցես մեզ. ողջ լեր»<sup>55</sup>: Միայն թագուհու նամակից յետոյ է Թովմաճանին եւ ուղեկիցներին յաջողում դուրս գալ Ատուայից:

1764 Ապրիլի 27ին նրանք հասնում են, ինչպէս Թովմաճանն է գրում, «ի գիւղաքաղաքն Սաբայի, որ յուժ ւաւերեալ եւ քայքայեալ էր: Քանզի ի սկզբան շինեալ է քաղաքս այս յանուանի Տիկնոջէն Սաբայէ, որ եւ կանգնեալ է ի նմա մեծամեծ արձանք տասն տեղիս տեղիս. յուժ բարձր եւ գեղեցիկ դրոշմեալ եւ քանդակեալ, եւ գոն մինչեւ ցայժմ, բայց ոմանք ի նոյն արձանիցն անկեալք եւ խորտակեալք էին»<sup>56</sup>: Թովմաճանը չի գիտակցել, որ իր տեսած Սապայի տիկնոջ քաղաքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հապէշների սրբազան քաղաք Աքսումը (Aksum), կամ, ամէլի շուտ այն, ինչ մնացել էր

<sup>52</sup> Ճգնաթի.– «Տեճագմաչ» բառի աղաւաղում ձեւն է, որը զինուորական պատուար տիտղոս՝ միջնադարեան Եթովպիայում: Ամհարերէնից թարգմանաբար նշանակում է «թագաւորական վրանի մուտքի պահապան» եւ զալիս է այն ժամանակներից, երբ Եթովպիայի արքան (նեկուար) չունէր մշտական նստավայր:

<sup>53</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Քազմալէպ*, 6–9:1937, էջ 146:

<sup>54</sup> Նրա մասին մանրամասն տե՛ն՝ *Эфиопские хроники XVIII века*. Введение, перевод с эфиопского, комментарии и заключение С. Чернецова (ԺԸ. դարի Եթովպական ժամանակագրութիւններ, ներած., թարգմ. եթովպերէնից, ծանօթ. եւ վերջաբան՝ Ս. Չերնեցով), Մոսկուա, 1991 (այստեղ ընդգրկուած «Ռաս Միքայէլ Սեհուլի արշաւանքի պատմութիւնը» (էջ 209–56) եւ «Տեճագմաչ Հայլա Միքայէլի պատմութիւնը» (էջ 265–89) ժամանակագրութիւնները):

<sup>55</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Քազմալէպ*, 6–9:1937, էջ 146–147:

<sup>56</sup> Նոյն, էջ 147:



Աքսումի սինակոթողը

Աքսումի փառահեղ թագաւորութիւնից<sup>57</sup>: Իսկ նրա յիշատակած կոթողները Աքսումի թագաւոր Էզանայի սինակոթողներն էին՝ յունարէն, սաբայերէն եւ գէեզերէն արձանագրութիւններով, որոնք նա կանգնեցրել էր Մերոէի թագաւորութիւնը (ժամանակակից Սուտանի տարածքում) նուաճելուց յետոյ:

Թովմաճանը շրջել է նաեւ Աքսումի արքայական պալատում եւ թողել այդ պալատի ւեթակների մանրամասն նկարագրութիւնը, որը հարկ ենք համարում բերել ամբողջութեամբ. «Այլ եւս էր շինեալ տիկինն Սաբայ զպալատ մի վասն իւրոյ բնակութեան միապաղաղ քարեայ մեծ լերին միոյ,

որ կոփելով եւ տաշելով կազմեալ է ի նմա զբազում սենեակս եւ զսրահս երիւք յարկօք, եւ գեղեցիկ սանդիսովք, զդրունս եւ զլուսամուտս, զբակս եւ զախոռս, եւ զմաղազաս եւ զմառանս, զներքնատունս եւ զվերնատունս եւ զսեղանատունս, զպաղաջուն քէօշկս եւ զդստիկոնս, առանց ինչ բռելոյ, այլ բոլոր ի միակտոր քարէ էր կոփածեալ թէ առաստաղն եւ թէ յարակն. եւ էր յուժ զարմանալի շէնք: Սակայն այժմ վասն անբնակ գոլոյն եւ գուցէ ի պատերազմի՝ մի կողմն այս պալատիս եւ ի տեղիս տեղիս ւաւերեալ քայքայեալ է: Բայց այսու ամենայնիւ քան զկէսն ւաւի անվնաս կայր, որ Թովմաճանն անձամբ տեսեալ եւ շրջագայեալ է ի միապաղաղ քարեայ պալատն այն»<sup>58</sup>:

Աքսումում Թովմաճանը այցելել է նաեւ Ս. Մարիամ եկեղեցի, որտեղ, ըստ աւանդութեան, պահուում էր Մովսէսի տասնաբանեայ պատուիրանների քարից մի բեկոր: «Այլ եւս էր անդ մեծ եւ հին եկեղեցի մի հապէշի, յորում գոյ ասէին տասնաբանեայ պատուիրանաց մին կոտոր քարն Մովսէսի,– գրում է նա,– եւ տարեալ զԹովմաճան եւ զԱյդու Բիջոն յեկեղեցին եւ ցոյց ետուն զփակեալ խորան մի, յորում էր քարն տասնաբանեայ եւ ոչ կամէին բանալ: Բայց պնդելովն Այդու Բիջոյին եւ եւս թէ ազգական էր թա-

<sup>57</sup> Աքսումի թագաւորութեան մասին տե՛ս՝ Յ. Կոբիշանով, *Աքսում*, Մոսկուա, 1966. նաեւ՝ Stuart Munro-Hay, *Aksum: An African Civilization of Late Antiquity*, University Press, Edinburgh, 1991. նաեւ՝ *General History of Africa. Volume II. Ancient Civilizations of Africa*, editor G. Mokhtar, Heinemann Publishers, California, UNESCO, 1981, էջ 362–422:

<sup>58</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Բազմավէպ*, 6–9:1937, էջ 147:

գատորի, հազիւ կամեցան բանալ: Եւ բացին եւ հանին զպատարս ինչ հանդերձի եւ սկսան օրհնութեամբ բանալ, որ էր պատարս ի մէջ պատարսի այսինքն պոհճայի, մինչեւ թերեւս հարիւր պատարսս բացին, եւ հուսկ յետոյ պատարտեալ ի մէջ մուշամպայի հանին զկոտոր մի քարի, յորոյ վերայ կային դրոշմեալ անկատար գիրս եւ ծունր եղեալ համբուրեցին եւ խաչակնքեալ եղին ի տեղի իւր, եւ վերստին պատարտեալ եղին ի խորանի եւ փակեցին»<sup>59</sup>: Ըստ հապէշների ազգային ասանդութեան, այդ նուիրական մասունքը Աքսում էր բերել Սապայի Մաքետա թագուիու եւ հրէից Սողոմոն Իմաստուն թագաւորի որդին՝ Մենելիքը, որն էլ դարձաւ Աքսումի առաջին թագաւորը եւ Սողոմոնեան հարստութեան հիմնադիրը<sup>60</sup>:

Յաջորդ օրը նրանք դուրս են գալիս Աքսումից եւ 1764 Մայիսի 6ին հասնում Եթովպիայի մայրաքաղաք Կոնտէր<sup>61</sup>: Այստեղ նրան տրամադրում են չորս-հինգ սենեականոց մի տուն եւ մի պատուաւոր անձ իբրեւ պահապան: Նրան է փոխանցում նաեւ Իթելէ թագուիու հրամանը, որ երեք օր հանգստանայ եւ ապա ներկայանայ իրեն: Սպասուած օրը Թովմաճանը Այտու Պիճոյի ուղեկցութեամբ ներկայանում է թագուիուն: Քանի որ Թովմաճանի ուղեգրութեան այդ հատուածը կարելի էր նշանակութիւն ունի ժԸ. դարի կէսերի Եթովպիայի արքունի արարողակարգի ուսումնասիրութեան համար, այն ներկայացնում ենք ամբողջութեամբ:

Եւ յետ երից ատուրց եկն հրաման յԻթելէէն ընդ Այդու Բիջոյին թէ արի երթիցուք առ Իթելէ թագուիին, եւ զայն ծիոյ մետաքսահիւս ոսկէիուռ քէսմէն առ ընդ քեզ յընծայել թագուիւոյն (որոյ վասն 1100 դրշ. ծախեցան մինչեւ եհաս ի Կոնտէր): Եւ ելեալ Թովմաճանն գնաց ընդ նմա. եւ մտին ի հանդիսացեալ տեղին, ուր էր բազմեալ թագուիին ընդ թագաւոր թոռան իւրում վարագուրապատ մահճի, այլ եւս ամենայն մեծամեծ իշխանք եւ ճմաթիք, այսինքն՝ բաշայք: Ապա կոչեցին զթարգմանն եւ Թովմաճանն յետ յարգական ողջունի՝ հանեալ զընծայն իւր զքէսմէն բանալով մատոյց թագուիւոյն ասելով. Բարձրութեան ձերում մեծամեծք ինչք վայել էր տալ, բայց եւ աղքատօրէն զայս դուզնաքեայս կարացի բերել եւ տալ, վասն որոյ զմեր սակաւն շատ համարեսցիք<sup>62</sup>:

Ոչ-պակաս ուշագրաւ է Իթելէ թագուիու պատասխանը. «Եւ իբրեւ ծանոյց թարգմանն զբանս Թովմաճանին, յայնժամ ասէ թագուիին. «Ձերիստո», այսինքն՝ շնորհակալ եմ. զոր ամենայն ումեք ոչ ասէ զայս բան թագուիին (ընդգծումը մերն է – Ա.Մ.): Եւ վասն այն որք անդն կային առընթեր Թովմաճանին՝ սկսան դրդել զնա եւ զորդին՝ ասելով թէ անկեալ ի վերայ երեսաց երկիր պագէք թագուիւոյն: Իսկ Թովմաճան զնշան ջերմե-

<sup>59</sup> Նոյն, էջ 147:

<sup>60</sup> Бакстон , էջ 30:

<sup>61</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Բազմավէպ*, 6-9:1937, էջ 147:

<sup>62</sup> Նոյն, էջ 148:

ռանդութեան ցուցանելով՝ սասց. Միայն Աստուծոյն իմոյ երկիր պագանեմ: Եւ իմացեալ զայս թագուհին՝ ասէ. յուժ բարուք սասց. թոյլ տուք ըստ սովորութեան իւրոյ արասցէ: Եւ նա ըստ օրինի օսմանցուց խոնարհելով, եւ ձեռն ի գլուխ փանելով երիցս անգամ արար ողջոյնս թագուհոյն, եւ ապա այսու կերպի մի անգամ եւս զանդ նստեալ իշխանսն ողջունեաց. եւ ամենեքեան հաճեցան ընդ այս ողջոյնս»<sup>63</sup>: Այս գեղեցիկ դրուագը Թովմաճանի ուղեգրութեան առաւել ուշագրաւ հատուածներից է, քանի որ մինչ այդ միայն սակաւաթիւ երոպացիներ էին արժանացել Եթովպիայի միապետերի ընդունելութեանը:

Երեք օր անց «թմբկօք եւ երգովք եւ բազմութեամբ անձանց» Թովմաճանին են բերում Իթելէ թագուհու պատասխան նուէրները: Հայ վաճառականը ուրախութեամբ ընդառաջ է վազում՝ «պատկերակերպելով ի միտս թէ գոնեա լինելոց է 5–6 հազար դուրուշի ընծայ»<sup>64</sup>: Սակայն մեծ ոգետրութեանը յաջորդում է խորը հիասթափութիւնը, իր բառերով սասձ, «ո՛վ մեծի դժբախտութեան Թովմաճանի եւ գոեհկութեանն հապէշ թագատորին: Քանզի յորժամ մուծին ի ներքս զմեծ զընծայսն զայնսոսիկ՝ այն ինչ էր նորապեսիլ իմն. զի էր մի կով, մի գառն, 10 հաւ, 50 հաց, եւ մի կուժ՝ այսինքն տէսթի պոզայ եւ այլ ոչ ինչ գոյր»<sup>65</sup>:

Թովմաճանի դժգոհութեանը, թէ՛ «Ա՛յս է թմբկօք եկեալ ընծայ թագատորին», իր վերակացուն պատասխանում է, որ դա նրա առօրեայ ապրուստն է: Երբ հայ վաճառականի տրտունջները հասնում են թագուհուն, վերջինս Այսու Պիճոյի միջոցով փոխանցում է նրան, որ «պատրաստ լինիցի, զի ի գալ ամսոյն մեծ պաշտօն ինչ տալոց եմ նմա»<sup>66</sup>:

Համանման իրավիճակում է յայտնուել նաեւ Եթովպիայի հռչակաւոր կայսր (նեկուս) Մենելիք Բ.ի (1889–1913) իշխանութեան օրօք Ի. դարակզբին այդ երկրում յայտնուած Մուրժ ամսագրի թղթակից Գ. Արաբեանը, որը, մասնաւորապէս, գրում է. «Ոչ միայն հայերը, այլ եւ ուրիշ ազգութիւնների պարկանող անհաւերներ, որոնք որեւէ առիթ են ունեցած աշխատելու Արիս-Ապապայում կամ Հարարում կառավարութեան գործերում, որը անմիջական կախում ունի երկրի վեհապետից, այն գաղափարն են կազմած, թէ թագաւորը արժանապէս չէ վարձապրում, եւ իրանց կարարածի հանդէպ շար քիչ դրամ են ստանում... Մենելիկը վարձապրում է նրանով, ինչով որ նա աւելի հարուստ է. ինչիւն դրամը նրա համար դեռ թանգ արժէ, այդ պարճառով էլ դրանում ժլատ է, սակայն նա հարուստ է հողով, երկրի բերքով եւ ընտանի կենդանիներով, եւ նա միշտ պարարաստ է վարձապրել այդ վերջիններով, եթէ իր մօտ համակրութիւն կամ վստահութիւն գտնող-

<sup>63</sup> Նոյն:

<sup>64</sup> Նոյն, էջ 149:

<sup>65</sup> Նոյն:

<sup>66</sup> Նոյն, էջ 150:



Եթովպական առաջին՝ 50 թալեր արժողութեամբ թղթադրամի նմուշը եւ Մենելիքի թալերը (1894–98)

ները ուզէին ընդունել»<sup>67</sup>: Եւ հեղինակը իրաացի էր, քանի որ եթովպական առաջին մետաղադրամները՝ «Մենելիքի թալերները», նեկուսի պատկերով դիմերեսով եւ Յուդայի առիծով շրջերեսով, շրջանառութեան մէջ են մտել 1893ից<sup>68</sup>, իսկ թղթադրամները թողարկուել են աւելի ուշ՝ չթագադրուած Լիճ Եասուի (1913–16) եւ Զաուտիթու թագուհու (1916–30) իշխանութեան օրօք<sup>69</sup>:

Վերադառնալով բուն նիւթին՝ նշենք, որ որոշ ժամանակ անց Իթելէ թագուհու մտերիմներից մէկից՝ ճգմաթի Շեթէից Թովմաճանը իմանում է, որ շուտով նշանակուելու է Եթովպիայի արքունի գանձապետ<sup>70</sup>:

Թովմաճանի ուղեգրութիւնից տեղեկանում ենք, որ նրանից առաջ արքունի գանձապետի պաշտօնը վարել է մէկ այլ հայ՝ արաբկիրցի ուստա Սելէֆը: «Եւ ի նմին ժամանակի էր գանձապետը ի հայոց ազգէն Առապկերցի ծեր ոմն բիրար եւ տիսմար,– գրում է նա,– որ ի վաղուց եկեալ էր, որոյ անունն էր Սելէֆ ուստայ: Եւ յետ ատուրց ոմանց կոչեցին զՍելէֆ ուստան ի յարքունուսար եւ խնդրեցին ի նմանէ տալ զհամար գանձին»<sup>71</sup>: Գանձարանի հաշտառումը տեսում է եօթ օր: Արդիւնքում պարզում է, որ «պարտապան եղել գանձապետ Սելէֆ ուստան թագաւորին 300 վաքիէ ոսկի՝ որ առնէ 7500 ղուրուշ: Վասն որոյ գտունն եւ գերկիրս նորին ադին եւ դեռ 70 վաքիէ պարտք մնաց թագաւորին, ուստի արկին ի բանտ շղթայիւք զնա»<sup>72</sup>:

<sup>67</sup> Գ. Արաբեան, «Աբիսինիայի հայ գաղթականութիւնը», *Մուրճ*, թիւ 7, 1904, էջ 67–68:

<sup>68</sup> *Монеты стран зарубежной Азии и Африки. XIX–XX века. Каталог*, Составители Д. Мошнягин и А. Жук. (Արտասահմանեան Ասիայի եւ Աֆրիկէի երկրների ժժԻ- դդ. մետաղադրամները. քայթալուկ, կազմ.՝ Դ. Մոշնիագին եւ Ա. Ժուկ), Մոսկուա, «Научка», 1967, էջ 125, 252:

<sup>69</sup> Եթովպական թղթադրամների առաջին շարքը՝ 5, 10, 50, 100 եւ 500 թալեր արժողութեամբ, թողարկուել է 1915–29՝ Նիւ Մալտէնի «Bradbury Wilkinson» յայտնի դրամահատարանում:

<sup>70</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Բազմալէպ*, 6–9:1937, էջ 150:

<sup>71</sup> Նոյն:

<sup>72</sup> Նոյն, էջ 151:

Այստեղ Թովմաճանը պատմում է եթովպական արքունիքում տարածուած հաշուի մի պարզունակ տեսակի<sup>73</sup>, այսպէս կոչուած՝ «բակլայով հաշուի» մասին: Հեղինակը գրում է, որ երբ եկաւ հաշուառման օրը «կոչեցին անդ զԹովմաճանն եւ զորդի նորա զՊօղոսն. այլեւս վեց անձինք գրագիրք համարոյ: Եւ առաջի իւրաքանչիւրոցն սփռեալ կային մի մի կովու կաշի եւ բակլայ՝ որով առնելոց են զհաշին. եւ առաջի Թովմաճանի եւ որդւոյն եւս բերեալ սփռեցին զայն կաշին բակլայով: Յայնժամ ասէ Թովմաճանն ծիծաղելով թէ՝ թողութիւն շնորհէք, մեք այսու գոտեկական եւ փաժանեյի կերպիւ հաշիւ ոչ գիտենք ասելով՝ եհան ի միջացն զարծաթեայ կաղամարն եւ զթուղթն, եւ սկսաւ թուագրով, այսինքն՝ ռախամով ըստ սովորութեանց իրեանց գրել ընդ որդւոյն: Իսկ միւս գրագիրքն ի յեզերիլն, ի ժողովելն եւ ի բաժանելն բակլայով՝ յամեցան յուժ: Իսկ Թովմաճանն իսկոյն եզերեաց թէ ի ժողովելն եւ թէ ի գումարելն եւ իսկոյն ասաց թէ՝ է այսքան այն, եւ այսքան այս են. եւ առ այս գործ թուագրով առնելոյ Թովմաճանին անդ եղեալ մեծամեծք յուժ հաւանեցան, զի ոչ գիտէին թուագրով զառնելն: Ուստի գնացեալ պատմեցին թագուհւոյն. եւ նա կոչեալ զԹովմաճանն՝ ասէ. այնց գրագրաց, որք բակլայով արարին զհաշին ընդ քեզ՝ նոցա եւս պարտիս ուսուցանել զայն թուագրով հաշին քո, իսկ վարձքն եւ հապուցից քեզ»<sup>74</sup>:

Թովմաճանը արքունի վեց գրագիրներին երեք ամսում սովորեցնում է թուերով հաշուել, որից յետոյ «բարձաւ բակլայի հաշին ի պալատէ թագաւորին»<sup>75</sup>: Այս ծառայութեան համար նա թագուհուց իբրեւ վարձատրութիւն ստանում է 500 դուրուշ:

Հաշուառումից յետոյ, ինչպէս գրում է հեղինակը, «հանդէս մեծ արարեալ մուծին զԹովմաճանն ի հանդիսին, յորում էր թագուհին Իթեկէ եւ իւր թագաւոր թոռն եւ այլ ամենայն իշխանք եւ բաշայք եւ փարան զԹովմաճանն առաջի թագուհւոյն. թագուհին ետ զբանալի գանձուն եւ արար զնա Գանձապետ 1764 Օգոստոսի 13ին. եւ մեծամեծք եւ պալատականք բազմութեամբ առաջի երթալով թմբկօք եւ արուեստականօք թափօրս կազմեցին մինչեւ ի գանձապտունն եւ զԹովմաճանն շուրջ պատեալ 30 սպասաւորօք՝ փարան ի գանձապտունն եւ յանձնեցին նմա զամենայն ինչ»<sup>76</sup>: Այսպիսով, աշխարհի կողմից մոռացուած Եթովպիայի մայրաքաղաք Կոնտէ-

<sup>73</sup> Ափրիկեան տարածուած հաշուի համակարգերի մասին տե՛ս՝ Դ. Ольдерогге, «Системы счета в языках народов Тропической и Южной Африки», *Africana. Африканский этнографический сборник* (Դ. Օլդերոգգէ, Հաշուի համակարգերը Արեւադարձային եւ Հարաւային Ափրիկէի ժողովուրդների լեզուներում, *Africana. Ափրիկեան ազգագրական ժողովածու*), XIII:1982, Լենինկրատ, էջ 3-33:

<sup>74</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Բազմավէպ*, 6-9:1937, էջ 150-151:

<sup>75</sup> Նոյն, էջ 151:

<sup>76</sup> Նոյն:

րում արքունի գանձապետի պաշտօնում մի հայի՝ արաբկիրցի Սելֆին, փոխարինում է մէկ այլ հայորդի՝ Յովհաննէս Թովմաճանը:

Թովմաճանի ուղեգրութեան արժէքաւոր տեղեկութիւններից է Եթովպիայի արքունի գանձարանի պարունակութեան մանրամասն նկարագրութիւնը: «Նախ եւ առջ ալննեղէն բնաւ ոչ գոյ ի նոսա,- գրում է նա,- եւ ի գանձին 6 կուր ծանրութեամբ ի վերայ կաղամարի միոյ զումրուխսր մի գոյր, էառ զայն Թովմաճանն հրամանաւ նոցին, եւ ի տեղի նորին եղ մէրճան մի, զի աւելի ախորժելի էր նոցա մէրճանն քան զզումրութիւն, ըստ այսմ իմա եւ զայլն: Այլ եւս վախճանեալ թագաւորաց ոսկեհուռ սուսերս եւ մեծամեծ հանդերձս իրաքանչիւրոցն անուամբ կայր պահեալ եւ այլ հազարաւոր թօփ պէս պէս կրաւեղինաց եւ այլ հարիւրաւոր թօփ պէս պէս կերմէտուրից եւ զանազան գունով գեմխայից<sup>77</sup>. եւ տասն բաստաւ կարմիր եւ կապոյտ չոխայից. եւ 15–20 թօփ Վենետիկեան ծանր ոսկեթել խեթայի, զոր վասն զգեստու թագաւորի եւ եւս վասն զարդուց ինչ եկեղեցույ ի գործ ածեն. եւ տասն կամ տասնեւիինգ արծաթեայ զարդս ջորույ եւ արծաթեայ սուսերս. եւ լաւ շէշէնէ հրացանս օսմանցուց հարիւր կամ 150. իսկ հրացանս, այսինքն՝ թուֆէնկք ֆրանկաց չեն նոցա հաճելի, եւ են 2 հազար հին եւ նոր: Իսկ ոսկին է բազում, ի ներքս ի պալատի պահեալ կայ: Եւ ի ձեռս գանձապետի 3000 վաքիէ, մինչեւ չորս հազար գտանի. եւ մի վաքիէ ոսկի՝ արժէ 25 դր. եւ մին վաքիէի ոսկիին կշեռքն է 8 տրէմ 4. Պոլտոյ: Արդ այսքան 3000 վաքիէ ոսկին ամ ըստ ամէ գայ թագաւորին՝ ի կողմնակալաց միոյ տէրութեան իւրոյ, եւ անցանէ ի ձեռս գանձապետին վասն ծախուց տնտեսական թագաւորի, եւ եւս ռոճիկ զօրաց, եւ վասն գնելոյ զպիտոյս գանձապանն»<sup>78</sup>:

Թովմաճանն իր ուղեգրութեան մէջ արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում նաեւ արքունի գանձապետի վարձատրութեան վերաբերեալ: Նա, մասնաւորապէս, գրում է. «Իսկ գանձապետին վարձքն եւ վաստակն ի ծախելն զայսոսիկ ոսկիսն 100ին տասն է՝ որ առնէ 15 քսակ: Եւ բաց յայսմանէ գիւղ մի եւս ունի՝ յորմէ շահի հազար դր. եւ այլ եկամուտ եւս ի թագաւորէն ունի վասն ռոճիկ 50 դր. յամսեանն եւ այլ աստուտս եւ անտուտս ունի փոքրիկ ինչ եկամուտս՝ ընդ ամէնն տասն հազար մարջիւ, որ է դր.: Շահի ի տարին գանձապետն՝ որ առնէ 20 քսակ դր.: Բայց ծախքն եւս բազում են, զի զ30 սպասաւորսն պարտի պահեմ»<sup>79</sup>:

Հայ գանձապետի ենթակայութեան տակ էին Եթովպիայի մայրաքաղաք Կոնտերի բոլոր արհեստաւորները: «Այլ այս եւս յայտ լիցի,- գրում է նա,- զի ամենայն արհեստագործքն քաղաքին են բնաւքն ի ներքոյ հրա-

<sup>77</sup> Գեմխա – մետաքսէ կտորի տեսակ:

<sup>78</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», *Բազմավէպ*, 6–9:1937, էջ 152:

<sup>79</sup> Նոյն:



Եթովպիայի նեկուս Իոսս Ա.ի  
(1755-69) դիմանկարը

*մանի գանձապետին. իսկ դերձակքն  
բնալքն են մահմեդականք, եւ էին  
ստրուկք. նմանապէս գոն եւս հրեայք.  
նորա եւս են ստրուկ ռայէք»<sup>80</sup>:*

Իր ուղեգրութեան մէջ Թովմաճա-  
նը վառ գոյներով ներկայացնում է  
նաեւ եթովպական արքունիքում Ս.  
Ծննդեան տօնի առթիւ կազմակեր-  
պուած խնճոյքը.

Արդ յորժամ հասանեն ի Դեկտ. 25  
մեծ ցնծութեամբ կատարեն զտօն  
Ծննդեան Տեառն մերոյ եւ ի տարե-  
գլխոյն 1765ի պալատ թագաւորի  
մեծ խրախճան լինի ճգնաթեկաց,

այսինքն՝ բաշայից, որք ըստ 14 բաշայութեանց 14 բաշայք ունի, եւ սո-  
քա ըստ մեծի մասին արտաքս գտանին: Իսկ եթէ գտցի ոք ի նոցանէ ի  
քաղաքին՝ կոչեն զնա իւրայնովքն, այլ եւս զմեծամեծ իշխանսն կոչեն:  
Եւ թագուհին ընդ թոռան իւրում նստի ի բարձրաւանդակ տեղի ինչ  
զարդարեալ, եւ ի սեղանի իւրաքանչիւր ոք զսպասաւոր մի ընդ իւր  
պարտի ունել, որք կերակրեսցեն ձեռօք իւրեանց զտեսարսն, զի առաջի  
թագուհոյն ամօթ մեծ համարին իւրեանց ձեռօքն ուտել, այլ տէրն բա-  
նայ զբերանն եւ սպասաւորն իւր ձեռօքն զպատառն առեալ դնէ ի բե-  
րան տեսառն իւրոյ<sup>81</sup>:

Իր զբաղեցրած բարձր պաշտօնի շնորհիւ Թովմաճանը որդու հետ  
1765ի սկզբին մասնակցել է եթովպական արքունիքում կազմակերպուած  
խնճոյքին եւ թողել այդ ընդունելութեան պատկերաւոր նկարագրութիւնը:  
«Եւ ի սմին խրախճանի էր նաեւ Թովմաճան ընդ որդւոյն,– գրում է նա,–  
զորս մերձ ինքեան նստոյց թագուհին. եւ սոքա ըստ սովորութեան մերոյ  
իւրեանց ձեռօքն ուրէին զկերակուրն եւ ցորենի հացով, եւ որոշեալ էր սե-  
ղան սոցին ի նոցանէ: Իսկ այլքն սպասաւորի ձեռօք ուրելովն՝ փառք հա-  
մարէին ինքեանց եւ ծիծաղէին ի վերայ Թովմաճանին: Եւ Թովմաճանն  
ընդ որդւոյն հանդարտօրէն ուրէր իւր ձեռամբն. եւ թագուհին եւս համա-  
ձայնեալ ընդ Թովմաճանին՝ սկսան ծիծաղել ի վերայ նոցա»<sup>82</sup>: Այստեղ  
Թովմաճանը պատմում է նաեւ հապէշների մօտ հում միս ուտելու սովորու-  
թեան եւ դրա առաջացման պատճառի մասին:

Հեղինակը ուշագրաւ մանրամասնութիւններ է հաղորդում նաեւ իր որ-  
դի Պօղոսի եւ թագուհու թոռան մտերմութեան վերաբերեալ: «Իսկ ի ժա-

<sup>80</sup> Նոյն, էջ 153:

<sup>81</sup> Նոյն:

<sup>82</sup> Նոյն, էջ 154:

մանակս Թովմաճանին էր այն Իթելէ թագուհին,– գրում է նա,– որ մեծաւ հանճարեղութեամբ կառավարէր, եւ թոռն էր յայնժամ ամաց չորեքբասանից, եւ ի գանձապետութեանն Թովմաճանի որդին իւր Պօղոսն եւս ի պալատն բազում անգամ գնալով գալով՝ երես չորեքբասանամեայ թագաւորն զՊօղոսն, որ հասակակից իւր էր, սպիտակ եւ գեղեցիկ՝ երեքբասան ամաց, յարեցաւ ի նա եւ խօսեցաւ ընդ նմա եւ սիրեաց յուժ»<sup>83</sup>: Բանն այն է, որ Իթելէ թագուհու տասնչորսամեայ թոռը Եթովպիայի անուանական թագաւորն էր, որը մինչեւ չափահաս դառնալը գտնուում էր տատի խնամակալութեան ներքոյ: Թէեւ հեղինակը չի նշում նրա անունը, սակայն այլուստ յայտնի է, որ այդ տասնչորսամեայ նեկուսի անունը եղել է Իոաս Ա. (Iyoas I), որը Եթովպիայի անուանական գահակալն էր 1755–69ին<sup>84</sup>:

Ինչ վերաբերում է Իթելէ թագուհուն, ապա դա ոչ թէ նրա անունն էր, այլ տիտղոս, որը տրուում էր Եթովպիայի թագաւորների կանանց կամ այրիներին: Եթովպական աղբիւրները նրա անունը յիշատակում են Մենթեապ (Mentewab) ձեռով<sup>85</sup>: Վերջինս իր որդու՝ Եասու Բ.ի (1730–55) եւ թոռան՝ Իոասի իշխանութեան ժամանակ նրանց խնամակալն էր եւ երկրի փաստացի ղեկավարը, որն ընդունել էր Պերիան Մոկասա անուանումը<sup>86</sup>:

Այսպիսով, աստիճանաբար Թովմաճանի որդի Պօղոսը մտերմանում է Իոասի հետ: Այդ մասին հեղինակը, մասնաւորապէս, գրում է. «Եւ այսու կերպիւ Պօղոսն թէ վասն իւր եւ թէ վասն հօրն առնէր զբազում բարութիւնս, եւ մեծ համբաւ ստացաւ Պօղոսն, զի ընդ թագաւորի համարձակ միւսահիպ էր եւ խաղայր ընդ նմա եւ յուժ սիրելի եղէ թագաւորին՝ այնքան մինչեւ վասն իշխանական պաշտօնից ինչ՝ որք պատրկանեալ էին թագաւորի, եկեալ արօք աղաչէին զՊօղոսն արտաքոյ պալատին եղեալ մեծամեծք, եւ նա խօսէր ընդ թագաւորին եւ կատարէր զխնդրուածս նոցա եւ շահէր յուժ յուժ»<sup>87</sup>:

Սակայն, այդ մտերմութիւնն ունենում է նաեւ իր բացասական հետեւանքները, քանի որ երբ 1766ին Թովմաճանը բռնում է վերադարձի ճանապարհը, որդուն՝ Պօղոսին, թոյլ չեն տալիս հեռանալ հօր հետ, որը յաջորդում է նրան արքունի գանձապետի պաշտօնում: Ամփոփելով Եթովպիայում մնալու տարիների ընթացքում իր ձեռքբերումներն ու կորուստները՝ հեղինակը գրում է. «Եւ թէպէտ Թովմաճանն ոչ էր այնքան շոյլ, եւ փոքր ծախս առնէր վասն իւր, բայց այսու ամենայնիւ ոչ կարաց հանել զծախս տուեալ ընծայից թագաւորին 1500 դուրուշն, որ 18 ամիս գանձա-

<sup>83</sup> Նոյն, էջ 153:

<sup>84</sup> Իոաս Ա.ը 1769 Մայիսի 14ին խեղդամահ է արուել Թիկրէի իշխան, մեզ նախաձանօթ ուս Միքայէլ Սեհուլի հրամանով (Эфиопские хроники XVIII века, էջ 196, 208):

<sup>85</sup> Մենթեապը Եթովպիայի թագաւոր Պաքաֆֆայի (1721–30) կանանցից մէկն էր:

<sup>86</sup> Эфиопские хроники XVIII века, էջ 208, 301:

<sup>87</sup> Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի», Բազմավէպ, 6–9:1937, էջ 153:

պետրոսին արար, զի յորժամ ել ի Կեօնպէրէն՝ ունէր ընդ իւր 40 վաքիւ միայն՝ որ առնէ հազար դրշ. եւ ոմանք ոչ գիտելով՝ ասեն, թէ Թովմաճան ի Հապէշ ի գանձապետրոսեան բազում ինչս շահեցաւ: Հասպա ուր դիցուք զճախսն գնալոյն եւ թէ ելանելոյն եւ մինչեւ ի Ճիւրպէ դառնալն 1500 դրշ. ոչ բաւականացաւ. եւ այլ 26 ամիս եւս ժամանակ ընդ վայր անցոյց, եւ **զորդին եւս զՊողոսն ոչ թոյլ ետուն գնալ ընդ հորն** (ընդգծումը մերն է – Ա.Մ.)»<sup>88</sup>:

Այս սեղմ տողերից տեղեկանում ենք, որ Թովմաճանը Եթովպիայում մնացել է 2 տարի եւ 2 ամիս (26 ամիս), որից ուղիղ տարիուկէսը (18 ամիս) եղել է Եթովպիայի արքունի գանձապետ, սակայն այնտեղից հեռացել է դժգոհ («ոչ կարաց հանել զճախս տուեալ ընծայից թագաւորին 1500 դուրուշն») եւ սրտաբեկ («զորդին եւս զՊողոսն ոչ թոյլ ետուն գնալ ընդ հորն»):

Յովհաննէս Թովմաճանի ուղեգրութիւնը կարելի է սկզբնաղբիւր է ժԸ. դարի Եթովպիայի քաղաքական եւ ընկերատնտեսական կեանքի ուսումնասիրութեան համար: Այն սկովտիացի նշանաւոր ճանապարհորդ Ճէյմս Պրուսի բազմահատոր աշխատութեան հետ մէկտեղ հանդիսանում է այդ հեռաւոր երկրի ժԸ. դարի երկրորդ կէսի պատմութեան մեծարժէք սկզբնաղբիւրներից մէկը:

#### 4. ՏԻՄՈԹԷՈՍ ՍԱՓՐԻՉԵԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ

Մէկ դար անց՝ 1867ին, միջնորդական առաքելութեամբ Եթովպիա է մեկնել Երուսաղէմի հայոց պատրիարքարանի պատմափրակութիւնը, որի կազմում էին Իսահակ եպիսկոպոս Աստուածատուրեանը եւ Տիմոթէոս վարդապետ Սափրիչեանը: Վերադառնալուց յետոյ Սափրիչեանը հրատարակել է *Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան, կամ բարոյական, քաղաքական եւ կրօնական վարք հապէշից* երկհատոր մեծարժէք ուղեգրութիւնը<sup>89</sup>: Միաժամանակ լոյս է տեսել նաեւ Սափրիչեանի ուղեգրութեան ֆրանսերէն թարգմանութիւնը<sup>90</sup>, այնուհետեւ Լայիցիկում հրատարակուել է գերմաներէն<sup>91</sup>: Գոյութիւն ունի նաեւ ուղեգրութեան անգլերէն թարգմանութիւնը, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով մնացել է անտիպ: Սոյն

<sup>88</sup> Նոյն, էջ 152:

<sup>89</sup> Տ. Սափրիչեան, *Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան, կամ բարոյական, քաղաքական եւ կրօնական վարք հապէշից, գիրք Ա-Բ*, տպ. Ս. Յակովբեանց, Երուսաղէմ, 1871, 168 էջ եւ 160 էջ:

<sup>90</sup> Dimothéos Sapritchian, *Deux ans de séjour en Abyssinie, ou Vie morale, politique et religieuse des Abyssiniens par le R. P. Dimothéos*, typographie arménienne du couvent de Saint-Jacques, Jérusalem, 1871:

<sup>91</sup> Zwei Jahre in Abyssinien oder Schilderung der Sitten und des staatlichen und religiösen Lebens der Abyssinier, von Sr. Hochw. Pater Timotheus, Armenische Bibliothek, Leipzig.

աշխատութեան վերաբերեալ ժամանակին ուշագրաւ յօդուած է հրապարակել պատմաբան Յովհաննէս Թովուզեանը<sup>92</sup>, ուստի մենք այստեղ հիմնականում կանգ կ'առնենք նրա տեսադաշտից դուրս մնացած հարցերի քննութեան վրայ:

Սափրիչեանի ուղեգրութեան երկրորդ գիրքը, որը կրում է «Նկարագիր բարոյական, կրօնական եւ քաղաքական կենաց հապէշից» վերտառութիւնը, ունի եթովպագիտական ուսումնասիրութեան բնոյթ: Այդ հատորում յատկապէս կարեւոր նշանակութիւն ունի Եթովպիայի թագաւոր Թէոդորոս Բ.ի (1855–68) իշխանութեան շրջանի պատմութիւնը, որն անմիջակասօրէն կապուած է առաջին գրքի բովանդակութեան հետ:

Սափրիչեանն իր պատումը սկսում է այդ նշանաւոր թագաւորի՝ եթովպական ժողովրդի շրջանում տարածուած կերպարի չափազանց դիպուկ եւ պատկերատու նկարագրութեամբ. «Շատ հաւանական է որ քանի մը դար անցնելէն յետոյ առասպելեալ դիւցազուններու կարգն անցնի Թէոդորոս ալ իւր քաջութիւններովը, որովհետեւ արդէն իւր կենդանութեան ժամանակ բոլոր ժողովուրդը զինքը անմահ եւ իւր անծը եւ մարմինը գերբնական զօրութեան տէր կը համարէր, որուն համար կ'ըսէին թէ՛ ոչ սուր կը քանի վրան եւ ոչ գնտակ կը դպչի»<sup>93</sup>:

Այնուհետեւ Սափրիչեանը ներկայացնում է Եթովպիայի աւատատիրական մասնատուածութեան ճշգրիտ պատկերը՝ Քասա-Թէոդորոսի պատմութեան թատերաբեմ մտնելուց առաջ. «Թէոդորոսի թագաւորելէն յառաջ բոլոր Հապէշստան չորս մասի կամ նահանգներու կը բաժնուէր, որոնց կ'իշխէին չորս գլխաւոր իշխաններ. Թեկրիի կը տիրէր Տեճած-Ուպին, Շօային՝ Հայլօ Մելեթթթը, Կոճամին՝ Պրու Կոշուն, իսկ Ամարային՝ որ միւս երեք մասին մէջտեղ կ'ընկնայ եւ ամենէն ընդարձակն է, կ'իշխէր Ռաս-Ալին, որ թէեւ կալլացի էր, բայց Ամարան իրեն հայրենի ժառանգութիւնն էր»<sup>94</sup>: Ինչ վերաբերում է հնամենի Սողոմոնեան հարստութեանը, ապա, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Սափրիչեանը, «թագաւորական թագը վայելողին թողուցած էին մասնաւոր քանի մը գիւղեր Կոնտէր քաղաքին մօտերը, եւ տարուէ տարի ալ իբր նուէր կամ ողորմութիւն բան մը կու տային, որով իր անձնական ծախսը կարող կ'ըլլար հոգալու»<sup>95</sup>: Ինչպէս տեսնում ենք, այդ ժամանակ Սողոմոնեան հարստութիւնը վերածուել էր մի անշուք ցուցանակի, որը զարդարում էր մայրաքաղաք Կոնտէրի ճակատը:

<sup>92</sup> Յովհաննէս Թովուզեան, «Տիմոթէոս Սափրիչեանի ուղեգրութիւնը որպէս Եթովպիայի ԺԹ. դարի պատմութեան աղբիւր», *Արեւելեան աղբիւրագիտութիւն, հիւր. 1*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 34-69:

<sup>93</sup> Սափրիչեան, *գիրք Բ.*, էջ 85-86:

<sup>94</sup> Նոյն, էջ 86:

<sup>95</sup> Նոյն:

Այսպիսի պայմաններում էր յայտնուել երկիրը, երբ պատմութեան ասպարէզ է մտնում Քասան,- այդպէս էր մինչեւ թագադրումը կոչուում Թէոդորոսը,- քոսո<sup>96</sup> վաճառողի որդին, որին յաջողում է իր սրի զօրութեամբ կրկին միաւորել Եթովպիան: Նա սկզբնապէս ծառայութեան է անցնում Ամհարայի իշխան Ռաս-Ալիի (1831-53) մօտ: «Այն արտենները Թէոդորոս' որ Քասա կ'ըսուէր, կուգայ Ռաս-Ալիին քով զինուորութեան կը մտնէ,- գրում է Սափրիչեանը,- եւ իւր ցոյց փուած քաջութիւններովը սիրելի կ'ըլլայ անոր աչքին, մինչեւ կը փեսայանայ անոր աղջիկը առնելով»<sup>97</sup>:

Այնուհետեւ Սափրիչեանը ներկայացնում է Քասայի ապստամբութիւնը Ռաս-Ալիի դէմ եւ նրա սրընթաց վերելքը մինչեւ Եթովպիայի նեկուսի գահը: «Օր մը ասիկա որդադեղ (քոսօ) խմած ըլլալով, իւր աներոջմէն կով մը կը խնդրէ,- գրում է նա,- աներոջ մայրն ալ, որ դեռ կենդանի էր, նախափելով մը հրաման կ'ընէ սպասաւորաց ըսելով. «Որդադեղ ծախողին փղուն կ'որո մը միս փուէք որ երթայ»: Այս խօսքը խիստ ծանր կու գայ Քասային, կը զայրանայ ու կրակ կը դառնայ կնկան մը բերնէն այնպէս նախափինք ընդունելուն: Իւր կինը կ'իմանայ այս բանը, ու կը դառնայ կ'ըսէ Քասային. «Գօփիդ կապէ շուփով, ով Քասա, ի՞նչ ես կեցեր մնացեր կնկան մը պէս»: Ըսել կ'ուզէ կ'որիճ եղիր ու ապստամբէ, եւ կնկան պէս նախափանաց փակ մի մնար, ըստ որում գօփի կապելու սովորութիւն ունին Հապէշը երբ հեռու փեղ մը երթալու կ'ըլլան, եւ հեռու փեղ երթալն ալ ապստամբել կը նշանակէ»<sup>98</sup>: Այդպիսով Քասան դառնում է ապստամբ եւ ստանում է «Աբբա-Տատէկ» մականունը<sup>99</sup>:

Քասայի ապստամբութեան մասին Սափրիչեանի հաղորդումը համահունչ է եթովպական աղբիւրի՝ Վոլտէ Մարիամի ամհարերէն ժամանակագրութեան տուեալներին, որի բնագիրը եւ ֆրանսերէն թարգմանութիւնը 1904ին Փարիզում հրատարակել է Եթովպիայում ֆրանսական *Le Temps* լրագրի թղթակից Քագիմիր Մոնտոն-Վիտայէն (C. Mondon-Vidailhet): Ալեքա Վոլտէ Մարիամի երկում, մասնաւորապէս, կարդում ենք. «Վայգարօ»<sup>100</sup> Թաւապաչի հետ ամուսնանալու շնորհիւ, լինելով Ռաս Ալիի փեսան, Քասան մնաց աներոջ փանը, բայց մի օր, երբ նա որդադեղ էր ընդունել եւ խնդրել էր, որ իր ճաշը ուղարկեն, նրան որպէս մտեղէն ճա-

<sup>96</sup> Քոսո (Hagenia abyssinica).- դեղաբոյս, որը Եթովպիայում օգտագործում է ճիճոաթափութեան նպատակով:

<sup>97</sup> Սափրիչեան, էջ 86-87:

<sup>98</sup> Նոյն, էջ 87:

<sup>99</sup> Եթովպիայում տարածուած է եղել ձիու անունով տիրոջը կոչելու ասանդոյթը, երբ հեծեալին անուանել են իր մարտական ձիու անունով՝ անելացնելով «աբբա» («հայր», «տէր») նախդիրը:

<sup>100</sup> Վայգարօ.- «Տիրուի» (ամհար.), տիտղոս, որը տրում էր ազնուական տիկնանց:

շարժման մարտից հետո կենդանու առջեւի ուղիքները: Նա դրանք եր ուղարկեց՝ գոռալով. «Լէ՛ճ Քասան այդ մտից չի ուրում, ինչ է, ինձ ջրկիր կնոջ տե՛ղ են դրել»: Նրա կինը՝ վայզարո Թաաապազն ասաց. «Դու ոչ մի կտոր հող չունե՛ս: Լաաագոյն դէպքում մեզ մնում է պատրաստուել այստեղից հեռանալու համար»: «Ինչպէս թէ հող չունեմ, – գոռաց Քասան, – դեռ կը տեսնենք»: Դրանից յետոյ նա Քուարա իջաւ կնոջ հետ միասին»<sup>101</sup>: Դժուար չէ համոզուել, որ Սափրիչեանի տեղեկութիւններն ամբողջովին համընկնում են Վոլտէ Մարիամի ժամանակագրութեան հետ, ընդ որում՝ պէտք է նկատել, որ Սափրիչեանի ուղեգրութիւնը տաս տարի է ինչ հրապարակուած էր, երբ եթովպացի պատմագիրը ձեռնամուխ է եղել իր աշխատութիւնը շարադրելուն<sup>102</sup>:

Շարունակելով իր պատմութիւնը՝ Սափրիչեանը գրում է, որ որոշ ժամանակ անց, «երբ Քասսա բաւականէն ատելի զորացած կը տեսնէ զինքը, կու գայ ի Տենպիա, եւ Ռաս-Ալիին բանակին դէմ ինքն ալ բանակ կը դնէ»<sup>103</sup>: Սափրիչեանը բերում է նաեւ կողմից առաջ իր զինուորներին ուղղած Քասայի մարտակոչը. «Չըլլայ, որ պատերազմին ժամանակ զիս բանակին ետեւը փնտրէք. ես ամէնուր առջեւ իմ թշնամույս դիմացը ճակատ առ ճակատ քաջ ախոյեան պիտի կանգնիմ, հոն փնտրեցէք զիս, եւ ջանք ըրէք ինձի հետ մէկտեղ Ռաս-Ալին ողջ բռնելու»<sup>104</sup>: Մարտի ընթացքում Քասան թէւ ջախջախիչ յաղթանակ է տանում աներոջ ուժերի նկատմամբ, սակայն «Ռաս-Ալին չի կրնար ձերբակալ ընել, որ միաձի դէպ ի Կոճամի երկիրը փախչելով մազապուրծ կ'ազատի»<sup>105</sup>:

Նրան հետապնդելով Քասայի զօրքերը տիրում են Կոճամին, սակայն Ռաս-Ալիին բռնել կրկին չի յաջողում, քանի որ վերջինս հասցնում է ապաստանել մի անառիկ լեռան վրայ: Դրա փոխարէն Քասայի ձեռքն են ընկնում նրա որդին եւ մայրը՝ վայզարո Մանանը (Մենէն Լիպան), որոնց «Ըսար-Ամպա լեռը խրկելով՝ հոն շղթայել կու տայ, ուր տեղ որ մենք ալ

<sup>101</sup> C. Mondon-Vidailhet, *Chronique de Théodoros II, Roi des rois d'Ethiopie (1853–1868), d'après un manuscrit original*, Published by Librairie Orientale & Américaine – E. Guilmoto, Paris, 1904, էջ 2–3. նաեւ՝ Թոփուզեան, էջ 68: Այսուհետեւ օգտուել ենք Վոլտէ Մարիամի ժամանակագրութեան ուսերէն թարգմանութիւնից՝ Մ. Заболотских, “Хроника царя царей Эфиопии Феодора II, написанная Алейкой Вольдэ Мариамом,” Перевод и комментарий. (Մ. Չարլոտսկիխ, Եթովպիայի արքայից արքայ Թէոդոր Բ.ի ժամանակագրութիւնը՝ շարադրուած ալեքա Վոլտէ Մարիամի կողմից, թարգմ. եւ ծանօթ.), *Письменные памятники Востока*, 2(9):2008, էջ 67–103 (այսուհետեւ՝ Վոլտէ Մարիամ, ժամանակագրութիւն):

<sup>102</sup> Վոլտէ Մարիամն իր աշխատութիւնը շարադրել է Թէոդորոս Բ.ի մահից 13 տարի անց՝ 1881ին (Վոլտէ Մարիամ, *ժամանակագրութիւն*, էջ 103):

<sup>103</sup> Սափրիչեան, էջ 89:

<sup>104</sup> Նոյն:

<sup>105</sup> Նոյն, էջ 89-90:



Նեկուս Թէոդորոս Բ.ի (1855–68) դիմանկարը՝ շրջապատուած արքայական իշխանութեան խորհրդանիշ առիծներով

**բաւական ժամանակ մնացինք** (ընդգծումը մերն է – Ա.Մ.)»<sup>106</sup>: Այնուհետեւ Սափրիչեանը շարունակում է. «Կը պատմեն թէ՛ Ռաս-Ալիին մօրը համար պատուէր կու տայ, որ միայն քոսօ տան կերակուրի եւ հացի տեղ, ըսելով թէ՛ քոսօ ծախողին տղուն քով քոսօ միայն կը գտնուի եւ ոչ հաց»<sup>107</sup>: Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ Սափրիչեանն ինքը տեաական ժամանակ գտնուել է Զարամպայում<sup>108</sup>, տեղում հնարատրութիւն ունենալով շփուել ինչպէս

այս իրադարձութիւնների ականատեսների, այնպէս էլ անմիջական մասնակիցների հետ: Հետեւաբար՝ նրա հաղորդումները Քասա-Թէոդորոսի եւ Ռաս-Ալիի հակամարտութեան վերաբերեալ հիմնականում համապատասխանում են պատմական իրականութեանը եւ ունեն սկզբնաղբիւրի արժէք:

Կոճամին տիրելուց յետոյ Քասան անակնկալ յարձակում է նաեւ Թիկրէի վրայ եւ ձերբակալում տեղի տիրակալ տեճազմաչ Ուպիին (Ուպիէ): Այս երեք իշխանապետութիւնները միաւորելուց յետոյ նա 1855ին թագադրում է եթովպական եկեղեցու առաջնորդ ապունա Սալամա Բ.ի ձեռամբ եւ ստանում Թէոդորոս անունը: Սափրիչեանը արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Քասայի՝ արքայական Թէոդորոս անունը ստանալու վերաբերեալ: «Կը պատմեն,– գրում է նա,– թէ՛ Հապէշից մէկ սուրբին ըրած յայտնութիւններէն (հոգեւորեսութիւն) համբաւ մը տարածուած էր հասարակութեան մէջ, թէ Թէոդորոս անունով թագաւոր մը պիտի ելլէ, որ մինչեւ Երուսաղէմի պիտի տիրէ»<sup>109</sup>: Թէոդորոսի թագադրութեամբ ւաւարտում է Եթովպիայի պատմութեան այն փուլը, որն առաւել յայտնի է որպէս «դատատրների ժամանակաշրջան» («Zemene Mesafint»), եւ վերջ է տրւում Կոնտէրում Սողոմոնեան հարստութիւնից անուանական գահակալներ նստեցնելու ւաւանդոյթին<sup>110</sup>:

<sup>106</sup> Նոյն, էջ 90:

<sup>107</sup> Նոյն:

<sup>108</sup> Ամպա.– Տեկտոնական ծագմամբ սեղանածե լեռ՝ հարթ գագաթով: Եթովպական բարձրավանդակը բաւական հարուստ է նման լեռնային կազմաւորումներով, որոնք օգտագործում էին որպէս բնական ամրութիւններ:

<sup>109</sup> Սափրիչեան, էջ 91:

<sup>110</sup> Թէոդորոսից առաջ Կոնտէրում նստում էր Սողոմոնեան հարստութեան ներկայացուցիչ Սաիլա Տենկէլը, որն ընդմիջումներով գահակալել է 1832–40, 1845–50 եւ 1851–55 շրջաններին:

Այս երեք իշխանությունների միատրումից յետոյ 1855 Հոկտեմբերին Թէոդորոսը արշաւում է Շօայի կիսանկախ թագաւորութեան վրայ<sup>111</sup>: Այնտեղ այդ ժամանակ իշխում էր Հայլէ Մելեկոտը (1847–55), որը Շօայի նշանաւոր արքայ Սահլէ Սելասիէի որդին էր եւ Եթովպիայի ապագայ կայսր Մենելիք Բ.ի հայրը<sup>112</sup>: Այդ մասին Սափրիչեանը, մասնաւորապէս, գրում է. «Շօայի Մելեքօթ թագաւորն ալ Թէոդորոսին իւր վրայ գալը լսելուն պէս՝ վախէն յանկարծամահ կ'ըլլայ, եւ առանց պատերազմի անոր երկրին ալ կը տիրէ... Անոր Մինիլիք անուն որդին ալ իրեն որդեգիր կ'ընէ, բայց նա իւր հայրենի երկիրները ձեռք ձգելու համար կը փախչի Թէոդորոսին քովէն եւ յայտնի կ'ապստամբի անոր դէմ: Հիմա նոյն երկրին իշխանն է»<sup>113</sup>: Այստեղ Սափրիչեանը որոշ տեղեկութիւններ է հաղորդում Եթովպիայի ապագայ հռչակաւոր նեկուսի առաջին քայլերի մասին: Նրա աշխատութեան հրապարակումից տասնութ տարի անց Մենելիքին յաջողում է դառնալ Եթովպիայի կայսր եւ ծաւալել բեղուն պետականաշէն գործունէութիւն<sup>114</sup>: Իսկ ԺԹ. դարի կէսերին Թէոդորոս Բ.ի գլխաւորած Եթովպիան Ափրիկէի երկու անկախ մնացած պետութիւններից մէկն էր՝ Լիպերիայի հետ միասին, որն իր անկախութիւնը հռչակել էր 1847 Յուլիսի 26ին<sup>115</sup>:

ԺԹ. դարի սկզբներից Եթովպիայում աշխուժ գործունէութիւն են ծաւալում եւրոպական տարբեր պետութիւններից ժամանած միսիոնարները, որոնք նախադրեալներ են ստեղծում երկրի գաղութացման համար: Մի

<sup>111</sup> Շօայի թագաւորութիւնը ԺԸ. դարի սկզբին հիմնել էր ոմն Նեկասի Քրիստոս, որին այդ իշխանութիւնը շնորհել էր Եթովպիայի նեկուս Յեսու Ա.ը՝ հարաւարեւմուտքից կալլաների ներթափանցումը զսպելու նպատակով: Շօայի արքաները թէւ փաստացի անկախ էին, սակայն ձեւականօրէն ճանաչում էին Կոնստնտնուպոլիսի Սուլթանի հարստութեան թագաւորների իշխանութիւնը (*История тропической Африки (с древнейших времен до 1800 г.)*) (Արեւադարձային Ափրիկէի պատմութիւն (ինագոյն ժամանակներից մինչեւ 1800), «Найка», Մոսկուա, 1984, էջ 304):

<sup>112</sup> А. Пономаренко, С. Чернецов, Памфлет «Государь Менелик и Эфиопия» нэадраса Гебре Хейвота Байкедэня - одного из первых эфиопских просветителей, *Africana. Африканский этнографический сборник.* (Ա. Պոնոմարենկօ, Ս. Չերնեցով, Եթովպական առաջին լուսատրիչներից մէկի՝ նեգադրաս Գեբրէ Հեյուտ Քայկեդանի «Մենելիք թագաւորը եւ Եթովպիան» թոուցիկը, *Africana*), XIII:1982, Լենինկրատ, էջ 143:

<sup>113</sup> Սափրիչեան, էջ 92:

<sup>114</sup> Մենելիք Բ.ի իշխանութեան շրջանի մասին տե՛ս՝ Guèbré Sellassié. *Chronique du règne de Ménélik II, roi des rois d'Éthiopie*, tt. I-II, Paris, Maisonneuve frères, 1930–1932; А. Булатович, С войсками Менелика II, Под редакцией, с предисловием и примечаниями И. Кацнельсона, (Ա. Բուլատովիչ, Մենելիք Բ.ի զորքերի հետ. խմբ., առաջ. եւ ծանօթ.՝ Ի. Կացնելսոն), «Найка», Մոսկուա, 1971:

<sup>115</sup> «Африка», *Энциклопедический справочник, т. II* («Ափրիկէ» հանրագիտարան, *հղր. II*), «Советская энциклопедия», Մոսկուա, 1987, էջ 52:

անգամ Մասսաուայի ֆրանսական փոխհիպատոսի հետ գրոյցի ընթացքում Թէոդորոսը յայտարարում է. «*Ես գիտեմ երոպական կառավարութիւնների մարտավարութիւնը: Երբ նրանք ցանկանում են գրաւել [որեւէ] արեւելեան երկրի տարածքը, նրանք սկսում են այնտեղ ուղարկել միսիոնարներին: Այնուհետեւ նրանք ուղարկում են հիպպոտոսների՝ միսիոնարներին աջակցելու նպատակով, եւ, վերջապէս, նրանք ուղարկում են իրենց զորագնդերը՝ հիպպոտոսներին աջակցելու նպատակով*»<sup>116</sup>: Ինչպէս տեսնում ենք, «Քոսսո վաճառողի որդին» զարմանալի խորաթափանցութեամբ կարողացել էր բացայայտել երոպական պետութիւնների վարած գաղութային քաղաքականութեան ողջ էութիւնը եւ յստակ բանաձեւել գաղութացման ընթացքը: Սակայն նրա խօսքերը մարգարէական եղան, առաջին հերթին, հենց իր համար:

Թէոդորոս Բ.ի եւ բրիտանացիների հակամարտութեանը Սափրիչեանն անդրադառնում է «Անգղիացի հիպատոսն ու [անոր] բանտարկութիւնը» գլխում: 1862 Յուլիսին որպէս բրիտանական հիպատոս Եթովպիա է ժամանում Չարլզ Տանքըն Քեմըրոնը (1825–70): «*Թէոդորոս թագաւորի քով գտնուող ճերմակ մարդոց մէջ նշանաւոր է անգղիացւոց քափթէն–Քամերոն հիպպոտոսը,– գրում է Սափրիչեանը,– որ իւր բռնած քաղաքականութեամբը պարճառ եղաւ այս երկու տէրութեանց մէջ ծագած կոտորէն, որ եւ Թէոդորոսի դիւցազնական մահուամբը վերջացաւ*»<sup>117</sup>: Սկզբնական շրջանում նրա եւ Թէոդորոսի միջեւ հաստատում են բարեկամական յարաբերութիւններ: Թագաւորը դիւրացնում է անգլիացի միսիոնարների գործունէութիւնը՝ միամտաբար կարծելով, թէ «անոնց քարոզութեամբը քրիստոնէից թիւը պիտի աւելնայ իւր երկրին մէջ»<sup>118</sup>:

Սակայն շուտով բրիտանացիների աշխարհաքաղաքական մրցակիցները՝ ֆրանսացիներն ու գերմանացիները, յուշում են թագաւորին, թէ «*անգղիացւոց ներքին նպատակը կրօնք քարոզելը չէ, այլ ուրիշ քաղաքական նպատակ մը ունին*»<sup>119</sup>: Ինչ վերաբերում է հիպատոսին, ապա նրա մասին էլ Թէոդորոսին յայտնում են, որ նա «յատկապէս լրտեսութեան համար եկած է», որի իրական նպատակը «*Անգղիոյ թագուհւոյն զօրքերը յանկարծ բերել տալով՝ զքեզ անոնց ձեռքը մատնելն է*»<sup>120</sup>: Այս կապակցութեամբ Սափրիչեանը յաւելում է. «*Հիպպոտոսին վարուցը վրայօք ինչ որ լսեցինք՝ ժողովրդեան վկայութիւնն եւ անոնց պատմութիւնն է. եւ թէպէտ*

<sup>116</sup> Райт М., “Теодрос II и англо-эфиопская война 1867–1868 гг.,” *Эфиопские исследования. История. Культура* (Մ. Ռայթ, Թէոդորոս Բ.ը եւ 1867–1868ի անգլո-եթովպական պատերազմը, «Եթովպագիտական հետազոտութիւններ. պատմութիւն, մշակոյթ»), «Наука», Մոսկուա, 1981, էջ 40:

<sup>117</sup> Սափրիչեան, էջ 99:

<sup>118</sup> Նոյն, էջ 100:

<sup>119</sup> Նոյն, էջ 101:

<sup>120</sup> Նոյն, էջ 102:

մենք չենք հաւարացած, այսու ամենայնիւ պարմութեանս կարգը կը պահանջէ, որ առանց մեր լսածներէն պզտիկ պարագայ մըն ալ ծածկելու՝ հաւարարմութեամբ գրուցենք»<sup>121</sup>:

Պատմում են, որ հիպատոսը Թէոդորոսին խոստանում է անձամբ Մեծն Բրիտանիայի թագուհի Վիքթորիային հասցնել նրա նամակը, սակայն իր խոստումը կատարելու փոխարէն շեղւում է ճանապարհից եւ Կեսելայի ու Կալլապատի (Մետեմմա) վրայով անցնում Ճիլկա (Չիլգա), որտեղից, ինչպէս գրում է Սափրիչեանը, «ապստամբի մը քով փախչիլ կ'ուզէր»<sup>122</sup>: Իրականում Քեմըրոնը Եթովպիային սահմանակից Սուտանի շրջաններում գաղտնի հանդիպումներ է ունենում եգիպտական եւ թուրք փաշաների հետ՝ փորձելով խարդաւանքներ լարել Թէոդորոսի դէմ<sup>123</sup>:

Ճիլկայում թագաւորի հրամանով հիպատոսին բռնում են եւ բերում իր մօտ: Թէոդորոսի այն մեղադրանքին, թէ՛ «Ճշմարիտ է ուրեմն ինչ որ կ'ըսեն քեզի համար. դու ես, ինչպէս կ'երեւնայ, բոլոր երկիրը տակնուվրայ ընողն ու վրդովողը», հետեւում է հիպատոս Քեմըրոնի համարձակ պատասխանը. «Ես քու թղթաւարդ չեմ, կ'ըսէ, ի՞նչ կ'ուզես ինձմէ, որ ետեւ ընկեր ես. ես քու պաշտօնեայդ ալ չեմ, այլ այնպիսի տէրութեան մը պաշտօնեայ եմ, ուսկէց բոլոր աշխարհ կը դողայ. եւ քեզ նման իշխանները եւ ոչ իր ծառայութեանը մէջ կ'ընդունի»<sup>124</sup>: Այս աներկիւղ պատասխանից յետոյ Թէոդորոսը հրամայում է շղթայակապ անել հիպատոսին: Ըստ Սափրիչեանի՝ դրանից յետոյ արքան յայտարարում է. «Թող գայ քու թագուհիդ, որու վրայ այդքան կը պարծենաս, եւ արծրկէ շղթաներդ թէ որ կարող է»<sup>125</sup>: Հիպատոս Քեմըրոնը եւ նրա հետ միքանի միսիոնարներ ձերբակալուել են 1864 Յունուարին:

Ձերբակալուածների ազատութեան նպատակով բրիտանական կառավարութիւնը 1865ի վերջին Եթովպիա է ուղարկում յատուկ պատուիրակութիւն: Այն գլխաւորում էր Ատէնի անգլիական լիազօր ներկայացուցչի առաջին օգնական Հորմուզդ Ռասամը<sup>126</sup>, որը ծագումով հայ էր: Պատուիրակութեան կազմում էին նաեւ բժիշկ Հենրի Պլանկը եւ գնդապետ Փրիտօն: Նրանք 1865 Դեկտեմբերի 28ին Մետեմմայի վրայով մտան Ե-

---

<sup>121</sup> Նոյն:

<sup>122</sup> Նոյն, էջ 103:

<sup>123</sup> К. Лукницкий, “Борьба империалистических держав за Абиссинию (до 1914 г.),” *Абиссиния (Эфиопия). Сборник статей* (Կ. Լուկնիցկի, կայսերապաշտական տէրութիւնների պայքարը Հապէշիստանի համար (մինչեւ 1914), էջ 410.

<sup>124</sup> Սափրիչեան, էջ 103:

<sup>125</sup> Նոյն:

<sup>126</sup> Ռասամի առաքելութեան մասին մանրամասն տե՛ս՝ Hormuzd Rassam, *Narrative of the British Mission to Theodore, King of Abyssinia; with notices of the countries traversed from Massowah, through the Soodân, the Amhâra, and back to Annesley Bay, from Mágdala, in two volumes*, London, 1869:

թովպիա եւ անցնելով Ամհարայի գաւառներով, 1866 Յունուարի 25ին հասան Տամոթ, որտեղ այդ ժամանակ գտնուում էր Թէոդորոսի բանակատեղին<sup>127</sup>:

Սկզբնապէս Թէոդորոսը լաւ է ընդունում նրանց եւ զիջելով՝ ազատ արձակում ձերբակալուածներին: Սակայն, ինչպէս գրում է Սափրիչեանը, որոշ մատնիչներ հաղորդում են թագաւորին, թէ «Այդ մարդը (Ռասամը), ըսին իրեն, նամակներ ունի քովը, որուն մէջ իրեն պատուէր գրուած է, որ եթէ չընդունիք Անգղիոյ կառավարութեան խնդիրքը ու հիւպատոսը չարձակէք, յանկարծ զարնէ սպաննէ զձեզ»<sup>128</sup>: Ըստ Սափրիչեանի՝ հաւատալով այդ խօսքերին՝ թագաւորը հրամայում է ձերբակալել Ռասամին, հիւպատոս Քեմըրոնին, ինչպէս նաեւ նրանց հետ գտնուող եւրոպացիներին, եւ ուղարկել Մակտալայի լեռը՝ շղթայելու: Իրականում, Ռասամի առաքելութիւնը ձախողութեամբ վերջինիս թոյլ տուած սխալների պատճառով, ինչի հետեւանքով 1866 Ապրիլին Թէոդորոսի կողմից ազատ արձակուած եւրոպացիները նորից ձերբակալուեցին<sup>129</sup>:

Այստեղ Սափրիչեանը հաղորդում է չափազանց ուշագրաւ տեղեկութիւն մի հայորդու մասին, որը փորձում է միջնորդութեամբ ազատել ձերբակալուած եւրոպացիներին: Նա, մասնաւորապէս, գրում է. «Տիգրանակերտցի Պեպրոս անուն հայ մը, որ ծանօթացած էր հիւպատոսին, ուզելով փորձ մը փորձել, հեռուանց հեռու պաշտպանութիւն ընել կ'ուզէ անոր անմեղութեանը, վասն որոյ ինքն ալ կասկածանաց ներքեւ ընկնելով կը բռնուի եւ անոնց շղթայակից կ'ըլլայ»<sup>130</sup>: Անշուշտ, այս խորհրդաւոր հայորդին Թէոդորոս թագաւորին անձամբ ճանաչող մէկը պէտք է լինէր, եթէ համարձակուել է այդ ծանր պահին հանդէս գալ նման վտանգաւոր նախաձեռնութեամբ:

Հենց արգելափակուած եւրոպացիների ազատութիւնը խնդրելու նպատակով էլ բրիտանական կառավարութեան խնդրանքով 1867 Ապրիլին դէպի հեռաւոր Եթովպիա են ուղեւորուել Երուսաղէմի հայոց պատրիարքարանի պատուիրակները՝ Իսահակ եպիսկոպոս Աստուածատուրեանն ու Տիմոթէոս վարդապետ Սափրիչեանը: Սակայն, չսպասելով նրանց ուղեւորութեան արդիւնքներին՝ բրիտանական կառավարութիւնը սկսեց նախապատրաստութիւններ տեսնել Եթովպիա ներխուժելու նպատակով: Այդ կապակցութեամբ պատմաբան Թոփուզեանն իրաւացիօրէն նկատում է. «Եթովպիայում անառարկելի հեղինակութիւն վայելող Երուսաղէմի հայոց պատրիարքարանի միջնորդութիւնն անգլիացիներին պէտք էր ոչ թէ Մակտալայում արգելափակուածների ազատութիւնը ձեռք բերելու, այլ Ե-

<sup>127</sup> Թոփուզեան, էջ 37:

<sup>128</sup> Սափրիչեան, էջ 105:

<sup>129</sup> Лукницкий, էջ 411:

<sup>130</sup> Սափրիչեան, էջ 105:

թովպիայի հոգետր ու աշխարհիկ ֆեոդալներին հանգստացնելու եւ ներխուժման ժամանակ Թէոդորոս Բ.ին նրանց հնարատր աջակցութիւնից զրկելու համար»<sup>131</sup>:

1867 Ապրիլին բրիտանական կառավարութիւնը սկսում է նախապատրաստել իր զօրքերի ներխուժումը Եթովպիա: Արշաւանքի նախապատրաստման կայան է ընտրում Բրիտանական Հնդկաստանի կարեւորագոյն կենտրոններից Պոմպէյը: Յուլիսի 13ին տեղի նահանգապետը յայտնում է, որ պատերազմի նախապատրաստումը կը տեւի շուրջ չորս ամիս: Օգոստոսի 13ին բրիտանական կառավարութիւնը որոշում է Եթովպիա ուղարկել զինուորական արշաւախումբ, որի հրամանատար է նշանակում զօրավար Ռոպըրթ Նէյփիըրը (1810–90)<sup>132</sup>:

1867 Հոկտեմբերի վերջին Պոմպէյից Ջուլա նաւահանգիստ (ժամանակակից Էրիթրէայի տարածքում) է հասնում բրիտանական զօրքերի առաջին զօրախումբը, իսկ Նոյեմբերի 19ին Վիքթորիա թագուհին պատերազմ է յայտարարում Եթովպիային<sup>133</sup>: Մինչեւ Դեկտեմբերի վերջը Հնդկաստանից Ջուլա է ուղարկում շուրջ 10,000անոց զօրախումբ: Ընդհանուր առմամբ, Բրիտանական Հնդկաստանի երկու կարեւորագոյն քաղաքներից՝ Պոմպէյից եւ Կալկաթայից, եթովպական արշաւանքին մասնակցելու նպատակով ուղարկում է անելի քան 14,100 զինուորական, որոնցից երոպացի սպաներ՝ 304, շարքայիններ՝ 3605, իսկ մնացած 10,195ը բաղկացած էր հնդկ զինուորներից՝ սիփահիներից, որոնց հաւաքագրել էին Հնդկաստանի բոլոր ծայրերից<sup>134</sup>: Ներառեալ սպասարկող անձնակազմը՝ Նէյփիըրի բանակի թիւը հասնում էր շուրջ 30,000ի:

Լսելով բրիտանական զօրքերի ավիանման լուրը՝ Թէոդորոսն իր ուժերով Տեպրէ-Թապորից շտապում է դէպի Մակտալա լեռը, որը նրա «բոլոր զօրութեան կեդրոնատեղին եւ իւր ապաստանարանն էր. հոն էին բոլոր իւր արքունի գանձերը եւ անթիւ բանտարկեալները»<sup>135</sup>:

1868 Յունուարի սկզբին Ջուլա է ժամանում գլխատր հրամանատար զօրավար Նէյփիըրը եւ սկսում է բրիտանական զօրքերի շուրջ 380 մղոն ձգտող արշաւանքը դէպի երկրի խորքը՝ Մակտալա լեռը<sup>136</sup>: Այդ մասին Սափրիչեանը գրում է. «Անզղիացոց բանակը խիստ մեծ եւ անտանելի տառապանքներ եւ դժուարութիւններ կրելով դէպ ի այն լեռը կը մօտե-

<sup>131</sup> Թովուզեան, էջ 42:

<sup>132</sup> Նրա մասին մանրամասն տե՛ս՝ H. D. Napier, *Field-Marshal Lord Napier of Magdala. A Memoir by his son*, Edward Arnold & Co., Լոնսոն, 1927:

<sup>133</sup> Лукницкий, էջ 412:

<sup>134</sup> Նոյն:

<sup>135</sup> Սափրիչեան, էջ 107:

<sup>136</sup> Նէյփիըրի բանակի անցած ճանապարհի մասին տե՛ս՝ Henry M. Hozier, *The British Expedition to Abyssinia: Compiled from Authentic Documents*, Macmillan and Co., Լոնսոն, 1869:

նային, ուր կը գտնուէր արդէն Թէոդորոս, եւ պատերազմի պատրաստութիւնները կարգի դրած էր»<sup>137</sup>:

Ապրիլի 10ին Մակտալայի լեռան մոտ գտնուող Արուկէի դաշտում տեղի է ունենում անզլօ-եթովպական պատերազմի միակ ճակատամարտը: «Անգամ մը Թէոդորոս բոլոր զօրքերը Անգղիացոց դէմ կը հանէ,– գրում է Սափրիչեանը,– կը խրախուսէ եւ կը սրտապնդէ զանոնք իր բոլոր լեզուին ճարտարութեամբը. պատերազմը կը սկսի եւ ի վնաս իր զօրացը՝ անգղիացիք կը յաղթեն»<sup>138</sup>: Չնայած թուական գերակշռութեանը՝ Արուկէի ճակատամարտում շուրջ 4 հազարանոց եթովպական բանակը ջախջախիչ պարտութիւն է կրում բրիտանական մօտ 2 հազարանոց առաջապահ գնդերից: Ճակատամարտի ելքը վճռում են բրիտանական հետեակայինների սպառազինութեան մէջ մտնող Սնայտերի փակաղակաւոր գերժամանակակից հրացանները, որոնց դէմ միայն պատրոյգաւոր հրացաններով եւ նիզակներով զինուած եթովպացի զինուորները պարզապէս անզօր էին<sup>139</sup>: Եօթ ժամ տեսած մարտի ընթացքում Թէոդորոսի բանակը տալիս է շուրջ 700–800 զոհ եւ 1500 վիրաւոր<sup>140</sup>: Հերոսի մահով զոհուում է նաեւ արքայի մերձաւոր զինակիցներից՝ ֆիթաւորարի<sup>141</sup> Կեպրիէն:

Պարտութիւնը Արուկէի դաշտում, ըստ էութեան, վճռեց անզլօ-եթովպական պատերազմի ելքը եւ կանխորոշեց Թէոդորոսի վախճանը: Այլ ելք չունենալով՝ նա ազատ է արձակում արգելափակուած երոպացիներին: Այդ կապակցութեամբ Սափրիչեանը գրում է. «Երբ կը լսէ (Թէոդորոսը – Ա.Մ.) իր մարդոց ջարդուիլը եւ հաւատարիմ մեծամեծաց մահը, եւ ոմանց ալ անգղիացոց կողմն անցնիլը, սիրտը կը մորմոքի եւ կը փոշորի, բայց ուրիշ ճար մը չգտնելով՝ ակամայ կը զիջանի անոնց առջի խնդիրքը կարարելու, եւ բոլոր երոպացի բանտարկեալները եւ իւր ծառայութեան մէջ գտնուողները բոլորն ալ արձակելով՝ պատրուով կը յանձնէ զանոնք անգղիացոց. ասոնց մէջ էր նաեւ հիւպատոսը»<sup>142</sup>: Ճակատամարտի յաջորդ օրը Մակտալայից Նէյփիլըրի ռազմաճամբար են իջնում հիւպատոս Չարլզ Քեմըրոնը, Հորմուզդ Ռասամը, բժիշկ Հենրի Պլանկը, միսիոնարներ Հենրի Շթըրնը, Թէոֆիլ Վալմայէրը, Ռոզենթալը, Մէյըրը, Հոլը եւ ուրիշներ<sup>143</sup>:

<sup>137</sup> Սափրիչեան, էջ 107:

<sup>138</sup> Նոյն:

<sup>139</sup> Theophilus Waldmeier, *The Autobiography of Theophilus Waldmeier, Missionary: Being an Account of Ten Years' Life in Abyssinia; and Sixteen Years in Syria*, S. W. Partridge & Co., Լոնտոն, 1886, էջ 109–10:

<sup>140</sup> Райт, էջ 44:

<sup>141</sup> Ֆիթաւորարի.– Չինուորական տիտղոս, առաջապահ կամ հետախուզական ջոկատի հրամանատարը: Բառացիօրէն նշանակում է՝ «առաջ՝ թալանելու» (Булатович, *С войсками Менелика II*, էջ 111):

<sup>142</sup> Սափրիչեան, էջ 107:

<sup>143</sup> Райт, էջ 45:

Պարտութիւնը Արոկէի դաշտում, ըստ էութեան, վճռեց անգլո-եթովպական պատերազմի ելքը եւ կանխորոշեց Թէոդորոսի վախճանը: Այլ ելք չունենալով՝ նա ազատ է արձակում արգելափակուած երոպացիներին: Այդ կապակցութեամբ Սափրիչեանը գրում է. «*Երբ կը լսէ (Թէոդորոսը – Ա.Մ.) իր մարդոց ջարդուիլը եւ հաւատարիմ մեծամեծաց մահը, եւ ոմանց ալ անգղիացւոց կողմն անցնիլը, սիրտը կը մորմոքի եւ կը փոչորի, բայց ուրիշ ճար մը չգտնելով՝ ակամայ կը զիջանի անոնց առջի խնդիրքը կատարելու, եւ բոլոր երոպացի բանտարկեալները եւ իւր ծառայութեան մէջ գտնուողները բոլորն ալ արձակելով՝ պատուով կը յանձնէ զանոնք անգղիացւոց. ասոնց մէջ էր նաեւ հիւպատոսը*»<sup>144</sup>: Ճակատամարտի յաջորդ օրը Մակտալայից Նէյփիլըրի ռազմաճամբար են իջնում հիւպատոս Չարլզ Քեմըրոնը, Հորմուզդ Ռասամը, բժիշկ Հենրի Պլանկը, միսիոնարներ Հենրի Շթըրնը, Թէոֆիլ Վալմայէրը, Ռոզենթալը, Մէյըրը, Հոլը եւ ուրիշներ<sup>145</sup>:

Ապրիլի 12ին, Զատիկի կապակցութեամբ, Թէոդորոսը ի նշան հաշտութեան զօրավար Նէյփիլըրին առաջարկում է ընդունել իր նուէրները՝ 1000 կով եւ 500 ոչխար<sup>146</sup>, բայց վերջինս հրաժարում է ընդունել նեկուսի ընծան, քանի որ դա փաստացի պատերազմի ասարտ կը նշանակէր: «*Սակայն այս անագան զիջումը անգղիացւոց անձնասիրութեան, ազգային պատուի, վնասուն եւ ըրած անչափ ծախուց եւ զոհողութեանց չէր կրնար փոխարինութիւն մը համարուիլ*» – նկատում է Սափրիչեանը, – *վասն որոյ կ'ուզէին անոնք կամ սպաննել զԹէոդորոս եւ կամ ողջ բռնել*»<sup>147</sup>: Յիրաւի, բրիտանական բանակը չէր կտրել Հնդկական ովկիանոսը եւ շուրջ 380 մղոն բազմաթիւ վտանգներով լեցուն ճանապարհ անցել Եթովպիայի տարածքով՝ Մակտալայի լեռնափէշերից ձեռնունայն վերադառնալու համար: Դա մեծապէս կը սասանէր բրիտանական թագի հեղինակութիւնը գաղութներում, որին նոր էր յաջողուել մեծ դժուարութիւնների գնով ճնշել սիփահիների ապստամբութիւնը Հնդկաստանում: Դէպքերի նման զարգացումը կարող էր խաչ քաշել նաեւ զօրավար Նէյփիլըրի յետագայ ասպարէզի վրայ, որին բրիտանական բանակի հնդիկ զինուորները՝ սիփահիները, անուանում էին ոչ այլ կերպ, քան «Սուլթան»<sup>148</sup>:

Եւ, ահա, Ապրիլի 13ի առաւօտեան Նէյփիլըրի հրամանով բրիտանական զօրքերը սկսում են Մակտալայի ամրոցի գրոհը: Նախօրէին ծանր պարտութիւն կրած եւ բարոյալքուած եթովպական բանակի մնացորդները ի զօրու չէին քիչ թէ շատ լուրջ դիմադրութիւն ցոյց տալ նրանց: Մակտալայի գրոհը տեւում է միքանի ժամ: Սափրիչեանը գրում է, որ Թէոդո-

<sup>144</sup> Սափրիչեան, էջ 107:

<sup>145</sup> Райт, էջ 45:

<sup>146</sup> Նոյն:

<sup>147</sup> Սափրիչեան, էջ 107-8:

<sup>148</sup> Վոլտէ Մարիամ, Ժամանակագրութիւն, էջ 99:



Թէոդորոս Բ.ի  
ինքնասպանութիւնը  
գորավար Նէյփիլըրի  
առջեւ (գործ՝ եթովպացի  
անյայտ նկարչի)

րոս Բ. «անգղիացւոց զօրութեան ականաւրես ըլլալով, իրեն քով մնացած պզտի խումբին հաւաքարմութեան վրայ ալ այնքան վստահ չէր, եւ խելքը կտրեց որ օր մը չէ նէ՝ օր մը անպարճատ անոնց ձեռքը պիտի ընկնայ կամ անոնց ձեռքով պիտի սպանուի, եւ անարգութեան յիշատակ մը պիտի թողու աշխարհիս մէջ. ուստի լաւ է, ըսաւ, քաջութեամբ ես զիս սպաննեմ, քան թէ թշնամույն ձեռքը ընկնալով խայտառակուիմ: Եւ յափշտակելով արքանակ մը, պարպեց իր բերնին մէջ, ու հոն փոռեցաւ ընկաւ դիւցազնաբար 1868, Ապրիլի 1/13ին, Չարկի երկրորդ օրը»<sup>149</sup>: Մահից առաջ բրիտանական հրամանատարութեանն ուղղած իր վերջին նամակը Թէոդորոս Բ.ը ասարտում է հետեւեալ խօսքերով. «Զօրականը, որը խաղում էր դիւցազունների հետ, խաղալիք չի դառնայ ուրիշների ձեռքին»<sup>150</sup>:

Մակտալայի գրաւումից յետոյ գորավար Նէյփիլըրը հրամայում է հրկիզել այնտեղ գտնուող բոլոր շինութիւնները, իսկ ամրոցը՝ պայթեցնել: Այնուհետեւ բրիտանացիները, ինչպէս գրում է Սափրիչեանը, «Թէոդորոսի պզտի տղան հետերնին առնելով շուտով ետ դարձան»<sup>151</sup>: Այստեղ խօսքը Թէոդորոսի կրտսեր որդու՝ արքայազն Ալեմայէհուի (Prince Alemayehu) մասին է, որը գերեվարում է մօր՝ Թիրուրկ Վուպէի հետ միասին<sup>152</sup>: Վերջինս շուտով մահանում է, իսկ Ալեմայէհուն, որն անգլիացիների կողմից դիտարկւում էր որպէս եթովպական գահի հաւանական թեկնածու, տարւում է Մեծն Բրիտանիա, որտեղի Լիծ քաղաքում էլ 1879 Նոյեմբերի 14ին վախճանում է թոքերի բորբոքումից: Յաւելենք, որ Մակտալայից հեռանալիս, բրիտանացիները յափշտակում են նաեւ եթովպական ձեռագրերի արքայական հաւաքածուն՝ 408 միտր, որն այժմ պահւում է Բրիտանական Թանգարանում<sup>153</sup>:

<sup>149</sup> Սափրիչեան, էջ 108:

<sup>150</sup> Пономаренко, Чернецов, էջ 14. նաեւ՝ *General History of Africa. Volume VI. Africa in the Nineteenth century until the 1880s*, editor J.F. Ade Ajayi, Heinemann Publishers, California, UNESCO, 1989, էջ 401:

<sup>151</sup> Սափրիչեան, էջ 108:

<sup>152</sup> Վուլտէ Մարիամ, Ժամանակագրութիւն, էջ 102-3: Թիրուրկ Վուպէն Թէոդորոսի երկրորդ կինն էր: Նրա առաջին կինը՝ վայգարօ Թաապաչը մահացել էր անլի վաղ (նոյն, էջ 83):

<sup>153</sup> W. Wright, *Catalogue of the Ethiopic Manuscripts in the British Museum*, London, 1877, էջ III-IV; Платонов В., Чернецов С., Эфиопская рукописная книга. –

Թէոդորոսի մահից յետոյ իշխանութիւնը կարճ ժամանակով անցնում է Լաստայի իշխան Վազշում<sup>154</sup> Կոպազէին, որը 1868 Յունիսին իրեն հռչակում է Եթովպիայի նեկուս՝ Թէքլէ Կորկիս Բ. (1868–71) անունով: Այդ մասին Սափրիչեանը գրում է. «Անոր (Թէոդորոսի – Ա.Մ.) մահուանէն յետոյ զօրացաւ Լաստայի Ալօ նահանգէն Վազշում–Կովազին, որ յետոյ թագաւոր հրատարակելով զհնքը՝ Թէքլէ–Կորկիս կոչուեցաւ, եւ կը տիրէ հիմա Ամարայի երկրին»<sup>155</sup>: Սակայն, վերջինս, 1871ի ամռանը Թիկրէի կենտրոն Ատուայի գրոհի ժամանակ ջախջախիչ պարտութիւն է կրում տեղի իշխան Քասայից, գերի ընկնում եւ գահընկեց արւում: Այդ յաղթանակից յետոյ Քասան 1872 Յունուարի 21ին իրեն հռչակում է Եթովպիայի նեկուս՝ Եոհաննիս Դ. (1872–89) անունով<sup>156</sup>: Նրանց մասին Սափրիչեանի ուղեգրութիւնում սփռուած են բազմազան ուշագրաւ տեղեկութիւններ:

Սափրիչեանի աշխատութեան՝ Թէոդորոս Բ.ին նուիրուած գլուխների մանրակրկիտ քննութիւնը մեզ բերեց այն եզրակացութեան, որ հեղինակի հաղորդած տեղեկութիւնները մեծ մասամբ համապատասխանում են պատմական իրականութեանը՝ որոշ դէպքերում վերահաստատելով կամ լրացնելով այլ աղբիւրների շարադրանքը: Տիմոթէոս Սափրիչեանի ուղեգրութիւնը կարեւոր աղբիւր է «վիքթորիական» դարաշրջանի Մեծն Բրիտանիայի եւ Թէոդորոս Բ.ի Եթովպիայի բարդ եւ բազմաշերտ յարաբերութիւնների ուսումնասիրման համար:

Ի տարբերութիւն անգլիացի եւ ֆրանսացի ուղեգիրների, որոնք Եթովպիայում հետապնդում էին յստակ քաղաքական շահեր, հայ ուղեգիրները, որպէս անշահախնդիր հեղինակներ, հիմնականում իրենց տեսածն ու լսածն են յանձնել թղթին, այդ առումով նրանց ուղեգրութիւններն ունեն առանձնայատուկ կարեւորութիւն: Հայ ուղեգիրների աշխատութիւնները կարեւոր սկզբնաղբիւր են ինչպէս Եթովպիայի, այնպէս էլ հայ-եթովպական պատմական կապերի ուսումնասիրութեան համար:

---

«Рукописная книга в культуре народов Востока». Очерки. Книга первая. (Վ. Պլատոնով, Ս. Չերնեցով, Եթովպական ձեռագրերը. – «Ձեռագրերը Արեւելքի ժողովուրդների մշակոյթում», Գիրք առաջին), «Найка», Մոսկուա, 1987, էջ 229.

<sup>154</sup> Վազշում.- տիտղոս, որը տրում էր Վազ գաւառի կառավարչին:

<sup>155</sup> Սափրիչեան, էջ 109:

<sup>156</sup> Եոհաննիս Դ.ն զոհում է 1889 Մարտի 9ին՝ Սուտանի մահտիական ապստամբների դէմ Մետեմմայի մօտ մղած ճակատամարտում, որից յետոյ Եթովպիայի նեկուս է դառնում Շօայի արքայ Մենելիք Բ.ը (1889–1913):

## ARMENIAN TRAVELERS ON ETHIOPIA AND ETHIOPIAN-ARMENIAN RELATIONS (Summary)

Dr. Ardag Maghalian  
artak\_77@mail.ru

Armenian-Ethiopian relations date back centuries. The closeness of the faith of the Armenian and Ethiopian peoples immensely contributed to these relations.

In the 17th–19th centuries, several Armenian figures visited Ethiopia and wrote descriptions of their travels.

In 1678 Arch. Hovhanneds Tutundji visited Ethiopia and wrote an interesting volume about his travels there. Tutundji visited Ethiopia on a political mission and left a remarkable letter entitled “The History of Going to and Coming from Abyssinia in the Year 1678”. Tutunji is believed to have traveled to Ethiopia to engage that country in the anti-Turkish struggle. In the late 17<sup>th</sup> century, Avedik Baghdassarian Dikranagerdtsi visited the country. He authored a book, *Ashkharhatsouyts* (“Geography”) that featured a section entitled “This Is on My Desire to Go to the Land of Abyssinia”. That section is considered to be one of the first geographic descriptions of Ethiopia which contains interesting ethnographic information about the inhabitants of that isolated country. In 1764, Armenian merchant Hovhannes Tovmajan (Tovmajanyan, 1717–1806) visited Ethiopia and left a chapter in his autobiography called “Journey to Ethiopia”, which has an important Ethiopological significance. In Ethiopia, he met Queen Iteke (Mentewab), who appointed him as the Royal Treasurer of Ethiopia. (He replaced another Armenian, Selef.) Later the position was transferred to his son Boghos. The travelogue of Hovhannes Tovmajan is an important source when studying the political and socio-economic life of Ethiopia in the 18<sup>th</sup> century.

A century later, in 1867, a delegation of the Armenian Patriarchate of Jerusalem, consisting of Bishop Isahak Asdvadzadurian and Archimandrite Dimotheos Saprighian, left for Ethiopia on a mediation mission. Upon his return, Saprighian published a two-volume travelogue entitled “A Two-Year Exile to Abyssinia, or the Moral, Political, and Religious Behavior of the Abyssinians” (Jerusalem, 1871), which is an important source for studying the complex and multifaceted Victorian-era relations between Great Britain and Tewodros II of Ethiopia.

The works of the Armenian travelers are primary source for the study of Ethiopia and Armenian-Ethiopian historical ties.



# Փոքրապատում Եթովպիոյ Հայօճախի ՀԲԸՄ Մասնաճիւղի (1906-1936/1944-63)

Անդրանիկ Տազեսեան  
adakessian@haigazian.edu.lb

Հիմնուելով ՀԲԸՄ Գահիրէի արխիւատան նիւթերուն վրայ, ստորեւ կը շարադրենք ՀԲԸՄ Եթովպիոյ մասնաճիւղին փոքրապատումը հիմնումէն մինչեւ 1963<sup>1</sup>:

Գահիրէի մէջ ՀԲԸՄիութեան հիմնումէն կարճ ժամանակ ետք, Հոկտեմբեր 1906ին, աշխատանքներ կը տարուին Եթովպիոյ մէջ ՀԲԸՄ մասնաճիւղ մը հիմնելու. տոքթօ. Նազարէթ Տաղաւարեան եթովպաբնակ Նիկ. Խաչատուրեանին կը դրկէ ՀԲԸՄ ծրագիր-կանոնագիրը, մասնաճիւղի կազմութեան ընթացակարգը եւ Պօղոս Նուպարի կոչը՝ անդամագրուելու Միութեան: Մասնաճիւղին կազմութիւնը նիւթ կը դառնայ տեղի «հայ ընթերցատան» մէջ, «ինչ ինչ պատճառներով անիրագործելի» կը նկատուի ու «նպաստաւոր լուծում» չի գտներ, նաեւ՝ «ոմանց անտարբերութեան» պատճառով: Սակայն, եթովպահայեր կ'անդամագրուին եւ յառաջացած սաղմնային մարմնէն Օննիկ Փափազեան, 10 Օգոստոս 1907 թուակիրով, «անգլիական դեսպանատան փոստի» Պօղոս Նուպարին կը դրկէ «տեղոյս հայ գաղթականութեան» կողմէ հանգանակուած գումարին փոխանակագիրը, յատկացուելու «Վանի եւ Մուշի սովեալներուն...»: Աւելի ետք, Փափազեան կը բացատրէ թէ կազմութեան փորձերը անյաջողութեան կը մատնուին «մերայնոց իրարու հանդէպ սնուցած կոյր նախանձին ու ատելութեան» պատճառով եւ յուսահատ կ'աւելցնէ. «գաղթականութեան անդամոց այս ձգտեալ վիճակը» թոյլ պիտի չտայ նման ծրագրի մը իրագործումը, բայց կը խոստանայ հանգանակութիւններու խնդրով արդիւնքներու հասնիլ: Եւ իրաւ, տեղի միութեանական քջիջը Յուլիս 1908ին Տաղաւարեանին կը դրկէ 7,9 փաւոնտ՝ «համագումարը...նոյիրատուութեան եւ վեցամսեայ բաժանորդագրութեան»<sup>2</sup>: Փափազեան կը կցէ ցանկը նոյիրատուներուն՝ Մ.Յ. Թովմեան, Կարապետ Կարիկեան, Կարապետ Ճիյէրճեան, Մարգար Միր-

<sup>1</sup> Օգտագործած ենք նիւթերը արխիւատան թիւ 81 թղթապանակին, որ կը հաշուէ 928 թերթ եւ կը վերաբերի 15 Հոկտեմբեր 1906-30 Սեպտեմբեր 1953 շրջանին: Թղթապանակին սկզբնական տարիներու ձեռագիր, սրճագոյն մելանով գրութիւններ գրեթէ անընթեռնելի են: Օգտագործած ենք նաեւ նիւթերը՝ արխիւատան թիւ 52 թղթապանակին, որ կը հաշուէ 108 թերթ եւ կը վերաբերի 26 Փետրուար 1954-20 Մայիս 1963 շրջանին: Շնորհակալութիւն կը յայտնենք ՀԲԸՄ Գահիրէի պատկան մարմիններուն, որոնք ազնուօրէն արտօնեցին այս եւ Սուտանի հայօճախին վերաբերող նիւթերուն օգտագործումը:

<sup>2</sup> Նկատի ունի մուտքի անդամագրութիւնը եւ անդամավճարները, որոնք կը սկսին 1 Ապրիլ 1908էն:

զա<sup>3</sup>, Յովսէփ Պոյաճեան եւ Վահէ ու Օննիկ Փափազեաններ: Միրզա Փետրուար 1909ին նոր գումար մը կը դրկէ ՀԲԸՄ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին (ԳԿՅ)՝ իբրեւ անդամավճար, այնուհետեւ, մինչեւ Յունուար 1911 կը դադրի հաղորդակցելէ՝ աշխատանքային ծանրաբեռնուածութեան պատճառով: ԳԿՅն այս անորոշութենէն դուրս գալու ճամփաներ որոնելով 30 Յունուար 1911ին կը դիմէ քաղաքային դատաւոր, Եթովպիոյ “La Lumiere d’Ethiopie” մասոնական օթեակին նախագահ Գ. Հովեանին, շնորհակալութիւն յայտնելով նաեւ ստացուած 28,2 ֆրանքին<sup>4</sup>:

23 Սեպտեմբեր 1911 թուակիրով Յովհաննէս Ասատուրեան եւ Վահան Փողարեան կը գրեն ՀԲԸՄ վարիչ-քարտուղար Վահան Մալէզեանին թէ տեղւոյն հայութեան մեծամասնութիւնը ՀԲԸՄ գաղափարներուն համապատասխան «լինելով» ձեռնարկած են հանգանակութեան եւ անդամագրութեան: Անոնք յանձանձաժ ըլլալով Միրզայէն, կը խոստանան յետայսու «ըստ կարելոյն վառ պահել Միութեան ոգին...», կը դրկեն գանձուած յետնեալ գումար (363 թալէր<sup>5</sup>=31,882Ե.ո7), եւ ցանկերը՝ 'նուիրատուներուն'<sup>6</sup> ու Ատիս Ապեպայի ՀԲԸՄ անդամներուն<sup>7</sup>: Անոնք գործնական չեն գտներ Ատիս Ապեպայի հետ Հարարի, Տիրետուայի, Ճիպոթի միասնական մասնաճիւղին գոյառումը, եւ կ'առաջարկեն որ վերջին երեքը գոյացնեն անջատ մասնաճիւղ՝ անհամաչափ հեռաւորութիւններուն պատճառով<sup>8</sup>:

<sup>3</sup> Ան Գէորգոֆ Տան գործադիր տնօրէնն էր, սիրայօժար կը զբաղէր ՀԲԸՄ Ատիս Ապեպայի գանձումներով: Անոր մահուան (մահացած 20 Նոյեմբեր 1917էն կարճ ժամանակ առաջ) յիշատակին Մարի Ռ. Որբերեան 25,000 ֆրանք նուիրելով հանգուցեալը կը դարձնէ ՀԲԸՄ պատուոյ անդամ: Նոյն առիթով, Մաթիկ Գէորգոֆ 1000 ֆրանք կը նուիրէ ՀԲԸՄին:

<sup>4</sup> Գումարը արդիւնքն էր այն նամակին զոր ԳԿՅն յղած էր վերոյիշեալ Խաչատուրեանին՝ հանգանակութիւն մը կատարելու: Վերջինս չյաջողելով՝ դիմած էր մասնական օթեակին, որ գոյացուցած էր գումարը:

<sup>5</sup> 19 մուտքի, 21 անդամավճարի, եւ փոքր նուիրատուութեան մը գումարը:

<sup>6</sup> Միսաք Բարունակեան, Գրաբոս Գարակէօզեան, Յովհաննէս Գարասեֆերեան, Նազարէթ Գնաճեան, Յարութիւն Ճերահեան, Միսաք Մելիքեան, Սեդրակ Մերանշահեան, Յովհաննէս Շահպազեան, Կարապետ Շերիթեան, Եղիա Պեհեսնիլեան, Սեդրակ Պիպերեան, Գրիգորիս Խ. Պօղոսեան, Սիմէոն Սեմէրճեան, Կարապետ Սեմէրճիպաշեան, Գուրգէն, Օհան եւ Ֆիլիփ Փողարեաններ:

<sup>7</sup> Մարտիրոս Մ. Ազնաւորեան, Յովհաննէս Ասատուրեան, Յարութիւն Ատանալեան, Կարպիս Էպէեան, Միհրդատ Թերզոնց, Օհան Իսրայէլեան, Միհրան Հազարեան, Տաճատ Ճիլերճեան, Գէորգ Մելիքեան, Նշան Մեսրոպեան, Գէորգ Որբերեան, Սուրէն Չաքրեան, Թորոս Կ. Պարսիկեան, Ռուբէն եւ Սամուէլ Պեհեսնիլեան, Ժոզէֆ Պեմօ, Վահան Փողարեան, Գէորգ Քեհիպեան:

<sup>8</sup> Ըստ հարարաբնակ միութեանական Հ. Մինասեանի, Դեկտեմբեր 1911ին Տիրետուայի եւ Հարարի հայերուն «թիւը 25ի կը հասնի»: Անոնցմէ 18ը ՀԲԸՄ անդամ էր: Աւելի ետք, Սեպտեմբեր 1914ին Ասատուրեան կը մէկտեղէ Տիրետուայի 20 հայեր, որոնք կ'ընտրեն վարչութիւն (Ստեփան Եազընճեան, Երուանդ Եղիազարեան,

## ԳԱՂՈՒԹԻՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ասատուրեանին եւ Փողարեանին ուղղուած 14 Դեկտեմբեր 1911 թուականի կիրով ԳԿՅն կը հաստատէ Ատիս Ապեպայի մասնաճիւղին (ԱՄ) գոյառումը: Արդարեւ, 18 Նոյեմբեր 1911 թուականի կիրով, Ասատուրեան (ատենապետ, 11 քուէ), Պետրոս Պոյաճեան (փոխատենապետ, 11 քուէ), Յովհաննէս Մելիք<sup>9</sup> (ատենադպիր, 13 քուէ) եւ Փողարեան ('գանձապետ', 9 քուէ) ծանուցեր էին ԱՄին յառաջացումը: Հիմնադիր ժողովին ներկայ գտնուելու էին ատիսապեպաբնակ 18 անդամներ<sup>10</sup>: Նամակով յայտնուած էր նաեւ *Միութիւնի* 10-15 բաժանորդագրման հնարաւորութեան<sup>11</sup> մասին եւ ուզուած անդամակցութեան 50 յանձնարարագիր: ԱՄն կը հաւաստէ. «*գաղութիս մէջ վառ պահելու համար ազգասիրական եռանդը... ծրագրած ենք հանդէսներ կազմել՝ ազգային մեծ փոսերի օրերը*»: Ըստ Ասատուրեանի Ատիս Ապեպայի հայութիւնը կազմուած էր 15 տարիէ ի վեր՝

...Տաճկաստանէն հալածուած եկուոր հայերէ, որոնց թիւը ներկայիս 80 արու անդամներէ բաղկացած է, ունի իր մէջ ուսեալ երիտասարդներ:

Մենք ամէնքս ալ առանց դրամի եկած ենք եւ աշխատութիւնով ու խնայողութիւնով ամէնքս ալ մեր անձնական գործերն ունինք, եւ մեր մէջ աղքատ հայ մը չկայ:

Զանազան առիթներով գրեթէ հազար ոսկի դրկուած է Ատիս Ապեպայի հայոց մէջ հանգանակութիւններ ընելով՝ Հայրենիքի դժբախտութիւնների

---

Գրիգոր Սեֆերեան (վաճառական, աւելի ետք կը հաստատուի Ատիս Ապեպա), Միքայէլ Թոփչեան, Տաղաւարեան եւ Պետրոս Վարժապետեան): Ասատուրեան կ'ակնկալէ որ Որբերեանի ջանքերով կարելի է ճիւղութիւնի եւ Տիրեւոյի հետ զօրաւոր մասնաճիւղ մը գոյացնել, հաւաստելով որ հայերը «շատ փայլուն դիրքեր ունին ճիւղութիւնի, Հարար եւ Տիրեւոյ, եւ շատ չնչին գումարներ կը վճարեն...»: Սակայն Մայիս 1916ին Տէրեւոյի մէջ վարչութիւն չէր գործեր:

<sup>9</sup> Ան Թուրքիա կը մեկնի Սեպտեմբեր 1917ին առաջ:

<sup>10</sup> Մարտիրոս Ազնաւորեան (խանութեան), Յովհաննէս Ասատուրեան (վաճառական), Յարութիւն Ատանապեան եւ Կարպիս Էպէեան (խանութեաններ), Միհրդատ Թերզոնց (պաշտօնեայ), Օհան Իսրայէլեան (խանութեան), Զաւէն Խաչատուրեան (վաճառական), Միհրան Հազարեան (պաշտօնեայ), Մամաս Ճիլերճեան (հացագործ), Գէորգ Մելիքեան եւ Յովհաննէս Մելիք (խանութեաններ), Նշան Մեսրոպեան (որմնադիր), Գէորգ Որբերեան (խանութեան), Սուրէն Զաքրեան (պաշտօնեայ), Թորոս Պարսիկեան (խանութեան), Ժողէֆ Պեճո (վաճառական), Եղիա (խանութեան), Սամուէլ (թարգման) եւ Ռուբէն (խանութեան) Պեհեսիլեան, Պետրոս Պոյաճեան (լուսանկարիչ), Գրիգորիս (վաճառական), Լեւոն եւ Միհրդատ (պաշտօնեաներ) Պողոսեան, Գուրգէն եւ Վահան Փողարեան (խանութեաններ), Գէորգ Քեհիայեան (կոշկակար): Կային նաեւ հին անդամներ՝ Մարգար Միրզա, Կարապետ Ճիլերճեան եւ Յովհաննէս Պոյաճեան:

<sup>11</sup> Յունիս 1913ին, Եթովպիոյ մէջ, *Միութիւնի* բաժանորդներուն թիւը 17ն էր, 1915ին՝ 15, 1921ին՝ 22: Երբեմն *Միութիւնը* «ծրագրաբար» կը տրամադրուէր անդամներու եւ համակիրներու, իբրեւ տեղեկատուութիւն եւ փրօփականտի միջոց:

Ժամանակ եւ Դաշնակցական կուսակցութեան: Տաճկաստանի սահմանադրութիւնը հռչակուելու ժամանակները այստեղ Դաշնակցական ենթակոմիտէ մը կազմուած է, որ խիստ կարճ ժամանակ ապրեցաւ, եւ ժողովքի մը մէջ ավիրիկեան հայերի յատուկ կոչիւններով քմիթէն դադրեցաւ գոյութիւն ունենալէ: Տեղւոյս գրադարանը զոհ գնաց Դաշնակցական ենթաքումիթէին: 3 տարի անտարբերութիւն տիրեց:

Հիմա Բարեգործ. Ընդհ. Միութիւն տասնի չափ նոր անդամներ եւս ունեցաւ, որով գաղթականութեանս կէսէն աւելի մեր դրօշակի տակ մտան, եւ մնացեալներն ալ հետզհետէ պիտի գան:

Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը եղաւ Ատիս Ապեպայի հայ գաղթականութեանս Միութիւնը, որուն նպատակն է տեղւոյս մէջ հայութիւնը պահպանելու միջոցները ձեռնարկել, բանալով հայ մանկանց համար ազգային վարժարան եւ եկեղեցի մը շինել ու հոգեւորական մը բերել, եթէ կառավարութիւնը չարգիլէ:

... տեղւոյս հայութիւնը մխիթարական վիճակ մ'ունի:

Ասատուրեան կը զգուշացնէ.-

... այսուհետեւ անձնական նամակ չգրէք ինձի, որ նախանձութիւն չծագի պաշտօնակիցներիս մէջ եւ մեր մասնաճիւղն քաջալերելու հանգամանք ունենան ձեր պաշտօնական նամակներն: Այս դիտողութիւնս խոնարհաբար կը ներկայացնեմ ... անցեալ դէպքեր այս համոզումին բերած հանգեցուցած լինելուն համար զիս<sup>12</sup>:

Դեկտեմբեր 1911ին ԱՄի անդամներուն թիւը կը բարձրանայ 36ի: Ասոնց մէջ կային 8 խանութպան, 1 ատաղձագործ, 1 դերձակ, 1 լուսանկարիչ, 2 վաճառական, 2 պաշտօնեայ: 1912 Փետրուարին այս թիւը կը բարձրանայ 41ի: Նորագիրներն էին.- Համբարձում, Մարտիրոս Գ. եւ Սարգիս Գ. Ազնատուրեաններ, Թագուհի եւ Փայլածու Ասատուրեան, Մատթէոս Գարամանեան, Յովսէփ Էպէեան, Յովհաննէս Թերզեան, Զաւէն Խաչատուրեան, Մամաս եւ Կարապետ Ճիլերճեան, Միսաք եւ Օհաննէս Մելիքեան, Մարգար Միրզա, Կարապետ Շիրիքճեան, Եղիա Պեհեսնիլեան, Սեդրակ Պետիրեան, Յովսէփ եւ Պետրոս Պոյաճեան, Գրիգորիս եւ Միհրդատ Պօղոսեան, Պօղոս Սեմերճեան, Գուրգէն Փողարեան, մինչ հրաժարած էին Լեւոն Պօղոսեան եւ Երուանդ Յովսէփեան: Անդամներէն ոմանք ինքնակամօրէն կը բարձրացնեն իրենց անդամավճարները:

---

<sup>12</sup> Մասնաճիւղի կազմութիւնը յոյս կը ներշնչէ հայօճախին համերաշխութեան. Մաթիկ Գէորգոս Տունէն ելած 26 Սեպտեմբեր 1912 թուակիր մը յոյս կը յայտնէ որ «Բարեգործականի հմայիչ բարոյական ազդեցութիւնը կապ մ'ըլլայ նաեւ տեղւոյս գաղութին անհատներուն, որք բնագաւառին տառապեալները խորհած առեննին իրարու մէջ գոյութիւն ունեցող հակառակութիւնները մոռնալով զիրար սիրեն...»: Աւելի ետք, Նոյեմբեր 1913ի անդամական ժողովը կը մերժէ «գաղութին մէջ պատահող վէճերու համար իրաւարարական մարմին մը կազմելու առաջարկը»:

Շուրջ հնգամեայ վտիտ քայլերէ ետք, կը թուի ԱՄՆ կ'ամրանայ. 19 Օգոստոս 1912ին գումարուած անդամական ժողովին կ'ընտրուի վարչական երկանուն ցանկ.- ատենապետութիւն՝ Ասատուրեան (16 քուէ) եւ Գրիգորիս Պօղոսեան (8 քուէ), գանձապահութիւն՝ Փողարեան (10 քուէ) եւ Կարպիս Էպէեան (8 քուէ): Փողարեան երկրին խորերը երթալու նկատառումով կը հրաժարի: Աւելի ետք, կ'արձանագրուին նոր անդամներ, մինչ դադրողներ ալ կ'ըլլան. Յունուար 1913ին անդամներուն թիւը կ'ըլլայ 39<sup>13</sup>:

Ըստ Ասատուրեանի 19 Հոկտեմբեր 1913 թուակիր ընդարձակ տեղեկատուութեան՝ «...Պոլսոյ հրապարակի վրայ ծանօթ ճերմակեղէնի վաճառական Միհրան էֆ. Մուրադեանը հինգ տարի առաջ (1908ին – Ա.Տ.) այս կողմերը գործ բանալու ձեռնարկ ըրաւ, որով ներկայացուցիչը տիրաւոր Գրիգոր Սեֆէրեանը<sup>14</sup>, Պոլսոյ եւ Եգիպտոսի մէջ փորձուած եւ ճարպիկ երիտասարդը յաջողեցաւ Հարարի եւ տեղուոյ վաճառականների հետ ընդարձակ գործեր ընել...: Այս տարի ալ Միհրան էֆ. Մուրադեանը անձամբ գալով քննեց այս երկրին գործերը, եւ այստեղ ալ ներկայացուցիչ մը դրաւ»: Քաջալերուած արդիւնքէն՝ ճերմակեղէնի պոլսահայ վաճառականներ «որոշած են քանի մը մեծ տուներու մասնաճիւղեր բանալ այստեղ»: Ասատուրեան կը կարծէ որ «քանի մը տարիէն ճերմակեղէնի գործը հայոց ձեռքը կ'անցնի, մանաւանդ որ մէկ տարիէն երկաթուղին կը մտնէ Արիս Ապեպա եւ ճերմակեղէնը կանխիկ դրամով կը ծախուի այստեղ»: Ան կը շարունակէ.

Հապէշիստան եկած առաջին հայն է սերաստացի Պօղոս աղա Մարգարեանը, որ Սուէզի ջրանցքը բացուելու ժամանակ աշխատած է իբր գործաւոր, եւ անկէ եկած է այստեղ բախտ փնտռելու համար:

Անկէ յետոյ եկած են պոլսեցի եւ արաբկիրցի հայեր, Եգիպտոս գալով գաղափար առած են Հապէշիստանի մասին եւ եկած են բախտ փնտռելու...: Ոմանք վերադարձած են, ոմանք մեռած են, ոմանք յաջողած են, եւ այդ յաջողներն ալ չեն կրցեր պահել իրենց վաստակածն բացի մէկէն, առեւտուրի անընդունակ եւ տգէտ լինելուն համար:

Ներկայ գաղութը կազմուած է Տաճկաստանի կոտորածներէն յետոյ փախողներէն, գլխաւորապէս արաբկիրցի, պոլսեցի, վանեցի, կիլիկիացի, իզմիրցի, ատանացի, այնթապցի, նիկոմիդիացի եւ կեսարացիներէ:

Հին եկողները նորեկներին ոչ միայն չեն օգնած, այլ հալածած են կամ կեղեքած են: «Եթէ ծով երթաք ձեր ճամփու ծախքը կը տանք, եթէ չուզէք երթալ, շղթայակապ կը դրկենք» ըսող ալ եղած է առաջին անգամ Ատիս Ապեպա եկող գաղթականներուն:

Սակայն նորեկներն իրենց յարատեւ աշխատութիւնով, խնայողութիւնով եւ առեւտրի համար ունեցած յարմարութիւններով քանի մը տարուան

<sup>13</sup> Քանի որ ոմանք եկած, աշխատած ու վերադարձած էին ծննդավայր, ինչպէս՝ 1912ին Տիարպեքի մահացած Յ. Պտուշեան:

<sup>14</sup> Սեֆէրեան ոռուսահպատակ էր: Աւելի ետք ան կը մեկնի Գահիրէ՝ ամուսնանալու:

մէջ դիրք բռնած են, թէւ ամէնքն ալ առանց դրամագլխի սկսած են, եւ իրենցմէ յետոյ եկողներին օգնած են: Նորեկ մը գալուն պէս քանի մը օրուան մէջ գործ մը կը պատրաստեն կամ խանութ մը կը բանան: Չկայ հայ մը որ կարօտ ըլլայ, ամէնքն ալ իրենց անձնական գործերն ունին, մեծ մասամբ խանութպան են, եւ ամէն խանութպան արհեստ մ'ունի, որ գրեթէ այստեղ սորված են. կաշիէ փամփշտանոց կարել, որ ամէն հապէշ կը կապէ իր մէջքին, հապէշի հագուստներ կարել, նստելիք ջորիի համետի զարդարանքներ, վզնոցներ կարել, սիւզէնի՝ հայերիս մասնագիտութիւններն են եւ հայոց ձեռքն է այս գործը: Կան ոսկերիչներ, ժամագործ, կօշկակարներ, կառք շինող, ատաղձագործ, ճարտարագէտ եւ օգնական, մեղրօղիի անուանի գործարան մը կայ, պարտիզպաններ, ճաշարան, սրճարան կայ: Կառքով ապրանք փոխադրող ընկերութիւն մը կայ. մասնատրներ հոս կան կառքի գործով:

Կառավարութեան փողերանոցի հիմնադիրն եւ կառավարիչը տիար Յակոբ Բաղդասարեանն է, վանեցի, որ 14 տարի առաջ եկած է հետը բերելով միայն իր ընդունակութիւնը: Մենելիք կայսեր քով մտաւ իբր ոսկերիչ, եւ համոզեց որ Եւրոպա երթայ փողերանոցի մեքենաներ բերէ, եւ բերաւ, հաստատեց եւ մինչեւ հիմա փողերանոցի տեսուչն է:

Տիար Գրիգոր Հովուեան, պոլսեցի, Փարիզի Ponds et Chausséesէն ելած արուեստագէտ, շատ տեղեր պտտած եւ պաշտօններ վարած, վերջապէս ամէն տեղէ զգուած եկած է Հապէշիստան եւ 8 տարիէ իվեր կառավարութեան ճարտարագէտն է:

Տիար Մարգար Միրզա, իզմիրզի, Մ. Գէորգոֆի Ատիս Ապեպայի ընկերը, յարգելի անձնատրութիւն մը, կարեւոր դիրք բռնած է իր բազմատեսակ ներածումներով եւ ծխախոտի մոնոպոլով:

Տեարք Պ. եւ Ս. Սեմերճեան եղբարք ոչնչով եկած են, ինչպէս ամէնքս ալ, եւ այսօր ճերմակեղէնի վաճառական են եւ կարեւոր դիրք բռնած:

Վերջին տարիներս երկու յարգելի հայեր մեծ յաջողութիւններ ունեցան, տիար Ալեքսան Դարբինեան, որ ֆրանսական տան մը ներկայացուցիչն է, եւ տիար Յովհաննէս Ասատուրեան, որ միակ վաճառականն է հայոց մէջ՝ արտածումով զբաղուող եւ ընդարձակ գործեր ունի Եւրոպայի հետ: Գաւառներն եւս միքանի հայեր կան առետրով զբաղուող:

Տիար Սամուէլ Պեհեսնիլեան<sup>15</sup> Տարսնի քոլէճէն ընթացաւարտ, ատանացի յարգելի հայն Միացեալ Նահանգների քոնսիլիին փոխանորդն է:

<sup>15</sup> Ծնած էր 1 Մարտ 1879ին, Պեհեսնի, նախնական կրթութիւնը ստացած ծննդավայրին մէջ, ապա ընտանեօք փոխադրուած Ատանա, ուրկէ միքանի տարի ետք անցած Տարսնի Սընթ Փոլզ Քոլէճը եւ շրջանաւարտած BA վկայականով, ապա ուսուցչական պաշտօն վարած երկու տարի Քոլէճին մէջ: 1902ին անցած էր Ճիպոթի, ապա Եթովպիոյ Հարար քաղաքը եւ 1903ին հաստատուած Ատիս Ապեպա, զբաղած առետրով: 1909ին նշանակուած էր ամերիկեան դեսպանատան առաջին թարգման, իսկ 1912-16՝ ամերիկեան շահերու ընդհանուր պաշտպան Ե-

Հիմա Ատիս Ապեպայի գաղութը բաղկացած է.-

Այր 109

Կին 41

Աղջիկ 40

Մանչ 41

Ատիս Ապեպան երկաթուղի չունենալուն համար Եգիպտոսէն եւ Պոլիսէն շատ կան մնալով, ամուրիներ շատ կան, եւ ոմանք դժբախտաբար եթովպացի կիների հետ ամուսնացած եւ զաւակներ ունեցած են: (Հարարի հայերէն ոմանք մահմետական անապատաբնակ կիների հետ ամուսնացած եւ զաւակներ ունեցած են):

Թէեւ 50ի չափ մանուկներ կան Ատիս Ապեպայի մէջ, բայց մինչեւ հիմա ազգային վարժարան մը չկրցանք ունենալ, եւ մեր զաւակները դժբախտաբար օտար վարժարաններ կը դրկենք, կաթովիկ քոյրերի, Ալիանս Ֆրանսէզի եւ շուէտացի բողոքականի մը դպրոցը:

Բայց տեղւոյս գաղութը, որ հայրենասիրական ջերմ եռանդով վառուած է, տարի մը առաջ հանգանակութիւն բացաւ հայ լուսաւորչական դպրոց մը բանալու համար: Դպրոցին հողը գնելու սակարկութեան մէջ ենք, կը յուսանք որ քանի մը ամիսէն դպրոցի շէնքը կը շինենք:

Պոլսոյ ճերմակեղէնի վաճառական Միհրան էֆ. Մուրատեանը իր այցելութեան առթիւ յիսուն եգիպտական ոսկի նուիրեց հայ լուսաւորչական դպրոցի մը հաստատութեան համար, եւ խոստացաւ Պոլիսէն դրկել ուսուցիչ, ուսուցչուհի, դպրոցական պիտոյք, ծրագիր, երբ որ մենք ուզենք: Անկեղծ շնորհակալութիւններ իրեն: Ասկէ յետոյ եկող ճերմակեղէնի վաճառականները եթէ Մուրատեան էֆենտիի պէս ազգասէր լինին, կրնան մեր համակրութիւնը ունենալ եւ իրենց ձեռնարկին մէջ յաջողիլ. ապա թէ ոչ թող տեղերնին կենան: Ատիս Ապեպայի գաղութին մէջ միշտ եռուզեռ կայ թէ՛ առետրական ասպարէզի վրայ, եւ թէ՛ ազգային կեանքի մէջ: Ատիս Ապեպայի հայը առանց ազգային կեանքի չէ կրցեր ապրիլ շնորհիւ իր մէջ գտնուած ուսումնական երիտասարդներին: Ամէն առթիւ իր սէրն ու ցաւակցութիւնը յայտնած է Տաճկաստանի մէջ տառապող իր ազգին, առատօրէն դրամ դրկելով: Իսանութեան հայեր կան որ հանգանակութեան ժամանակ 3, 5 ոսկի կը ստորագրեն, իսկ վաճառականներ՝

---

թովպիոյ մէջ: Ան զարգացուցած էր իր առետրական գործը եւ 1920ին հանդիսացած Ատիս Ապեպայի լաւագոյն վաճառականներէն մին: 1920-36՝ փոխնիփոխ եղած էր ԱՎի առտենապետ, յաճախ անդամ ընտրուած եթովպահայ գաղութային ժողովին, 1947ին մասնակցած Հայկական Համաշխարհային Քոնկրէսին (30 Ապրիլ, Նիւ Եորք, Վոլտորֆ Ասթորիա պանդոկ): 1952ին Հայլէ Սելասիէ կայսեր ձեռամբ պարգեւատրուած էր ասպետի շքանշանով, 1953ին կառավարական հրովարտակով նշանակուած դատաւոր անդամ կայսերական կառավարութեան տուրքերու յանձնաժողովին: 12 Ապրիլ 1962ին, առաջնորդ Մամբրէ սրբ. Սիրունեանի ձեռամբ անոր կը յանձնուի ՀԲԸՄ պատուոյ անդամի վկայագիր:

10, 20, 30 մինչև 50 ոսկի: Միհրան էֆ. Մուրատեան այստեղ եղած ժամանակ Միացեալ Ընկերութեանց համար հանգանակութիւն եղաւ, 250 եգիպտական ոսկի հանգանակուեցաւ եւ 150 եգիպտական ոսկի ստորագրեալ խոստում եղաւ տիար Յակոբ Բաղդասարեանէ, Վանայ վարժապետանոցի մէջ իր անունով գրադարան մը ունենալու համար: Այս առթիւ Միացեալ ընկերութիւնք չորս հատ Պատուոյ Անդամ ունենալու որախութիւնն ունեցան շնորհիւ իրենց ժրաջան գանձապետ տիար Միհ. Մուրատեանի այցելութեան:

1. Յովհաննէս Ասատուրեան
2. Յակոբ Բաղդասարեան
3. Ալեքսան Դարբինեան
4. Մարգար Միրզա

Ազգային գործի մը համար 250 անգլիական ոսկի դրկուեցաւ այս տարի: Բարեգործականին համար շուրջ 100 ոսկի եւ 200 ոսկի եւս տեղւոյս ազգային վարժարանի համար հանգանակուեցաւ: Գումարն՝ 950 ոսկի ազգային գործերի համար:

#### **Հայկ. Բար. Ընդ. Միութեան Մասնաճիւղն**

Մինչեւ 1911 տարւոյն առաջին կիսուն անկերպարան վիճակի մէջ էին տեղւոյս ազգային գործերն: Պէտք էր ազգային կեանք մ'ստեղծել: Այսպէս դպրոցական երիտասարդներով բեղուն գաղթականութիւն մը առանց ազգային կեանքի չէր կրնար ապրիլ: Տեարք Յովհաննէս Ասատուրեան եւ Վահան Փողարեան խանդոտ ազգայինները փրոփականտ ըրին Հայկ. Բարեգ. Ընդի. Միութեան մասնաճիւղ մը հաստատելու համար: ...Միութեան ծրագիրը լիովին կը համապատասխանէր մեր նպատակներին, մինչեւ այն ժամանակ մեր դրկած նպաստները նոյն նպատակներին համար հանգանակուած էին, եւ հիմա կ'ուզէինք այդ պաշտօնական մարմնին հետ միանալ, ուժ տալ անոր, մեր դրամները իրենց նպատակին յատկացուելուն մասին վստահ լինելու համար: Հայկ. Բարեգ. Ընդի. Միութեան ծրագիրն որ Ալիանս Իսրայէլիթի ծրագրին հետեւողութիւնն է, վստահութիւն կը տար մեզի թէ՛ իսրայէլացոց պէս թափառական մեր հայրութիւնը այդ ծրագրով պիտի կարողանայ իր միութիւնը պահել, եւ հայրենիքը, ազգը սիրել տալ...:

1913 տարին յաջող տարի մ'եղաւ մեզի համար, ամէն ոք զգացած էր միութեան օգտակարութիւնը եւ մենք յաջողեցանք գրեթէ 70 անդամ [ունենալ] տասնեմէկ անգլիական ոսկի ամսավճարով:

Կառքով ապրանք փոխադրելու ընկերութիւն մը ունինք, որ ինքնաբերաբար իրենց պայմանագրին մէջ յօդուած մը դրած են՝ շահին 1%ը Հ.Բ.Ը.Մ. տալու...:

Յունիս 1913ին նոր անդամներու արձանագրութեամբ (նաեւ՝ իգական սեռէ), ԱՄՆ կը հաշուէ 51 անդամ<sup>16</sup>: 16 Նոյեմբեր 1913ին, ներկայութեամբ 24 անդամներու (26 ծայնի իրաւունքով)<sup>17</sup> կ'ընտրուի նոր վարչութիւն (ԱՎ), զոր ԳԿՅն կը վաւերացնէ.- Ասատուրեան (ատենապետ)<sup>18</sup>, Օննիկ Փափազեան (փոխատենապետ), Միհրդատ Թերզոնց<sup>19</sup>, Կարապետ Էպէեան, Մարգար Միրզա, Ալեքսան Դարբինեան, Սամուէլ Պեհեսնիլեան: ԱՎն կը ծրագրէ դաշտահանդէս եւ վիճակահանութիւն կազմակերպելու համար մասնախումբ կազմել, իսկ ինք Ատիս Ապեպայի մէջ կը կազմակերպէ Մայիս Յի «ազգային հանդէս»<sup>20</sup>, զոր կ'որոշէ ամէնամեայ դարձնել եւ հրաւիրել եւրոպական դեսպանատուներն ու հեռաւոր շրջաններու հայերը, «որպէսզի վիճակահանութիւնը աւելի արդիւնաւոր ըլլայ»: Ասատուրեան 6 Յունիս 1914 թուակիրով ԳԿՅին կ'իմացնէ թէ կը ծրագրեն Պօղոս Նուպարի նկարները իբրեւ նուէր ծախել, իսկ *Միութիւն* թերթին իմանալով թէ ՀԲԸՄը կը ծրագրէ «*Հայաստանի մէջ երկրագործական պանքա հաստատել...*,- կ'աւելցնէ,- *կրնաք վստահ լինել Արիս Ապեպայի հայ գաղութին վրայ որ իրեն ընկած*

<sup>16</sup> Ապրիլ-Մայիս-Յունիս 1913ի անդամավճարները վճարողներ՝ Համբարձում, Մարտիրոս, Սարգիս Գ. եւ Մարտիրոս Մ. Ազնաւորեաններ, Հայկ Այնճիեան, Թագուհի, Յովհաննէս եւ Փայլածու Ասատուրեաններ, Յարութիւն Ատանալեան, Յարութիւն Անդրանիկեան, Յակոբ եւ Ղեւոնդ Պաղտասարեան, Մատթէոս Գարամանեան, Գրաբոս եւ Յովհաննէս Գարակէօզեան, Անժէլ Դարբինեան, Յակոբ Երզնկացեան, Կարպիս եւ Յովսէփ Էպէեան, Յովհաննէս եւ Վահրամ Թերզեան, Դաւիթ, Յակոբ եւ Օհան Իսրայէլեաններ, Զաւէն եւ Կրօն Խաչատուրեան, Մինաս Խերպէկեան, Միհրան Հազարեան, Երուանդ Հիւսիսեան, Մամաս եւ Կարապետ Ճիլերճեան, Յարութիւն Ճերահեան, Յովհաննէս Մելիքեան, Նշան Մեսրոպեան, Մարգար Միրզա, Կարապետ Շիրիքճեան, Գէորգ Որբերեան, Սուրէն Չաքրեան, Թորոս Պարսիկեան, Եղիա, Սամուէլ եւ Ռուբէն Պեհեսնիլեաններ, Ժողէֆ Պեմօ, Սեդրակ Պէրպերեան, Գրիգորիս Պօղոսեան, Պօղոս Սեմէրճեան, Աւետիս Սըւաքճեան, Բառնաբաս Տէրտէրեան, Գուրգէն եւ Վահան Փողարեան, Գէորգ Քեհիայեան:

<sup>17</sup> Մինչ անդամներուն թիւը հասած էր 64ի, յանձինս նոր անդամներ՝ Յակոբ եւ Նազարէթ Գնաճեան, Ալեքսան Դարբինեան, Յովհաննէս Ղազարեան, Հաճի Մկրտիչ Գրիգորեան, եւ տիկիներ Նուարդ Փողարեան, Սիրանուշ, Սրբուհի եւ Քաթիւն Պեհեսնիլեաններ ու Մարի Պարսիկեանի: Ժողովին փոքրաթիւ ներկայութիւնը կը խօսի անդամներու՝ երկրին տարբեր շրջանները ցրուածութեան մասին:

<sup>18</sup> Ժողովը մերժելով ատենապետին եւ գանձապահին գործի ծանրութեամբ հրաժարելու փափաքը, կ'ընտրէ փոխատենապետ եւ հաշուի՝ գործերը թէթեւցնելու:

<sup>19</sup> Ան մեկնած էր Պոլիս ու մօտերս պիտի վերադառնար:

<sup>20</sup> Հանդէսին նկարագրականը լոյս կը տեսնէ *Միութիւնի* մէջ: Հետաքրքրական են մանրամասնութիւնները. վճարումներ կատարուած են վիճակահանութեան տոմսերու (1000 հատ, մէկ թալէրնոց), երաժշտութեան, «7 տուսի սիկարներ»ու, «լիքէօր»ի, կտորած գաւաթներու փոխարժէքի, 200 շիշ լիմոնատի...: Եղած են նուիրատուութիւններ, աճուրդ եւ վիճակահանութիւն:

*բաժինէն աւելի կարեւոր գումարներով բաժնետէղթեր պիտի գնէ, ազգային վերածննդեան գործին սատարելու ջերմ փափաքով»:*

Առաջին համաշխարհային պատերազմին, ՀԲԸՄը կը մատնուի նիւթական գործառնութեանց դժուարութեան, քանի որ դրամատունները դադրեցուցած էին իրենց վճարումները, իսկ մասնաժողովները՝ իրենց առաքումները: ԳԿՅն կը դիմէ ԱՎին՝ կարելի եղած գանձումներն ընելով ապահով միջոցներով իրեն հասցնելու, կը դրկէ նաեւ ՀԲԸՄ հնգամեայ տեղեկագրէն 21 օրինակ ու *Միութիւնի* նորագոյն թիւեր: Աւելի ետք, 20 Սեպտեմբեր 1915 թուակիրով, ան ԱՄն կը նախապատրաստէ գալիք մարտահրաւերներուն դիմաց. «... երկրի հայութիւնը ամէնայնպէս թշուառութեան մատնող վերջին ահաւոր աղէտներուն հետեանքով, եղբայրական օգնութեան եւ հայրենիքի վերաշինութեան գործին հանդէպ մեր սիրելի Միութիւնը կոչուած է ... ծանր յանձնառութեանց... կարելի չէ այժմէն չպատրաստուիլ եւ լրջօրէն չապահովել այն ամէն միջոցները որ մեզի հնարաւոր պիտի ընեն որեւէ փրկարար օժանդակութիւն»:

24 Յունուար 1915ի անդամական ժողովին, 27 անդամներու ներկայութեան, ԱՎն կը վերակազմուի (վարչականներ՝ Պեհեսնիլեան, Հիւսիսեան, Յակոբ Իսրայէլեան, Միհրան Հազարեան, Մարգար Միրզա<sup>21</sup>): Առաջին համաշխարհային պատերազմը, «իրարու յաջորդող մեծ պատերազմները... ելմտական տագնապ» կը յառաջացնեն գաղութին մէջ. շատեր «դէպի ներսերը» կը քաշուին<sup>22</sup>, ուրիշներ կը լքեն երկիրը<sup>23</sup>: Այդուհանդերձ, գաղութը բարեացակամ եւ գիտակից՝ «մայր հայրենիքի ծով կարիքներուն», կը ջանայ կարելի առաւելագոյնն ընել: Ըստ 31 Դեկտեմբեր 1915ի համարատուութեան, անդամներուն թիւը բարձրացած էր 58ի, գոյացած էր 1030,5 թալէր անդամավճար, 1419 թալէր նուիրատուութիւն, գումարուած էին 3 նիստ եւ 5 անդամական ժողով<sup>24</sup>:

<sup>21</sup> Միրզայի բանաւոր եւ Հիւսիսեանի քաղաքէն մեկնումին պատճառներով, զանոնք կը փոխարինեն Քէօրիհաճեան (ընդհանուր քարտուղար, գործակատար կառավարական ոգելից ըմպելեաց վերատեսչութեան կեդրոնական վարչութեան) եւ Թերզեան (ընդհանուր հաշուակալ Մ. Գէորգոֆ Տան եւ եթովպական ծխախոտի ռեժիի կեդրոնական վարչութեան):

<sup>22</sup> Ինչպէս՝ Դաիթ Իսրայէլեան, Կարապետ Շիրիքճեան եւ Միհրդատ Պօղոսեան:

<sup>23</sup> Կրօն Խաչատուրեան մեկնած էր Տիրետաւա, Յովհաննէս եւ Տիգրան Մելիքեաններ՝ Տաճկաստան, Յովհաննէս Պոյաճեան՝ Նիկոսիա, Համբարձում Ազնաւոր եւ Միսաք Մելիքեան՝ Գահիրէ, Ալեքսան եւ Անժէլ Դարբինեաններ՝ Եւրոպա, Յակոբ Գնաճեան՝ մահացած էր, Հաճի Մկրտիչ Գրիգորեան՝ սպանուած: Գաղութին մէջ կը նշուին նոր անձեր՝ Արամ Աթանասեան, Յովհան Սեմէրճիպաշեան, Մարտիրոս Տէրստեփանեան, Հայկ Փամուքեան:

<sup>24</sup> ԱՎն մեկնող վարչականները փոխարինած էր նորերով, հաւաքած անդամավճարները, *Միութիւնի* բաժանորդագիրները, իսկ ծրագրուած վիճակահանութիւնը իրարայայջորդ հանգանակութեանց, Գահիրէի Կարմիր Խաչի տոմսերու վաճարումին, մօտեցող «տարեգլուխ»ին պատճառով յետաձգուած էր:

27 Փետրուար 1916ի ժողովին ընտրուած վարչութեան (Պեհեսնիլեան, Տիգրան Էպէեան, Վահրամ Թերզեան, Յովհաննէս Սեմերճեան, Սարգիս Ազնաուրեան) կը միանայ Միհրան Հազարեան իբրեւ հաւաքիչ: Ժողովը, պատասխանելով ՀԲԸՄ փոխատենապետ Եագուպ Արթին փաշայի ամանորեայ բացիկին, կը մաղթէ որ «շուտով վերջ գտնան այս հիմնակործան դէպքերը»: Աւելի ետք, 28 Մայիս 1916ին, ԱՎն կը կազմակերպէ տարեկան հանդէսը, պատուոյ նախագահութեամբ ռուս դեսպան Վինոկրատոֆի, Օթէլ տը Շըմէն տը Ֆէրի շէնքը, որ ծրիաբար կը տրամադրուի: Բացումը կը կատարէ նուագախումբը<sup>25</sup> «Բամ փորոտան»ով, ապա կը նուագուին «Հեռաւոր երկիր»ը եւ «Տալուորիկ»ը, ատենապետը կ'արտասանէ բարիգալուստի խօսքը<sup>26</sup>, փոխատենադպիրը կը ներկայացնէ մասնաճիւղին գործունէութիւնը: Արտաշէս Գարասեֆէրեան կ'արտասանէ ՀԲԸՄ քայլերգը, տիկիններ կը խմբերգեն «Իմ սիրելի զաւակունքս» եւ «Թող չերգէ պլպուլ»ը, Հրանուշ Գարասեֆէրեան կ'արտասանէ «Փառք Միութեան»ը, Ս. Եագըճեան խօսք կ'առնէ «Միութիւնը զօրութիւն է» բնաբանով: Քառորդ ժամ դադարէ ետք երկսեռ խումբերը կ'երգեն «Մեր հայրենիք»ը, Արուսեակ Ազնաուրեան կ'արտասանէ «Ճանապարհ խաչին»ը, երկսեռ նուագախումբը կը նուագէ «Գնա պլպուլ»ը, փոքրիկներ Շուշանիկ եւ Կարպիս կը ներկայաց-

---

ԱՄի անդամներն էին.- Սարգիս, Մարտիրոս Մ. եւ Մարտիրոս Գ. Ազնաուրներ, Հայկ Այնաճեան, Յարութիւն Անդրանիկեան, Յարութիւն Ատանալեան, Թագուհի, Յովհաննէս եւ Փայլածու Ասատուրեաններ, Տիրան Աֆարեան, Գրաբոս Գարակէօզեան, Մատթոս Գարամանեան, Յովհաննէս Գարասեֆէրեան, Նազարէթ Գնաճեան, Յակոբ Երզնկացեան, Կարպիս, Յովսէփ, Պետրոս եւ Տիգրան Էպէեաններ, Միհրդատ, Յովհաննէս եւ Վահրամ Թերզեաններ, Յակոբ եւ Օհան Իսրայէլեան, Զաւէն Իսաչատուրեան, Սարգիս Կարապետեան, Հիւսիսեան, Յովհաննէս Ղազարեան, Կարապետ եւ Մամաս Ճիլէրճեան, Յարութիւն Ճերահեան, Նիկողոս Ճիւտճեան, Մարգար Միրզա, Յովհաննէս Մելիքեան, Նշան Մետրոպեան, Գէորգ Որբերեան, Սուրէն Չաքրեան, Յակոբ Պաղտասարեան, Թորոս եւ Մարի Պարսիկեան, Եղիա, Ռուբէն, Սամուէլ, Սիրանուշ, Սրբուհի եւ Քաթին Պեհեսնիլեաններ, Գրիգորիս Պօղոսեան, Պօղոս Սեմէրճեան, Յովհաննէս Սեմէրճիպաշեան, Աւետիս Սվաճեան, Բառնաբաս Տէրտէրեան, Օննիկ Փափազեան, Գուրգէն, Եղուարդ, Նուարդ եւ Վահան Փողարեաններ, Յարութիւն Փեհրիզեան, Գէորգ Քեհիայեան, Աբրահամ Քէօրհաճեան:

<sup>25</sup> Անդամներ՝ Գրիգոր Իսանճեան, Ռուբէն Պեհեսնիլեան, Գեղ. Տատեան:

<sup>26</sup> Ան կը շեշտէ. «այս ճգնաժամի օրերուն... երբ մեր խեղճ ազգը շարք աւելի պէտք ունի բարերար ու անխոնջ ձեռքերու, ... ազգը այսօր կ'որոնէ կ'որոնէրու վերածուած, հայրենիքը քարոքանդ եղած...ՀԲԸՄիութիւնը աշխարհի վրայ ... ցրուած բոլոր հայերուն մէջտեղ եղբայրակցութիւն հաստատող գիծ մը ու թշուառներու փարոս մը եղած է: ...Մենք այսօր ...Միութեան յարելու ու ձեռք ձեռքի փալու պէտք ունինք որպէսզի ապագային աւելի լաւ պայտրաստուած ըլլանք օգնելու մեր թշուառ հայրենակիցներուն,- եւ կոչ կ'ուղղէ՝ ամէն բան, անձնական հաշիւներ, կիրքեր մէկ կողմ թողելով փարելու ... Միութեան Սուրբ գործին»:

նեն «Որսկան աղբեր»ը, Բերկրուիի Պողոսեան կ'արտասանէ «Ողորմութիւն»ը, կը ներկայացուի տրամախօսութիւն մը՝ «Կաղնչէք», ատենապետը կը կատարէ փակման խօսքը եւ հանդիսութիւնը կ'աւարտի «Ձայնը հնչեց»ով ու ռուսական քայլերգով<sup>27</sup>: Ըստ նկարագրութեան սրահ մտնողը կը տեսնէր Ռուսիոյ կայսեր մեծադիր պատկերը «ռուսական դրօշակներով ու գոյնգոյն վարդերով ու ծաղիկներով շինուած պսակով մը», որուն երկու կողքին կային Էրիմեան Հայրիկի, երջանկայիշատակ Իզմիրլեան կաթողիկոսի եւ Պողոս Նուպարի պատկերները: Կային նաեւ պատկերները Եթովպիոյ կայսր Մենելիք Բ.ի, գահաժառանգ իշխան Լիճ-Եասուի, զօրավար Անդրանիկի ու՝ հայկական դրօշակներ: Հանդէսին ներկայ կը գտնուին տէր եւ տիկ. Մաթիկ Գէորգոֆները<sup>28</sup>: Հանդէսի աւարտին Վինոկրատոֆ հետեւեալը կը յայտնէ. «...կը մաղթեմ որ դուք ալ ազգութեանց կարգին անկիւն մը ունենաք, որպէսզի ասկէջ շար անլի փառատոր հանդէսներ սարքէք բուն իսկ ձեր հայրենիքին մէջ, ուր ես ալ անձամբ ներկայ գտնուիմ»:

Այդ օրերուն, ԱՄՆ կը հաշուէր 70 անդամ, որոնց 13ը՝ նորագիրներ<sup>29</sup> էին, ԳԿՅ ղրկուած էր 2030 թաւր, գումարուած 12 վարչական նիստ եւ մէկ ընդհանուր ժողով: Այդ տարի ԱՎՆ հասոյթ ունեցած էր զարդակոճակներէն, ոսկեմատեաններէն եւ «սինեմայէ»ն<sup>30</sup>: Ոչ միայն ԱՄՆ աշխուժ էր, այլեւ՝ Եթովպահայութիւնը ընդհանրապէս: Արդարեւ, գործունէութիւն կը ծաւալէն Ատիս Ապեպայի թաղական խորհուրդը եւ Ընթերցասիրաց Միութիւնը<sup>31</sup>, Փետրուար 1917ին France Arménie կազմակերպութիւնը<sup>32</sup> կ'ունենայ 20 անդամ, իսկ արտասահմանէն պիտի ստացուէին տարբեր միութիւններու օրացոյցներ...: Թեւակոխելով նոր փուլ, Եթովպահայութիւնը կը ջանայ

<sup>27</sup> Մուտքի եռագին տոմսեր կային՝ 10, 5 եւ 1, փոքրերու մուտքը ազատ էր:

<sup>28</sup> Հանդէսէն ետք ամուր 100 թաւր կը նուիրէ մասնաճիղին:

<sup>29</sup> Որոնց կարգին.- Վերգին Ազնաուրեան, Անդրանիկ Աշճեան, Յովհաննէս Բարունակեան (խանութպան), Աւետիս Գնաճեան (կօշկակար), Ստեփան Եազըճեան (Գէորգ Մուրատեան Տան հաշուակալ), Արաքսի եւ Էմմանուէլ (ատամնաբու) Թերզեան, Ներսէս Հանէսեան (խանութպան), Յակոբ Չիլինկիրեան (ատաղձագործ), Մարիամ եւ փոքրիկ Նուպար Չիլինկիրեան, Վահան, Ղեւոնդ Պաղտասարեան, Ժողէֆ Պեմօ, Գրիգոր Սեֆէրեան, Կարապետ Սեմէրիպաշեան: Սակայն երեք հոգի դադրած էին՝ Գրիգոր Փեհրիզեան (մահացած), Յովհաննէս Թերզեան եւ Մարտիրոս Ազնաուրեան, որով «գաղթավայրին հայերուն գրեթէ 61%»ը անդամ էր ԱՄին:

<sup>30</sup> 24 Դեկտեմբեր 1916էն սկսեալ Օթէլ տը Ֆրանսի մէջ, 100 թաւր վարձքով, չորս շաբաթ կը ներկայացուի «Նիւ Եորքի գաղտնիքը» ֆիլմը:

<sup>31</sup> Միութիւնը (ատենապետ Վահրամ Թերզեան, գանձապահ՝ Հրանդ Պաղտասարեան, վ. ատենադպիր՝ Ղ. Բախտարեան), Յուլիս 1917ին Մկրտիչ Անդրանիկեանին կը դրկէ 210 անգլ. ոսկիի չէք մը՝ 29 Ապրիլ 1917ին ի նպաստ «Միջագետքի Հայ Տարագրեալներու» իր կազմակերպած հանդէսին հասոյթը:

<sup>32</sup> Ան Մայիս 1917ին կը հանգանակէ 2075 ֆրանք:

դպրոց մը բանալու իր տասնամեայ երազը իրականացնել, որուն համար Յունիսին կ'ապահովուի հայերէն գրամեքենայ:

Փետրուար 1917ին ԳԿՅն կը վաւերացնէ նոր վարչութիւնը (Պեհեսնիլեան, Ստեփան Եազըճեան<sup>33</sup>, Սարգիս Ազնաուրեան, Եսայի Կարիկեան (փոխատենադպիր), Միհրդատ Թերզոնց, Գրիգոր Սեֆէրեան եւ Տիգրան Էպէեան), որ տարուան մը գործունէութենէ ետք, կը ներկայացնէ 11-էջանի տարեկան տեղեկագիրը, ուր կը խտանայ իր գործունէութեան ոգին. «... կողոպտուած հայրենիքին ահաւոր պէտքերը լեցնելու մեծ կոչին լընդառաջելով եւ ...քաջալերուած՝ տեսնելով որ ազատ շրջանակներու մէջ ապրող մեր ազգայինները անտարբերութեամբ չեն վերաբերիր հայրենիքի այդ ծայնին դէմ եւ յուսադրուած թէ ջանուց յարատեւութիւնը վերջապէս յաջողութեամբ պիտի պսակէ ամէնու նպատակը, այս շրջանին աւելի արդիւնաբեր դարձնելու ջանացինք միութեանս գործերը որքան որ միջոցները ներեցին եւ որքան որ կարելի էր սպասել այս փոքրաթիւ գաղութէն...»: ԱՄն կը հաշուէր 75 անդամ, ներառեալ նորագիրները<sup>34</sup>, ԳԿՅ ղրկուած էր 100 անգլիական ոսկի, կար գրեթէ նոյնքան գանձելի գումար, գումարուած էր 12 վարչական եւ մէկ անդամական ժողով: ԱՎն ծրագրած էր նաեւ «թատերական ներկայացում մը տալ», դիմած էր ԳԿՅին որ ղրկէ «թատերական համառօտ գրքոյկներ, որոնք ըլլան հայկական ընտանեկան կեանքէ տրամներ կամ կատակերգութիւններ»: Սակայն, ըստ ԳԿՅին՝ այդպիսի գրքոյկները սպառած ըլլալով, ներկայացումները «ընդհանրապէս ձեռագիրներու վրայ» կը տրուէին: Այդուհանդերձ, ԳԿՅն կը յուսայ յարմար բան մը ձեռք անցընելով ղրկել:

27 Յունուար 1918ին ընտրուած վարչութիւնը (Պեհեսնիլեան՝ ատենապետ, Մեսրոպ Այվատեան՝ ատենադպիր, Եսայի Կարիկեան՝ գանձապահ, Սարգիս Ազնաուրեան՝ փոխատենապետ, Միսաք Միսաքեան՝ փոխատենադպիր, Յակոբ Չիլինկիրեան՝ հաւաքիչ եւ Գրիգոր Սեֆէրեան՝ խորհրդական), ԳԿՅէն վաւերացուելէ ետք, կը լծուի դպրոց մը բանալու հանգանակութեան, հուսկ կը կազմէ հանդերձարանի տիկնանց յանձնախումբը, որ նոյն տարին իսկ 316,188 անգլ. ոսկի նուիրատուութիւն կը փոխանցէ Գահիրէի համանուն կեդրոնական յանձնախումբին: Այս վարչութեամբ կը

<sup>33</sup> Ան Մայիս 1917ին «վերջնականապէս» Հարար կը տեղափոխուի:

<sup>34</sup> Մեսրոպ Այվատեան, Բրաբիոն Աճխագործեան, Յովհաննէս Գասարճեան, Արաքսի Դերձակեան, Հայկ Թուլումպաճեան, Տիգրան Հազարեան, Աւետիս Համալեան, Եսայի Հինտոյեան, Վերժին Ճիտէճեան, Միսաք Միսաքեան, Տիգրան Պտուշեան, Գեղամ Տոտուեան, նաեւ՝ Նուպար Այտուշեան, Աննա Թերզոնց, Գրիգոր Խանճեան, Եսայի Կարիկեան, Մարիամ Չիլինկիրեան, Հայկ Ստեփանեան, Նուպար Փողարեան: Մինչ Ներսէս Էպէեան մեկնած էր ներսերը, Կարապետ Սեմերճիպաշեան եւ Անդրանիկ Աշճեան՝ Հարար, իսկ Մարգար Միրզա մահացած էր Փարիզ:

բաժնուին եթովպահայ ճիգը եւ ուժերը՝ տեղական (դպրոց-եկեղեցիի շինութիւն, եւն.) եւ՝ ՀԲԸՄ համահայկական օրակարագերու միջեւ:

Արդարեւ, Ատիս Ապեպայի «նորակազմ Հայկ. վարժարանի կրթական յանձնախումբ»<sup>35</sup> կը դիմէ ԳԿՅին, որ Սիսուանի փոխտեսուչ Հմայեակ Գրանեանը իբրեւ ուսուցիչ առաքուի իրենց: Կ'ուզուին նաեւ Սիսուանի մէջ գործածուած դասագիրքերէն, մանաւանդ՝ «Մայրենի լեզու»էն 10ական օրինակ<sup>36</sup>: Ասատուրեան կը մանրամասնէ թէ իրենց 70ի չափ զաւակները կը յաճախեն օտար վարժարաններ, որոնց պատկան մարմինները տեսնելով թէ իրենցմէ այս հայերը կրնան հրաժարիլ նոր դպրոցի բացումով, «*հեռագրով պահանջած են որ կաթոլիկ հայ վարդապետ մը ղրկուի իրենց, որ հայերէն դասեր աւանդելով մեր զաւակներէն մաս մը իրենց գրաւեն...*»: Ասատուրեան «ատակ եւ կարող» ամուլ մը կը փափաքի պաշտօնակոչել, որպէսզի «դպրոցը ոտքի ելլէ», եւ կը բացատրէ թէ այր ու կնոջ պարագային 20 ոսկի միացեալ ամսականէն ամուլը կրնայ խնայել 10 ոսկի, մանաւանդ որ անոնց ձրի, չկահաւորուած տուն պիտի տրամադրուէր: Երկսեռ դպրոցին համար պէտք էին «փորձուած ուսուցիչ եւ վարժուիի ամուսնացեալ... ֆրանսերէն աղէկ գիտնալը անհրաժեշտ պայման է... Պայման է որ մեր հարուստների զաւակներին մասնաւոր դասեր չաւանդեն վարձքով, որպէսզի մեր նորահաստատ վարժարանը չզրկուի հարուստների զաւակներին ամսաթոշակէն»: Պայման էր նաեւ կուսակցական չլլալը:

Արեւի 3 Մայիս 1918ի ծանուցումին կը պատասխանեն Չաքրեան (Թանթայէն)<sup>37</sup> եւ Շամլեան ամուլները (Արսէն Երկաթ)<sup>38</sup>, գաղթականներ՝ Վաղինակ Պեքեարեան (Երուսաղէմէն հրաւիրուած Սիսուան վարժարան), Զաքար Մաստիկեան ամուլները (Երուսաղէմէն) եւ Յակոբ Նալպանտեան<sup>39</sup> ու

---

<sup>35</sup> Ատենապետ Յովհաննէս Ասատուրեան, ատենադպիր Այվատեան. երկուքն ալ ԱՎԻ նախկին վարչականներ:

<sup>36</sup> Յետագային եւս (օրինակ 10 Յունուար 1947ին), ՇՅն հայերէնի 55 դասագիրքեր պիտի ղրկէր Եթովպիա, Մարտիրոս Տարագճեանի յանձնարարութեամբ:

<sup>37</sup> Թորգոմ Չաքրեան ասարտած էր Իզմիրի Sacré Coeur Lazaristeը եւ կրնար դասաւանդել «հայերէն ֆրանսերէն, թուրքերէն, գծագրութիւն եւն.»։ Ան կը պաշտօնավարէր Մաթոսեան ծխախոտի գործարանին մէջ: Մինչ իր կինը շրջանաւարտ էր Իզմիրի Հռիփսիմեան ազգային դպրոցէն, գիտէր հայերէն, ֆրանսերէն, ձեռագործ, ունէր մասնաւոր հմտութիւն մանկավարժութեան, եւ այցելու վարժուիի էր Թանթայի քանի մը տուներու մէջ: Պատերազմին ամուլը եկած էր Եգիպտոս:

<sup>38</sup> Արսէն Երկաթ ասարտած էր Գահիրէի Լիսէն, եւ յաջողած պաքալորէայի քննութեանց:

<sup>39</sup> Նալպանտեան խասգիւղցի էր, ասարտելէ ետք Վենետիկի Մուրատ Ռափայէլեանը, ասարտած էր Պրիքսէլի école polytechniqueը, 5 տարի է արդէն ուսուցչութիւն կ'ընէր Աղեքսանդրիոյ ազգային վարժարանը եւ Ֆրանսական Լիսէն: Հմուտ էր ֆրանսերէնի, գրականութեան. նախասիրութիւնն էր աշխարհագրութիւնը եւ պատմութիւնը: Նաճարեան ասարտած էր Աղեքսանդրիոյ վարժարանը, ապա՝

օր. Նաճարեան (խօսեցեալք): Հուսկ, կը պաշտօնակոչուի Պեքեարեան ամուր, որոնց խոստացուած 16 եգ. ոսկի ամսականին վրայ «1-2 ոսկիի կամատոր յաւելում» մը կ'ակնկալէ ԳԿՅն: Կրթութեան հանդէպ հետաքրքրական այլ դրսեւորում մըն է Եսայի Կարիկեանի արարքը<sup>40</sup>:

Այնուհետեւ ԱՄին գործունէութիւնը կը զգենու միօրինակ բնոյթ. նոր անդամակցութիւններ<sup>41</sup>, մեկնող-մահացողներու առթիւ նուիրատուութիւններ, վիճակահանութիւն, սինեմագնացութիւն, հանգանակութիւն են.: 12 Յունուար 1919ին կ'ընտրուի նոր վարչութիւն (Հայկ Թուլումպաճեան՝ ատենապետ<sup>42</sup>, Մկրտիչ Թուրեան՝ ատենադպիր, Գրաբոս Գարակէօզեան՝ գանձապահ, Վահան Փողարեան՝ փոխատենապետ, Վահրամ Թերզեան՝ փոխատենադպիր, Յակոբ Չիլինկիրեան՝ հաւաքիչ եւ Կարապետ Ճիլերճեան՝ խորհրդական:

ԱՎն կը զօրակոչէ Տիկնանց յանձնախումբը «ի նպաստ բազմաթիւ որբերու հանգանակութիւն» մը կազմակերպելու: Աւելի ետք, Աոխ Ապեպայի

---

Ֆրանսական Լիսէն, ապա դասաւանդած էր իր շրջանաւարտած դպրոցը, մասնաւորապէս օգտակար ըլլալով կարագիտութեան դասընթացքներուն:

<sup>40</sup> Ան Յունուար 1918 թուակիրով կը փափաքի գալ Գահիրէ, խորհրդակցիլ Սիսուան վարժարանի «մէջ ասանդուած ուսումը աստիճան մը եւս բարձրացնել»ու համար եւ անձամբ վճարել յաւելեալ ուսման ծախքերը: ԳԿՅն Կարիկեանին կը յայտնէ, թէ «Սայթի եւ այլ շրջաններու շուրջ 2000 տարագրեալներուն Փոր Սայիտի գաղթավայրը տեղափոխուելուն հետեւանքով... վարժարանը եւ արհեստանոցը զգալի ընդարձակում մը պիտի կրեն. բացասորի, որբանոց մը բանալու հարկին մէջ կը գտնուինք: Հասնօրէն Միութեանս հովանիին տակ պիտի ընդունուին շուրջ 2000 սաներ եւ որբեր...»: Աւելի ետք, ԳԿՅն կ'իմացնէ Կարիկեանին թէ՛ Միութեան Սեպտեմբերի թիւին մէջ տեղեկութիւններ հաղորդուած են գաղթակայանի ընդարձակման մասին, թէ՛ երկսեռ աշակերտութեան թիւը պիտի կրկնապատկուի հասնելով շուրջ 2400ի, գրեթէ պիտի կրկնապատկուի պաշտօնէութիւնը, իսկ տարեկան ծախքը հասնի 3600-4000 եգ. ոսկիի, որբանոցը պիտի ունենայ 400ի չափ որբեր, «որոնց համար եւս պիտի ծախսենք տարեկան 2400-2800 եգ. ոսկի», որ չ'ընդգրկեր հանդերձարանին ծախքերը: Կարիկեան, Սեպտեմբեր 1918ին, իր եղբօր՝ Կարապետի յիշատակին, կը խոստանայ երեք տարի նուիրել 333ական եգ. ոսկի, յօգուտ Սիսուանին, իսկ «Երբ բախտը ունենանք այս պայմանաժամէն (երեք տարի – Ա.Տ.) առաջ մեր ցանկացեալ Կիլիկիան վերադառնալու, սոյն պիտոճէն Միութեան հովանաւորութեան տակ հոն կը գործածուի միեւնոյն նպատակին»:

<sup>41</sup> 1918ի անդամացանկը կ'արձանագրէ 20 նոր անդամ, ներառեալ՝ Անժէլ Երզնկացեան, Մենակար Զամանեան եւ Մկրտիչ Թուրեան (պաշտօնեաներ), Միքայէլ Թուփճեան եւ Դաւիթ Իսրայէլեան (վաճառականներ), Գէորգ Մըխճրեան (երկաթագործ), Արամ Յակոբեան (պաշտօնեայ), Վահան Չիլինկիրեան (երկաթագործ), Մարտիրոս Տէրստեփանեան (պաշտօնեայ):

<sup>42</sup> Թուլումպաճեան 27 Դեկտեմբեր 1918 թուակիրով կը գրէր՝ «Իզմիր ընտանեաց պատերազմէն վերջ ողջամբ վերագտած ըլլալու առթիւ կը նուիրեմ «Հայ տարագրելոց ի նպաստ» 15 անգլիական ոսկի՝ «փոքր սատար մ'եղած ըլլալու համար իրենց ծովածաւալ պէտքերուն»:

Ֆրանսական պատուիրակությունը պատերազմի զոհերուն համար կատարած հանգստության հայոց հասնող բաժինը (178,33 անգլ. ոսկի) կը դրկէ ԳԿՅ: Սեպտեմբերին Մալեգեանի թելադրանքին ընդառաջելով, գաղթականներու օգնության համար ԱՎն կը դրկէ 100 անգլ. ոսկիի չէք մը: Սակայն կարիքը ծովածալալ էր. 8 Նոյեմբեր 1919ի ԳԿՅի նամակը կ'ընդգծէ. «...Կարելի չէ չյուզուիլ այն համապարած թշուառութեան հանդէպ, որ ազգին բեկորները կը շրջապատէ, անտարբեր մնալ այն աղեխարշ դիմումներուն որ գաւառի ամէն անկիւններէն մեզի կը հասնին: Բացի այն նպատակներէն որ ամէն մարդասիրական հաստատութիւններէ յարկացուած են ու կը յարկացուին մեր տարագիր ու տառապակոծ համազգիներուն, Միութեանս կողմէ մինչեւ այսօր շուրջ 40000 ոսկիի հանդերձեղէն եւ այլ նպատակներն եւս բաւական չեն եղած ամոքելու փրկող մերկութիւնն ու անօթութիւնը եւ սրիպողական պէտք կայ անմիջապէս դրկելու ամէն կարգի նպաստ, դրամ, հանդերձ, գործիք, սերմնցու եւն., եւն.»։ Սակայն ԱՎն նկատի առնելով «գաղութիս ծայրաստիճան բեռնաւորութեան վիճակը» չի ձեռնարկեր հանգանակութեան: Յիրաւի, բարենպատակ հաստատութեանց «օր աւուր բազմապատկուիլը... ճնշեալ վիճակի մը մէջ դրած է[ր] գաղութ»։ Կար նաեւ երկրին տիրող տնտեսական տագնապը, «որ ազդուօրէն շեշտուած է[ր] զինադադարէն ի վեր»։ ԳԿՅն նոր եկամուտներ ապահովելու մտասետումով ԱՎին կը դրկէ Հարար ապրող 26 եւ Ճիպութի ապրող 19 անդամներու անդամավճարներու թուղթերը:

Յաջորդող երկու տարիները վճռորոշ կ'ըլլան ԱՎին համար. 64 անդամ հաշուող ԱՄՆ կ'ենթարկուի ցնցումի, երբ 1920ին, 16 անդամներ կը հրաժարին, 10 անդամներ կը մեկնին երկրէն: 15 Սեպտեմբեր 1921 թուականի Գահիրէն կը վաւերացնէ նորընտիր վարչութիւնը (Հայկ Թուրումպաճեան՝ ատենապետ, Միհրան Հազարեան՝ ատենադպիր, Կարապետ Էպէեան՝ գանձապահ եւ Յակոբ Չիլինկիրեան՝ հաւաքիչ, մինչ Հիւսիսեան եւ Ճիլերճեան կը հրաժարին դիւանէն): Աւելի ետք, ԱՎն կը բացատրէ նախորդ տարուան ցնցումը, իբրեւ «գաղութիս ղեկավարութիւնը ձեռք անցընել ձգտող» խմբակի մը գործունէութեան արդիւնք, ու կ'աւելցնէ. «ներկայիս գաղութս... խիստ լարուած վիճակի մը մէջ է. թաղական խորհուրդի, հոգաբարձութեան եւ այլ ընտրութիւններու դէմ ահագին խոչընդոտներ յարուցուած են...»: Սակայն այս քայլը կ'ունենայ իր հակադարձող ճակատը եւ կը յառաջանայ դաշնակցական ու ռամկավար ճակատներու «պայքար» մը: ԱՎն աւելի կը մանրամասնէ. «մինչ... կազմուած է 20-25 անդամներով ռամկավար ակումբ մը, որ վստահօրէն զօրավիզ պիտի ըլլայ նաեւ Միութեանս», անդին... [ԲԲԼՄի դէմ] արշաւ մը սկսած է»:

Յառաջացած բորբոքուն բայց հակակշռեալ վիճակը հնարաւորութիւն կու տայ, որ Հոկտեմբեր 1922ին ԱՎն 5540 թալէր (աւելի քան 430 անգլ. ո.) հանգանակէ Իզմիրի «մեր աղէտեալ եղբայրակիցներուն» Պօղոս Նուպարի կոչին ի պատասխան, «հակառակ հրապարակիս վրայ տիրող տնտեսա-

կան աննախընթաց տազնապին»: Յաջողութեան պատճառ եղած է՞ նաեւ «Իզմիրի պէս բարգաւաճ գաղութի մը... անորակեյի աղէտին՝ գաղութիս վրայ ազդած աղեխարշ փպաւորութիւն»<sup>43</sup>:

Այս հանգանակութիւններուն կը յաջորդէ նոր մը, որ արագ հակազդեցութիւնը չէր իրարայաջորդ աղիտալի դէպքերու, տեղահանութիւններու, սպանդներու եւ ջարդերու: Արդարեւ, ՀԲԸՄը Կիրակի 2 Դեկտեմբեր 1923ը կը յատկացնէ «որբերու օգնութեան գործի» հանգանակութեան: ԳԿՅն կը ղրկէ նաեւ ՀԲԸՄ 15րդ եւ 16րդ տարեշրջաններու տեղեկագրէն եւ... չուշանար նոր հանգանակութեան կոչը. արդարեւ, 15 Մայիս 1924 թուակիրով ԳԿՅն ԱՎին կը յղէ Հայաստանի վերաշինութեան հանգանակութեան Պօղոս Նուպարի եւ Հայաստանի Օգնութեան Կոմիտէին շրջաբերականները:

#### ԱՐԱՐԱՏԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՓՈՂԵՐԱԽՈՒՄԲԸ

Գաղութահայ կեանքի աննախընթաց երեւոյթ կը դառնայ Երուսաղէմի Արարատեան որբանոցէն ժամանած փողերախումբը, որուն մասին ԳԿՅն ԱՎին կ'իմացնէ Սեպտեմբեր 1924ին.-

Հաճոյքն ունինք ձեզի տեղեկացնելու թէ մեր Երուսաղէմի Արարատեան որբանոցի ֆանֆարի խումբը, 40 սաներէ բաղկացեալ ամսոյս 16ին, Փոր Սայիտէ ճամփայ ելած է դէպի Ճիպութի, ուրկէ ուղղակի տեղդ պիտի ուղեւորուի, Ն.Բ. Իշխան Թաֆարիի հետ կայացած համաձայնութեամբ՝ կազմելու համար Եթովպ. կառավարութեան ֆանֆարի պաշտօնական խումբը: Մեր սաներուն կ'ընկերանան Արժ. Վրէժ. Քահ. Սիմոնեան, իբր հսկիչ եւ հոգեւոր հայր, եւ Տ. Գ. Նալպանտեան՝ իբր ֆանֆարի ուսուցիչ: ...Օգտակար կը համարենք ներփակ ձեզի ղրկել պատճէնը այն պաշտօնագրին զոր Ն.Բ. Իշխան Թաֆարի ստորագրած է եւ ուր ճշտուած են մեր սաներուն եւ իրենց ուսուցիչներուն վերաբերեալ պայմանները<sup>44</sup>:

ԳԿՅն կը թելադրէ «պատշաճ ընդունելութիւն եւ հարկ եղած հոգածութիւնը չզլանալ անոնց բարօրութեանը համար», կը փափաքի ունենալ անոնց «եթովպական տարագով խմբանկարը...» եւ պարբերական տեղեկագրեր անոնց մասին:

40 որբանոցայիններուն ժամանումը կը զուգադիպի երկրին «աննախընթաց քրիզ»ին: ԱՎն կը դժգոհի՝ որբանոցայիններուն խնդրով<sup>45</sup>: ԳԿՅն կը

---

<sup>43</sup> Հանգանակութեան մասնակցած էին 130 հայ եւ օտար նուիրատուներ, ներառեալ՝ Ֆրանսայի եւ Պելճիքայի դեսպանատան պաշտօնեաներ, բրիտանական եւ իտալական ներկայացուցչութիւնը, Ֆրանսայի հիւպատոսը:

<sup>44</sup> Պատճէնը չգտանք թղթապանակին մէջ:

<sup>45</sup> ԱՎն դժգոհ էր որ անտեղեկ պահուած է սաներուն Ատիս Ապեպա գալէն, եւ քաջածանօթ ըլլալով տեղի հոգեբանութեան՝ մտահոգ էր որ կառավարութիւնը չյարգէ իր յանձնառութիւնը եւ հարց յառաջանայ պաշտպանելու պայմանագրութեան

բացատրել թե սաներուն Եթովպիա «ուղարկումը կարգադրուած է միմիայն Երուսաղէմի պատրիարք ամէն. Դուրեան սրբազանի կողմէ... Ժողովս ուղղակի ոչ մէկ միջամտութիւն չէ ունեցած եւ սոսկ իր հաւանութիւնը յայտնած է Ս. պատրիարք իոր եւ այդ օրէն իվեր մեր պատասխանատուութիւնը վերջ գտած է ...Այդ որբերուն վերաբերեալ ամէն կարգի խնդիրներու նկատառումը եւ փնտրիչութիւնը կը պատկանի Երուսաղէմի պատրիարքութեան»:

Հոկտեմբերի սկիզբը որբերը կը հասնին Եթովպիա: Անոնց առողջական վիճակը «ընդհանուր առմամբ գոհացուցիչ» էր, միքանիներու վերքերը «ծրիաբար կը դարմանուին թաղապետական կամ տեղոյս բժիշկներուն կողմէ», բայց անլոյծ կը մնան անոնց տեղական տարագի, բնակարանի եւ ուտեստի հարցերը, որոնք «նախանձելի վիճակ մ'ունենալէ բաւական հեռի է[ին]», կ'ակնկալուէր, սակայն, որ ժամանակի ընթացքին «աւելի կանոնաւորուի»: «Բոլորովին անկազմակերպ» ԱՎն յոյս կը յայտնէ վերակազմութեան՝ նոր ուժ ունենալով ֆանֆարի պատասխանատուն՝ Նալպանտեանը: Վերջինս եւ ԱՎն ջանքեր կը թափեն որբերը գաղութին - մանաւանդ ՀԲԸՄ անդամներուն - հետ շփման մէջ դնելու. անոնցմէ ոմանք հայ արհեստաւորներու քով կը սկսին աշխատիլ<sup>46</sup>, «հոգ կը տարուի մնացեալներուն ալ զբաղումի միջոցներ ստեղծելու»: Անոնց կացութիւնը կը բարելաւուի, երբ Դեկտեմբեր 1925ին կը սկսին կանոնաւորաբար ամսական ստանալ, սակայն, ըստ Նալպանտեանի 26 Ապրիլ 1927 թուակիրին, անոնք «երկար ամիսներ թոշակ... [չէին] կրցած գանձել բացի կերակուրի դրամէն» եւ ինք ստիպուած եղած էր անոնց կօշիկի, զգեստի եւն. պէտքերուն համար «պարտքի տակ... մտնել»: Գումարներուն ամիսներով ուշացումը եւ այլ դժուարութիւններ պատճառ կը դառնան որ ոմանք հրաժարին եւ նուագախումբը նուագի 29 անդամի: Իվերջոյ, 1927ի կիսուն, փողերախումբին կենցաղային հարցերը կը կարգաւորուին եւ անոնք կ'անդամագրուին ԱՄին<sup>47</sup>: Օգոստոս 1928ին, նուագախումբին քառամեայ պայմանագիրի ասարտին, գահաժառանգը տարիով մը կը նորոգէ պայմանագիրը. մինչ տղաքը փոխադրուած էին «շատ հրաշալի շէնք մը եւ արդէն նիւթապէս ալ նախանձելի վիճակի մը մէջ կը գտնուին»:

---

յարգումը: ԱՎն կարող չըլլալով հակադրուելու երկրին իշխանութեան կ'առաջարկէ որբերուն պաշտպանութիւնը յայնձնել տեղի ֆրանսական դեսպանատան:

<sup>46</sup> Անոնցմէ մին՝ Մարտիրոսեան, 1931ին Ատիս Ապեպայի մէջ «օթոյի գործով կը զբաղի»:

<sup>47</sup> Սաներու մուտքի տուրքի եւ ամսական անդամավճարի սակերը կը նուազեցուին: Փողերախումբը հասութաբեր նուագահանդէս մը կը սարքէ 7 Օգոստոս 1927ին «ինպաստ Ազգային Վարժարանի», նախագահութեամբ գահաժառանգ իշխանին եւ ներկայութեամբ դեսպաններու, ձեռնարկին մասնակից երկսեռ երգչախումբը կը կատարէ «եօթ կտոր հայ գեղջուկ Կոմիտասի երգեր», կը ներկայացուին նաեւ հայկական պարեր: Հասոյթը կ'ըլլայ 1500 թալէր, գահաժառանգը կը նուիրէ «50,000 ֆրանք»:

Կը թուի ԱՎն (Պեհեսնիլեան, Յարութիւն Ուրֆալեան, Աբրահամ Քէօր-հաճեան, Եղուարդ Սեֆէրեան եւ Վահան Փողարեան) մասամբ կ'աշխուժա-նայ. Մայիս 1925ին ան կը մասնակցի Ռ. Հերեանի յուշարձանի ֆոնտին հանգանակութեան, կը պատրաստուի Դեկտեմբերի 6ի «Որբերու Կիրա-կի»ի հանգանակութեան, իսկ Դեկտեմբերի վերջաւորութեան կը ստանայ ՀԲԸՄ «նուիրատուութեանց եւ կտակներու վերաբերեալ բացատրական գրքոյկ»էն օրինակներ<sup>48</sup>:

Մարտ 1926ին, «կուսակցական եւ անձնական հակառակութեանց պատճառաւ» կարելի չ'ըլլար իրականացնել «երկար ատենէ ի վեր կազմա-լուծեալ [ԱՄի]... կազմակերպութեան գործը»<sup>49</sup>: ԱՎն «քայքայուած» կը մնայ մինչեւ Մայիս 1927, երբ բարելաւուած էին փողերախումբի տղոց պայման-ները եւ անոնք 1927 Ձատիկին անդամագրուած էին ՀԲԸՄին, ինչ որ խթան կը հանդիսանայ ԱՄին վերակազմումին: Մինչ այդ, սակայն Պեհեսնիլեա-նի միջոցով ՇՅն<sup>50</sup> կը ստանայ 319,5 եգ. դրուշի գումար մը:

5 Դեկտեմբեր 1926ի «Որբերու Կիրակի»ի նուիրահաւաքը կը յետաձգուի Հայաստանի երկրաշարժին հետեւանքով նախաձեռնուած հանգանակու-թեան պատճառով: Ըստ ՇՅի նամակին, երկրաշարժին հետեւանքով Ալեք-սանդրապոլն ու իր շրջակայ 30է աւելի գիւղեր քարուքանդ եղած էին եւ ա-ւելի քան 100,000 «ազգակիցներ ...ապրուստի ամէն միջոցներէ զրկուած, անտուն եւ անպարսպար մնացած են... վերահաս ցուրտին եւ անօթութեան դիմաց այս հայրենակիցները իրենց աչքերը յառած են իրենց արտասահ-մանցի աւելի բախտաւոր հայրենակիցներուն» օգնութեան: ՇՅն կը թելադ-րէր որ ԱՄն եւս տեղի ազգային մարմիններու եւ յայտնի դէմքերու աջակցու-թեամբ լծուի հանգանակութեան: Աւելի ետք այս հանգանակութեան շուրջ, մամուլի մէջ իր դէմ երեւցած մեղադրանքներուն հակադարձելով, Փետր-ուար 1928ին ՀԲԸՄը հերքում կը հրապարակէ: Միութիւնը ջանադիր էր իր անդամաշարքերը լուսաբանելու՝ իր դէմ մղուած պայքարին խնդրով եւ իր-բեւ հաւաստի ապացոյց կը վկայակոչէր թէ՛ միջազգային կազմակերպու-

---

<sup>48</sup> Հաւանաբար, ԳԿՅն կը մեկնէր 1919ին հանգուցեալ, հարարաբնակ Հ. Պապլապ-եանի պարագայէն, որ Ատիս Ապեպայի մէջ ժառանգորդ չունենալով իր ամբողջ ժառանգութիւնը փոխադրուած էր Գահիրէ:

<sup>49</sup> Կը թուի այս հակառակութիւնները ներմասնաճիւղային էին եւ կապ չունէին միջ-կուսակցական բորբոքումներուն հետ!!

<sup>50</sup> ՀԲԸՄ ԺԸ. Ժողովին կատարուած կանոնագրային փոփոխութեամբ, 1926 տարե-շրջանէն սկսեալ ԳԿՅն կը վերանուանուի Շրջանակային Յանձնաժողով (ՇՅ), ո-րուն ենթակայ կ'ըլլան ՀԲԸՄ Եգիպտոսի, Սուտանի, Հնդկաստանի, Միջագետքի, Պաղեստինի, Սուրիոյ, Թուրքիոյ եւ Յունաստանի մասնաճիւղերը եւ յիշեալ երկիր-ներու մէջ գտնուած որբախնամ, նպաստի եւ այլ բոլոր ձեռնարկները:

թեանց հետ իր գործակցութեան փաստերը, եւ թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ կրօնական վերնադասին բարոյական հրապարակային նեցուկը<sup>51</sup>:

Դեկտեմբեր 1927ին գաղութը կը խաղաղադի եւ «պառակտումին պատճառ հանդիսացած պայքարները վերջ» կը գտնեն, ԱՄԻ վերակազմութեան աշխատանքներուն կ'աջակցի Նալպանտեան, որ կը դառնայ ՀԲԸՄ ներկայացուցիչը ցնոր տնօրինութիւն, մինչեւ մասնաժողովի կազմութիւն: Նալպանտեան ստանձնելով գոյքը (որոնց կարգին՝ «բարձի երես, դրօշակ, կարմիր խաչի կտոր կոճակներ, քարթ փոսթալ, ժապաւէն, օրացոյց, կնիք, 27 օրինակ *Տարագրի մը յուշարեպորը*<sup>52</sup> եւ 13 հատ *Տխուր ժպիկ*»<sup>53</sup> գիրքէն), Պ. Պապայեանի եւ փաստաբան Յ. Ուրֆալեանի հետ կը լծուի մասնաճիւղի վերակազմութեան, ՇՅԷն կը սատանայ նամակաթուղթ, պահարան, մուտքի տուրքի եւ անդամավճարի ու նուիրատուութեան ընկալագրեր:

Սակայն, «նորակառոյց եկեղեցոյ օժման»<sup>54</sup> պատրաստութիւնները կը յետաձգեն մասնաճիւղին վերականգնումի աշխատանքները, մինչեւ Գէորգ արք. Ասլանեանի հանդիսապետումը եկեղեցոյ օժումին: Ան 3 Դեկտեմբեր 1928ին եկեղեցոյ շրջափակին մէջ կայացած ԱՄԻ ժողովին (որուն ներկայ կ'ըլլան 55 անդամներէն 27ը, 40 ձայնի իրաւունքով) «լայն բացատրութիւններ» կու տայ ՀԲԸՄի մասին, կը քաջալերէ նոր անդամագրութիւններ, որով 45 նոր անդամներ կ'արձանագրուին: Ժողովին ընտրուած վարչութիւնը 8 Դեկտեմբերի նիստին կ'ընտրէ դիւանը (Ա. Քէօրհաճեան<sup>55</sup>, ատենապետ, Պերճ Պապայեան՝ բ. ատենապետ, Գ. Նալպանտեան՝ ատենադպիր, Լ. Գէորգոֆ՝ գանձապահ, Ա. Սվաճեան՝ խորհրդական), որ 16 Դեկտեմբերին

---

<sup>51</sup> Օրինակ, անլի առաջ՝ 7 Յունիս 1927 թուակիրով ՇՅՆ ԱՎին կ'իմացնէ թէ Ազգերու Լիկայի նախաձեռնութեամբ ձեռնարկուած Պէյրութի, Հալէպի եւ Ալեքսանտրէթի գաղթականներու հայ գաղթականութեան երկրագործական շրջաններ տեղատրման ձեռնարկին Լիբանանի կառավարութիւնը մասնակցած էր 25,000 անգլ. ոսկիով, որուն կը գումարուէր բրիտանական հայասիրական կազմակերպութիւններու նուիրատուութիւնները, եւ թէ վերջիններուս նպաստին ՀԲԸՄը անցուցած է իր յանձն առած 10 տոկոսի մասնակցութիւնը՝ փոխանցելով 500 անգլ. ոսկի: Միութիւնը աշալուրջ էր նաեւ իր այլ աշխատանքներուն մասին եւս տեղեկացնելու, ինչպէս օրինակ՝ 30 Մարտ 1928 թուակիրով ՀԲԸՄ ներկայացուցիչ Լեւոն Բաշալեանի՝ Ազգերու Լիկայի մօտ տարած աշխատանքներուն տեղեկագիրը (այս տեղեկագիրը չգտանք թղթապանակին մէջ): Անլի ետք, Մարտ 1934ի Ջատկին, կը յղուի նաեւ Կիլիկիոյ զոյգ կաթողիկոսներուն հայ ժողովուրդին ուղղած նամակը, ուր կը գնահատուէր ՀԲԸՄը:

<sup>52</sup> Վահան Մալեգեանի հեղինակած այս գիրքը լոյս տեսած էր Գահիրէ, 1915ին:

<sup>53</sup> Եզնիկի հեղինակած այս գիրքը լոյս տեսած է Գահիրէ, 1908ին:

<sup>54</sup> Եկեղեցին կառուցուած էր Միհրան Մուրատեանի «առատաձեռն» նուիրատուութեամբ:

<sup>55</sup> Քէօրհաճեան չի կրնար մասնակցիլ ժողովներուն՝ աշխատանքային բազմազբաղութեան ու ճամփորդութիւններուն պատճառով:

կը կատարէ «Որբերու Կիրակի»ի նուիրահաւաքը, եւ հասոյթը՝ 43,034ե.ն.<sup>56</sup> կը դրկէ ՇՅին: Աւելի ետք անդամներուն ընդհանուր թիւը կը հասնի 102ի եւ ԱՎն կը ստիպուի ամսական 15 թալէրով հապէշ հաւաքիչ մը նշանակել՝ գանձումներուն համար: Ապրիլ 1929ին սակայն, «տիրող ազգային կեանքի անորոշ վիճակը» պատճառ կը դառնայ որ յետաձգուի ՀԲԸՄ տարեդարձի տօնակատարումը: Եթովպիոյ ծնողաց ընդհանուր ժողովով ընտրուած հոգաբարձու մարմինը<sup>57</sup> եւ «տեղւոյս Հայկական Կրթարան երկսեռ մանկապարտէզ-նախակրթարանի վարչութիւնը» կը դիմեն ՇՅին երեք տարի պաշտօնավարած Յ. Պենկեան ամուլը փոխարինելու խնդրով: Այդ օրերուն դպրոցը կը հաշուէր 90-100 աշակերտ, կէսը՝ մանկապարտէզ: Սեպտեմբեր 15ին սկսող կրթաշրջանը կ'երկարէր 9-10 ամիս, մինչ վարձատրումը 12ամսեայ էր: Վարժարանը պիտի ունենար նաեւ մանկապարտիզպանուհի մը, օգնական մը, նախակրթարանի օգնական ուսուցչուհի մը եւ հապէշերէնի այցելու դասատու մը: Դասանիւթերն էին հայերէն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն: 7 Օգոստոս 1929 թուակիր *Արեւի* յայտարարու-

<sup>56</sup> 105 նուիրատուներ մասնակցեր էին 0,5-20 թալէր նուէրներով, որոնց կարգին՝ ոմն Իսկենտէր, Ռեշատ էֆենտի, Հաճիկիւ Ազնաուրեան, Լուսիա եւ փոքրիկն Վ. Այնթապեան, Տիգրան Ապաճեան, Վահրամ Աւետիքեան, Հայկ Բամպուքեան, Եղիշէ Բարունակեան, Յովհաննէս Բարսեղեան, տոքթ. Պետրոս Գալայճեան, Սարգիս Գալիաքեան, տոքթ. Միհրան Գայմաքեան, Պօղոս Գալիաքեան, Գրաբոս Գարակէօզեան, Շմաւոն եւ Վազգէն Գէորգեան, Լեւոն Գէորգոֆ, Մ. Գէորգոֆ Տուն, տիկ. Ն. եւ Սարգիս Գնաճեան, Յակոբ Երզնկացեան, Մենակար Զամանեան, Գրիգոր Զատիկեան, տիկ. Ժ., Յարութիւն եւ Պօղոս Էպէեաններ, Աւետիս, տոքթ. Էմանուէլ, Մուշեղ, Սեդրակ եւ Վահրամ Թերզեաններ, Աւետիս Ինեկճեան, Գասպար, Դաւիթ, Յակոբ եւ Օհան Իսրայէլեաններ, Զաւէն Խաչատուրեան, Երուանդ Խերպէկեան, Օքսէն Կէօճէկեան, Եղիա, Յարութիւն եւ Յովսէփ Կիւսէրեաններ, Գէորգ Հասրճեան, Եսայի Հինտոյեան, Նշան Հիւմիւզեան, Եղուարդ Ղազարոսեան, Պաղտասար Ղարիպեան, Կարապետ Ճիլէրճեան, Նիկողոս Ճիտէճեան, Մաթիկ Մաթիկեան, Մուշեղ Մաղաքեան, Պօղոս Մարկոսեան, Սամուէլ Մենէշեան, Անդրէաս, Մեսրոպ եւ Տիգրան Մեսրոպեաններ, Հ. Մինասեան, Գէորգ Մխճեան, Աւագ Յակոբեան, Սարգիս Յովհաննէսեան, Գէորգ եւ Սեդրակ Նալպանտեան, Սարգիս Շիշմանեան, Գէորգ Որբերեան, Յարութիւն Ուրֆալեան, Գրիգոր Չորպաճեան, Սուրէն Չաքրեան, Յակոբ Չիլինկիրեան, Մարի, Միհրան եւ Միսաք Պալեաններ, Պերճ Պապայեան, Հմայակ Պապանեան, Սամուէլ Պեհեսնիլեան, Միհրան Պրուսալեան, Գրիգոր Պօղոսեան, Ստեփան Ռադաւարեան, Յակոբ Սաաթճեան, Արմենակ Սարաֆեան, Դերենիկ Սարճեան, Խաչիկ Սաքաճեան, Սեֆէրեան եւ Ընկ., Գաբրիէլ Սիմոնեան, Յակոբ Սիսեան, Աւետիս Սվաճեան, Մարտիրոս Տէրստեփանեան, Փիլիպոս Վահանեան, Սերովբէ Վարժապետեան, Վենսան Տատուրեան, Բառնաբաս եւ Յարութիւն Տէրտէրեան, տիկ. Յ. Փոլատեան, Գուրգէն, Եղուարդ եւ Նուարդ Փողարեաններ, Տիկ. Գ. Քեհիայեան, Նուպար Քիւրզատեան, Արշամ Օհնիկեան, Արա Ֆերմանեան:

<sup>57</sup> Ատենապետ Պերճ Պապայեան, ատենադպիր Չաքրճեան:

թեան կ'արծագանգեան Յովսէփ Թզըրեան<sup>58</sup>, Վահրամ Կէօքճեան ամուլը<sup>59</sup>, Շաքէ Ծերունեան<sup>60</sup>, Պօղոս Սվաճեան<sup>61</sup>: Հուսկ, կը պաշտօնակոչուի Կէօքճեան ամուլը երկամեայ շրջանի մը համար: Ամուլը «երբեք» կուսակցական գործունէութիւն պիտի չունենար, բոլորովին պիտի նուիրուէր կրթական գործին, «*կէտառկէտ հետեւելով պատ. հոգաբարձութեան կողմէ փրութիւնը հրահանգներուն ու ուղղութեան*»<sup>62</sup>:

ԱՎն Դեկտեմբեր 1929ին, տիկնանց օժանդակ յանձնախումբի անդակ-ցութեամբ (տիկին Ն. Գէորգոֆ, Վ. Ճիտէճեան, Ն. Սիմոնեան, Է.Գ. Նալպանտեան, Հ. Շահպազ) կը կայացնէ «Որբերու Կիրակի»ի նուիրահաւաքը<sup>63</sup>, ապա կը ծրագրէ գարնանամուտին երեկոյթ կամ դաշտահանդէս մը կազմակերպել: Շուրջ երկամեայ գործունէութեան ընթացքին ԱՎն կը գումարէ 8 ժողով եւ բազմաթիւ խորհրդակցական ժողովներ, իսկ անդամներուն թիւը անցած էր հարիւրը, կային սակայն հրաժարողներ եւ քաղաքէն մեկնողներ<sup>64</sup>:

Փետրուար-Մարտ 1930ին Եթովպիոյ դրամանիշը՝ թալէրը կ'արձանագրէ 17 տոկոսի արժեզրկում մը:

---

<sup>58</sup> Շրջանաւարտ էր ամերիկեան երկու քոլէճներէ, պաշտօնավարած էր ազգային գանազան վարժարաններու մէջ իբրեւ ուսուցիչ, տեսուչ եւ տնօրէն-ուսուցիչ, 1928-29ին՝ Աղեքսանդրիոյ Պօղոսեան ազգային վարժարանին մէջ, իբրեւ անգլերէնի ուսուցիչ: 37 տարեկան էր եւ հայր երկու զաւակներու, իր տիկինը ուսուցչական պատրաստութիւն չունէր:

<sup>59</sup> Աղեքսանդրիաբանակ, 34ամեայ Կէօքճեան ծնած էր Սիս, ուր ստացած էր նախնական կրթութիւնը, շրջանաւարտ էր Տարսոնի Արնթ Փոլզ Քոլէճէն, ուսանողական տարիներուն դասաւանդած էր անգլերէն, պատմութիւն, եւ ուսողութիւն, Կիլիկիոյ պարպումէն ետք 5 տարի կրթական տեսուչ էր Սիրայի ամերիկեան նպաստամատոյցի մանչերու որբանոցներուն մէջ, եւ դադարած էր «որբանոցներու հայկական բաժնի վերջնական հաշուեյարդարով»: Տիկ. Կէօքճեան շրջանաւարտ էր Խարբերդի գերմանական քոլէճէն, 1918-25՝ պաշտօնավարած էր ամերիկեան որբանոցներու մէջ, Սեբաստիա եւ Սիրա:

<sup>60</sup> Ուսուցչուի էր ՀԲԸՄ սանուի:

<sup>61</sup> Ծնած էր 1903ին, Կեսարիա, ուսանած Պոլսոյ Գարակէօզեան որբանոցը, եւ շրջանաւարտած 1917ին, պաշտօնավարած Պոլսոյ Կէօզիթեփէի ամերիկեան վարժարանը իբրեւ բնական գիտութեանց ուսուցիչ, 1921ին ընդունուած էր Րոպերթօ Քոլէճ եւ 1927ին շրջանաւարտած, անցած Գերմանիա, տարի մը հետեւած Պերլինի համալսարանը: Քաջահմուտ էր աշխարհաբարի եւ գրաբարի՝ շնորհիւ Րոպերթօ Քոլէճի դասախօս փրոֆ. Աբրահամ Տէրյակոբեանի:

<sup>62</sup> Ամուլը Ճիպոթի կ'ուղղուի 2 Հոկտեմբեր 1929ին, ընկերակցութեամբ զորանջին եւ քենիին եւ իրենց երկամեայ երկուորեակներուն:

<sup>63</sup> Նուիրահաւաքին կը մասնակցի 129 հոգի՝ 1էն մինչեւ 120 թալէր գումարով:

<sup>64</sup> Հաշուետուութեան կցուած ցանկը կը նշէ 70 անդամներու անուն, 1928 տարուան անդամացանկը՝ 50 անուն, իսկ 1927ի անդամացանկը՝ 30 անուն:

15 Ապրիլ 1930ի անդամական ժողովին կ'ընտրուի նոր վարչություն, զոր ՇՅն կը վաերացնէ Օգոստոսին (Մաթիկ ԳէորգոՖ՝ ատենապետ, Աւետիս Սվաճեան՝ ք. ատենապետ, Գէորգ Նալպանտեան՝ ատենադպիր, Ստեփան Տաղաարեան՝ ք. ատենադպիր, Պերճ Պապայեան՝ գանձապահ):

10 Օգոստոսին վարչութիւնը կը կազմակերպէ սգահանդէս մը՝ Պողոս Նուպարի մահուան առթիւ<sup>65</sup>, իսկ ատելի ետք «ջերմութեամբ կ'ընդունի» Գալուստ Կիլպենկեանի ՀԲԸՄ նախագահ հռչակովիլը եւ կ'անդամագրէ 16 անդամ (Բիզանդ Ապուսէյֆեան, Մաքսուտ Գասապեան, տիկ. Վ. Գալուստեան, Շանթ Գէորգեան, Պողոս Եղիայեան, Մինաս եւ տիկ. Խերպէկեան, Միհրան եւ տիկ. Հազարեան, Մաքրուհի Պապայեան, Ռուբէն Պապիկեան, Գրիգորիոս Պողոսեան, Երուանդ Սաաթեան, Խաչիկ Սաքաճեան, Մարտիրոս Տարագճեան, Անդրանիկ Փափազեան): Ասոնցմէ 7ը նախկին անդամներ էին:

ԱՎն՝ առաւել աշխուժ գործունէութեան միտումով, ՇՅէն կ'ուզէ Անդրանիկ ֆիլմը կամ այլ հայկական ֆիլմեր, որոնց «*հոս գալու յաջողութիւնը շարժապատար պիտի ըլլայ միութեան... պայմանաւ որ այդ ֆիլմերուն մէջ պոլշեփկութեան եւ կամ հայ կուսակցութեան մը փրոփականքը ընող մասեր չգտնուին բացարձակապէս*»:

29 Յունիս 1931ին, ԱՎն կը նշէ ՀԲԸՄ արծաթեայ յոբելեանը, որուն առթիւ, ՇՅն կը դրկէ Պողոս Նուպարի 25 մեծադիր նկար, նաեւ 8 հատ «քարթ փոսթալ՝ Միութեան զանազան կարեւոր դէմքերն ու հաստատութիւնները ներկայացնող»՝ բոլորն ալ վաճառելի: Այդ առթիւ կը պատրաստուին 300 հատ արծաթ, 3 սանթիմէթ տրամագիծով «մետալլներ»<sup>66</sup>, որոնց ընդհանուր ծախքը կը հասնի 2311 եգ. դրշ.ի: Հանդիսութեան 15 անհատներ կ'անդամագրուին ՀԲԸՄի<sup>67</sup>:

Վարժարանին ուսուցիչի երկամեայ պաշտօնակոչման աւարտին, դարձեալ կը յառաջանայ «*փորձառու եւ կարող ուսուցիչ մը գտնելու [խնդիրը]... որ կարենայ դասաւանդել հայերէնէ զար անգլիերէն, ֆրանսերէն եւ թուա-*

---

<sup>65</sup> Սգահանդէսը հեզասահ չ'անցնիր, տհաճ ու «անվայել» արարք տեղի կ'ունենայ, որովհետեւ 1930ին Եթովպիոյ ներհայկական կեանքը դարձեալ բորբոքած էր, վերաշխուժացած էին «կուսակցութիւններ եւ միութիւններ»: (Սգահանդէսին նկարագրականը տես՝ *Արեւ*, 9 Հոկտեմբեր 1930):

<sup>66</sup> Ասոնց մէկ կողմը պիտի գրուէր «Արծաթեայ յոբելեան Հ.Բ.Ը.Մ. Ատիս Ապետայ», իսկ միւս կողմը՝ Միութեան խորհրդանշանը: Ծրագրուած 10 ոսկենշանները զանց կ'առնուին առաքման անապահովութեան պատճառով

<sup>67</sup> Որոնց շարքին՝ Վերժին Ազնաուրեան, Սիրանուշ Աֆարեան, Վահան Գալուստեան, Արտաշէս Գարասեֆէրեան, տոքթ. Էմմանուէլ Թերզեան, Զապէլ Ղուրլեան, Հայկանուշ Մարկոսեան, Միսաք Մելիքեան, Հրանդ Պաղտասարեան, Պէաթրիս Պեհեսնիլեան, Յակոբ Սիսեան, Մարտիրոս Տէրստեփանեան:

բանություն»<sup>68</sup>: ՇՅն կը խոստանայ կատարել որոնման աշխատանքը, անել-ցնելով թէ «այդքան ալ դիւրին պիտի չըլլայ» գտնելը, «գլխաւորաբար ամսականին պատճառաւ», որ պիտի կազմէր 10-12 անգլ. ոսկի, համեստ թռչակ մը:

Արեփ 17 Յուլիս 1931ի ծանուցումին կ'արձագանգեն Յ. Աագեան, Յ. Թգըրեան, Մ. Մեսրոպեան, Ազատ Հեքիմեան եւ Օր. Ազնի Մարտիրոսեան<sup>69</sup>: Հուսկ, Կէօքճեան ամուլը կը վերապաշտօնակոչուի, 350 թալէր ամսականով:

#### ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Մայիս 1932ին Խ. Հայաստանի կառավարութեան ներգաղթի յայտարարութիւնը կը խանդավառէ եթովպահայութիւնը. կ'ընդառաջեն փողերախումբի նախկին 6 անդամներ<sup>70</sup>, Գահիրէի մէջ 96 որբեր կ'արձանագրուին նոյն նպատակին, սակայն հնար չ'ըլլար զանոնք ղրկել: Եթովպահայ այլ ե-

---

<sup>68</sup> Կը թուի թէ Կէօքճեան ամուլէն «Աշակերտութիւնը լիովի օգտուեցաւ ... եւ սակայն ինչ ինչ պատճառներով ու մանաւանդ ամսականին չափազանց սղութեանը պատճառաւ» չի նորոգուիր պայմանագրութիւնը: Կացութիւնը դժուարացած էր թալէրի արժեզրկման պատճառով, որով հոգաբարձութիւնը փոխան 250-300 թալէրի, կը վճարէր 500-600 թալէր, որ «բացարձակ անկարելիութիւն» կը դառնայ: Հոգաբարձութիւնը որոշում կը կայացնէ «միմիայն կարող ուսուցիչ մը բերել դուրսէն եւ ուսուցչական մնացեալ կազմին համար գոհանալ տեղական ուժերով»: Միա կողմէն, թալէրի անկումով տեղական կեանքը աժանցած էր եւ կարելի էր ամսական 100-120 թալէրով (5 անգլ. ոսկի) «լաւ ապրի»: Դպրոցին հոգաբարձութեան գանձապահն էր Գրաբոս Գարակէօզեան, ատենադպիրը՝ Շմաւոն Գէորգեան, ատենապետը Պերճ Պապայեան, երեքն ալ ԱՄԻ անդամներ:

<sup>69</sup> Թգըրեան իր կինն ու զաւակները պիտի թողոր Գահիրէ:  
32ամեայ Մեսրոպեան, Յունաստանէն էր, ծնած էր Տարտանէլ, ուր նախակրթարանը ավարտելէ ետք տարի մը հետեւած էր Պարտիզակի Բարձր վարժարանին, 3 տարի՝ Պոլսոյ ամերիկեան Րոպերթօ Քոլէճին, 1917ին պարտադիր զինուորութեան համար թողած էր ուսումը: Զինադադարին 2 տարի դասաւանդած էր Քրիստոնէական Ընկերակցութեան մէջ հայ երիտասարդներուն, ապա նոյն հաստատութեան օրիորդաց բաժինին մէջ՝ 1923-24ին, Սելանիկ: 1925ին անցած Քսանթի, իբրեւ քարտուղար ծխախոտի ընկերութեան մը: 1928ին մտած էր Մսըրեան եղբայրներու ծխախոտի հաստատութիւնը հաշուակալի պաշտօնով: Յունահպատակ չըլլալով ան ենթակայ էր հաւանական բռնագաղթի:

Հեքիմեան Աղէքսանդրիոյ ազգային վարժարանի ուսուցիչ Յարութիւն Հեքիմեանի 24-25 տարեկան որդին էր. ան ուսուցչական փորձառութիւն չունէր:

Մարտիրոսեան կ'աշխատէր Պէյրութի Թաշճեան գորգագործարանին մէջ:

<sup>70</sup> Բաբկէն Սեֆէրեան (Վան-արճակցի, 1936ի խոռվութիւններուն կը սպանուի Ուկրաինայի պատերազմին, ուր իբրեւ վարորդ կ'աշխատէր), Նուպար Բիւրգատեան (ատափազարցի, մեքենագէտ), Վահէ Սիմոնեան (չմշկածագցի, ատաղձագործ), Պետրոս Ստամպոլեան (սուետիացի, դերձակ), Գրիգոր Եաղուպեան (այնթապցի, կօշկակար), Աագ Կարապետեան (հաճընցի, խոհարար):

րիտասարդներ եւս կը փափաքին ներգաղթել. ոմանք իրենց գումարներով պատրաստ էին մինչեւ Փորթ Սայիտ ճամփորդել, մինչ միաներուն համար տեղական հանգանակութիւն կը մտածուէր, այնուհետեւ բոլորը ՀԲԸՄի ծախքով Հայաստան մեկնելու համար: Ըստ ԱՎի նամակին, այս երիտասարդները «քաջ են եւ այսօր համոզուած են իրենց ապագային մասին, կը կարծենք թէ հայրենիքի վերաշինութեան գործին մէջ իրենց լաւագոյն բաժինը պիտի կրնան բերել...»: Անոնք «պիտի ազատուին օտար միջավայրերէ որ այնքան ալ բաղձալի չէ եւ հայ երիտասարդի համար ապագայ չի խոստանար... մէկ խօսքով անոնց ազատումը եւ փրկութիւնը կը տեսնենք միմիայն մայր երկիր երթալուն մէջ, անոնց ամէնքն ալ աշխատող, քաջ, խելացի եւ արհեստավոր եղան այսօր, բայց այս երկրի մէջ...»: Նամակը կը խնդրէր որ ասոնց մուտքը յաջողութի՛ իբրեւ բարի օրինակ այլոց:

Կը թուի թէ 20 Մարտ 1932ին Եթովպիոյ հայ ազգային իշխանութեան ընտրութիւնը անկիւնադարձային կ'ըլլայ եթովպահայութեան համար եւ ան կը թեւակոխէ խաղաղ գոյակեցութեան հանգրուանը: Արդարեւ, ԱՄՆ «անպաշտօն կերպով համերաշխութեան համար ամէն ջանք» ընելով կը յաջողի ընտրել տալ «գրեթէ ամբողջութեամբ Բարեգործականի անդամներ»:

22 Դեկտեմբեր 1932ի անդամական ժողովին, «անդամոց ձրիաբար սինեմա ցուցադրուեցաւ եւ մուզիք տեղի ունեցաւ»: Ժողովին կը բանախօսէ հիւրաբար հոն գտնուող Ա. Թերզիպաշեան, կ'արձանագրուին եօթ նոր անդամներ<sup>71</sup>, կը վերընտրուի նախկին վարչութիւնը: ՇՅՆ կը վաւերացնէ վարչութիւնը եւ գոհունակութիւն կը յայտնէ շրջանակին աշխուժ գործունէութեան որ կը գլէ կ'անցնի ակնկալութիւնները հակառակ երկրին տիրող «տնտեսական աննպաստ պայմաններուն»: Արդարեւ, ԱՎՆ գանձած էր 1929ի, 1930ի, 1931ի յետնեալ եւ 1932ի անդամավճարներ, 1930-31ի եւ 1931-32՝ «Որբերու Կիրակի»ի նուիրահաւաքները պսակուած էին յաջողութեամբ<sup>72</sup>, 1930-31ին սարքուած էին երկու հանդէս՝ հանգուցեալ Պօղոս Նուպարի եւ Միութեան 25ամեակին նուիրուած: Ազահանդէսին ընթացքին ինպաստ Նուպարեան ֆոնտին հանգանակուած էր 1010 թալէր, իսկ 25ամեակի ձեռնարկին վաճարուած էին արծաթեայ մետալներէն 200ը, Պօղոս Նուպարի լուսանկարները, 1931ի օրացոյցները...:

6 Յունիս 1933 թուակիրով ՇՅՆ կը յիշեցնէ Նուպարաշէնի եւ Ներգաղթի հանգանակութեանց պարագաները, որոնց ձեռնարկումը կը յետաձգուի գաղութային կենսական այլ խնդիրներու կարգաւորման, տնտեսական տագնապի ու դպրոցական ասարտական ձեռնարկներուն պատճառով:

<sup>71</sup> Շմաուն Գէորգեան, Լեւոն եւ Նազարէթ Գնաճեան, Սիմոն Իսկէնտէրեան, Վահրամ Կեօքճեան, Արմենակ Սարաֆեան, Յովհաննէս Սեմէրճիպաշեան:

<sup>72</sup> 1932ի «Որբերու Կիրակի»ի նուիրահաւաքը կատարած էր տիկնանց յանձնախումբը՝ Համեստուի Շահպազեան, Մարի Պապիկեան, Քոզլէ Պապայեան, Զապէլ Ղուրլուեան:

ԱՎն կը բացատրէ, թէ վարչականներէն ոմանք անդամ են նաեւ վարժարանի շինութեան աշխատանքներուն, գաղութային ժողովին, որով կարելի չ'ըլլար կանոնաւոր ժողովներ չգումարել: ԱՎի ազատ անդամները կ'աշխատին անդամավճարներու գանձումին խնդրով, անդամութենէ զանց կ'առնեն 50է աւելի անդամներ, որոնք չէին վճարեր անդամավճար, մինչ 63 այլ անդամներ Յունուար 1933էն սկսեալ կանոնաւորաբար կը վճարեն իրենց անդամավճարները:

#### ԻՏԱԼԱԿԱՆ ՆԵՐԻՆՈՒԺՈՒՄ ԵՒ ԵԹՈՎՊԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլ 1933ին կ'ընդհատի հաղորդակցութիւնը ՇՅի հետ, մինչեւ Յունիս 1936, երբ այդ թուակիրով, ԱՎն ՇՅին կ'իմացնէ «անդոհալից» կացութեան մասին զոր անցուցած էր եթովպահայութիւնը՝ 2-5 Մայիս 1936ին, իտալական գրաման նախօրեակին՝

[թալանուած են] ...բոլոր ճերմակներուն տուներն ու խանութները, բացի 8-10 հայոց տուներէն, որոնք զէնքի ուժով պաշտպանուեցան, խանութներուն մեծ մասը հրոյ ճարակ եղաւ, մաս մը հայեր արդէն Ապրիլ ամսու սկիզբէն Լեկասիոն (Ֆրանս. միայն) վրաններու տակ ապաստանած էին. Մայիս 2 Շաբաթ թալանի օր մնացեալներն ալ եկան, իսկ եկեղեցին եւ այլ վայրեր ապաստանողներ Կիրակի օր անգլիական զինուորներու կողմէ հաւաքուելով մօտ 150 հոգի, անգլիական լեկասիոն տարուեցան: Անգլիական լեկասիոնը պաշտպանեցին պատերազմին սկիզբը բերուած 120 հնդիկ զինուորներ, իսկ ֆրանսական լեկասիոնը պաշտպանեցին 100ի չափ հայեր անձնական զէնքերով եւ 10-15 ֆրանսացիք: Օրեր առաջ հապէշներ ֆրանսական լեկասիոն յարձակելու ծրագրեր ունէին եւ կը յոխորտային, բայց թալանի չորս օրուայ ընթացքին մէկ վայրկեան իսկ չկրցան մօտենալ. ֆրանսական դրօշին տակ հայ կտորիճներ այս անգամ ալ ցոյց տուին մեր ցեղին յատուկ քաջութիւնը, նոյնիսկ իրենց քամիոններով 10-12 երիտասարդներ քանի քանի անգամներ մաւզէր ու մեթրայէօզներով զինուած ճեղքեցին խուժանը եւ ազատելով քաղքին մէջ մնացած հայ եւ օտար ընտանիքներ բերին ու յանձնեցին, հիացում ազդելով նոյնիքն վսեմ. մինսիստր միսիւ Պոտարին, որ իտալացոց ներկայութեան գովեստով եւ շնորհակալութեամբ արտայայտուեցաւ վերջին գիշեր: Իտալական բանակը Մայիս 2 Գշ. ժամը 4ին թանքերով ու քամիոններով (3000է աւելի) մտաւ Ատիս Ապեպա եւ վերջ գտաւ թալանը: Վնասները միլիոններ կը հաշուուին. երէկուան հարուստը այսօր աղքատ եղաւ, վնասները ամէն ընտանիքի կողմէ կը գրուի եւ կը յանձնուի լեկասիոններէ նշանակուած յանձնախումբերուն: Հետեանքը չենք գիտեր թէ ինչ ձեւով պիտի վճարուի: Ատիս Ապեպայի մէջ հայերս անձի կորուստ չունեցանք. բանակին մտած օր աճապարանօք շուկայ իջնող 2 օթոյի վրայ հապէշ շոֆէօրներ զէնք պարպեցին, մին անվնաս ազատուեցաւ, իսկ միսին շոֆէօրը Փաւլոս Սաքաճեան գնդակով վիզէն վիրաւորուեցաւ: Հիմա լաւ է, կը շրջի:

Այնթապցի Սեդրակ Աազեան ապակիի կտորներէն վիրաւորուելով մէկ աչքը կորսնցուց, նոյնպէս մարաշցի ուսուցիչ Սարգիս Այնթապեան վիրաւորուեցաւ, հիմա առողջացած են: Լեկասիոնի մէջ այնթապցի Գրիգոր Մենէշեան թեթեալապէս ծոծրակէն վիրաւորուեցաւ: Մարքո նահանգին մէջ այնթապցի Կարապետ Շիրիքճեան սուրերով կտոր կտոր եղած սպանուած է, իսկ փեսան Կարապի Թերզեան, անյայտ է: Տիրեստաւա եւ Հարար անձի կորուստ չկայ: Ներքին նահանգներէն որոշ տեղեկութիւն չունինք բայց իտալական աղբիւրներէ առնուած լուրերուն համաձայն ճերմակ չէ սպանուած: Այժմ կացութիւնը լաւ է, իտալական զինուորական կառավարութեան շնորհիւ կարգ կանոնը վերահաստատուած է, արտաքստուղ հայ չկայ, ամէն ոք իր տունը մտած պառկելու եւ հազնելու բան մը գտած է, արհեստաւոր դասակարգը կ'աշխատի, թէեւ կեանքը կրկին անգամ սուղցած է, չքաւորներն ալ ֆրանսական օգնութեան կոմիտէէն փոքր ինչ նպաստ կը ստանան: Ներկայիս իտալական օգնութեան կոմիտէ մըն ալ կազմուեցաւ, որուն միւսիւ Մուսոլինի մասնակցած է 100 հազար լիւթթով եւ նպաստի բաշխումը կ'իմանանք թէ յառաջիկայ շաբթուն պիտի սկսի:

Միութեանս տեսրակները, կնիքը եւ պատրաստ դրամը (մօտաւորապէս 700-1000 թալէր) որ Սեֆէրեան տան դրամարկղին մէջ կը գտնուէր, անոնց տասնեակ հազարներով ան ալ թալանուեցաւ. վնասուց հատուցման հաշուեցոյցին մէջ պիտի նշանակէ յիշեալ տան տնօրէն Պ. Պերճ Պապայեան, որ Միութեան տեղուոյս գանձապահն է:

Իբրեւ կայս. ֆանֆարի խմբի անդամներ Միութեան միջոցաւ հոս բերուած Արարատեան որբանոցին նախկին սաներէն ոմանք եւ զաղութս այլ ընտանիքներ կը դիմեն մեզ եւ կը խնդրեն որ միջոցներ խորհուին իրենց Հայաստան փոխադրուելուն համար, որովհետեւ շատեր հոն ազգականներ ունին եւ արհեստաւոր են: Ուստի կը խնդրենք որ հաճիք առ որ անկ է դիմել եւ փոխադրել զիրենք Հայաստան. շատեր երբեք դրամ չունին, միակ շապիկով մը մնացած են, իսկ մաս մը կարող են ծախքին քառորդը կամ կէսը վճարել. կը սպասենք ձեր շուտափոյթ պատասխանին կրկին եւ կրկին խնդրելով<sup>73</sup>:

<sup>73</sup> 5 Սեպտեմբեր 1936 թուակիրով Ա.Վ.ն կը յայտնէ թէ «Տիրեստաւայի եւ Հարարի հայութեան վիճակը ներկայիս լաւ է. կառավարութիւնը ուշի ուշով կը հսկէ անդորրութեան, արհեստաւոր եւ վաճառական դասակարգը կը շահին, ձմեռը սաստիկ եղաւ այս փարի, բայց Սեպտեմբերի վերջը կը դարդի ու հաղորդակցութիւնը կը դիտանայ ներքին գաւառները ուր բաւական հայեր կան եւ որոնց մասին որեւէ տեղեկութիւն չունինք դեռ: Կոճճանի նահանգին մէջ կան Վահրամ Աւերիքեան (գլխիֆկէցի), Ներսէս Պիլեմճեան (այնթապցի), Վոլլակայի մէջ՝ Լեւոն Արիկեան (պոլսեցի), Էդուար Էպէեան (ափսապեպացի), Վոլամոյի մէջ՝ Խաչիկ Ասատուրեան (պոլսեցի), Պալիի մէջ՝ Մամաս Ազնաւորեան (ափեամանցի), Երուանդ Գրիգորեան (իզմիրցի), Ճեմմայի մէջ՝ Վահան Գէորգեան (սեբաստացի), Վահէ Փա-

Իստե կացութեան վատթարացման՝ գաղութը փափաք կը յայտնէ ներգաղթի: Ի պատասխան, ՇՅՆ կը մէջբերէ 20 Յունիս 1936 թուակիր ՀԲԸՄ Փարիզի ընդհանուր տնօրէնութեան դիւանէն ստացուած նամակէն՝ «ներկայ պարագաներուն մէջ ներգաղթի ռելէ հաւանականութիւն չենք տեսներ: ...Անհատական կամ փոքր խումբերով Հայաստան ներգաղթը գրեթէ անկարելի է, եւ չենք կարծեր որ եթէ նոյնիսկ խմբական ներգաղթի որոշում մը տրուի, մինչեւ Եթովպիայէն գաղթականներ կարենան մաս կազմել անոր: Փափաքողները անշուշտ ազատ են սակայն ուղղակի դիմելու ՀՕԿի գլխաւոր վարչութեան, Երեւան, որ այժմ կը զբաղի ներգաղթի գործերով»<sup>74</sup>: Աւելի ետք, 10 Սեպտեմբեր 1936 թուակիրով ՇՅՆ կը կրկնէ թէ Եթովպիայէն ենթադրութիւնը՝ թէ «ներգաղթի խնդիրը կրնայ շուտով կարգադրուիլ՝ ճիշտ չէ,- եւ կ'աւելցնէ,- կրնայ շատ ուշանալ ներգաղթի գործը...անոր կարգադրութիւնը Միութենէս կախում չունի»<sup>75</sup>: Մինչ դիմորդները «կատարեալ յոյս ունէին Բարեգործականին վրայ», ու ակնկալելով արագ կարգադրութեան մը կարելիութիւնը, ոմանք «որելէ գործի չձեռնարկեցին, ոմանք ալ ունեցածին ծախեցին եւ կը սպասեն երջանիկ օրուան որ զիրենք պիտի միացնէ իրենց քրոջ, եղբոր կամ ազգականներուն»: ԱՎՆ կը զգուշացնէ որ սպասողները առայժմ կը դիմանան ու կը տոկան, սակայն երկարելու եւ ձգձգուելու պարագային «շատեր իրապէս խեղճ ու թշուառ պիտի ըլլան», աւելցնելով որ ՀԲԸՄ Արիս Ապեպայի շրջանակէն շատեր այսօր կորսնցուցած են իրենց ունեցուածքը «եւ իրատունք ունին աջակցութիւն յուսալու այլոցմէ»: 13 Սեպտեմբեր 1936 թուակիրով ՇՅՆ դարձեալ կը զգուշացնէ թէ «բան գործ ձգած ներգաղթի սպասելը վերջիվերջոյ անոնց թշուառանալուն պատճառ պիտի հանդիսանայ» եւ կը խնդրէ յանձնարարել որ այդ ազգայինները «գործի կապուին եւ չսպառեն իրենց պատրաստ ունեցած գումարները: Այս յանձնարարութիւնը կ'ընենք

---

փազեան (պոլսեցի), Արուսի մէջ՝ Սողոմոն Թորոսեան (Վանայ գիւղերէն), Սեփմոյի մէջ՝ նախկին Արարատեան սաներէն Սահակ Թորոսեան եւ Վահան Գրիգորեան (Վանայ գիւղերէն, շաբախցի), Գրիգոր Գալփաքեան (այնթապցի): Միքանի օրէ իվեր այս երեքին համար հապէշներէն սպանուած են ըսելով տարածայնութիւն մը կայ, ճշտութիւնը չենք գիտեր: Մարոքոյի մէջ փիկին Սաթենիկ Թորոսեան եւ Էլիզ Շիրիքճեան (արաբկիրցի), Կարպիս Թերզեան եւ կինը Սիրանուշ (ափսապեպցի), Կոփիի մէջ՝ Շաւարշ Վեցմատեան (չմշկածագի), Մելիպոս տուփացի, Հեթում (արաբկիրցի), Տիգրան Պրուշեան (տիգրանակերպցի), Յարութիւն Որբերեան (մալաթիացի), Թիկրէի մէջ՝ Տիգրան Պերպերեան (արաբկիրցի): Ֆրանսական նպաստաբաշխ մարմինը տակաւին կը գործէ տարով կարգ մը հայերու՝ պաթանիա, շաքար, ալիւր են., ուրիշ տեղէ օգնութիւն չենք ստացած»:

<sup>74</sup> Նամակին կցուած ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութենէն ԱՄին ուղղուած նամակը կը բացակայի թղթապանակէն:

<sup>75</sup> Նամակը յետգրութեամբ մը կը բացատրէ թէ «ներգաղթը Հայաստանի կառավարութենէն կախում ունի եւ դիմումները որելէ ազդեցութիւն չեն ըներ»:

*աչքի առջև ունենալով ներգաղթի նախընթաց օրինակները Յունաստանին եւ Ֆրանսային: Վերջին անգամ, Ֆրանսային եղած ներգաղթի որոշումը փրուելէն ամիսներ վերջ տեղի ունեցաւ անիկա... մինչդեռ այս պարագային տակաւին որոշում իսկ չկայ»:*

Թղթապանակին մէջ վեցամեայ բաց մը կայ, որ կ'երկարի 5 Սեպտեմբեր 1936էն մինչեւ 1 Յունիս 1944: Հաւանաբար իտալական գրաւումն ու յաջորդող Բ. համաշխարհային պատերազմի տարիներուն ԱՄՆ աշխուժ չէր, եւ չէր կրցած բնականոն հաղորդակցիլ ՇՅին հետ:

...Բ. համաշխարհայինի աւարտին, ՇՅն իմանալով եթովպահայութեան «լաւագոյն պայմաններու մէջ գտնուիլը», 1 Յունիս եւ 26 Յուլիս 1944 թուակիրով կը դիմէ Սամուէլ Պեհեսնիլեանին եւ «ջերմապէս կը խնդրէ» որ վերակազմէ մասնաճիւղը: Չ'ուշանար ՇՅի յաջորդ նամակը. 19 Դեկտեմբեր 1944 թուակիրով ՇՅն կը վերլիջեցնէ մամուլով յայտարարուած «համազգային հանգանակութեան [մասին]... որուն նպատակն է անմիջական օգնութեան հասնիլ Յունաստանի, Պալքանեան երկիրներու, Ֆրանսայի եւ առհասարակ արտասահմանի բոլոր հայ աղէտբալներուն որոնք մինչեւ այդ երկիրներուն ազատագրումը ահաւոր եւ աներեւակայելի տառապանքներու եւ թշուառութեանց ենթարկուեցան եւ այժմ կը սպասեն իրենց բախտաւոր ազգակիցներուն օգնութեան: Սոյն հանգանակութիւնը համար Միութեան վերջին ընդհանուր ժողովին որոշուած էր գոյացնել 360,000 տոլար, որուն 250,000 տոլարը բաժին հանուած էր ամերիկահայութեան եւ... ամբողջութեամբ գոյացուած»: ՇՅն կը մանրամասնէ թէ Եգիպտոսի բաժինը 80,000 տոլար է, որմէ եթովպահայութիւնը պարտ է 1500անգլ.ո., ու կը թելադրէ «անմիջապէս գործի լծուիլ»: ԱՄին կը մնար աշխուժ վարչութիւն յառաջացնել: Այդ նկատառումով, 28 Յունուար 1945ին կը գումարով անդամական ընդհանուր ժողով, որուն ներկայ կ'ըլլան 22 անդամներէն 13ը<sup>76</sup>. կ'ընտրուի նոր վարչութիւն (Սամուէլ Պեհեսնիլեան՝ ատենապետ, Պերճ Պապայեան՝ փոխատենապետ, Հայկ Գասպարեան՝ ատենադպիր<sup>77</sup>, Վահրամ Կէօքճեան՝ զանձապահ եւ Մարտիրոս Տարագճեան՝ խորհրդական): ԱՎն կը յետաձգէ հանգանակութիւնը, պատճառաբանելով վերջին ամիսներուն գաղութին մասնակցած շարք մը հանգանակութիւնները (իշխանուիի Յմայի հիւանդանոցին, Ա-

<sup>76</sup> Խաչիկ Ասատուրեան, Հայկ եւ Սարգիս Գասպարեան, Վազգէն Գէորգեան, Պողոս Եղիայեան, Յակոբ Երզնկացեան, Մանուկ Խուտանեան, Յովհաննէս քնյ. Կեւիէրեան, Վահրամ Կէօքճեան, Արտաշէս Ոսկեան, Պերճ Պապայեան, Անդրանիկ, Ժոզէֆ, Հայկ, Յակոբ, Ռուբէն եւ Սամուէլ Պեհեսնիլեաններ, Յովհաննէս Սեմէրճիպաշեան, Ամասիա Սուքիասեան, Աւետիս Սվաճեան, Մարտիրոս Տարագճեան, Յակոբ Տէրտէրեան, Գէորգ Քեհիայեան:

<sup>77</sup> Աւելի ետք զինք կը փոխարինէ ազգային Գէորգոֆ վարժարանի տնօրէն Սամուէլ Արուքեան:

տիս Ապետայի «Հայ Մարմն. Միության հիմնարկության եւ շէնքի շինութեան» եւ հայկական վարժարանին, Եթովպիոյ համար գնուելիք երեք օդանաւերու, «Զօրավար Պակրամեանի զօրասիւնին ինպաստ»...) եւ թէ՛ հայօճախին «վճարելու տրամադրութիւնը զգալիօրէն յոգնեցաւ», ընդգծելով ՇՅին թէ 800ը չանցնող եթովպահայութիւնը վերոյիշեալ հանգանակութիւններուն հաւաքած էր աւելի քան 6000անգլ.ո. եւ կ'առաջարկէ «ժամանակ մը դադար շնորհուի գաղութիս», որպէսզի աննշան չըլլայ հաւաքուած գումարը:

26 Փետրուար 1945 թուակիր համարատուութենէն կը պարզուի որ 1945ին մուտքի տուրքերէ գոյացած էր 120, անդամավճարներէն՝ 1084, իսկ նուիրատուութիւններէ՝ 500 շիլին եւ թէ անդամներուն թիւը բարձրացած էր 29ի: Հաղորդակցութեան վերականգնումով 31 Յունուար 1946 թուակիրով ԱՎն կը ներկայացնէ ցանկը 20 նորագիրներու եւ անհրաժեշտ կը նկատէ ծանօթանալ ՀԲԸՄ վերջին տասնամեակի գործունէութեան, զայն օգտագործելու համար կազմակերպուելիք ՀԲԸՄ հիմնադրութեան տարեդարձի հանդիսութեան: Ձեռնարկին կը կատարուի վերերանութեան վկայականներու տուչութիւն՝ քսան տարուան անդամութիւն ունեցողներուն<sup>78</sup>: Ղեկավարութեամբ Ն. Նալպանտեանի ելոյթ կ'ունենայ Մուրատեան երգչախումբը, որ կը կատարէ Եթովպիոյ եւ ՀԲԸՄի քայլերգերը եւ կոմիտասեան երգեր, Է. Ճերահեան (ջութակ) եւ Օր. Ա. Պաղտասարեան (դաշնամուր) կը նուագեն դասական կտորներ: Օրուան բանախօս Հայկաշէն Ուզունեան կ'անդրադառնայ ՀԲԸՄի հիմնադրութեան եւ մատուցած «անսայթաք եւ անգնահատելի ծառայութեան»: Վ. Կէօքճեան կը ներկայացնէ տարուան տեղեկագիրը: Հանդէսը կը փակուի Վ. քինյ. Ասատուրեանի պահպանիչով:

Սակայն վերականգնումի թափն ու արդիւնքները դանդաղ կ'ըլլան, ԱՎն անորոշ թուականով կը յետաձգէ Մշակոյթի Կիրակիին հանգանակութիւնը, նկատի առնելով «ներկայ պարագաներն ու պայմանները»: ՇՅն կը պատասխանէ ներգաղթի լրատուութեամբ՝ 27 Մայիս 1946 թուակիրով փոխանցելով կոչ մը, ըստ որուն ՀԲԸՄ եւ Հայաստանի կառավարութեան միջեւ կայացած համաձայնութեամբ Միութիւնը «ներգաղթի ելմտական հոգը ստանձնած է», որուն համար ալ բացած է մէկ միլիոն տոլարի հանգանակութիւն: ՇՅն կը թելադրէ որ ԱՎն ձեռնարկէ այս հանգանակութեան, եւ ապահովէ իրեն բաժին սահմանուած 20,000 տոլարը, յոյս յայտնելով որ վարչութիւնը «աւելիով կը գոյացնէ գումարը»...: ԱՎն դարձեալ կը խանդավառուի ներգաղթով, ու կը յայտնէ ՇՅին թէ եթէ Եթովպիայէն ներգաղթ կատարուի կարօտ ընտանիքներու մինչեւ Եգիպտոս ճամփորդութեան օգնել անհրաժեշտ պիտի ըլլայ, բայց կը փափաքի յետաձգել

<sup>78</sup> Յ. քինյ. Կեհէրեան, Պ. Պապայեան, Մ. Տարագճեան, Վ. Կէօքճեան, Պ. Եղիայեան, Ե. Տէրեւց, Ս. եւ Ռ. Պեհեսիլեան:

հանգանակությունը: 10 Յուլիս 1946ին ՅՇն կը հակադարձէ ԱՎի բերած յետաձգման պատճառաբանություններուն<sup>79</sup>, ընդգծելով ստիպողականությունը՝ «երբ մանասանդ արդէն սկսան ներգաղթի կարասանները մեկնիլ Սուրիայէն եւ Լիբանանէն ու անմիջականօրէն պէտք կայ մեծ գումարներու»:

Ըստ 1 Յունուար-31 Դեկտեմբեր 1946 շրջանի հաշուետուութեան, մուտքի տուրք իբրեւ գանձուած է 170, անդամավճար՝ 1732 շիլին, անդամներուն թիւը բարձրացած է 29էն 45ի<sup>80</sup>, իսկ գաղութին թիւը կը նկատէր 850:

Յունիս 1948ին կը վերակազմովի վարչութիւնը (Սամուէլ Պեհեսնիլեան՝ ատենապետ, Պերճ Պապայեան՝ փոխատենապետ, Վահրամ Կէօքճեան՝ ատենադպիր, Իլիաս Ճերահեան՝ գանձապահ եւ Մարտիրոս Տարագճեան՝ խորհրդական): Ընտրական այս ժողովին կը հրաւիրուին նաեւ տիկիներ ու համակիրներ, երթեւեկի համար կը տրամադրուի փոխադրակառք, կ'անդամագրուին 9 նորեր, յարմար կը նկատուի յառաջացումը տիկնանց յանձնախումբին<sup>81</sup>:

ԱՎն «տնտեսական տագնապին եւ ներքին կրթական հոգեբով ծանրաբեռնուած ըլլալուն» չի կազմակերպեր 1949-50ի Մշակոյթի Կիրակիի հանգանակութիւնը:

Յաջորդ վարչութիւնը կ'ընտրուի Սամուէլ Պեհեսնիլեանի «վիլլա»յին մէջ, 4 Յունիս 1950ի ընդհանուր անդամական ժողովին: Ներկայ կ'ըլլան

---

<sup>79</sup> Տիրող տնտեսական տագնապին ու քաղաքական դժուարութիւններուն կողքին, այլ դժուարութիւն մըն էր նուազ քան 900 հոգի հաշուող գաղութին ուսերուն ծանրացած դպրոցին 45-50,000 շիլինի պիտոճէն. անդին, Արարատ Մարմնամարզական Միութեան շէնքին համար ծախսուած էր 75-80,000 շիլին, կատարուած էին նաեւ այլ հանգանակութիւններ՝ «Հայ զինուոր»ին (գոյացած էր 17000 շիլին), իշխանութի Սահայի յիշատակին հիանդանոց (22000 շիլին), Ուինկ Ֆոր Վիքթորի (22000 շիլին), Զօր. Բագրամեանի զօրասիւն (26,500 շիլին), Գալուստեան վարժարանի կարօտեալներու ֆոնտ (6800 շիլին)...: Նիւթական այս ծանրաբեռնուածութիւնը պատճառ պիտի դառնար որ ԱՎն չկազմակերպէ 1948 տարեսկիզբի Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքը: Աւելի ետք, ան կը կազմակերպէ ներգաղթի հանգանակութիւնը, որուն կը մասնակցին 145 նուիրատուներ եւ կը հանգանակուի 814,5 սթերլին:

<sup>80</sup> Որոնց շարքին՝ Սամուէլ Արուքեան, Հրանդ Բախտիկեան, Անդրանիկ եւ Աւետիս Գնաճեան, Մուշեղ Երեանեան, Սահակ Լաթիքեան, Յարութիւն Կեռէրեան, Եղուարդ Ղազարոսեան, Վահագն Ղարիպեան, Գէորգ եւ Իլիաս Ճերահեան, Գալուստ եւ Յակոբ Մաուլեան, Նուպար Մխճեան, Պենտն Կէօճճեան, Արամ Սարաֆեան, Երուանդ Տէրեց, Իսահակ Փամուկեան, Արմէն եւ Նուպար Փողարեան:

<sup>81</sup> Ան կը կազմուի եւ կը գործէ Ապրիլ 1951ին (Ազնիւ Կէօքճեան՝ ատենապետութիւն, Արուսեակ Եղիայեան՝ ատենադպրութիւն, Աշխէն Ճերահեան՝ գանձապահ, Նուրիցա Կէօճճեան, Մարի Ճերմակեան, Աստղիկ Պեհեսնիլեան, Ծովիկ Սվաճեան, Վարդանուշ Տարագճեան՝ խորհրդականներ):

47 անդամներէն 29ը, իրենց տիկիններով: Կը վերընտրուի վարչութիւնը, որ իր յաջորդ միամեայ գործունէութեամբ անդամավճարներէն կը գոյացնէ 1422 թալեր, մինչ անդամներուն թիւը կը բարձրանայ 58ի:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

1950ականներուն հայօճախին մէջ կը նկատուին կարիքաւոր հայ ընտանիքներ: 26 Մայիս 1950 թուակիրով ԱՎն կը խօսի եթովպահայ «նպաստընկալ» ընտանիքներու մասին, անցնելով թէ ստացած է դիմումներ «Միութեանս տրամադրելի միջոցներէս նպաստաւորուելու խնդրանքով», ու կը մանրամասնէ վեցանդամ ընտանիքի մը պարագան, որուն միակ նեցուկը 8 տարի առաջ արկածով մը կորսնցուցած էր իր ասքերը: ՇՅն այս խնդրանքներուն կը պատասխանէ... թէ Միութիւնը «աղքատախնամ կազմակերպութիւն չէ, եւ սակայն պատրաստ է օգտակար դառնալու» ու կը թելադրէ յստակացնել կարիքաւոր ընտանիքներու փոքրիկներուն կրթութեան ու դաստիարակութեան ծախքերը: Միաժամանակ, համամտութիւն կը յայտնէ որ տեղական կարիքներն հոգալու համար տեղական ձեռնարկներ կազմակերպուին, որոնց հասոյթին 20-30 տոկոսը օգտագործուի տեղական կարիքներուն<sup>82</sup>:

Այլատեսակ կարիք մը կը դառնայ եթովպահայ նորահաս սերունդին Մելգոնեան Կրթական Հաստատութիւն յաճախելու պարագան, որ սկիզբ կ'առնէ Ապրիլ 1951ին: Ա. դիմորդը կ'ըլլայ Գ. Կարապետեան: ՇՅն կը սպասէ ՄԿՀ նոր աշակերտներ ընդունելու որոշումին, եւ կը պայմանադրէ դիմորդին ընդունելութեան պայմաններուն լրացումն ու «մտից քննութեանց» յաջողութիւնը եւ թէ դիմորդը պարտի հոգալ Կիպրոս երթուղարձի ճանապարհաճախսը: Երկրորդ դիմորդը կ'ըլլայ Աշոտ Փողարեան<sup>83</sup>: Յունիս 1951ին ՄԿՀ տեսչութիւնը կը յայտարարէ որոշ թիւով աշակերտներու ընդունումը, որուն լոյսին տակ ՇՅն ԱՎին կը դրկէ «հայերէնի, ֆրան-

<sup>82</sup> Աւելի առաջ, Նոյեմբեր 1948ին ԱՎն խնդրած էր միջամտութիւնը ՇՅին՝ եթովպահայ թոքախտաւոր Յովսէփ Տարագճեանին անուն համար, որ մեկնած էր Լիբանան, Ազունիէ՝ բուժման, Եթովպիոյ մէջ հանգանակուած ճանապարհաճախսով: Ան կը մահանայ 15 Ապրիլ 1949էն առաջ:

<sup>83</sup> Դիմորդներուն կը միանայ երրորդ մը՝ Անդրէաս Մեսրոպեան: Այս առթիւ ԱՎն կը խնդրէ որ այս երեք եթովպահայատակներն ալ ընդունուին, յիշեցնելով գաղութին նուիրեալ նպաստները ՀԲԸՄին, որով վերջ պիտի տրուէր «"Կու տանք, կու տանք բայց բան մը չենք տեսների" ծանօթ յանկերգին»: Աւելի ետք, դիմորդներուն կ'անունայ չորրորդ մը՝ կիպրաբնակ Անահիտ Տէրենց, տարի մը առաջ տեղափոխուած էր Եթովպիա: Այնուհետեւ, ՄԿՀ ուսանող եւ տարեթոշակ վճարել չկրցող եթովպահայեր կը դառնան ձրիավարժ: Երբեմն անոնց կրթաթոշակի հոգաճութեան կը մասնակցին ԱՄՆ, կամ եթովպահայ բարերարներ, ինչպէս է պարագան 1961ի ուսանողուի Արաքսի Թերզեանի:

սերէնի, անզլերէնի, ազգային պատմութեան, թուաբանութեան եւ աշխարհագրութեան »մուտքի քննութեան հարցարան: Կարապետեան եւ Տէրենց կ'ընդունուին, իսկ Փողարեան կ'ընդունուի իբրեւ «վճարովի աշակերտ, տարեկան 60 ոսկի թոշակով»<sup>84</sup>:

1 Յունուար-31 Դեկտեմբեր 1951 տարեշրջանի հաշուետուութենէն կը պարզուի որ անդամատուրքերէ հաւաքուած 1612,5 թալէր, մինչ անդամներուն թիւը բարձրացած 58էն 65ի:

Մելգոնեանցի առաջին սաներու դրական արձագանգը կը խանդավառէ ուրիշներ. Յունիս 1952ին եթովպահայ Երուանդ Ատանալեան ուսանելու կը դիմէ ՄԿՀ:

Ըստ 1952 տարեշրջանի հաշուետուութեան անդամավճարներէ գոյացած էր 1684,5 թալէր, անդամներուն թիւը նուազած էր 65էն 61ի, հակառակ 6 նորերու անդամագրութեան, մինչ դադրած էին 10 անդամներ:

Ըստ 1 Յունուար-31 Դեկտեմբեր 1953 համարատուութեան, այդ տարի մուտքի տուրքերէ գանձուած էր 185, անդամավճարներէն՝ 1871, նուիրատուութիւններէ՝ 97.75, 47րդ տարեդարձի հաւաքոյթէն՝ 435,25եթ. տոլար: Մասնաճիւղի անդամներուն թիւը աւելցած էր 61էն 98ի<sup>85</sup>:

15 Մարտ 1954 թուակիրով ՇՅն կը հաստատէ նոր վարչութիւնը (Պեհեսնիլեան՝ ատենապետ, Պ. Պապայեան՝ փոխատենապետ, Հ. Ուզունեան՝ ատենադպիր, Ն. Փողարեան՝ գանձապահ, Մ. Տարագճեան-Վ. Կէօքճեան-Ի. Ճերահեան՝ խորհրդականներ):

ՀԲԸՄ 20 Յունուար 1955ի Ընդհանուր Ժողովով օրակարգի նիւթ դրուած էին ՀԲԸՄ «հպատակութեան փոփոխութիւնը», եւ Լոնտոնի Թրասթները Նիւ Եորք փոխադրելու հարցերը: 31 Դեկտեմբեր 1954 թուակիրով, ՀԲԸՄ Նիւ Եորքի Կեդրոնը ԱՎին կը յղէ 80 փոխանորդագիր եւ կը թելադրէ որ փոխանցումին խնդրով իրաքանչիւր փոխանորդագիր ընդգծէ այոն<sup>86</sup>: Այնուհետեւ եւս, Գահիրէի ՇՅին կողքին հաղորդակցական պարագայական գիծ մը կը բացուի Նիւ Եորքի կեդրոնին եւ ԱՎին միջեւ:

27 Փետրուար 1955 թուակիրով ԱՎն կը յայտնէ իր 107 անդամներուն ցանկը.- Յարութիւն Անդրանիկեան, Սամուէլ Արուքեան, Դաւիթ Արսլան-

<sup>84</sup> Անոր հօրեղբայր, հանգուցաւ Եղուարդ Փողարեանի թողած 500 սթերլինի գումարով կը հոգացուի «ուսումնատենչ այս որբուկին տարեթոշակը»:

<sup>85</sup> Նոր անդամագրողներն են.- Ա. Բարսեղեան, Ե. եւ տիկ. Մ. Գէորգեան, Ն. Գնաճեան, օրդ. Մ. եւ Յ. Գոյումճեան, տիկ. Լ. եւ Հ. Երզնկացեան, Ե. Թիլլեան, օրդ. Ա., Ա., Լ., Վ. եւ տիկ. Զ. Ճերահեաններ, Յ. Մաուլեան, Բ. եւ Հ. Նալպանտեան, Ա. Որբերեան, օրդ. Թալին, Հայկաշէն եւ տիկ. Մ. Ուզունեաններ, Թ. Չալղըճեան, Շ. Չաքրեան, Հ. եւ տիկ. Ն. Չերէքեան, օրդ. Ն. Պեհեսնիլեան, տիկ. Ա. Սիսեան, տիկ. Պ. եւ Վ. Սիւմէեան, Գ., տիկ. Մ. եւ Շ. Սվաճեաններ, Յ. Վառարանեան, Խ. Տարագճեան, տիկ. Վ. եւ օրդ. Ս. Տէրենց, օրդ. Ֆ. Փամպուքեան:

<sup>86</sup> Այդ ժողովին ԱՄէն մասնակցելու իրաւունք ունէին 42 անդամներ, որոնցմէ ոմանք 2 ձայնի իրաւունքով:

եան, Հրանդ Բախտիկեան, Եղիշէ եւ Ժիրայր Բարունակեան, Ալպէր Ա. Բարսեղեան, Սարգիս Գասապեան, Վահագ Գարիպեան, Եղուարդ Գէորգեան, Ներսէս եւ Մարի Գգիրլեան, Անդրանիկ, Նազարէթ, Տիգրան եւ Ա. Գնաճեաններ, Յովհաննէս եւ Մարի Գոյումճեան, Արուսեակ եւ Պօղոս Եղիայեան, Մուշեղ եւ Յասմիկ Երեանեան, Լեւոն, Հռիփսիմէ եւ Յակոբ Երզնկացեաններ, Եսայի Թիլպէեան, Գառնիկ Թովալեան, Ֆրանսուազ Իսրայէլեան, Մանուկ Խուտանեան, Եղուարդ Կարապետեան, Յովհաննէս քինյ. Կեւիէրեան, Ազնիւ եւ Վահրամ Կէօքճեան, Անժէլ եւ Նշան Հիրմիզեան, Եղուարդ եւ Վարդուիի Ղազարոսեան, Այտա, Աշխէն, Աստղիկ, Արտաւազդ, Գէորգ, Զարուկ, Էլիաս, Լեւոն եւ Վարդան Ճերահեաններ, Մարի եւ Պաղտասար Ճերմակեան, Յակոբ եւ Սրբուիի Մանուկեան, Յակոբ Մաւուլեան, Գէորգ Մխճեան, Հայկ Նազգաշեան, Բիզանդ, Հրանդ եւ Ներսէս Նալպանտեաններ, Ասատուր Որբերեան, Հայկաշէն, Թալին, Մարի եւ Սեզա Ուզունեաններ, Թադէոս Չակրճեան, Հեթում եւ Նոնօ Չիրեքեան, Շահրիման Չաքըրեան, Հերի եւ Մանուշակ Պայըրեան, Պերճ Պապայեան, Ազնիւ, Անդրանիկ, Աստղիկ, Ժոզէֆ, Հայկ, Մարի, Յակոբ, Նորմա, Ռուբէն եւ Սամուէլ Պեհեսնիլեաններ, Նաւում Սաքայեան, Ալիս Սիսեան, Պարգետուիի եւ Վահան Սիրմէեան, Ալպէր, Անահիտ, Աւօ, Գէորգ, Գրիգոր, Յովսէփ եւ Շաքէ Սվաճեաններ, Վահան Սարգիսեան, Յակոբ Վառարանեան, Խաչիկ, Մարտիրոս եւ Վարդանուշ Տարագճեաններ, Երուանդ եւ Վարդուիի Տէրենց, Էլիզ եւ Պետրոս Փամպուքեան, Ալիս, Արմէն, Գրիգոր, Մարի, Սօնա, Մարի, Նուպար եւ Սեդա Փողարեաններ, Գէորգ եւ Սիրվարդ Քեհիպայեան:

14 Յունիս 1956ին, ԱՎՆ կը տօնէ Միութեան յիսնամեակը<sup>87</sup>. բացումը կը կատարէ Մուրատեան երգչախումբը՝ Եթովպիոյ եւ ՀԲԸՄի քայլերգերով: Բացման խօսքին մէջ, Պեհեսնիլեան իմիջիայլոց կը վկայակոչէ նախագահ Ալեք Մանուկեանի հանգանակութեան եւ անդամագրութեան նպատակները: Այնուհետեւ Ա. Պեհեսնիլեան ջութակով կը նուագէ դասական կտոր մը, դաշնակի ընկերակցութեամբ Ուինկարտի: Օրուան բանախօս՝ Պօղոս Եղիայեան կը ներկայացնէ միութեան յիսնամեայ կենսագործունէութիւնը: Կարճ դադարէ մը ետք, յայտագրին երկրորդ մասով լարային քառեակը (Լենա Նալպանտեան՝ դաշնակ-Է. Ճերահեան-Յ. Նալպանտեան՝ ջութակ-Ե. Ստենկըր՝ թաւջութակ) ելոյթ կ'ունենայ, Մ. Քէօշկէրեան «հասկացողութեամբ կ'արտասանէ անմահն Վահան Թէքէեանի Հաշուեյարդար»ը: Յայտագիրը կ'աւարտի Մուրատեան երգչախումբին կատարած երկու «հայաստանեան երգեր»ով, դաշնակի ընկերակցութեամբ Լենա Նալպանտեանի եւ ղեկավարութեամբ Ն. Նալպանտեանի: Պահպանիչը կ'արտասանէ Աւագ քինյ. Կեւիէրեան: Կը կատարուի նաեւ հոգեհանգիստ՝ Միութեան հանգուցեալ հիմնադիրներուն եւ բարերարներուն:

<sup>87</sup> Ձեռնարկը տեղի կ'ունենայ WMCAի սրահին մէջ: Բեմին վրայ Միութեան զինանշանը գծած էր Պետրոս Գարիպեան:

1955ի տարեկան հաշուեկշիռն կը պարզուի որ անդամներուն թիւը բարձրացած էր 103էն 107ի<sup>88</sup>: Կը պարզուի նաեւ որ մասնաճիւղը ունէր նաեւ դրամատնային հաշիւ<sup>89</sup>:

ՀԲԸՄ Նիւ Եորքի կեդրոնէն եկած երկրորդ մեծ փոփոխութիւնը կ'անջուէր հանգանակութեանց օգտագործման: 1956ի ՀԲԸՄի Ընդհանուր Ժողովին, Ալեք Մանուկեան բացուած կը հռչակէր յոբելենական տարին եւ կէս միլիոն տոլարի հանգանակութեան ու անդամարշափ կը նախաձեռնէր: Մանուկեան Եգիպտոսի շրջանակին ուսերուն կը դնէր 120,000 տոլարի քոթա մը, որ պէտք էր գոյացուէր Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Եգիպտոսի այլ քաղաքներու, Լիբանանի, Սուրիոյ, Իրանի, Եթովպիոյ, Սուտանի եւ Կիպրոսի մէջ: Ան կ'ընդգծէր, թէ «իւրաքանչիւր շրջանակին մէջ գոյանալիք գումարը պիտի գործածենք ի՛ր տեղւոյն վրայ...»: ՇՅն իրեն բաժին ինկած քոթայէն ԱՎին բաժին կը սահմանէ 7500 տոլար, զոր ԱՎն «շափ ծանր [կը գտնէ]... աչքի առջեւ ունենալով... գաղութին նիւթական վիճակը եւ ունեցած պարտականութիւնները հանդէպ Ազգ. Վարժարանին, Եկեղեցիին, Ակումբին եւ տեղական ձեռնարկներուն»: Այդուհանդերձ, կը խոստանայ ջանալ «կարելին» ընել, մանաւանդ որ գումարը պիտի գործածուէր տեղական կարիքներուն, ինչ որ խթան մը կը նկատուի:

22 Յունիս 1957ին ի ներկայութեան Մամբրէ սրբ. Սիրունեանի, կը կազմուի նոր վարչութիւն (Ս. Պեհեսնիլեան՝ ատենապետ, Պ. Պապայեան՝ փոխատենապետ, Հ. Ուզունեան՝ ատենադպիր, Պ. Եղիայեան՝ փոխատենադպիր, Լ. Երզնկացեան՝ գանձապահ, Մ. Տարագճեան-Ի. Ճերահեան՝ խորհրդականներ): Տեղւոյն վրայ 20 անձեր կ'անդամագրուին ՀԲԸՄին: ՇՅն ԱՎին եւ վարժարանին կը դրկէ Հայ Ազգային Հիմնադրամին հրատարակած Հրանդ Ք. Արմէնի *Մեծն Տիգրան*<sup>90</sup> հատորէն մէկական օրինակ: ԱՎն

---

<sup>88</sup> Նոր անդամներն էին.- Յարութիւն Անդրանիկեան, Գառնիկ Թոփալեան, Սեզա Ուզունեան, Վահան Սարգիսեան, Մարի եւ Սոնա Փողարեան, իսկ հրաժարած միակ անդամը եղած էր Մարի Պաղտասարեան: Մասնաճիւղին 107 անդամներէն ամսական կը գոյանար 202,25 եթ. թալէր: Այսթիւր յաջորդ տարի կ'իջնէ 90ի:

<sup>89</sup> 1957ին կը փակուէր 15 տարի տեսած եթովպաբնակ Միսաք Մելիքեանի դատը՝ ժառանգորդներուն եւ ՀԲԸՄի միջեւ, այն համաձայնութեամբ որ ՀԲԸՄին բաժին իյնայ 541 քառ. մէթր հող, վրայի շէնքերով, իսկ ժառանգորդներուն՝ 371 քառ. մէթր հող՝ վրայի շէնքերով: Մինչեւ դատին փակումը, սակայն, կալուածէն եկած հասոյթը (կալուածի վարձքերէն գանձուած 44646 եթ. թալէր) կը դրուէր վերոյիշեալ հաշիվին մէջ: Դատին՝ ՀԲԸՄ փոխանորդը եղած էր Ս. Պեհեսնիլեան:

<sup>90</sup> Գիրքը՝ երանաշնորհ Գարեգին Ա. կաթողիկոսի յառաջաբանով, ունեցած էր երկու հրատարակութիւն. առաջինը 1947ին, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն, իսկ երկրորդը՝ Սահակ-Մեսրոպ տպարանէն, Գահիրէ, 1957ին, իբրեւ Հայ Ազգային Հիմնադրամի մատենաշարի 20րդ հատոր:

կը վերամշակէ իր անադամացանկը եւ ՇՅին կը փոխանցէ 17 անդամի անուն, որոնցմէ 6ը մահացած<sup>91</sup>, 5ը՝ հրաժարած<sup>92</sup> եւ 6ը՝ մեկնած<sup>93</sup> էին:

Եթովպիոյ տնտեսական կացութեան ծանրացումին, ազգային կառոյցներու ծախքերու յաւելումին եւ հայօճախին նիւթական հնարաւորութիւններու նուազումին պատճառով, 19 Յունիս 1958 թուակիրով ԱՎն կը ստիպուի ՇՅին յայտնել թէ ԱՄի մուտքերուն 15 տոկոսի վար դրուիլն ու տեղական կարիքներուն յատկացուիլը անբաւարար են, բացատրելով որ վարժարանը 50,000 եթ. թալէր տարեկան պիտոճէ մը ունի, որուն միայն 20,000ը կը գոյանայ աշակերտական ամսավճարներէն, մնացեալը պէտք էր գոյանար այլ միջոցներով եւ կ'առաջարկէ որ եկամուտներուն 50%ը յատկացուի տեղական կարիքներուն, 1956էն սկսեալ<sup>94</sup>: Արդէն, 1957-58 եւ 1958-59 կրթաշրջաններուն ԱՄը 600ական թալէր յատկացուցած էր Ազգային Գէորգոֆ վարժարանին: ԱՎն կը նշէ թէ «բացարձակապէս անկարելիութեան առջեւ» է եկամուտները երկրէն դուրս հանելու՝ արգելիչ «խստագոյն օրէնքներու» պատճառով:

1960 Դեկտեմբերի անդամական ժողովին կ'ընտրուի նոր վարչութիւն, որ 3 Յունուարի նիստին կը կազմէ իր դիւանը (Պեհեսնիլեան՝ ատենապետ, Գէորգ Սվաճեան՝ փոխատենապետ, Մուշեղ Երեւանեան՝ ատենադպիր, Էլիաս Ճերահեան եւ Լեւոն Երզնկացեան՝ գանձապահներ, Պօղոս Եղիայեան եւ Մանուկ Խուտանեան), մինչ մասնաճիւղը կը հաշուէր 87 անդամ:

Կը թուի թէ այնուհետեւ գրեթէ անկարելի կը դառնայ Եթովպիոյ հայօճախին մէջ պարբերական հանգանակութիւններ կազմակերպելը: Արդարեւ, Մայիս 1962ին ԱՎն, արձագանգելով ՀԲԸՄի ձեռնարկած 150,000 տոլարի հանգանակութեան եւ ԱՄին նշանակուած 1500 տոլար քրթային, «ցաւ» կը յայտնէ թէ «...վարչութիւնս բացարձակ անկարելիութեան առջեւ է ...իրագործելու համար ...առաջարկը, նկատի ունենալով եթովպահայ գաղութի ներկայ վիճակը իր բոլոր մանրամասնութիւններով»: ԱՎն կը նշէ թէ «գաղութիս համար մղձաւանջ մըն է Ազգային Գէորգոֆ վարժարանը, որ հակառակ թափուած բոլոր ջանքերուն ամէն տարի հազարներով տղարներու բաց մը կը ներկայացնէ», եւ թէ՛ ԱՎն ստիպուած է դիմելու միշտ նոյն ընտանիքներուն, ու կը յուշէ «Ափրիկեան պետութիւններու մէջ հաստատուած օտարներու անորոշ վիճակ»ը, որուն հետեւանքով «գաղութիս ան-

<sup>91</sup> Յակոբ Երզնկացեան, Յովհաննէս քինյ, Կեռէրեան, Նշան Հիւրմիւզեան, Անդրանիկ Պեհեսնիլեան, Վահան Սիւրմէեան, Յարութիւն Անդրանիկեան:

<sup>92</sup> Եղիշէ Բարունակեան, Մարի Գոյումճեան, Անժէլ Հիւրմիւզեան, Նուպար, Մարի եւ Սոնա Փողարեաններ:

<sup>93</sup> Վահրամ եւ Ազնիւ Կէօքճեան, Հերի եւ Մանուշակ Պայրեան, Յովսէփ եւ Աօ Սվաճեան:

<sup>94</sup> ՇՅն համաձայն գտնուելով առաջարկին, զայն կը փոխանցէ Նիւ Եորք, որ կ'ընդառաջէ, որով, այնուհետեւ, տեղական անդամավճարներէն գոյացած գումարէն 1200 եթ. տոլար կը յատկացուի տեղի դպրոցին:

*դամներէն շարքեր կը պատրաստուին գաղթելու, մանաւանդ երիտասարդութիւնը,- եւ կ'եզրակացնէ՝ ներկայ պայմաններուն մէջ անկարելի է նման հանգանակութեան մը ձեռնարկել»:*

29 Մարտ 1963 թուակիրով ԱՎն կը յայտնէ ՇՅին թէ գաղտնի քուէարկութեամբ ընտրուած է նոր վարչութիւն 29 Դեկտեմբեր 1962ին, որուն անդամներն են.- Կորիւն վրդ. Մանուէլեան՝ նախագահ, Սամուէլ Պեհեսնիլեան՝ ատենապետ, Էլիաս Ճերահեան՝ փոխատենապետ, Մուշեղ Երեւանեան՝ ատենադպիր, Մանուկ Խուտանեան՝ գանձապահ, մատակարար Մելիքեան կալուածի, Վահագն Գարիպեան՝ գանձապահ, Ներսէս Նալպանտեան-Ասատուր Որբերեան-Լեւոն Երզնկացեան՝ խորհրդակալներ:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ



Ամփոփելով կրնանք ըսել, թէ 1906ին բջիջատրուած ՀԲԸՄ Եթովպիոյ մասնաճիւղը հայօճախին աճման, կազմակերպումի, զանազան խմբակցութիւններու եւ վարչութիւններու խաչաձեւեալ ալեկոծումներուն հետ կ'ենթարկուի տատանումներու, սակայն ՀԲԸՄի Գահիրէի երէց առաջնորդի դերը գրեթէ միշտ կը յաջողի վերականոնաւորել, յանձնառութեան վերակոչել մասնաճիւղը: Ատիս Ապեպայի ՀԲԸՄ վարչութիւնները կը յաջողին համերաշխական մթնոլորտ ստեղծել ու փոխակերպել «կոյր նախանձի ու ատելութեան» տրամադրութիւնները եթովպահայերուն եւ յառաջացնել օրինակելի հայօճախ մը:

Մասնաճիւղը պիտի ջրդեղուէր Երուսաղէմի Արարատեան որբանոցի 40 որբերէ կազմուած փողերախումբով, պիտի ենթարկուէր 1936ի իտալական ներխուժումին նախորդած թալանի ու իտալական գրաւման փորձութիւններուն, ապա նաեւ պիտի ջանար պատշաճիլ երկրին տնտեսական, քաղաքական, ընկերային այլատեսակ թաւալքներուն, պիտի կամրջէր ելթովպահայ նորահաս սերունդը Մելգոնեան Կրթական Հաստատութեան, իսկ ՀԲԸՄի միջոցով՝ համահայկական հանգանակութիւններու եւ յանձնառու պահել եթովպահայութիւնը՝ հայկական օրակարգերուն, Հայաստանին: Վարչութեան մէջ կոփուած դէմքեր պիտի համաեթովպահայ դիրքեր գրաւէին ու առաջնորդէին հայօճախը կարելի նուազագոյն ներհայկական մակընթացութիւններով:



Ուշագրաւ է նաեւ վարչութեան փոխակերպումը. այլազան հանգանակութեանց խճողումին դիմաց, ան տակաւ կ'արեւելէ իր առաջնահերթութիւնները՝ համահայկական առաջադրանքներու կողքին ամրագրելով նաեւ հայօճախին Ազգային Գէորգով վարժարանի գոյատեւումը եւ այլ յառաջադրանքներ:

Եթովպահայության թիւ			
Տարի	Թիւ	Տարի	Թիւ
1911	80 արու անդամ	1946	850
1913	109 այր, 41 կին, 40 աղջիկ, 41 մանչ	1948	870
1916 Մայիս	70 այր, 45 կին ու 105 «տղայք»	1949	890
1929	Բաւական թիով թրքախօս հայեր	1950	900
1945	Շուրջ 850-900	1951-52	Շուրջ 900 հոգի


Եթովպիա դրկուած ՀԲԸՄ պատի օրացոյցներ					
Տարի	Քանակ	Արժէք	Տարի	Քանակ	Արժէք
1925	17	250 եգ. դ.	1932	90	2 շիլին
1926	20	10 եգ.դ.	1933	32	2 շիլին
1927	30	5 եգ. դ.	1934	84	2 շիլին
1928	21	10 եգ. դ.	1935	90	2 շիլին
1930	77				




ՀԲԸՄ Ատիս Ապեպայի մասնաճիւղին կնիքները



Ատիս Ապեպայի Հայկական Կրթարանի (1926) Հոգաբարձութեան եւ Եթովպահայ Գաղութային Ժողովի Ատիս Ապեպայի մասնաճիւղին կնիքները



Նիկ. Խաչատուրեանէն՝ Նազարէթ Տաղաարեանին եւ Օսնիկ Փափազեանէն՝ Պօղոս Նուպարին ուղղուած նամակները



12 Նոյեմբեր 1911ին, Ատիս Ապեայի ՀԲԸՄ մասնաճիւղի հիմնումին արձանագրութիւնը

**A MICROHISTORY OF THE AGBU CHAPTER OF ETHIOPIA  
(1906-1936/1944-63)  
(Summary)**

**Antranik Dakessian**  
adakessian@haigazian.edu.lb

Based on AGBU Cairo-located archival materials, the paper reconstructs the microhistory of the AGBU Chapter of Ethiopia from 1906 to 1936 and between 1944 and 1963.

The paper focuses on the activities of the chapter, which revolved around both collecting membership fees and fundraising as well as addressing local community needs like the construction of the school, the church and the community center along with the effort they made to maintain them. The paper highlights, as well, the challenges the Ethio-Armenians faced during the Italian invasion and subsequent occupation in the late 1930s. It narrates how the AGBU chapter was critical in resolving local intra-Armenian disagreements and in eventually transforming the community into a harmonious and family-like Diaspora subgroup.

The paper notes that due to the relations and network established by and through the AGBU Cairo chapter, the community was able to reorient its views and objectives in line with the shifts and changes in the Armenian Diaspora. The paper argues that the community was able to broaden its perspective, send some of the youngsters to the AGBU-held boarding school of the Melkonian Educational Institute in Cyprus, while secondary school graduates were able to study in Soviet Armenia, Europe and elsewhere.

The paper touches upon the dire economic conditions some of the community members faced and the difficult circumstances the community was confronted with in raising funds to address the needs of needy families and balance the community school budget. Eventually some 50% of the AGBU membership fees were earmarked for these needs.

# Les Arméniens en Éthiopie jusqu'au milieu du 20<sup>e</sup> siècle

Boris Adjemian

boris.adjemian@gmail.com

Écrire l'histoire des Arméniens en Éthiopie n'est pas une chose facile car cette communauté n'a jamais été importante au plan numérique et qu'elle a laissé très peu de traces tangibles. Constituée à la fin du 19<sup>e</sup> siècle par des familles venues en particulier de la région d'Arabkir, dans l'ancien vilayet ottoman de Kharpert, la communauté fut élargie après la Première Guerre mondiale par un nouvel afflux d'immigrants arméniens, dont de nombreux originaires d'Ayntab (dans le vilayet ottoman d'Alep), jusqu'à atteindre à son apogée un effectif d'environ 1200 personnes. La révolution de 1974, qui mit fin à la monarchie éthiopienne et lui substitua un régime dictatorial d'inspiration marxiste, le *Därg*, porta un coup fatal à la communauté arménienne, qui ne compte pas plus de 80 personnes à l'heure actuelle, toutes résidentes à Addis Abeba.<sup>1</sup>

Dans l'historiographie de l'Éthiopie, la présence arménienne est généralement décrite à la manière d'une diaspora marchande ou d'une minorité intermédiaire, c'est-à-dire essentiellement scrutée à travers ses activités commerciales et son implication dans les métiers de l'artisanat.<sup>2</sup> Ce regard univoque est imputable aux sources européennes des 19<sup>e</sup> et 20<sup>e</sup> siècles. Celles-ci confondent le plus communément Arméniens, Grecs, Indiens, Arabes et autres "Levantins" ou "Orientaux", qui ont longtemps constitué la part la plus importante des étrangers dans ce pays et qui, contrairement à la majorité des Européens, n'étaient pas tenus pour des *färändj* (littéralement des "Francs", c'est-à-dire des "Blancs" ou des « étrangers » – le sens du mot peut être discuté).<sup>3</sup> Les Arméniens ont été le plus souvent décrits comme une sorte de chaînon intermédiaire dans les relations établies entre les Européens d'un côté et les Éthiopiens de l'autre, sans que la spécificité de leurs propres rapports entretenus au sein de la

---

<sup>1</sup> Les références citées dans cet article sont volontairement parcellaires. Pour de plus amples informations bibliographiques, voir Boris Adjemian, *La fanfare du négus. Les Arméniens en Éthiopie (XIX<sup>e</sup>-XX<sup>e</sup> siècles)*, Éditions de l'EHESS, Paris, 2013.

<sup>2</sup> Les publications de Richard Pankhurst sont très illustratives de cette tendance. Voir notamment "The History of Ethiopian-Armenian Relations," *Revue des Études arméniennes*, 12:1977, p. 273-345, Ibid. 13:1978-79, p. 259-312, Ibid. 15:1981, p. 355-400.

<sup>3</sup> Wolf Leslau, *Concise Amharic Dictionary*, Harrassowitz, Wiesbaden, 1976; Marcel Cohen, *Couplets amhariques du Choa*, extrait du *Journal Asiatique*, Paris, Imprimerie Nationale, 1924, p. 27, 30-32.

société de résidence fassent l'objet d'une étude et d'une analyse. Or, l'originalité de la situation des Arméniens en Éthiopie au 20<sup>e</sup> siècle réside justement dans le fait qu'ils n'étaient pas à proprement parler considérés par les habitants du pays comme des *färändj*, ni comme des *habäsha* (ou "Abyssins").<sup>4</sup> Plus justement, les immigrants arméniens et leurs descendants ont été – et sont encore dans une certaine mesure – perçus comme situés à une place indéfinissable entre le *färändj* et le *habäsha*, mettant les individus dans une espèce d'entre-deux symbolique et identitaire. C'est précisément cet entre-deux, cette incertitude qui complique la tâche de l'historien. Celui-ci, en effet, est confronté à l'écriture de l'histoire d'un groupement qui, à bien des égards, échappe à la simplicité des catégorisations ethniques ou nationales habituelles.

Une des difficultés majeures d'une telle recherche historique est qu'il existe très peu d'archives disponibles. Les Arméniens en Éthiopie n'en ont presque pas produit. Les sources officielles (éthiopiennes, européennes) recèlent très peu d'éléments sur la présence des Arméniens dans ce pays. Ceci ne signifie pas qu'il n'existe pas d'archives à ce sujet. On trouve par exemple des informations dans les archives diplomatiques ou coloniales françaises, italiennes, britanniques, allemandes, américaines et même, comme l'a mentionné le récent colloque de l'université Haigazian,<sup>5</sup> dans les archives de la prélatrice arménienne du Caire ou celles de l'époque soviétique à Erevan. Néanmoins, l'histoire d'une petite communauté diasporique comme les Arméniens en Éthiopie ne peut pas être étudiée par le seul truchement de ce type d'archives. Il faut aussi diversifier les regards, adopter un point de vue critique sur les sources, ne pas prendre pour argent comptant les lieux communs qu'elles véhiculent. De plus, l'importance des travaux de terrain est essentielle car c'est de là – et non des fonds d'archives officielles – que surgissent les questionnements les plus stimulants. Sur le terrain, l'historien en quête du passé d'une communauté diasporique dont la présence ne se lit plus qu'en pointillés est, d'une certaine manière, tenu de créer sa propre archive, en mobilisant des matériaux originaux qu'il met au jour au gré de ses rencontres et de ses trouvailles. Dans le cadre de mes recherches, les sources orales, les photographies conservées dans les familles ont, par exemple, eu une grande importance et ont permis d'enrichir la vision souvent

---

<sup>4</sup> Le terme *habäsha*, qui a donné le mot "abyssin", désigne les populations chrétiennes des hautes terres éthiopiennes et érythréennes, qui parlent des langues d'origines sémitiques dérivées du *ge'ez*: l'amharique (ou *amhareñña*) et le *tegreñña*.

<sup>5</sup> Conférence internationale sur les Arméniens d'Égypte, du Soudan et d'Éthiopie (Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ Հայերը), université Haigazian, Beyrouth, 29-30 mai 2018.

simpliste qui ressortait des archives diplomatiques européennes, des chroniques royales éthiopiennes ou de la littérature de voyages.<sup>6</sup>

Ces questions méthodologiques sont illustrées de manière frappante par un événement très singulier de l'histoire de la présence arménienne en Éthiopie : la création de la fanfare royale du prince héritier d'Éthiopie, le *ras* Täfäri,<sup>7</sup> en 1924, avec quarante jeunes orphelins arméniens rencontrés à Jérusalem. Mis en perspective avec l'ancienneté des relations entre chrétiens éthiopiens et arméniens depuis l'époque médiévale, cet événement permet de réinterpréter les termes de l'accueil particulier qui a été réservé aux Arméniens en Éthiopie au tournant des 19<sup>e</sup> et 20<sup>e</sup> siècles, lorsque nombre d'entre eux entretenaient des liens étroits avec le palais impérial et l'aristocratie éthiopienne. Ces spécificités se reflètent dans les mémoires de l'immigration arménienne. Celles-ci tissent un Grand Récit idéal de l'amitié des rois d'Éthiopie pour les Arméniens, comme une traduction de la richesse des sociabilités nouées par les immigrants et leurs descendants au sein de leur société d'accueil.

#### LA FANFARE ARMENIENNE DU ROI D'ÉTHIOPIE: QUESTIONS ET INTERPRÉTATIONS

Les jeunes orphelins de la fanfare arménienne du *ras* Täfäri sont remémorés jusqu'à nos jours en Éthiopie sous l'appellation amharique d'*arba ledjotch* ("les quarante enfants"), laquelle était déjà en usage à la fin des années 1920.<sup>8</sup> Leur venue en Éthiopie est souvent mentionnée comme un événement de l'histoire de la musique moderne en Éthiopie,<sup>9</sup> également comme un épisode emblématique de l'histoire de l'immigration arménienne. Cette fanfare n'a jamais particulièrement intéressé les historiens qui ont écrit l'histoire des communautés étrangères en Éthiopie, le plus souvent sur la base des seules sources écrites européennes, et pour lesquels les Arméniens étaient avant tout des commerçants et des artisans. Pourtant, alors que les

---

<sup>6</sup> Adjemian, *La fanfare*.

<sup>7</sup> Fils du *ras* Mäkonnen qui avait longtemps été pressenti comme possible successeur de l'empereur Ménélik II (1889-1913), Täfäri Mäkonnen devint prince héritier et régent d'Éthiopie en 1916, au moment de l'intronisation de l'impératrice Zäwditu (1916-30), fille de Ménélik. Au sein du gouvernement éthiopien, il avait également la charge de diriger la politique étrangère de l'empire. Täfäri fut couronné *negus* en 1928 puis empereur sous le nom de Haylä Sellasē I<sup>er</sup> en 1930.

Յօդուածում քննարկում են զոյգ հայօճախների ինչպէս արտագաղթի պատճառներն ու բուն ընթացքը, այնպէս էլ դրա հետեանքով հայօճախների կազմալուծումը: Հայերի մեծամասնութիւնը հեռացաւ Քանաւա, Աստրալիա, ԱՄՆ եւ այլ երկրներ: Համառօտակի անդրադարձ է կատարում նաեւ այս եւ այլ երկրներում հաստատուած եթովպահայերի ու սուտանահայերի գործունէութեանը, բերում առանձին անձանց օրինակներ:

## ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵԹՈՎՊԻԱՅԻՑ

Եթովպիայի հայերի համար խոշոր փորձութիւն դարձաւ 1935ին իտալական զօրքերի յարձակումը: Ներխուժելով այս պետութիւն՝ ֆաշիստները 1936 Մայիսին գրաւեցին Ատիս Ապեպան: Երկիրը իտալացիների կողմից գրաւուած մնաց մինչեւ 1941: Հայ ընտանիքների մի մասը մայրաքաղաքի գրաւումից առաջ, մի մասն էլ յետոյ՝ հեռացաւ այստեղից: Գաղթելու հիմնական պատճառը ընկերային վիճակն էր եւ հայերի նկատմամբ զայրուածութիւնների բռնութիւնները: Իտալական զօրքերն Ատիս Ապեպայում բռնագրաւեցին հայկական դպրոցն ու յարակից շէնքը, ձերբակալեցին որոշ հայերի, իսկ պետական համակարգում աշխատողներն աքսորուեցին Իտալիա: Հայերի մի մասը մասնակցեց ֆաշիստների դէմ զինուած պայքարին, իսկ համայնքի որոշ անդամներ էլ փորձեցին համակերպուել ու նոյնիսկ

տնտեսական աշխուժ գործունեություն ծառայել իտալական տիրապետության պայմաններում<sup>1</sup>:

Եթե մինչև իտալական արշաանքն Ատիս Ապեպայում կար 200 հայ ընտանիք, ապա տնտեսական դժուարության, անապահովության պատճառով նրանցից 40ն արտագաղթեց: Հեռացածներից շատերը վերադարձան, երբ իտալացիները պարտուցին եւ իշխանությունը կրկին անցավ կայսերը<sup>2</sup>:

1941-74 ժամանակաշրջանը դարձավ Եթովպիայի հայօճախի հզորության ու ծաղկման գագաթնակետը<sup>3</sup>: 1945ին Եթովպիայի հայերի թիվը հազար էր (մինչև իտալական զինագրաւումը՝ միքանի հարիւրով ավել)<sup>4</sup>: 1956ին այստեղ կար 940 հայ, որոնցից 830ը բնակւում էր Ատիս Ապեպայում, 8ը՝ Տիրետաւայում<sup>5</sup>, 27ն էլ այլ բնակավայրերում: Եթովպիայի քաղաքացիութիւն ունէր 30 ընտանիք: 25-30 ընտանիքներ բաւականին խոշոր ձեռնարկութիւնների սեփականատէրեր էին<sup>6</sup>:

Ի տարբերութիւն Ափիւզի բազում այլ համայնքների՝ Եթովպիայի գաղութը, նոյնիսկ սառը պատերազմի ժամանակ, զերծ էր կուսակցական թեժ պայքարներից: Եգիպտոսի թեմի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանի բնորոշմամբ. «Չկան վէճեր, չկան պայքարներ, վասնզի չկան կուսակցութիւններ»<sup>7</sup>: Հետաքրքիր է, որ ոչ-մեծաթիւ Եթովպիոյ հայօճախը մտավախութիւններ էր առաջացնում թուրքական որոշ շրջանակներում: Մասնատրապէս Միլլիէթ թերթի խմբագրականում Եթովպիայի կայսեր Թուրքիա այցի առթիւ նշում էր. «Եթովպիոյ մէջ ներկայիս կ'ապրի հայերու սպորադ գաղութ մը, եւ այդ հայերը կրնան Թուրքիոյ դէմ գործել, հե-

<sup>1</sup> Աշոտ Աբրահամեան, *Համառօտ որուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հյր. Բ.*, Հայպետհրատ, Երեւան, 1967, էջ 94. նաեւ՝ Անդրանիկ Լ. Փոլատեան, *Պատմութիւն հայոց Արաբկիրի, հյր. Բ.*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն հայոց մեծի տանն Կիլիկիոյ, 2016, էջ 1218. նաեւ՝ James De Lorenzi, “A Cruel Destiny: The Armenian Stranger in Twentieth-Century Ethiopia”, *The International Journal of African Historical Studies*, 3(49):2016, էջ 415-20:

<sup>2</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Ջարթօնք*, 13 Յուլիս 1960, էջ 2: Իտալական գրաման շրջանում եղան Լիբանան ու Յունաստան տեղափոխուելու դէպքեր (De Lorenzi, էջ 414):

<sup>3</sup> De Lorenzi, էջ 420:

<sup>4</sup> Չնայած Եթովպիայում ԽՍՀՄ առաքելութեան առաջին քարտուղարի կազմած տեղեկանքում նշում է 2000 թիւը, դա չափազանցութիւն է (Հայաստանի Ազգային Արխիւ, ֆ. 326, ց. 1, գ. 37, թ. 1):

<sup>5</sup> 1957ին Տիրետաւայում կար 17 հայ ընտանիք՝ 48 հոգի, Հարար քաղաքում՝ բնակւում էին երկու հայեր («Հայերը Եթովպիոյ մէջ», *Ազրակ*, 26 Դեկտեմբեր 1957, էջ 3):

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 243, թ. 1:

<sup>7</sup> «Տեսակցութիւն գերշ. Տ. Մամբրէ արք. Սիրունեանի հետ», *Արեւ*, 31 Յուլիս 1959, էջ 2:

տնելով աշխարհի հայերուն հակաթուրք պայքարին, որ վերջերս բացուած է յոյներու գրգռութիւններով: Այս տեսակէտով ալ, Հայլէ Սելասիէի այցելութիւնը մասնատր կարեւորութիւն մը ունի»<sup>8</sup>:

Ըստ Մամբրէ արք.ի՝ 1959ին Եթովպիայի հայերի թիւը 1100 էր: Եթովպահայերն ապրում էին բարեկեցիկ, մեծամասնութեան զբաղմունքն առնուտուն էր: Նրանք կարեւոր դիրքեր ունէին կօշիկի արտադրութեան բնագաւառում, մեծ մասն ունէր սեփական տներ ու ինքնաշարժներ<sup>9</sup>: Նոյն տարի՝ 1959 Մայիսի 31ին կայացան գաղութային ընտրութիւններ, որոնցում քուէարկելու իրաւունք ունէր 362 հոգի, որոնցից մասնակցեց միայն 238ը<sup>10</sup>:

Սակայն աստիճանաբար հայերի կացութիւնը Եթովպիայում դառնում է անորոշ: Պատճառը եթովպացիների, այսպէս կոչուած, «ազգային զարթօնքն» էր, որի «առաջին թիրախներից մէկը դարձաւ բարեկեցիկ կեանքով ապրող, հարուստ, ազգային բոլոր կառոյցներն ունեցող հայութիւնը»<sup>11</sup>: Հայերը կարեւոր դեր ունէին առետրի ասպարէզում: Նրանք իրենց ձեռքերում էին կենտրոնացրել մեծ թուով ձեռնարկութիւններ, որոնք աչքի էին ընկնում լաւ կազմակերպուածութեամբ ու արդիւնաւէտութեամբ, նաեւ աշխատանքային պայմանների դրական կողմերով: Արդէն 1970ականների սկզբում հայերը ջանքեր էին գործադրում իրենց անշարժ գոյքը ոսկու, գումարի վերածելու համար, որպէսզի կարողանան փոխադրել երկրից՝ հնարատր ազգայնացման պարագայում<sup>12</sup>:

Սակայն արտագաղթի ոչ-եզակի օրինակներ դիտարկուում էին շատ անելի վաղ: 1951ին՝ 1920ականների սկզբին Երուսաղէմից բերուած որբերից Եթովպիայում էին 22ը, միաները մեկնել էին Սուրիա, Իրաք, Եգիպտոս<sup>13</sup>: Իսկ Ատիս Ապեայում հրատարակուող *Փիւնիկ*<sup>14</sup> պարբերականը իր տեղեկագրական բաժնում հրապարակում էր, թէ համայնքի ո՛ր ներկայացուցիչներն են մեկնում արտասահման՝ զանազան նպատակներով<sup>15</sup>: Արտասահմանում կրթութիւն ստանալը եւս նպաստում էր արտագաղթին: Եթովպահայերն ամազ դպրոց յաճախում եւ բարձրագոյն կրթութիւն էին ստա-

<sup>8</sup> «Թրքական նոր դաւ հայութեան դէմ», *Յուսաբեր*, 15 Մարտ 1967, էջ 2:

<sup>9</sup> «Տեսակցութիւն գերշ. Տ. Մամբրէ արք. Սիրունեանի հետ», էջ 2:

<sup>10</sup> Զաւէն վարդապետ, «Եթովպահայ կեանք», *Արեւ*, 17 Յունիս 1959, էջ 2:

<sup>11</sup> Խաչատուր Դադայեան, *Ակնարկներ հայ վաճառականութեան պատմութեան*, Հայրենիք ակումբ, Երեւան, 2009, էջ 22:

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 530, թ. 9-10, 14:

<sup>13</sup> «Հայերը ի պատուի՝ Եթովպիոյ մէջ», *Յուսաբեր*, 7 Օգոստոս 1951, էջ 2:

<sup>14</sup> Փիւնիկ.- Գրական-գեղարուեստական, տեղեկագրական պարբերագիրք, լոյս է տեսել 1958-62ին: Այն հրատարակել է Ազգային Գէորգոֆ վարժարանը. խմբագիրներ՝ Զաւէն աբեղայ Արզումանեան, Գ.Մ. Կարապետեան:

<sup>15</sup> «Տեղեկագրական», *Փիւնիկ*, Ատիս Ապեայ, 1958, թիւ 7, էջ 36. նաեւ՝ նոյն, 1959, թիւ 6, էջ 36. նաեւ՝ նոյն, թիւ 8-9, էջ 48. նաեւ՝ նոյն, 1960, թիւ 3, էջ 29:

նում Խորհրդային Հայաստանում, Մխիթարեան վարժարանում, Մելգոնեան Կրթական Հաստատությունում (ՄԿՀ)<sup>16</sup>, Անգլիայում<sup>17</sup> եւ այլուր: Նրանց մի մասը կրթություն ստանալուց յետոյ չէր վերադառնում<sup>18</sup>:

1961ին Եթովպիայում ԽՍՀՄ գրագրությունից պարզում է, որ բազմաթիւ հայեր կը ցանկանային հայրենադարձուել, սակայն քանի որ դա կապուած էր մի շարք դժուարությունների հետ (փաստաթղթերի ձեւակերպման համար երկար ժամանակ էր պահանջում)՝ շատերը փոխադրուում էին ԱՄՆ: Եթէ ԽՍՀՄ մեկնելու գործընթացը տեւում էր 8-12, ապա ԱՄՆի դէպ-

---

<sup>16</sup> 1930-2005՝ Եթովպիայից ՄԿՀ շրջանաւարտների թում եղել է 41 (27 մանչ, 14 աղջիկ), Սուտանից՝ 2 (մէկական մանչ եւ աղջիկ) հոգի, իսկ թերաւարտ՝ Եթովպիայից՝ 51 (28 մանչ, 23 աղջիկ), Սուտանից՝ 3 մանչ (*Մելգոնեան Կրթական Հաստատութեան Յուշամատենան*, խմբ. եւ ծանօթ.՝ Եղիա Գայայեան, Պէյրուօ, 2010, էջ 404, 419, 445, 463):

<sup>17</sup> Կորին վրդ. Մանուէլեան, «Եթովպիոյ հայ գաղութը», *Սփիւռք*, Պէյրուօ, 15 Հոկտեմբեր 1965, էջ 7: Առաւել եւս, 1974ի յեղափոխութեան ժամանակ արտասահմանում գտնուողներից շատերը ետ չվերեդարձան (R. P. Sevdjian, "Remembering the Armenians of Ethiopia," May 6, 2015, <https://armenianweekly.com/2015/05/06/remembering-the-armenians-of-ethiopia/#ts-fab-bio-below-37606> (մատչում՝ 25.01.2022):

<sup>18</sup> Այդպիսի օրինակ է 1936ին Ատիս Ապեպայում ծնուած Վարդգէս Եղիայեանը: 11 տարեկանում նա տեղափոխուել է Կիպրոս, որտեղ սովորել է ամերիկեան դպրոցում, 1954ին անցել ԱՄՆ: Այստեղ սովորել է Պըրքլիի, Քալիֆորնիայի համալսարաններում, Սան Խոսէի Լինքընի իրաւաբանական դպրոցում, որտեղ ստացել է իրաւունքի դոկտորի կոչում: Նա դարձել է միջազգային իրաւունքի խոշոր մասնագէտ, հետագօտել է Հայոց Տեղասպանութեան պատմաիրաւական խնդիրները, որոնց վերաբերեալ հեղինակել է մի շարք հրապարակումներ: Եղիայեանը զբաղուել է մինչեւ Տեղասպանութիւնը ապահովագրական ընկերութիւններում ամրագրուած հայերի ունեցուածքի դատական հարցերով (Michael Bobelian, "Vartkes's List," *Legal Affairs*, March/April 2006, [https://www.legalaffairs.org/issues/March-April-2006/feature\\_bobelian\\_marapr06.msp](https://www.legalaffairs.org/issues/March-April-2006/feature_bobelian_marapr06.msp) (մատչում՝ 25.01.2022):

Նաեւ՝ «ԱՄՆ փաստաբանական խումբը հայց է ներկայացրել Թուրքիայում հայկական սեփականութիւնը վերադարձնելու համար», 14 Յուլիս, 2015, <https://armenpress.am/arm/news/812106/amn-pastabanakan-khumbay-hayc-enerkayacrel-turqiayum.html> (մատչում՝ 25.01.2022):

Մէկ այլ օրինակ է նկարիչ Ալեքսանդր Պողոսեանը: Նա ծնուել է 1937ին Ատիս Ապեպայում: 1955ին պետութեան օժանդակութեամբ մեկնել է սովորելու Լոնտոն, ապա 1957-66՝ ապրել Փարիզում: 1966ին վերադառնալով Ատիս Ապեպա՝ 3 տարի ուսուցանել է նկարչութիւն, ապա անցել ԱՄՆ: Այստեղ նա դասաւանդել է Հոուրտի համալսարանում (Perrin Lathrop, "Skunder Boghossian, Night Flight of Dread and Delight," <https://www.khanacademy.org/humanities/art-1010/global-vanguards/xdc974a79:ethiopia/a/skunder-boghossian-night-flight-of-dread-and-delight> (մատչում՝ 25.01.2022):

քում՝ միայն 2-3 ամիս: Տարեկան մօտ 15-20 հայ երիտասարդներ տեղափոխում էին ԱՄՆ<sup>19</sup>: Ըստ նոյն աղբյուրի՝ 1961ի դրությամբ Եթովպիայի հայերի 50%ը ծնունդ էր Օսմանեան կայսրությունում, 40%ը հենց Եթովպիայում, իսկ 10%ը այստեղ էր եկել Սուրիայից եւ Լիբանանից<sup>20</sup>:

Խորհրդային իշխանությունները չկարողացան հետետողական քաղաքականություն իրականացնել հայրենադարձության ուղղությամբ, ինչի հետեանքով ըստ Յովիկ Մելիքսեթեանի՝ 1962-82՝ Եթովպիայից ներգաղթեց միայն 4 հոգի (մէկ ընտանիք)<sup>21</sup>: Փաստօրէն հայրենադարձուել ցանկացող հայերը հանդիպում էին այն նոյն խոչընդոտներին, որոնք մենք տեսնում ենք այլ հայկական հայօճախների (Եգիպտոս, Ռումինիա, Յունաստան եւն.) պարագայում: Հետեաբար հայրենադարձության հարցում խորհրդային իշխանությունների վարած դանդաղկոտ ու անհետետողական քաղաքականութիւնը եւս կարող ենք դասել դէպի օտար երկրներ եթովպահայերի արտագաղթի պատճառների շարքին:

1961-62՝ Եթովպիայի հայերի թիւը ավելի քան 1200 էր<sup>22</sup>: Ըստ Եթովպիայում ԽՍՀՄ դեսպանության 1961ի տեղեկանքի՝ մօտ 800 հայեր առանց քաղաքացիութեան անձինք էին<sup>23</sup>, իսկ 450-500ը ունէին լիբանան-

---

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 292, թ. 2, 12: Այսպէս օրինակ, կառավարութեան կողմից օտարերկրացիների փոխարէն տեղացիներին աշխատանք տրամադրելու քաղաքականութեան պատճառով 1961 Մայիսին վաստակից զրկուած 9 հայեր, իմանալով, որ ԱՄՆ շատ աւելի հեշտ է տեղափոխուել քան ԽՍՀՄ, մեկնեցին այնտեղ: Մի խումբ երիտասարդ եթովպահայեր դիմել էին հոգեւոր առաջնորդին՝ խնդրելով պարզել հայրենադարձուելու հնարաւորութիւնները: Եւ նրանց համար անհասկանալի էր, թէ ինչու գրեթէ մէկ տարի առաջ ԽՍՀՄ քաղաքացիութիւն ընդունելու համար տեղի դեսպանատուն դիմած իրենց հայրենակցի հայցը դեռեւս չէր բաւարարուել: Առաջնորդը դեսպանութեան երկրորդ քարտուղարի հետ զրոյցում տեղեկացնում է նաեւ, որ շատ եթովպահայեր պատրաստ են իրենց ունեցուածքը վաճառել եւ այդ գումարներով տներ գնել կամ կառուցել Հայաստանում (նոյն, գ. 296, թ. 3):

<sup>20</sup> Նոյն, գ. 292, թ. 3:

<sup>21</sup> Յովիկ Մելիքսեթեան, *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1985, էջ 301: Հայրենադարձուելու մէկ դէպք էլ յայտնի է 1958ին («Տեղեկագրական», *Փիւնիկ*, 1958, թիւ 8, էջ 39):

<sup>22</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 292, թ. 3. նաեւ՝ «Հայերը Եթովպիոյ մէջ – գաղութը կը բաղկանայ 1200 հայերէ եւ վարժարանը ունի 170 աշակերտ», *Ազդակ*, 9 Նոյեմբեր 1962, էջ 3: Իսկ ըստ Էջմիածնի կաթողիկոսութեան տուեալների՝ 1961ին Եթովպիայի հովուութիւնն ունէր 1500 հաւատացեալ, ինչը չափազանցութիւն է (*Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ. ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա (1955-1994 թթ.): Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, կազմ.՝ Գ. Եազընեան, Մուղնի հրատ., Երեւան, 2008, էջ 927):

<sup>23</sup> Արդէն 1967ի տեղեկանքում քաղաքացիութիւն չունեցողների թիւը նուազելով հասել էր 600-650ի (նոյն, գ. 415, թ. 3):

եան, սուրիական, եգիպտական, իտալական, եթովպական եւ այլ երկրների քաղաքացիութիւն<sup>24</sup>: Արդէն 1966ին, հայերի թիւը, կրճատուելով, հասել էր 1050 հոգու, որոնցից 75ն ապրում էր Տիրետաւայում, իսկ միւսները՝ Ատիս Ապեպայում<sup>25</sup>:

Հայերը հիմնականում արհեստատորներ, մանր վաճառականներ, ոսկերիչներ, լուսանկարիչներ, դերձակներ, կօշկակարներ, ժամագործներ էին: Նրանց մէջ մեծ թիւ էին կազմում բարձր որակատրուում ունեցող մասնագէտները: Կային նաեւ ինքնաշաժ նորոգողներ, շինարարներ, քաղաքային տնտեսութեան աշխատողներ: Ըստ Եթովպիայում ԽՍՀՄ դեսպանութեան 1961ի տեղեկանքի՝ իշխանութիւնները սահմանափակում էին հայերի տնտեսական գործունէութիւնը<sup>26</sup>: Չնայած դրան դեռեւս 1970ականների սկզբում հայերը բաւական նշանակալի ներկայութիւն էին տնտեսութեան մէջ: Նրանք յատկապէս էական կշիռ ունէին կօշկի, տպագրական ու մսամթերքի արդիւնաբերութեան մէջ<sup>27</sup>:

Նշելի է, որ հայերը, զգալով երկրի անորոշ վիճակը, սկսեցին արտագաղթել դեռեւս մինչեւ 1974ի յեղափոխութիւնը: ԽՍՀՄ դեսպանութեան 1973ի յունիսեան տեղեկանքի համաձայն՝ Եթովպիայի քաղաքացիութիւն ունեցող հայերի համար անելի դժուար էր արտագաղթել երկրից քան միւսներին: Դա յատկապէս արտայայտուում էր իրենց հետ գոյք տեղափոխելու հարցում, չնայած որպէս կանոն խնդիրը հնարաւոր էր լինում լուծել պաշտօնատար անձանց կաշառելով: Եթովպահայերը իրենց ապագան համարում էին մշուշոտ ու յստակ գիտակցում, որ եթէ յոյները, իտալացիները եւ միւս փոքրամասնութիւնները կարող են յոյս դնել իրենց պետութիւնների վրայ, ապա իրենք որեւէ մէկին չեն կարող ապաւինել, ինչն, անշուշտ, նպաստում էր արտագաղթին: Այդպէս, 1972ի վերջում զգալի թուով հայեր գաղթեցին Աստրալիա, Քանաւա, Կիպրոս: Արդէն 1973ի կէսերին Եթովպիայում կար 560 հայ<sup>28</sup>:

Դեռ 1971ին Ատիս Ապեպայի Ազգային Գէորգոֆ վարժարանի հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցիչ Արսէն Աճեմեանը գրում էր. «Եթովպիոյ մօտ 1000 Հայերէն, մէկ-երկու տարուան մէջ, անելի քան 400 Հայեր, մեծ մասը երիտասարդներ, կին, աղջիկ, ինչու՞ պիտի արտագաղթէին դէպի Հիւսիսային Ամերիկա, Քանաւա, Աստրալիա: Ուր է այն մարմինը, այն «կառավարութիւնը», այն պետը, որ ըսէ մեզի. «Կա՛ց հա՛յ ժողովուրդ, քու տեղդ Հայաստանն է, մի՛ գաղթեր այլ տեղ...»<sup>29</sup>:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 292, թ. 5, 7:

<sup>25</sup> Մառ, «Ատիս Ապապայի հայ գաղութը», *Յուսաբեր*, 29 Յունուար 1966, էջ 3:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 292, թ. 3-4:

<sup>27</sup> Նոյն, գ. 530, թ. 9:

<sup>28</sup> Նոյն, թ. 4-5, 14-15:

<sup>29</sup> Արսէն Աճեմեան, «Համահայկական կեդրոնական մարմին», *Սփիւռք*, 6 Յունիս 1971, էջ 8:

Եթովպիայում ԽՍՀՄ դեսպանության 1973ի վերոնշյալ տեղեկանքի համաձայն, տեղի բնակչության զգալի մասը հայերի նկատմամբ ուներ բացասական, նոյնիսկ թշնամական վերաբերմունք: Եթովպացի գործարարները նախանձում էին հայերին, իսկ «աղքատ դասակարգն այրում էր հայերին հարստության պատճառով եւ սպասում վրէժի»<sup>30</sup>: Խօսելով եթովպահայության հաւանական ապագայի մասին՝ ԽՍՀՄ դեսպանության երրորդ քարտուղարը նշում էր, որ չնայած համայնքի ամրութեանն ու եթովպական տնտեսութիւնում հայերի զբաղեցրած դիրքերին՝ զաղութի դրութիւնը բարդ է եւ քիչ հեռանկարներ ունի: Սովորական բնակչության շրջանում հայերի հանդէպ բացասական վերաբերմունքի կողքին վերջին շրջանում այդպիսի տրամադրութիւնները տարածուում էին նաեւ ունեւոր եւ իշխող խաւերի մէջ: Հայ ձեռնարկատէրերի համար գործելու պայմանները տարէցտարի վատթարանում էին<sup>31</sup>:

Հայերը վախենում էին, որ Հայլէ Սելասիէ կայսեր մահից յետոյ իրենց դրութիւնը կարող է կտրուկ վատանալ: Եթովպիայի քաղաքացիութիւն ունեցողները երկիւղում էին, որ իրենց ողջ գոյքը կարող է ազգայնացուել, մինչդեռ օտարերկրեայ անձնագրեր ունեցողները կը կարողանային իսկոյն լքել երկիրը, միաժամանակ նրանք արդէն նախապատրաստուում էին իրենց ունեցուածքը երկրից դուրս բերելուն: Դրա համար վերջիններս վաճառում էին իրենց գոյքը՝ այն վերածելով ոսկու ծովակտորների կամ միջազգային տարադրամի, անօրինական ճանապարհով դուրս էին բերում թանկարժէք իրերն ու օտար տարադրամով գումարները՝ դա անելով ազգականների, ընկերների, ծանօթ դիւանագէտների ինչպէս նաեւ եթովպական մաքսատան աշխատակիցներին կաշառելու միջոցով<sup>32</sup>:

1972ի վերջ-1973ի սկզբում, նախապէս լուծարքի ենթարկելով իրենց գործերը եւ վաճառելով ունեցուածքը, մի շարք մեծահարուստ հայ ընտանիքներ արտագաղթեցին Աստրալիա, ինչպէս նաեւ Քանադա եւ Կիպրոս: Ստեղծուած ծանր կացութիւնը քննարկելու համար 1972 Նոյեմբեր-1973 Փետրուար ամիսներին հայօճախի խորհուրդը միքանի նիստեր գումարեց, սակայն որեւէ յստակ որոշման չկարողացաւ յանգել: Եթովպիա-

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 530, թ. 10-11:

<sup>31</sup> Նոյն, թ. 13: Հայերի հանդէպ որոշ չափով վերապահ վերաբերմունքի մասին խօսում է նաեւ դեռ 1958ին Եթովպիա այցելած Դերենիկ եպիսկոպոսը՝ նշելով, որ չնայած եթովպացի հոգեւորականները համակրական վերաբերմունք ունեն հայերի հանդէպ, «բայց երբեմն անոնցմէ ոմանք անուղակիօրէն դիպրողութիւն կ'ընէին ըսելով որ հայեր ընդհանրապէս իրենց առեւտրորին եւ անձնական շահերուն հետամուտ են, շար չեն հետաքրքրուիր հապէշ ժողովուրդով եւ անոնց հաստատութիւններով, եւ թէ ամփոփուած են իրենք իրենց մէջ» (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», Արեւ, 16 Դեկտեմբեր 1960, էջ 2):

<sup>32</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 530, թ. 14-15:

յում ԽՍՀՄ դեսպանութեան 1973 յունիսեան տեղեկանքում կանխատեսում էր, որ հայերի արտագաղթը շարունակուելու է<sup>33</sup>:

1972-74՝ երաշտի պատճառով Եթովպիայում հազարավոր մարդիկ սովամահ եղան: Դրա, երկրում տիրող աատատիրական կարգերի, ընկերային ծայրայեղ անհասարկութեան պատճառով՝ 1974ին սկսուեց քաղաքացիական պատերազմ: Ըստ Եթովպիայի հայ ազգային խորհրդի նախագահի՝ այս իրադարձութիւնների հետեանքով արդէն 1974 Յուլիսին 1250 հայերից մնացել էին 700ը: Նրանք հիմնականում գաղթում էին Աստրալիա եւ Քանատա<sup>34</sup>: Փոքր թիւ չէին կազմում նաեւ ԱՄՆ փոխադրուողները: Ընդ որում այդ պետութիւն գաղթողների զգալի մասը սկզբնական շրջանում նախ տեղափոխուում էր Սուտան, ապա Մ. Նահանգներ<sup>35</sup>:

1974ի իրադարձութիւնները նոր ազդակ հանդիսացան արտագաղթի համար, որը շարունակուեց յետագայ տարիներին: 1975ի մասնավոր գոյքի պետականացումից տուժեցին շատ հայեր, որոնք կորցրեցին հսկայական սեփականութիւններ: Ատիս Ապեպայում ազգայնացում ձուտ 50 ձեռնարկութիւններից 11ը պատկանում էին հայերին կամ կառավարում նրանց կողմից<sup>36</sup>: Հայերից պետականացման շրջանակներում խլուեց 156 տուն եւ 15 գործարան: Յոյներն ու իտալացիները, օգտագործելով այդ երկրների քաղաքացի լինելը եւ համապատասխան դեսպանութիւնների առկայութիւնը, կարողացան հայերի համեմատ սակաւ կորուստներ ունենալ, նրանց ունեցուածքի մի մասն ազգայնացումից յետոյ փոխհատուցուեց<sup>37</sup>: Սակայն արտագաղթի թուրը այս երկու ազգութիւնների պարագայում էլ խիստ մեծ էին: Մօտ երկու տարում 8000 իտալացիներից մնացել էր 2000ը, իսկ 5000 յոյներից՝ 150ը<sup>38</sup>:

Միայն 1976ին 350 հայեր դիմել էին Քանատա տեղափոխուելու համար. «Արտագաղթին պատճառը, անշուշտ, 1974ի զինուորական յեղաշրջումն է որ կայսրին վարչակարգը փապալելով զինուորական խմբակի մը յանձնեց երկիրը: Նոր իշխանութեան գլխավոր նպատակն է Եթովպիան 20րդ դարու մարքսիստ ընկերութեան մը վերածել»<sup>39</sup>: 1977ի քաղաքական

<sup>33</sup> Նոյն, թ. 15:

<sup>34</sup> Նոյն, ֆ. 709, ց. 5, գ. 21, թ. 7:

<sup>35</sup> *Encyclopedia of American Immigration*, ed. by Carl L. Bankston III, Salem Press, California; New Jersey, 2010, էջ 334:

<sup>36</sup> Հայերը մեծապէս տուժեցին նաեւ հողի ազգայնացումից: Օրինակ Պօղոսեան ընտանիքը ուներ 2,4 մլն. քառակուսի մետր տարածք՝ աւել քան կայսրը ինքը, որը եւս ազգայնացուեց (De Lorenzi, էջ 425-6):

<sup>37</sup> Markus Haile, “Ethiopia’s Armenians – A Lost Diaspora? A Study of the Role of Identity in the Armenian Diaspora”, Department of Social Anthropology Bachelor’s thesis, Stockholm University, 2006, էջ 7:

<sup>38</sup> Ա. Ա., «Եթովպիոյ հայերը», *Հայրենիք*, 14 Հոկտեմբեր 1976, էջ 3:

<sup>39</sup> Նոյն:

իրադրության էլ անելի սրումը հարկադրեց այստեղ մնացածներին էլ արտագաղթել: Հերըլտ Թաքուշեանը որպես Եթովպիայից արտագաղթի հիմնական գործոն նշում է հենց 1977ի ընկերվարական յեղաշրջումը<sup>40</sup>: Մինչեւ 1991՝ Եթովպիան գտնուում էր քաղաքացիական պատերազմի մէջ, ինչն, իհարկէ, չէր կարող չազդել հայերի գաղթելու վարքի վրայ:

Եթի 1970ին հայերի թիւը 1191 էր, ապա 1980ականների կէտերին մնացել էր 150 հոգի<sup>41</sup>: Ըստ Եթովպահայ Աւետիս Թերզեանի՝ 1979ի ամռանը մնացել էր 200 հոգի, միւս 1000ը արդէն Մոնրէալում, Լոս Անճելըսում եւ Մելպուրնում էր<sup>42</sup>:

Չնայած տարբեր աղբիւրներում շարունակուում էր նշուել Եթովպիայում հարիրաւոր, նոյնիսկ անելի քան հազար հայերի առկայութեան մասին<sup>43</sup>, սակայն Ի. դարավերջ-ԻԱ. դարասկզբում այստեղ մնացել էր ընդամենը միքանի տասնեակ հայ: 2016ին հայերի թիւը մօտ 60 էր<sup>44</sup>:

Այդպիսով Եթովպիայի հայ համայնքն ամբողջովին կազմալուծուեց: Եթովպահայերը հաստատուեցին Աստրալիա, Քանադա, ԱՄՆ, նաեւ Ֆրանսա, Կիպրոս, Անգլիա, Ճիպոյթի<sup>45</sup> եւ տասնեակ այլ երկրներ:

Որպէս վերոշարադրեալի յետգրութիւն պէտք է նշել, որ 2018ից կրկին Եթովպիան յայտնուել է ծանր քաղաքական կացութեան մէջ: Դրութիւնը յատկապէս սրուեց 2020 Նոյեմբերին, երբ երկրի հիախի Թիկրէյի շրջանում տեղական եւ դաշնային իշխանութիւնների միջեւ հակասութիւնը վերաճեց զինուած հակամարտութեան: Պետութեան որոշակի հատուածներ էլ վերահսկուում են Օրոմոյի Ազատագրական Բանակի կողմից: Այս հակամարտութիւնում տեղի փոքրաթիւ հայերը պահպանուում են չէզոքութիւն: Ա-

---

<sup>40</sup> Harold Takooshian, “Armenian Immigration to the United States from the Middle East”, *Journal of Armenian Studies*, 1-2(3):1986-1987, էջ 139:

<sup>41</sup> De Lorenzi, էջ 434:

<sup>42</sup> “Avedis Terzian: Memories of Ethiopian–Armenian Relations” selected and transcribed by Richard Pankhurst and Kathy Marshall, *International Journal of Ethiopian Studies*, 1-2(8):2014, էջ 146:

<sup>43</sup> Տե՛ս օրինակ՝ Վարդգէս Համազասպեան, *Սովետական Հայաստանը եւ Սփիւռքը*, Գիտելիք, Երեւան, 1980, էջ 19. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2. նաեւ՝ Արմենակ Ոսկանեան, «Սփիւռքահայութեան թրակական կազմը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 9:1985, էջ 49. նաեւ՝ С. Брук, *Население Мира. Этнодемографический Сборник* (Աշխարհի բնակչութիւնը. Էթնօժողովրդագրական ժողովածու), Նաուկա հրատ., Մոսկուա, 1986, էջ 571:

<sup>44</sup> De Lorenzi, էջ 433: Ըստ Պորիս Աճեմեանի՝ 2015ին Առիւ Ապեպայում կար 80 հայկական ծագում ունեցող մարդ (Boris Adjemian, “Foreignness in Ethiopia, through the Eye of Armenian Diaspora”, *African Diaspora*, 8:2015, էջ 16):

<sup>45</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Ջարթօնք*, 11 Մայիս 1960, էջ 2:

տիս Ապեպան որտեղ ապրում է հայերի ճնշող մեծամասնությունը գտնուում է դաշնային իշխանությունների վերահսկողութան տակ<sup>46</sup>:

#### ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԵՏԵԿԱՆՔՆԵՐԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅՈՃԱԽՈՒՄ

Արտագաղթի հետեանքները տեսնելու համար ցուցանիշ է հայկական դպրոցի պատկերը: Ատիս Ապեպայի Ազգային Գեորգոֆ վարժարանը 1954ին ունէր 150 աշակերտ՝ ներառեալ մանկապարտէզի սաները<sup>47</sup>: 1958ին դպրոցի (ուներ 8 հիմնական եւ 6 այցելու ուսուցիչ) աշակերտների թիւը 170 էր<sup>48</sup>: Դրանից յետոյ տեսնում ենք անկումը. 1966ին այդ թիւը 150 էր<sup>49</sup>, իսկ 1976ին՝ արդէն 60<sup>50</sup>:

1974ին, իշխանությունները խլեցին նաեւ Գեորգոֆ դպրոցի շէնքը՝ որոշելով, որ այն շատ մեծ է հայերի համար: Դպրոցը փոխադրուեց այլ, ավելի փոքր շինություն: 2005ի դրութեամբ այստեղ սովորում էին միքանի հայերի եւ եթովպացիների ամուսնությունից ծնուած երեխաներ, միա աշակերտները եթովպացիներ էին: Հայոց լեզուն պարտադիր առարկայ չէր: Կային նաեւ երկու հայ ուսուցիչներ: Դպրոցը վերածուել էր եկամտի աղբիւրի՝ համայնքի համար, որից այն հոգում էր նաեւ եկեղեցու ծախսերը: Եթովպահայերի մեծ մասը նախընտրում էր իրենց երեխաներին տալ մասնաւոր դպրոցներ, որպէսզի յետագայում կարողանան սովորել արտասահմանում<sup>51</sup>:

Արտագաղթն անխուսափելիորէն նպաստում էր ծովման գործընթացին: Դեռեւս 1956ին, մամուլում կարդում ենք դժգոհություն թէ եթովպահայերը փոխում են իրենց հայկական անունները, զաւակներին յաճախ տալիս օտար անուանումներ<sup>52</sup>: Չնայած դրան, ուժացման գործընթացը դեռեւս չէր հասել մեծ ծաւալների: Դրութիւնը սկզբունքորէն փոխուեց զանգուածային արտագաղթի պայմաններում:

<sup>46</sup> Raffi Elliott, “Ethiopian Civil War Threatens Addis Ababa Armenian Community,” Nov 8, 2021, [https://evnreport.com/raw-unfiltered/ethiopian-civil-war-threatens-addis-ababa-armenian-community/?fbclid=IwAR2EYsrZv4HAIQz5oF2dQmN0WzbUBiKRdWRgw8\\_K4mKCuU bRb6XnAcGgC\\_M](https://evnreport.com/raw-unfiltered/ethiopian-civil-war-threatens-addis-ababa-armenian-community/?fbclid=IwAR2EYsrZv4HAIQz5oF2dQmN0WzbUBiKRdWRgw8_K4mKCuU bRb6XnAcGgC_M) (մատչում 25.01.2022ին):

<sup>47</sup> «Տեսակցութիւն Մամբրէ արք. Սիրունեանի հետ», *Յուսաբեր*, 25 Հոկտեմբեր 1954, էջ 2:

<sup>48</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 15 Դեկտեմբեր 1960, էջ 2:

<sup>49</sup> Մառ, էջ 3:

<sup>50</sup> Ա. Ա., «Եթովպիոյ հայերը», *Ազապ օր*, Աթենք, 29 Հոկտեմբեր 1976, էջ 2:

<sup>51</sup> Haile, էջ 10: Յատկանշական է, որ ունենալով փոքր թիւ, եթովպահայերը միշտ չէ որ կարողանում էին «արտադրել» սեփական կրթական մշակներին: Օրինակ 1972ին դպրոցի տնօրէն էր Լիբանանից եկած, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի շրջանաւարտ Անդրանիկ Եկէնեանը (Լեւոն Քեշիշեան, «Եթովպահայ գաղութը», *Յուսաբեր*, 31 Մարտ 1972, էջ 2):

<sup>52</sup> «Հայկական կեանք», *Ազապ օր*, Աթենք, 12 Նոյեմբեր 1956, էջ 3:

Եթէ մինչեւ արտագաղթը Հայկական Մարզական Միութիւնը գործում էր միայն իր անդամների համար, ապա դրանից յետոյ վերջինս ստիպուած էր բացել իր դռները բոլորի առջեւ: ԻԱ. դարասկզբում արդէն դրա հիմնական գործառոյթը ներքեւի հարկում գտնուող ճաշարանն էր<sup>53</sup>: Այսինքն կազմակերպութիւնը ստիպուած էր նաեւ վերափոխել իր համայնքային նշանակութիւնը:

Հայ Առաքելական Եկեղեցում գրանցուած տուեալներով 1979-94՝ այստեղ տեղի էին ունեցել 9 ամուսնութիւններ, 37 հոգի էր ծնուել եւ 55ը մահացել<sup>54</sup>: 2005ին Եթովպիայում կային 120 հայեր, որոնցից միայն 75ն էին «մաքուր» հայեր, միւսները ունէին խառը՝ եթովպական եւ հայկական ծագում, սակայն իրենք իրենց հայ էին համարում: Կարեւոր էր այն հանգամանքը, որ մնացած հայերի մեծ մասը այդ ժամանակ 60-80 տարեկան էր: Նրանց ընկերային դրութիւնը կարելի էր բնորոշել բարեկեցիկ, ունէին միջանի ձեռնարկութիւններ՝ դեղատուն, գորգերի, յուշանուէրների խանութներ, ատամնաբուժարան<sup>55</sup>:

Արտագաղթի հետեւանքով հայերի թիւն այնքան էր նուազել, որ ԻԱ. դարասկզբում համայնքում մնացած փոքրաթիւ երիտասարդների համար գրեթէ անհնար էր դարձել ամուսնանալ ազգակիցների հետ: Միաժամանակ երիտասարդ սերունդն աւելի անվստահ էր այդ երկրում իր ապագայի հարցում եւ հակուած՝ արտագաղթելու: Փաստացի՝ բոլոր եթովպահայերն ունէին աւելի շատ ազգականներ արտասահմանում, քան Եթովպիայում, ինչը եւս արտագաղթի մղող գործօն էր<sup>56</sup>:

Նշանաւոր սփիւռքագէտ Իսաչիկ Թէօլէլեանը Եթովպիայի հայ համայնքը բնորոշում է որպէս մնացորդային՝ այդ հանգամանքը բացատրելով նրանով, որ այդպիսի համայնքներն առկայ մարտահրաւերներին պատասխանում են ոչ թէ նոր կառոյցներ, մշակութային եւ ընկերային փորձառութիւններ կամ ինքնութիւն մշակելով, այլ արտագաղթելով<sup>57</sup>:

ԵԹՈՎՊԱՀԱՅԵՐՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ի տարբերութիւն սփիւռքահայ մի համայնքից միւսն արտագաղթած խոշոր խմբերի (օր.՝ լիբանահայեր, սուրիահայեր, իրանահայեր), աւելի դժուար է խօսել եթովպահայ սփիւռքի մասին: Դա առաւել հեշտ կարող էր լինել, եթէ նրանց բացարձակ մեծամասնութիւնը գաղթած լինէր մէկ, այլ վայրերից տեղափոխուած հայեր չունեցող, երկիր: Սակայն, քանի որ

<sup>53</sup> Haile, էջ 9:

<sup>54</sup> “The Armenians of Ethiopia,” 25.02.2005,

<http://ethiopundit.blogspot.com/2005/02/armenians-of-ethiopia.html> (մատչում 25.01.2022):

<sup>55</sup> Haile, էջ 6, 20, 22:

<sup>56</sup> Նոյն, էջ 17, 24:

<sup>57</sup> Khachig Tölölyan, “Elites and Institutions in the Armenian Transnation”, *Diaspora: A Journal of Transnational Studies*, 1(9):2000, էջ 112:

նրանք գնում էին Միջին Արեւելքից գաղթող հայերի համար ցանկալի այնպիսի «դասական» պետություններ ինչպիսիք էին Աստրախան, Քանատան, ԱՄՆը, ուստի դժուար է խօսել դրանցում եթովպահայերի, որպես մէկ ենթօճախի խմբի<sup>58</sup>, ոչ թէ անհատների մասին: Հետեւաբար կը բաարարուենք առկայ սահմանափակ որոշ տուեալներ ու միքանի անհատական դէպքեր ներկայացնելով:

1974ի յեղափոխութեան հետեւանքով Աճեմեանի բնորոշմամբ ստեղծուեց սփիւռքի սփիւռք, երբ եթովպահայեր հաստատուեցին Մարսէլում, Նիսում, Փարիզում, Սիտնիում, Լոս Անճելըսում, Նիւ Եորքում, Մոնրէալում, Վանքուվըրում եւն.<sup>59</sup>: Յիշատակման է արժանի, որ 2001ին Քալիֆորնիայում կազմակերպուել է ծագումով եթովպահայերի հաւաք, որին մասնակցել է 350 հոգի՝ 24 երկրներից<sup>60</sup>:

Արտագաղթած եթովպահայերից ոմանք աշխուժորէն ներգրաւում էին նոր երկրների հայկական համայնքային կեանքին: Այդպիսի օրինակ է նախկին եթովպահայ Մկրտիչ Մալխասեանը, ով Մոնրէալի ՀԲԸՄ վարչութեան ատենապետն էր<sup>61</sup>: Քանատայում է իվերջոյ հաստատուել նաեւ եթովպահայ համայնքի, տեղի ՀԲԸՄ մասնաճիւղի ղեկավարներից, տպագրութեան ոլորտի խոշոր գործարար Էլիաս Ճերահեանը: Վերջինս կարողացել էր յաջողութեամբ ձեռնարկատիրութեամբ զբաղուել նոյնիսկ իտալական գինագրաման տարիներին, իսկ դրանից յետոյ էլ ատելի ընդլայնել սեփական գործը, մեծ ներդրում ունեցել համայնքային կեանքում: Սակայն 1974ի յեղափոխութեանից յետոյ վերջինս կորցրեց իր ունեցուածքը, որդին նոյնիսկ բանտարկուեց, իսկ ազատ արձակուելուց յետոյ տեղափոխուեց Քանատա: 1988ին Է. Ճերահեանն էլ իր կնոջ հետ փոխադրում է զաւակների մօտ՝ Մոնրէալ, որտեղ էլ մահանում է<sup>62</sup>:

Արտագաղթելուց յետոյ Եթովպիայի հետ կամուրջները վերջնականապէս չայրելու տեսանկիւնից հետաքրքիր է Կարպիս Քէօրիաճեանի պատմութիւնը: Նա 1975ին որպէս փախստական դիմել է Նայրոպիում Քանատայի դեսպանատուն եւ տեղափոխուել այդ երկիր: Քէօրիաճեանի ընտանիքը զգալիօրէն տուժել էր ազգայնացումից: Առաջին անգամ 1987ին վերադառնալով Եթովպիա՝ վերջինս տեսնում է, որ նախկին իրականու-

<sup>58</sup> Չնայած դրան նկատում է ենթաէթնիկ խմբերին բնորոշ երեւոյթ՝ ամուսնանալու ձգտում միմեանց հետ՝ նոյնիսկ այլ երկրներում հաստատուելուց յետոյ (Haile, էջ 24):

<sup>59</sup> Boris Adjemian, “L’invention d’un homeland arménien en Éthiopie: Exil et sédentarité dans l’écriture d’une mémoire d’hôtes en diaspora”, *Tracés. Revue de Sciences humaines*, 2(23):2012, էջ 46:

<sup>60</sup> Haile, էջ 23:

<sup>61</sup> Թղթակից, «Յուշ երեկոյ՝ նուիրուած ողբ. Շահէն Շամլեանի յիշատակին», *Զահակիր*, 27 Մարտ 1980, էջ 2:

<sup>62</sup> Մանրամասն տե՛ս՝ De Lorenzi, էջ 405-35:

թինը լրիս փոխուել է: Չկային ո՛չ իր ընկերների մեծ մասը, ո՛չ «հայերի երեք սերունդների կողմից ստեղծուածը»: Նրա մօրաքոյրն ու վերջինիս եղբայրը բանտարկուել էին: 1976ից Քէօրհաճեանը հաստատուել էր Քանատայում եւ ամուսնացել եգիպտահայուիու հետ: Չնայած դրան, յետագայում պարբերաբար այցելում էր Եթովպիա եւ նոյնիսկ բարեգործական աշխատանքներ կատարում այնտեղ<sup>63</sup>:

Իսկ որոշ եթովպահայեր Քենիան չէին օգտագործում այլ երկիր տեղափոխուելու համար, այլ հաստատում էին հենց այնտեղ: Դա առանձնաբար վերաբերում է անելի վաղ շրջանին: 1957ին Նայրոպիում ապրում էին շուրջ 10 հայ ընտանիքներ, որոնց մեծամասնութիւնը 1930ականների Ատիս Ապեպայից էր գաղթել (միջանի ընտանիքներ էլ՝ Եգիպտոսից եւ Սուտանից)<sup>64</sup>: Նայրոպիում էր հաստատուել նաեւ Եթովպիայի կայսեր հովանաւորած 40 որբերից մէկը՝ Յարութին Թովմասեանը, ով զբաղում էր գործարարութեամբ<sup>65</sup>:

Յակոբ Զանազանեանը եղել էր Հայլէ Սելասիէ Ա.ի անձնական լուսանկարիչը: Յեղափոխութիւնից յետոյ նրանց ընտանիքը փոխադրուեց Աւստրալիա: Յակոբի որդին՝ Երուանդը այստեղ շարունակեց իւր գործը եւ դարձաւ ամէնաբարձր վարձատրուող հարսանեկան լուսանկարիչներից<sup>66</sup>:

1970-80ականներին ԱՄՆ էին տեղափոխուում մեծաթիւ հայեր Լիբանանից, Իրանից եւ այլ երկրներից: Այդ պայմաններում եթովպահայերի ունեցած ազդեցութիւնը համայնքի վրայ չէր կարող շօշափելի լինել: Հետեւաբար նաեւ սակաւ են տեղեկութիւնները: Այսպէս 1982ին Նիւ Եորքում ՀԲԸՄ ընկերային ծառայութիւնների ծրագրից օգտուած 433 հոգուց միայն 0,2%ն էր Եթովպիայից<sup>67</sup>: 2010ի մարդահամարի տուեալներով Լոս Անճելըսի շրջանում Եթովպիայից եկած հայերի թիւը 101 էր<sup>68</sup>:

---

<sup>63</sup> Haile, էջ 17-19:

<sup>64</sup> «Հայ գաղութ մը Հարաւ. Ափրիկէի մէջ», *Ազդակ*, 4 Սեպտեմբեր 1957, էջ 3:

<sup>65</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 1 Օգոստոս 1960, էջ 2:

<sup>66</sup> Ռուբէն Գիլմիսարեան, «Հայ լուսանկարիչների գերդաստանը, կամ ինչու հայերը փախան Եթովպիայից», 03.12.2017, <https://armeniasputnik.am/20171203/hay-lusanksrichneri-tohmy-kam-inchu-hayery-paxan-etovpiayic-9675659.html> (մատչում է՝ 25.01.2022ին):

<sup>67</sup> Takooshian, էջ 143:

<sup>68</sup> Ժան Գոսազեան, «Լոս Անճելըսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը», *Հայերը սեփական եւ այլազգի միջավայրում. համեմատական էթնօսոցիոլոգիական հետազոտութիւններ*, խմբ.՝ Ռ. Կարապետեան, Երեւան, 2014, էջ 127: 1998ին Քալիֆօրնիայի Սան Խոակին շրջանում իրականացուած հետազոտութեան ժամանակ հարցուած 294 հայերից միայն 1 տոկոսն էր ծնուել Եգիպտոսում կամ Եթովպիայում (Matthew A. Jendian, *Becoming American, Remaining Ethnic: The Case of Armenian-Americans in Central California*, LFB Scholarly Publishing LLC, New York, 2008, էջ 8):

Կան նաև որոշ տեղեկություններ Լիբանան<sup>69</sup>, Միացեալ Թագաւորութիւն<sup>70</sup> տեղափոխուած եթովպահայերի մասին: Հետաքրքրական է Եթովպիայից ԱՄՆ փոխադրուած, սակայն այժմ ՀՀում գործունէութիւն ծաւալող Ասպետ Փողարեանի պատմութիւնը: Վերջինս 1980ին աւարտել է Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ապա փոխադրուել ԱՄՆ: Ներկայում հաստատուել է ՀՀ Գօշ գիւղում, որտեղ իրականացնում է բարեգործական գործունէութիւն<sup>71</sup>:

### ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՍՈՒՏԱՆԻՑ

1939ին Սուտանում բնակում էր շուրջ 600 հայ<sup>72</sup>: Նրանց մէջ մեծ թիւ էին կազմում արաբկիրցիներն ու կեսարացիները<sup>73</sup>: 1950ին այստեղ կար

---

<sup>69</sup> Առեւտրական, ապա լուսանկարիչ Հրանտ Վառարանեանը արաբկիրցի եթովպահայ է, որը յետոյ տեղափոխուել է Պէյրութ (*Պատմութիւն հայոց Արաբկիրի*, էջ 1219): Յայտնի եթովպահայերից էր Մարտիրոս Տարագճեանը, ով մեծ յաջողութիւնների էր հասել կօշիկի արտադրութեան բնագաւառում, ունէր համապատասխան գործարաններ, սակայն 1975ի Փետրուարի 3ի ազգայնացման օրէնքով առաջիններից մէկը կորցրեց ողջ գործը: Դրանցի յետոյ նա 72 տարեկանում, ստիպուած գաղթեց նախ Լիբանան, ապա Կիպրոս ու Ֆրանսա, որտեղ էլ 1980ին մահացաւ («Սուրբ Էջմիածնի, Հ.Բ.Ը. Միութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան բարերարներէն Մարտիրոս Տարագճեան. անհետացող հայորդի մը», *Արեւ*, 2 Դեկտեմբեր 1980, էջ 2):

<sup>70</sup> Vered Amit Talai, “When Ethnic Identity is a Mixed Blessing: Armenians in London”, *Ethnos*, 1-2(53):1988, էջ 50: Լոնտոնի Թեքէեան Մշակութային Միութեան ատենապետ Վարդան Ուզունեանը զբաղւում էր գործարարութեամբ, մինչ Լոնտոնում հաստատուելը ապրել էր եթովպիայում: Ուզունեանը նաև *Էրեբունի* ամսաթերթի խմբագրական խորհրդի անդամ էր (ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 97, թ. 7):

<sup>71</sup> «Ամերիկահայ Փողարեանները գօշեցի կ'ուզեն դառնալ», 24.10.2021, [https://www.youtube.com/watch?v=0AxA9Wt\\_QMo&list=WL&index=130&t=1s](https://www.youtube.com/watch?v=0AxA9Wt_QMo&list=WL&index=130&t=1s) (մատչում 25.01.2022):

<sup>72</sup> Մանուկ Թաշճեան, *Հայահամար Եգիպտոսի եւ Սուրանի 1939*, Մատենաշար Ոսկետառ, թիւ 4, Տպ. Ոսկետառ, Գահիրէ, 1939, էջ 286: Ըստ նոյն աղբիւրի՝ բացի Խարթումից եւ Օմտուրմանից հայեր էին ապրում նաև Ապեշըր, Թենտելթի, Կետարէֆ, Հասահիսա, Մալաքալ, Մալլոթ, Մեֆազա, Միլինկան, Վատ Մետանի, Քասալա, Քոսթի, Քոտոք, Օպէյտ, Ֆաշըր քաղաքներում: Իտալական ներխուժումից տուժեց Քասալայի հայութիւնը: Եթէ 1936ին այստեղ ապրում էին երեք տասնեակ հայեր, ապա իտալացիների գրաւումից յետոյ մնաց մէկ հոգի: Թէպէտ անգլիացիները միքանի ամիս անց վերագրաւեցին քաղաքը, սակայն քշերը վերադարձան եւ 1959ին այնտեղ ապրում էր մէկ ընտանիք, որը սակայն եւս պատրաստում էր տեղափոխուել Խարթում (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 10 Յունուար 1961, էջ 2): Վատ Մետանիում 1930ականներին բնակում էր 35-38 հայ, որոնց թում Հալէպից եկած հայ կաթողիկէներ. յետագայում նրանց թիւը պակասեց (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 12 Յունուար 1961, էջ 2): Մալաքալի փոքրաթիւ հայերից 1959ին մնացել էր մէկ

մօտ հազար<sup>74</sup>, իսկ 1959ին՝ 800 հայ, որից 635ը՝ Խարթումում<sup>75</sup>: 1962ին հայերի թիւը չէր գերազանցում 800ը, որից 600ը բնակւում էր Խարթումում եւ Օմտուրմանում<sup>76</sup>: Նրանք զբաղւում էին արհեստներով եւ առեւտրով<sup>77</sup>:

Ըստ Սուտանում ԽՍՀՄ դեսպանութեան 1957ի տեղեկանքի՝ հայերը բաականին բարեկեցիկ էին եւ մաս էին կազմում միջին եւ բարձր դասակարգին, սակայն համայնքի անդամների մօտ առկայ էր մտահոգութիւն, որ իշխանութիւնները կարող են սահմանափակել օտարերկրացիների (այդ թւում իրենց) տնտեսական գործունէութիւնը եւ նոյնիսկ վտարել երկրից<sup>78</sup>:

1960ականների սկզբում Սուտանի կառավարութիւնը սկսեց ճնշել սուտանական քաղաքացիութիւն չունեցող հայերին, ուստի շատերն ընդունե-

---

հոգի. կային Օմտուրման, Եթովպիա, Մ. Նահանգներ արտագաղթի դէպքեր (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 13 Յունուար 1961, էջ 2):

<sup>73</sup> Զաւէն վրդ. Արզումանեան, «Սուտանահայ գաղութը այսօր», *Արեւ*, 2 Յունուար 1959, էջ 3:

<sup>74</sup> «Պր. Մարտիկ Զարպիանէլեան կը խօսի 'Զարթօնք'ի թղթակիցին. «Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ սուտանահայ գաղութի մասին», *Զարթօնք*, 5 Օգոստոս 1950, էջ 3: Ըստ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմատի 1945ի տեղեկանքի՝ Սուտանի հայերի թիւը 1500 էր, որը չափազանցութիւն էր (ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 53, թ. 5):

<sup>75</sup> «Սուտանի հայ գաղութը», *Յուսաբեր*, 21 Օգոստոս 1959, էջ 2:

<sup>76</sup> 1959ին Սուտանում եղած Դերենիկ եպիսկոպոսը գրում էր, որ հայերն աստիճանաբար Օմտուրմանից տեղափոխուել էին Խարթում: Նոյնն է պարագան Կետարէֆի, որտեղից եւս 1940ից սկսած հայերը տեղափոխուում էին մայրաքաղաք: Ընդ որում Կետարէֆում մնացածներից մի մասի երեխաներն ապրում էին Խարթումում, ոմանք սովորում էին Գահիրէի Գալուստեան վարժարանում, կամ մշտական բնակութիւն էին հաստատել Եգիպտոսում: Կար նաեւ ԱՄՆ փոխադրուելու պարագայ: 1930-1954՝ Կետարէֆում գործել էր հայկական դպրոց (աշակերտների թիւը տատանուել է 14-30ի միջեւ), որը փակուել էր արտագաղթի պատճառով՝ չկային բաւարար քանակութեամբ աշակերտներ (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 28 Դեկտեմբեր 1960, էջ 2, 4 եւ 7 Յունուար 1961, էջ 2):

<sup>77</sup> Սերգէյ Գասպարեան, *Սփիւռքահայ գաղթօճախներն այսօր*, Հայպետհրատ, Երեւան, 1962, էջ 176: Արդէն 1964ին Սուտանում ԽՍՀՄ դեսպանութեան տեղեկանքում որպէս հայերի հիմնական զբաղմունք նշում է առեւտուրը եւ մասնաւոր կազմակերպութիւններում աշխատանքը (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 69, թ. 4): Իդէպ մինչեւ 1946՝ Սուտանի ժամագործները հիմնականում եղել են հայեր (Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 24 Դեկտեմբեր 1960, էջ 3):

<sup>78</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 247, թ. 2-3: Հակառակ կողմից հենց այդ ժամանակ կարդում ենք. «Տեղոյն հայ գաղութը կը վայելէ կարգաւարտ ազգայութիւն եւ իշխանութեանց կողմէ կը վայելէ կարգաւարտ վստահութիւն» (Խորէն Տետէեան, «Սուտանահայ կեանք. շահեկան լուրեր Խարթումէն», *Զարթօնք*, 20 Մարտ 1957, էջ 2):

ցին այն<sup>79</sup>: ԽՍՀՄ դեսպանության 1967ի տեղեկանքի համաձայն այստեղի հայերի 95%ը Սուտանի քաղաքացի էր (բացառությամբ Լիբանանից եկած որոշ թուով հայերի)<sup>80</sup>: Դէպի Քանաթա եւ Աստրալիա արտագաղթի հետեանքով հայերի թիւը կրճատուեց՝ 1000ից հասնելով 500ի<sup>81</sup>: Շատ հայեր էլ ցանկանում էին հայրենադարձուել: Դրա հիմնական պատճառներից էին վերջին տարիներին տնտեսական վիճակի վատթարացումը եւ տեղական իշխանությունների կողմից վարուող սուտանականացման քաղաքականությունը, ինչի հետեանքով «հայերը ինչպէս այլ եւրոպացիներ» ենթարկում էին խտրականության<sup>82</sup>:

1967ին Խարթումի ազգային վարժարանի տնօրէն Օ. Գալուստեանը արտագաղթի մասին գրում էր. «Սուտանահայ գաղութէն, բազմաթիւ հայ ընտանիքներ մեկնեցան վերջնական ու դեռ ալ ով գիտէ պատրաստուողներ կան մեկնելու, իրենց ետին ու առանձին ձգելով սիրելիներ: Գաղութ մը, որ մէկ ընտանիքի անդամներու պէս կ'ապրէր: Մեկնեցան ու գացին շար-շարերու նման օտարութեան, խորթութեան ու անորոշութեան մէջ խարխալելու...»<sup>83</sup>:

Ինչպէս Եթովպիայում, Եգիպտոսում եւ այլ երկրներում՝ արտագաղթը բնորոշ չէր միայն հայերին, այլ ընդհանրապէս ազգային փոքրամասնութիւններին: Սուտանի անկախացումից ու յատկապէս 1969ի զինուորական յեղաշրջումից յետոյ շատ հրեաներ արտագաղթեցին Սուտանից՝ ինչը խթանում էին ընկերային օրէնքներն ու շարիաթը<sup>84</sup>:

1983ին Խարթումում կար մօտ 400,000 քրիստոնեայ<sup>85</sup>, որոնց մէջ ամէնամեծաթիւը ղպտիներն էին, ապա՝ կաթոլիկներն ու անկլիքանները: 1983ից յետոյ քրիստոնեաների թիւը կտրուկ նուազեց: Այդ ժամանակ 12-

---

<sup>79</sup> Նոյն ժամանակ կային որոշ թուով հայեր, ովքեր ունէին Արաբական Միացեալ Հանրապետութեան քաղաքացիութիւն (ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 69, թ. 1, 4):

<sup>80</sup> Չնայած Սուտանի հայերի համար հիմնական միտումն արտագաղթն էր, սակայն ժամանակաւոր աշխատանքի համար այստեղ էին գալիս հայեր Լիբանանից եւ Սուրիայից, «Սուտանի հայ գաղութը», *Հայրենիք*, 3 Մայիս 1980, էջ 7:

<sup>81</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 401, թ. 1, 5:

<sup>82</sup> Նոյն, թ. 5:

<sup>83</sup> Օննիկ Գալուստեան, «Կրթական եւ գաղութային գործունէութիւն (մասնաւոր թղթակցութիւն 'Ջահակիրի')», *Ջահակիր*, 23 Մարտ 1967, էջ 5:

<sup>84</sup> Jean-Marc Ran Oppenheim, "Egypt and the Sudan", *The Jews of the Middle East and North Africa in Modern Times*, Reeva Spector Simon, Michael Menachem Laskier, Sara Reguer (eds.), Columbia University Press, New York, 2002, էջ 430:

<sup>85</sup> Նկատի պէտք է առնել որ այս թիւի մէջ կային նաեւ քրիստոնեայ հարաւային սուտանցիներ:

15 հազար հաշուող յունական համայնքը ԻԱ. դարասկզբում բաղկացած էր միքանի հարիւր հոգու<sup>86</sup>:

1969 Մայիսի 25ին Սուտանում տեղի ունեցած յեղաշրջումից յետոյ՝ 1970 Մայիս–Յունիս ամիսներին ազգայնացուցին օտարերկրացիներին (նաեւ հայերին) պատկանող մի շարք մասնաւոր ձեռնարկութիւններ (մեծապէս տուժեցին թէ՛ խոշոր, թէ՛ միջին հայ գործարարները): Դրանից յետոյ բազմաթիւ հայեր արտագաղթեցին եւ համայնքի թիւը կտրուկ կրճատուեց: 1971 Յուլիսի 22ին նախկին վարչակարգի վերականգնումից յետոյ ազգայնացուած ձեռնարկութիւնները վերադարձուցին իրենց առաջուայ տէրերին<sup>87</sup>: Նոր տնտեսական քաղաքականութեան մէջ մեծ տեղ յատկացուեց արտասահմանեան ներդրումների խրախումանը: Տեղական, այդ թում հայկական, գործարարներն աշխուժօրէն սկսեցին օգտագործել իրենց կապերն օտարերկրեայ մենաշնորհատէրերի հետ: Արդիւնքում արտագաղթած հայերի մի մասը վերադարձաւ: 1972ին Սուտանում մնացել էր 350 հայ<sup>88</sup>, իսկ 1976ին՝ 300 (մօտ 80 ընտանիք)<sup>89</sup>:

Ըստ ԽՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի Ափրիկայի ինստիտուտի աւագ գիտաշխատող, 1976-77 Սուտանում ԽՍՀՄ հիւպատոսական կենտրոնի տնօրէն աշխատած Վ. Գուսարովի կազմած 1977ի Սուտանի հայ համայնքի մասին տեղեկանքի, տեղի հայերի մէջ մեծաթիւ էին բժիշկները, մասնաւոր ձեռնարկութիւնների վարչական աշխատողները, մտաւորականութեան ներկայացուցիչները: Խարթումում գործում էին հայերին պատկանող միքանի խանութներ եւ կրպակներ: Միաժամանակ կային նաեւ մեծահարուստներ, որոնց թում առանձնանում էր Կարօ Վանեանը, ով ուներ ձիարշաարաններ՝ ոչ միայն Սուտանում, այլեւ Փարիզում ու Աստրալիայում: Նա նաեւ ֆրանսական Peugeot ընկերութեան ներկայացուցիչն էր Սուտանում<sup>90</sup>:

Եթէ 1950ականներին Սուտանում կար 800 հայ, ապա 1973ին մնացել էր 350ը: Սա կապուած էր գոյքի ազգայնացման հետ: Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի 1976ի «Սուտանահայ գաղութը» տեղեկանքը վկայում է, որ տեղի հայերը ցանկանում են հայրենադարձուել, սակայն արտագաղթում են Քանաւա<sup>91</sup>: Շատ հայեր մեծ հարս-

---

<sup>86</sup> Anne Sofijie Roald, “Freedom of Religion in Sudan”, *Religious Minorities in the Middle East: Domination, Self-Empowerment, Accommodation*, Brill, Leiden, Boston, 2012, էջ 152:

<sup>87</sup> Յետագայում հայ գործարարները տեսանելի վայրերում տեղադրում էին լուսանկարներ, որտեղ Սուտանի ղեկավար Ճաֆար Նումէյրին իրենց է յանձնում սեփականութեան փաստաթղթերը (ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 217, թ. 3, 5, 6, 7):

<sup>88</sup> Լեւոն Քեշիշեան, «Սուտանի հայ գաղութը», *Հայրենիք*, 26 Մարտ 1972, էջ 2:

<sup>89</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 217, թ. 5-6:

<sup>90</sup> Նոյն, թ. 7-8:

<sup>91</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 212, թ. 6ա:

տութիւններ ունէին, ուստի այս տնտեսական քաղաքականութեան պայմաններում նախընտրեցին արտագաղթել Մ. Թագաւորութիւն, Քանաւա, Աւստրալիա, ԱՄՆ<sup>92</sup>:

Հայերի արտագաղթին նպաստեց նաեւ երկրի իսլամացման քաղաքականութիւնը: 1968ին իսլամը սահմանադրութեան մէջ ամրագրուեց որպէս իրաւունքի աղբիւր: Միաժամանակ այն դարձաւ պետութեան պաշտօնական կրօնը<sup>93</sup>:

Սուտանից հայերը գաղթում էին, քանի որ սեւամորթ սուտանցիները բացասաբար էին վերաբերում սպիտակամաշկներին եւ քրիստոնեաներին: Դա յատկապէս զգացուեց բրիտանացիների հեռանալուց յետոյ<sup>94</sup>: Շատ հայ երիտասարդներ էլ Սուտանից մեկնում էին Եւրոպա ու Ամերիկա կրթութիւն ստանալու եւ որպէս կանոն չէին վերադառնում<sup>95</sup>:

1984ին Սուտանում կար 180-200 հայ<sup>96</sup>: Նրանք մեծամասամբ վաճառականներ էին, կային նաեւ գրասենեակային աշխատողներ եւ արհեստատուներ<sup>97</sup>:

Այսպիսով Սուտանի հայերը արտագաղթեցին Միացեալ Թագաւորութիւն, Քանաւա, ԱՄՆ, Աւստրալիա, Եգիպտոս, նաեւ Եմէն<sup>98</sup>, Քուէյթ<sup>99</sup>:

Արտագաղթի հետեւանքով արդէն ԻԱ. դարասկզբում Սուտանում հայեր գրեթէ չէին մնացել: Չնայած դրան՝ յաճախ սովորոյթի ուժով հրապարակում էին հայերի ներկայութեան վերաբերեալ այնպիսի տուեալներ<sup>100</sup>, որոնք ակնյայտօրէն հաշուի չէին առնում տեղի ունեցած արտագաղթը:

---

<sup>92</sup> Նոյն, ֆ. 326, ց. 1, գ. 531, թ. 1:

<sup>93</sup> Takooshian, էջ 139. նաեւ՝ Roald, էջ 153:

<sup>94</sup> James Ray Kirkland, "Armenian Migration, Settlement and Adjustment in Australia, with Special Reference to the Armenians in Sydney," Ph.D. thesis, Australian National University, 1980, էջ 108. չնայած դրան՝ Աբրահամեանը գրում էր, թէ Սուտանի անկախացումից յետոյ հայերի դրութիւնը բարելաւուել է (Աբրահամեան, էջ 81-82): Սա թերեւս պայմանաւորուած էր նրանով որ խորհրդահայ պատմագրութիւնը ինչպէս այլ պետութիւններում (Ռումինիա, Պուլկարիա) ընկերվարական կարգերի հաստատումը ներկայացնում էր որպէս հայկական սփիւռքի համար դրական երեւոյթ, չնայած իրականութիւնը այդպէս չէր:

<sup>95</sup> «Սուտանի հայ գաղութը», Հայրենիք, 3 Մայիս 1980, էջ 7:

<sup>96</sup> Յակոբ Համբիկեան, «Սուտանահայութիւնը», Զարթօնք, 4 Սեպտեմբեր 1984, էջ 2. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 5, թ. 28:

<sup>97</sup> Կարլէն Դալլաքեան, Հայ սփիւռքի պատմութիւն (համառօտ ակնարկ), Հարչեայ Աճառեան Համալսարան, Երեւան, 1998, էջ 235:

<sup>98</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», Զարթօնք, 8 Մայիս 1960, էջ 2:

<sup>99</sup> Յակոբ Չոլաքեան, Ոսկեմարտեան Քուէյթի ազգային վարժարանի (1960-2010), հրատ. Քուէյթի ազգային վարժարանի հոգաբարձութեան, Քուէյթ, 2011, էջ 767:

<sup>100</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 19, թ. 2. նաեւ՝ Համազասպեան, էջ 19. նաեւ՝ Брык, էջ 550:

## ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՍՈՒՏԱՆԻ ՀԱՅՈՃԱԽՈՒՄ

Արտագաղթի հետեանքները, հասկանալիորէն ցայտուն կերպով առաջին հերթին երեւում են համայնքի անդամների թուի վրայ հայեացք նետելիս: Ըստ ՀԵՍԿ արտգործ նախարարութեան տեղեկանքի՝ 1965ին Սուտանի հայերի թիւը 600 էր<sup>101</sup>: Հինգ տարի անց հայերի թիւը 65-75 ընտանիք էր (350-400 հոգի)<sup>102</sup>, 1972ին՝ 350 հոգի<sup>103</sup>: Արդէն 1977ին Սուտանում կար 100 ընտանիք (300 մարդ), որոնց մեծ մասն ապրում էր Խարթումում եւ Օմտուրմանում, 7 ընտանիք՝ Կետարէֆում, 2ը՝ Վատ Մետանիում, 2-3ն էլ՝ Փորթ Սուտանում<sup>104</sup>: Յարանուանական տեսանկիւնից բացարձակ մեծամասնութիւնն առաքելադասն էր: 1959ին Սուտանում ապրող հայ կաթողիկէների ու բողոքականների թիւը ընդամենը 2-3 ընտանիք էր<sup>105</sup>:

Այս փոքրաթիւ հայօճախում էլ երբեմն առաջանում էին հակասութիւններ: Օրինակ խնդիրներ էին ծագել Մայիսի 28ը եւ Նոյեմբերի 29ը նշելու հետ: Մասնաւորապէս շուրջ 40 հոգի դժգոհ էին մնացել Մայիսի 28ի առթիւ պատարագ մատուցելու դիմումի չբաարարման հետեանքով<sup>106</sup>:

1980ին Սուտանի հայերի թիւը 250 էր: Որոշ թուով հայեր Սուրիայից եւ Լիբանանից մեկնում էին Սուտան արտագնայ աշխատանքի<sup>107</sup>: Արդէն 2009ին ըստ *Հայկական սփիւռք փարեգրքի* այդ երկրում կար 50 հայ<sup>108</sup>:

Ինչպէս որեւէ այլ համայնքի պարագայում՝ կարեւոր էր կրթական հարցը, ինչը նաեւ արտագաղթի հետեանքների կարեւոր ցուցիչ էր: 1954ին Խարթումի ազգային վարժարանն ուներ 125 աշակերտ<sup>109</sup>: 1956ին բացւում է Հայ ազգային վարժարանի նոր շէնքը<sup>110</sup>: Դպրոցում սովորում էին հայե-

<sup>101</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1:

<sup>102</sup> Ն. Բ., «Հարցազրոյց հոգշ. Տ. Ներսէս Ծ. վրդ. Բապունեանի հետ», *Ջահակիր*, 5 Փետրուար 1970, էջ 3:

<sup>103</sup> Քեշիշեան, «Սուտանի հայ գաղութը», էջ 2:

<sup>104</sup> Վահան Չեչէնեան, «Տասներկու որեր Խարթումի մէջ», *Արեւ*, 14 Փետրուար 1978, էջ 2:

<sup>105</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 2 Յունուար 1961, էջ 2: Ըստ Տ. Գէորգեանի, Սուտանի հայ կաթողիկէների թիւը Ի. դարավերջում հասնում էր 70ի, որը չափազանցութիւն է (Տիգրան Գէորգեան, *Եգիպտոսի հայ կաթողիկէ համայնքը (անցեալը եւ ներկան)*, Հ.Բ.Ը.Մ. «Սաթենիկ Ճ. Չազըր» հիմնադրամի հրատ., Գահիրէ, 2001, էջ 25):

<sup>106</sup> «Սուտանահայ գաղութի վարչութեան բացատրագիրը», *Յուսաբեր*, 4 Սեպտեմբեր 1959, էջ 2. նաեւ Գ. Ա. Պոտուրեան, Ա. Յարութիւնեան, «Կեանքը սուտանահայ գաղութին մէջ (կարեւոր ճշտում մը)», *Արեւ*, 29 Սեպտեմբեր 1959, էջ 2:

<sup>107</sup> «Սուտանի հայ գաղութը», *Յուսաբեր*, 10 Մայիս 1980, էջ 2:

<sup>108</sup> *Հայկական սփիւռք փարեգրք*, Պոլիգրաֆ Բիզնէս, Երեւան, 2009, էջ 225:

<sup>109</sup> «Տեսակցութիւն Մամբրէ արք. Սիրունեանի հետ», էջ 2:

<sup>110</sup> «Հայերն աշխարհում» *հանրագիտական համառօտ բառարան*, կազմողներ՝ Ամայիա Պետրոսեան, Ալբերտ Իսոյեան, Կոստանդին Խուրավերդեան, Հայագիտակ, Երեւան, 1995, էջ 92:

րէն, արաբերէն, անգլերէն, հայոց պատմութիւն, կրօն, աշխարհագրութիւն, գիտութիւն եւ երգեցողութիւն: 1959ին վարժարանը բաղկացած էր երկու մասից՝ մանկապարտէզ (3 դասարան) եւ նախակրթարան (5 դասարան), ունէր 33 աշակերտ<sup>111</sup>:

Մեծ խնդիր էր օտար դպրոցներ յաճախելը: 1959ին, մօտ 60 հայ աշակերտներ յաճախում էին այդպիսի կրթական հաստատութիւններ (այսինքն կրկնակի անգամ աւել քան հայկական վարժարան)<sup>112</sup>: Օրինակ, հայեր էին սովորում Խարթումի Անգլիական Աղջկանց Բարձրագոյն Վարժարանում, որը 1953ին ունէր 3 հայ շրջանաւարտ<sup>113</sup>:

1964-65 կրթաշրջանում Սուտանի հայոց վարժարանն ունէր 67 աշակերտ (48 մանչ եւ 24 աղջիկ՝ բաշխուած վեց դասարաններում), որոնցից 4ը այդ ուսումնական տարուայ ընթացքում արտագաղթել էին ընտանիքների հետ միասին: «Պարսամեան» մանկապարտէզն էլ ունէր 31 աշակերտ (20 մանչ ու 11 աղջիկ)<sup>114</sup>:

Համաձայն Խարթումի ազգային վարժարանի տնօրէն Գալուստեանի կազմած 1965-66 կրթաշրջանի տեղեկագրի՝ աշակերտների թիւը 63 էր, մինչդեռ նախորդ տարի եղել էր 67, իսկ դրանից մէկ տարի առաջ էլ՝ 70: Բացի նախակրթարանից՝ Պարսամեան մանկապարտէզն էլ 1965-66 կրթաշրջանում ունէր 15 աշակերտ: Ուսուցիչների թիւը 6 էր<sup>115</sup>:

Արդէն 1966-67 կրթաշրջանում աշակերտների թիւը 63ից իջել էր 61ի<sup>116</sup>: 1968-69 կրթաշրջանում նախկին 64ի փոխարէն աշակերտների թիւը հասել էր 58ի: Այդ մասին Գալուստեանը գրում է. «*Դժբախտաբար այս տարի ալ ունեցանք աշակերտներ, որոնք ցաւալի արտագաղթի պատճառով դադրեցան վարժարան յաճախելէ*»<sup>117</sup>: 1973ին դպրոցն ունէր 40 աշակերտ<sup>118</sup>:

1980ին աշակերտների թիւը 30 էր: Հայկական վարժարանն ասարտող աշակերտները յաճախում էին տեղական դպրոցներ, իսկ շատերը՝ համալ-

---

<sup>111</sup> Զաւէն վրդ. Արզումանեան, էջ 3:

<sup>112</sup> Դերենիկ եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 28 Դեկտեմբեր 1960, էջ 2:

<sup>113</sup> Վիէլ, «Հայ կեանքը Խարթումի մէջ», *Արեւ*, 9 Մարտ 1953, էջ 3:

<sup>114</sup> Օննիկ Գալուստեան, «Խարթումի ազգ. վարժարանի տարեկան տեղեկագիրը», *Արեւ*, 24 Մայիս 1965, էջ 2:

<sup>115</sup> Օ. Գալուստեան, «Տեղեկագիր Խարթումի հայոց ազգ. վարժարանի», *Յուսաբեր*, 21 Յունիս 1966, էջ 2:

<sup>116</sup> Օննիկ Գալուստեան, «Ստեփանեան ազգ. վարժարանի ուսման տեղեկագիր 1966-67 տարեշրջանի», *Ջահակիր*, 6 Յուլիս 1967, էջ 5:

<sup>117</sup> Օննիկ Գալուստեան, «Խարթումի հայոց ազգ. երկսեռ վարժարանի 1968-1969 տարեշրջանի ուսման տեղեկագիրը», *Ջահակիր*, 5 Յունիս 1969, էջ 5:

<sup>118</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 212, թ. 2:

սարանական ուսման հետեւելու համար գնում էին Երոպա կամ Ամերիկա: Նրանցից քչերն էին վերադառնում<sup>119</sup>:

Սուտանի նման սակաւամարդ համայնքի համար դժուար էր ինքնուրոյն լուծել կրթական մշակների խնդիրը: Այսպէս 1954-58՝ դպրոցի տնօրինութիւնը իրականացրել է Աղեքսանդրիայից իրաւիրուած Բիւզանդ Տիւլկերեանը, որը սակայն 1958ին մեկնեց ԱՄՆ, որտեղ ձեռնադրուեց քահանայ<sup>120</sup>: Աւելի ուշ՝ 1981ին, ուսուցիչ գտնելու համար հանդիպում ենք յայտարարութիւն *Յուսարբերի* 1981 Հոկտեմբերի 15ի համարում<sup>121</sup>: Անկնալում էր ստանալ հարեւան եգիպտահայ համայնքի օժանդակութիւնը այս հարցում:

Չնայած իր թուաքանակի համեմատ ահռելի արտագաղթին՝ համայնքը փորձում էր պահպանել իր աշխուժութիւնը<sup>122</sup>: Այդ մասին 1979ին կարդում ենք. «Սուրանահայ գաղութը, հակառակ իր աստիճանական նուազումին, ամէն ջանք ի գործ կը դնէ գաղութէն ներս ազգային ոգին վառ պահելու համար, իր գուրգուրանքին առարկայ դարձնելով Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ Ազգային վարժարանը, այն խոր գիտակցութեամբ՝ թէ առանց այս զօրաւոր զոյգ պատուարներուն, գաղութը կը դատապարտուի կորսնցնելու իր հայեցի դիմագիծը»<sup>123</sup>:

1983ին Սուտանի գաղութային նորընտիր վարչութեան նախագահ Կարօ Վանեանը բնորոշելով համայնքի վիճակը նշում է. «Եւ հիմա, լաւ գիտենք, որ դժուար շրջանի մըն է, որ կը ստանձնենք այս պատասխանատուութիւնը: Մէկ կողմէն գաղութը նօսրացած է, միւս կողմէն ծախսերը աւելցած են: Անհրաժեշտ է սերտել գաղութին ներկայ վիճակը եւ զայն դնել կայուն հիմքի մը վրայ:

...Ճիշտ է մեր թիւը կը նուազի, սակայն, թող փարօրինակ չթուի ձեզի, որ մեծ ծիգ պէտք է որ մեր ձեռքերը երկար ըլլան՝ կարենալ լուծելու մեր անդամներուն խնդիրները, ստեղծելու՝ մեր միջոցներուն համապատասխան պայմաններ, առաջքը առնելու նուազումին: Գաղթը, արտագաղթը անձնական որոշում մըն է, բայց եթէ կարենանք մեր ճիգերով ազդել գաղթելու նպատակ ունեցողներուն վրայ՝ կարելոր գործ մը կատարած կ'ըլլանք համայնքիս երկարաձգման համար»<sup>124</sup>:

<sup>119</sup> «Սուտանի հայ գաղութը», *Յուսարբեր*, 10 Մայիս 1980, էջ 2:

<sup>120</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 28 Դեկտեմբեր 1960, էջ 2:

<sup>121</sup> Տեղեկատու Դիան Ազգային Առաջնորդարանի, «Էսարթումի ազգային վարժարանին համար», *Յուսարբեր*, 15 Հոկտեմբեր 1981, էջ 4:

<sup>122</sup> Գառնիկ Եկաւեան, «Սուտանահայ կեանք», *Արեւ*, 10 Ապրիլ 1985, էջ 2:

<sup>123</sup> Թղթակից, «Սուտանահայ կեանք», *Ջահակիր*, 31 Մայիս 1979, էջ 2:

<sup>124</sup> Կարօ Վանեան, «Սուտանահայ գաղութի նախագահ՝ պրն. Կարօ Վանեանի խօսքը», *Արեւ*, 21 Դեկտեմբեր 1983, էջ 1:

## ՍՈՒՏԱՆԱՀԱՅԵՐՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Սուտանահայերի արտագաղթի հիմնական ուղղություններն էին Մ. Թագաւորութեան, Քանատան, Աւտրալիան, ԱՄՆը, սկզբնական տարիներին նաեւ Եգիպտոսը, Քենիան:

### **Ափրիկէ**

Օրինակ, 1950ականների կեսերին Սուտանից Նայրոպի էր տեղափոխուել Յովսէփ Թըզրեանը, որը անգլերէնի, ֆրանսերէնի ու արաբերէնի մասնաւոր դասեր էր տալիս այնտեղ<sup>125</sup>: Ընդհանրապէս Քենիայի հայերի մեծ մասը, ինչպէս արդէն նշուել է, տեղափոխուել էր Եթովպիայից եւ Սուտանից: 1950ականների վերջում որոշ թուով հայեր էլ պատրաստուում էին փոխադրուել այդ երկիր, նոյնիսկ հողատարածքներ էին գնել, սակայն անկախութեան տրամադրութիւններն ու անգլիացիների դիրքերի թուլացումը պատճառ էին որպէսզի նրանք մտափոխուեն: Նոյնիսկ Նայրոպիում արդէն իսկ հաստատուածներն էին պատրաստուում հեռանալ<sup>126</sup>: Սա եւս մէկ անգամ գալիս է հաստատելու այն, որ գաղութային համակարգերին համարկուած հայերը, որոնք անելի բարձր ընկերային դիրքի էին հասնում քան տեղական բնակչութեան մեծ մասը, ձգտում էին հեռանալ գաղութատիրութեան փլուզման շրջանում:

### **Մ. Թագաւորութիւն**

Մինչեւ անկախութիւն ձեռք բերելը Սուտանը փաստացի գտնուում էր բրիտանական գաղութային վերահսկողութեան տակ: Սա նպաստեց դէպի Մ. Թագաւորութիւն հայերի արտագաղթին: Լոնտոնում հաստատուած սուտանահայերը, իհարկէ, մեծ թիւ չէին հայկական համայնքում, սակայն կան որոշ տեղեկութիւններ նրանց գործունէութեան մասին: Այսպէս, Լոնտոնում Կիպրոսից, Իրանից ու Իրաքից եկած հայերի հետ միասին Սուտանից տեղափոխուած դաշնակցականները ձեռնամուխ էին եղել կուսակցութեան Վահան Նաւասարդեան խմբի կազմմանը<sup>127</sup>: Լոնտոնում համայնքային կեանքում ներգրաւուած սուտանահայերից էր Յասմիկ Գալփաքճեանը ով համայնքային խորհրդի տիկնանց միութեան շրջանակներում տեղի երեխաների հայեցի դաստիարակութեամբ էր զբաղում<sup>128</sup>:

### **Քանապոս**

Սուտանից արտագաղթող հայերի հիմնական նպատակակէտերից էր Քանատան եւ մասնաւորապէս Մոնրէալը: 1976ին այս քաղաքում է հաստատուել նաեւ անելի վաղ Սուտանում գործած Օննիկ Գալուստեանը: Նա ծնուել է 1931ին Աղեքսանդրիայում ուսուցչութեամբ էր զբաղուել Գալուստ-

<sup>125</sup> «Հայ գաղութ մը Հարաւ. Ափրիկէի մէջ», էջ 3:

<sup>126</sup> Դերենիկ Եպիսկոպոս, «Ափրիկէի հայերը», *Արեւ*, 1 Օգոստոս 1960, էջ 2:

<sup>127</sup> Հ.Յ.Դ. Արեւմտ. Եւրոպայի Կեդր. Կոմիտէ, «Դաշնակցական նորակազմ խումբեր Համպուրկի եւ Լոնտոնի մէջ», *Ազապ օր*, 5 Մայիս 1960, էջ 1:

<sup>128</sup> «Ազգային կեանքը Լոնտոնի մէջ», *Ազապ օր*, 24 Փետրուար 1960, էջ 2:

եան վարժարանում, 1962-71՝ մեկնելով Սուտան, վարել Խարթումի ազգային վարժարանի, ապա 1971-76՝ Ադեքսանդրիայի Պողոսեան վարժարանի տնօրէնութիւնը: Անցնելով Քանատա՝ ուսուցչութեամբ է զբաղուել ՀԲԸՄ Արմէն-Քեպէք վարժարանում, վարել Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շաբաթօրեայ դպրոցի տեսչութիւնը<sup>129</sup>: Բացի Մոնրէալից որոշ սուտանահայ ընտանիքներ հաստատուել են Վանքովըրում<sup>130</sup>:

### **Մ. Նահանգներ**

Հիմնական ուղղութիւններից միան էլ, ինչպէս շատ այլ երկրներից գաղթող հայերի պարագայում էր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներն էր: Չնայած չկայ յստակ վիճակագրութիւն, սակայն յայտնի է, որ 2010ի մարդահամարի տուեալներով Լոս Անճելըսի շրջանում Սուտանից եկած հայերի թիւը 56 էր<sup>131</sup>:

Սուտանից ԱՄՆ տեղափոխման օրինակ է Վարդան Տիւկէրեանը, որը մինչ այդ աշխատել էր Ադեքսանդրիայի Պողոսեան վարժարանում: 1957ին Սուտանից տեղափոխուել է ԱՄՆ, որտեղ ձեռնադրուել է քահանայ, աշխատակցել եգիպտահայ, լիբանահայ եւ ամերիկահայ թերթերի<sup>132</sup>:

1947ին Սուտանում ծնուած եւ 1965ին ԱՄՆ փոխադրուած Զաւէն Թոքաթեանը 1976ին ասարտել է Պոստոնի Համալսարանի իրաւագիտութեան բաժինը եւ հաստատուել Շիքակոյում, սկսել է ուսումնասիրել բժշկութիւն: 1982ին նա դիմում է Սփիտքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին՝ Հայաստանում բժշկական կրթութիւն ստանալու խնդրանքով<sup>133</sup>:

### **Աւստրալիա**

Ինչպէս արդէն յիշատակուել է, սուտանահայերի արտագաղթի հիմնական նպատակակէտերից մէկն էլ Աւստրալիան էր: Եթէ այստեղ արաբական պետութիւններից հայերի գաղթի հիմնական մղիչ գործօններից մէկը

<sup>129</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 68, թ. 8. նաեւ՝ Աւետիս Եափուճեան, *Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն*, Գահիրէ, 1981, էջ 259-60:

<sup>130</sup> Ա. Պէլլէրեան, «Վանքովըրի հայ գաղութը», *Ջարթօնք*, 28 Յունիս 1978, էջ 3:

<sup>131</sup> Գոսազեան, էջ 126:

<sup>132</sup> Եափուճեան, էջ 245-6:

<sup>133</sup> Միաժամանակ դիմում է նաեւ նրա կինը՝ Սիլվա Մելքոնեան-Թոքաթեանը, որը ծնուել է 1949ին, Պէլլոյում, 1969ին հաստատուել ԱՄՆում, 1972ին ասարտել Տիբորյոթի Համալսարանը, 1976ին ամուսնացել Զաւէնի հետ: 1978ին նա ստանձնել էր ՀԲԸՄ շաբաթօրեայ վարժարանի տնօրինութիւնը, Շիքակոյի Համալսարանում դասաւանդել հայերէն եւ ֆրանսերէն: Նա եւս ցանկանում էր կրթութիւն ստանալ Հայաստանում՝ հայոց լեզուի բնագաւառում (ՍՀՄԿԿն առաջարկում է դիմել ՀԽՍՀ բարձրագոյն եւ միջնակարգ կրթութեան նախարարութիւն եւ Ուաշինկթընի ԽՍՀՄ դեսպանատուն 8-10ամսեայ ստաժորական դասընթացների մասնակցելու համար՝ փաստօրէն չբաւարարելով դիմումը), ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 88, թ. 21-23, 26-27:

մուսուլմանական շրջապատում քրիստոնեայ լինելն էր, ապա այդ երկրների թույլ մուսուլման առանձնանում էր նրանով, որ բացի վերոնշյալ հանգամանքից, այստեղ առկայ էր մաշկի գոյնի խնդիրը՝ բացի քրիստոնեայ լինելուց նաեւ սպիտակ լինելը: Այսպէս, Աստրալիա տեղափոխուած հայերից մէկը նշում էր. «Սպիտակներն ու քրիստոնեաները ապահով չէին: Նրանք (սեւ սուրանցիները) սկսեցին թալանել եւ սպանել մեզ»<sup>134</sup>: Մէկ այլ վկայութեան մէջ կարդում ենք. «Իրավիճակը գնալով վարթարանում էր սպիտակամորթ մարդանց համար: Երբ քրիստոնեաները հեռացան՝ սպիտակների համար ծանր ժամանակներ սկսուեցին: Բոլոր սեւամորթ սուրանցիները մուսուլմաններ էին եւ նրանք ապրում էին քրիստոնեաներին: Մենք միշտ քննադատուում էինք սուրանցիների կողմից: Եթէ նրանք այսքան փարի ինձ ճանաչելով ապրում էին, ինչպէ՛ս նրանք կը վերաբերուէին իմ երեխաներին, որոնց չէին ճանաչում: Նրանք մեզ սուրանցի չէին համարում, քանի որ մենք սպիտակ էինք եւ քրիստոնեայ»<sup>135</sup>: Մէկ այլ հարցուող նշում էր, որ բոլոր սպիտակները ընկալուում էին որպէս թշնամի: Ուրիշ վկայութեան մէջ էլ կարդում ենք. «Մենք միշտ մեզ օտարական ենք զգացել»<sup>136</sup>:

Չնայած Սուտանի հայերը, որպէս արտագաղթի հիմնական պատճառ նշում էին կրօնական գործօնը, սակայն ըստ Քըրքլենտի, սկզբնապատճառը - ինչպէս այլ արաբական երկրների պարագայում - քաղաքական անկայուն իրադրութիւնն էր: Ինչպէս արաբական այլ երկրներից, այնպէս էլ Սուտանից Աստրալիա եկած հայերից շատերը նախապէս ցանկութիւն էին ունեցել տեղափոխուել ԱՄՆ կամ Քանադա, սակայն մուտքի մերժում ստանալու պատճառով որոշել էին գալ այստեղ: Աստրալիա գաղթելու հիմնական գործօնների շարքում այստեղ փոխադրուածները նշում էին դրա Միջին Արեւելքին նման կլիմայ ունենալը, անգլիախօս երկիր լինելն ու աշխատանքի հնարաւորութիւնները: Շատերը այստեղ արդէն ունէին բարեկամներ կամ ընկերներ<sup>137</sup>:

Աստրալիա տեղափոխուած հայերի համար բնորոշ էր այն, որ նրանք ցանկանում էին, որ իրենց երեխաները ամուսնան նոյն երկրից գաղթածների հետ: Այսպէս, Սուտանից Աստրալիա տեղափոխուած 47ամեայ մի սուտանահայ նշում է. «Եթէ նրանք (իմ երեխաները) չամուսնանան Եգիպտոսի կամ Սուրանի հայի հետ, ես կը նախընտրեմ, որ ամուսնան այլագրիի հետ»<sup>138</sup>:

---

<sup>134</sup> Kirkland, էջ 108:

<sup>135</sup> Նոյն:

<sup>136</sup> Նոյն:

<sup>137</sup> Նոյն, էջ 108-9:

<sup>138</sup> Նոյն, էջ 284:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Խօսելով արտագաղթի պատճառների մասին՝ կարող ենք եզրակացնել, որ ընկերվարական կարգերի հաստատումը, ինչպես Սփիուքի այլ համայնքներում, խիստ բացասաբար անդրադարձաւ հայերի վրայ՝ մղելով նրանց զանգուածաբար հեռանալ: Հայերի դիրին համարկումը գաղութային-կայսերական համակարգերին, կործանաբար էր ազդում դրանց փլուզման ժամանակ համայնքների բնականոն կենսագործունէութեան վրայ: Իհարկէ, կարելի է նշանակութիւն էին ունենում ընկերատնտեսական ոլորտում տեղի ունեցող փոփոխութիւնները, որոնք յանգեցնում էին տեղական բնակչութեան մեծամասնութեան համեմատ հայերի զգալի մասի ընկերային աւելի բարձր դիրքերի վերացմանը: Ուսումնասիրուող օրինակները ցոյց են տալիս, որ երբեմն հենց այդպիսի կարգավիճակի պատճառով տեղական, յատկապէս ընկերային ծանր պայմաններում ապրող բնակչութեան մի մասը տրամադրուում էր հայերի դէմ:

Չնայած դրանից առաջ ու յետոյ եղած բազմաթիւ դէպքերին՝ երկու համայնքների համար որպէս արտագաղթի հիմնական ժամանակաշրջան առանձնանում են 1960-80ականները:

Այլ երկրներում Սուտանի ու Եթովպիայի հայերը, չնայած սեփական ենթաէթնիկ խմբի ներսում գործելու որոշակի հակուածութեանը, չունէին տեղի համայնքներին համարկուելուն այլընտրանք, որտեղ մեծամասնութիւն էին կազմում այլ վայրերից գաղթած հայերը: Քիչ թէ շատ նրանց ներկայութիւնը զգալի էր Աւստրալիայում, Քանադայում, ԱՄՆում, սուտանահայերի դէպքում միգրացի կարելի է յիշատակել նաեւ Մ. Թագաւորութիւնը:

Եթովպիայի եւ Սուտանի համայնքները կազմալուծուեցին արտագաղթի հետեւանքով: Եթէ այդ երկրներից արտագաղթը դիտարկում ենք 1945-88՝ հայկական սփիուքի ներքին տեղաշարժերի համապատկերում, ապա կարող ենք եզրակացնել, որ այս համայնքները ամէնից տուժածներից են: Իհարկէ, որոշ այլ պետութիւններից եղել է տասնեակներով անգամ աւելի բազմակի արտագաղթ, սակայն տոկոսային համեմատութեան մէջ հենց Եթովպիան, Սուտանը, միջանի այլ երկրների հետ միասին, ամէնամեծ կորուստներն ունեցան: Հենց այս արտագաղթի հետեւանքով երկու հայօճախները ըստ էութեան դադարեցին գոյութիւն ունենալ: Այսօր միջանի տասնեակ հայեր են ապրում Եթովպիայում, իսկ Սուտանում նրանք գրեթէ չեն մնացել:

**THE DEPOPULATION OF TWO AFRICAN COMMUNITIES:  
ARMENIANS' EMIGRATION FROM ETHIOPIA AND SUDAN  
(Summary)**

**Tigran Ghanalanyan**  
tghanalanyan@ysu.am

Ethiopia's Italian occupation was followed by the most prosperous period for the Armenian community, which lasted from 1941 to 1974. However, the collapse of the Empire and the socialist revolution led to Armenians losing the favorable economic conditions that they had previously enjoyed.

The situation in neighboring Sudan was similar. Here, first the independence of Sudan in 1956 and secondly, and especially, the 1969 coup triggered local Armenians to emigrate. The nationalization of the property of the local Armenians played a crucial role in the decision of many to leave the country.

If in the early 1960s there were around 1200 Armenians in Ethiopia and about 800 in Sudan; in the mid-1980s each community numbered around 150 Armenians only. Emigration from these two countries continued in the following decades. Currently, there are a few dozen Armenians in Ethiopia, whereas in Sudan, hardly any Armenians live there anymore.

The Armenians of Sudan and Ethiopia moved mostly to Australia, Canada and the USA, where some of them became involved in community life.

## Յաւելուած

### Եգիպտոս՝

- Ն. Մ. Աղազարմ, «Եգիպտահայ Գաղութը»

### Սուտան՝

- Artsvi Bakhchinyan, “From Sudan to Siberia: Mkrtich Ulikian’s Odyssey”
- Պօղոս Շահմելիքեան, «Սուտանահայ գաղութը»
- Բիւզանդ Տիւկէրեան, «Տեղեկագիր Խարթումի ազգային վարժարանի 1954-1955 տարեշրջանի»
- Թղթակից, «Օծում Խարթումի նորակերտ եկեղեցիին (1957)»
- Թղթակից, «Սուտանահայ կեանք (հպանցիկ ակնարկ) (1960)»
- Զաւէն վրդ. Արզումանեան, «Սուտանահայ գաղութը այսօր» [1968]
- Սուտանի մէջ գործած կազմակերպութիւններու, հաստատութիւններու, դպրոցի, եկեղեցիի, միութենական եւ ընտանեկան փաստաթուղթեր, նամակաթուղթի վերտառութիւններ, նկարներ

### Եթովպիա՝

- Vartkes Nalbandian, “Names and Ages of the “Arba Lidjoch” in 1923”
- Vartkes Nalbandian, “Armenian Employees of the Ethiopian Government in 1930”
- Զաւէն արդ. Արզումանեան, «Եթովպահայ գաղութը այսօր» [1955]
- Եթովպիոյ մէջ գործած կազմակերպութիւններու, հաստատութիւններու փաստաթուղթեր, նամակաթուղթի վերտառութիւններ, եւ գորգի նկարներ
- Եթովպահայ ականաւոր դէմքերու, ակումբի եւ եկեղեցիի նկարներ եւ փաստաթուղթեր



# Եգիպտահայ Գաղութը<sup>1</sup>

Ն.Մ. Աղազարմ

## ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ԹԻՒՆ

Մատթեոս Ուռհայեցի, որ ապրած է ԺԱ. դարուն, կը գրէ իր պատմութեան մէջ թէ այն ժամանակ 30,000 հայեր կը բնակէին Եգիպտոսի մէջ: Նկատելով որ այն թուականին 40ի չափ հայ եկեղեցիներ ու վանքեր կային յԵգիպտոս եւ հայերէ կազմուած հեծեալ եւ հետեակ գունդեր՝ անոր բանակին մէջ, մեզ շատ քիչ կ'երեւի ցոյց տրուած 30,000 թիւը, որ սակայն դարերու ընթացքին, զանազան պատճառներով շատ նուազեցաւ այնպէս որ երբ մեծանուն Մուհամմէտ Ալին, ԺԹ. դարու սկիզբը, Եգիպտոսի իշխան եղաւ, հազիւ քանի մը հարիւր հայեր մնացած էին փարաւոններու երկրին մէջ: Անկէ ասդին, նախ տոյն լուսամիտ իշխանին եւ յաջորդներէն ոմանց հայոց հանդէպ ցոյց տուած վեհանձն ընթացքին հետեւանքով եւ յետոյ Թուրքիոյ ծանօթ դէպքերու բերմամբ՝ զգալապէս աճեցաւ Եգիպտոսի հայոց թիւն, առանց սակայն հասնելու Ուռհայեցիի ժամանակին բարձրութեան:

*Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ* գրքոյկին մէջ<sup>2</sup>, որ լոյս տեսաւ 1911ին, Եգիպտոսի հայոց ընդհանուր թիւը 12000 տրուած է:

Տեղական կառավարութիւնը 1917ին շատ խնամեալ մարդահամար մը կատարել տուաւ՝ անխտիր Եգիպտոսի բոլոր բնակչութեան համար: Պետական մարդահամարին արդիւնքն ստուար հատորներով հրատարակուեցաւ: Հայերն ալ ունէին իրենց յատուկ տեղը այդ հատորներուն մէջ որոնցմէ կը քաղենք հետեւեալ թիւերը հայոց մասին:

Գահիրէի կառավարչութիւն, կեդրոն՝ Գահիրէ	5409
Աղեքսանդրիո կառավարչութիւն, կեդրոն՝ Աղեքսանդրիա	3369
Փոր-Սայիտի կառավարչութիւն, կեդրոն՝ Փոր-Սայիտ	3223
Ղարպիէի նահանգ, կեդրոն՝ Թանթա	184
Շարքիէի նահանգ, կեդրոն՝ Չակագիկ	159
Կիզիէի նահանգ, կեդրոն՝ Կիզիէ	107
Տաքալիէի նահանգ, կեդրոն՝ Մանսուրա	78
Ասիուօի նահանգ, կեդրոն՝ Ասիուօ	83
Մինիէի նահանգ, կեդրոն՝ Մինէ	63
Ֆէյումի նահանգ, կեդրոն՝ Ֆէյում	52
Պեհերայի, Մենուֆիէի, Կալուպիէի, Ասուանի, Պենի Սուրէնի, Կերկէի եւ Քենհայի նահանգներ	109

<sup>1</sup> 14էջանի, մեքենագրեալ, ապա ձեռագրով մանր հպումներու ենթարկուած այս փաստաթուղթը, որ գրուած է 1922-23 կրթաշրջանին, ստորագրուած է Ն. Մ. Աղազարմի կողմէ: Փաստաթուղթը մեզի տրամադրեց Գոհար Աագեան, առնելով Գահիրէի ազգային առաջնորդարանի արխիւէն: Չայն գրաշարեց Հայկազեան համալսարանի ուսանող Լիլիանա Րքէյաի, Յունուար 2021ին:

<sup>2</sup> Ն. Աղազարմ, *Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ*, Տպ. Զարեհ Պէրպէրեան, Գահիրէ, 1911, 134 էջ:

Սուէգի, Կարմիր ծովու եւ Սինայի թերակղզիի շրջաներ	18
[Ընդհանուր գումար]	12354

Այս թիւէն 7760ը օսմանեան եւ 5094ը տեղական հպատակ են: Պետական մարդահամարը հայոց թիւին մէջ անցուցած չէ ռուսական, ֆրանսական, յունական, պարսկական եւ ուրիշ տէրութեանց հպատակ 2-300ի չափ հայերը, որոնք, կ'երեւի թէ հաշուուած են այդ տէրութեանց հպատակներուն հետ:

Փոր-Սայիտի շրջանի 3223 հայերը գրեթէ ամբողջութեամբ կը բաղկանային, ծանօթ պարագաներու բերմամբ Սուետիայէն եւ ուրիշ տեղերէ Եգիպտոս ապաստանող գաղթականներէ, որոնց պատսպարման համար Փոր-Սայիտի դիմացը, Սուէգի ջրանցքին արեւելեան ափին վրայ, կանգնած էր վրանաքաղաք մը իր մատուռով եւ վարժարանով: Պետական մարդահամարէն երկու տարի յետոյ այդ ապաստանեալները մեծ մասով իրենց հայրենիքը վերադարձան եւ վրանաքաղաքն անհետացաւ: Անկէ յետոյ սակայն զանազան երկիրներէ շատ մը հայեր Եգիպտոս եկան եւ պատահեցան Կիլիկիոյ եւ Ջմիւռնիոյ աղէտալի դէպքերն եւ շատ շատեր Նեղոսի հիւրընկալ հովտին մէջ ասպնջականութիւն գտան եւ ամէն հաշիւ ընելով կը կարծենք որ այսօր Եգիպտոսի մէջ հայոց թիւը պետական մարդահամարէն ասդին հաւանաբար աւելնալով յանգած է 15000ի:



Արարատեան Ազգային Նուագախումբ ի Գահիրէ, 1904<sup>3</sup>  
 ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ - ԵԿԵՂԵՑԻ,  
 ՎԱՐԺԱՐԱՆ, ԳԵՐԵՋՄԱՆԱՏՈՒՆ

<sup>3</sup> Հայաստանի Ազգային Արխիւ, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նիւթեր, «Ասիայի եւ Աֆրիկայի երկրների հայ գաղթածախների հետ կապերի բաժին, թղթածրար 206, Տեղեկանքներ Եթովպիայի եւ Յորդանանի հայ գաղթածախների մասին, թիւ 875/3/3206»:

Պոլսոյ մէջ ազգային սահմանադրութեան հրատարակութենէն քիչ վերջը՝ ջանքեր եղած են Եգիպտոսի վիճակը կազմակերպել անոր տրամադրութեանց համաձայն, սակայն այս բանը, բառին կատարեալ առումով, կարելի եղած չէ նախ այն պատճառով որ տեղացի եկեղեցական եւ աշխարհական հայոց թիւը բաւական եղած չէ պաշտօնական մարմիններու կազմութեան համար պէտք եղած բոլոր տարրերը հայթայթելու եւ երկրորդ այն պատճառով որ Աղեքսանդրիոյ հայ գաղութն իր ունեցած կարեւորութեան բերմամբ գրեթէ սկիզբէն անկախ ըլլալ ուզած է Գահիրէէն:

Իրաց այս կացութեան առջեւ վսեմ. Պօղոս փաշա 1907ին Եգիպտոսի վիճակին վարչական կազմակերպման համար՝ ծրագիր մը ներկայացուցած է Պոլսոյ պատրիարքարանին, որ անոր վրայ հիմնուելով պատրաստած է «վարչական հրահանգ վիճակին Եգիպտոսի» եւ Օրմանեան սրբազան 1907 Մայիս 5ի պաշտօնագրին կցեալ Եգիպտոս ղրկած է զայն ի գործադրութիւն:

Հրահանգը 28 յօդուածներէ կը բաղկանայ: Չորրորդ յօդուածը կը տրամադրէ. «Եգիպտոսի ազգային վարչութիւնը կազմուած է ազգային սահմանադրութեան սկզբանց համեմատ, փարբերութեամբ այն կէտերուն, որ տեղական պահանջից համաձայն տոյն հրահանգին մէջ նշանակուած են»:

Հրահանգին սահմանադրութենէն ունեցած գլխաւոր տարբերութիւնը այն է որ Եգիպտոսի վիճակին մէջ փոխանակ մէկի երկու երեսփոխանական եւ երկու քաղաքական ժողով գոյութիւն ունին, մէյ մէկ հաս ի Գահիրէ եւ յԱղեքսանդրիա. իւրաքանչիւր երեսփոխանական ժողով իր շրջանի գործերով կը զբաղի:

Սակայն երբ վիճակին ընդհանրութեան վերաբերեալ խնդիրներ պատահին եւ կամ ազգային կալուածոց գնում եւ վաճառում ընել հարկ ըլլայ երկու երեսփոխանական ժողովները կը գումարուին յիշեալ քաղաքներէն մէկուն մէջ առաջնորդին նախագահութեան ներքեւ: Թէ՛ ի Գահիրէ եւ թէ՛ յԱղեքսանդրիական ուրոյն մարմիններ եկեղեցոյ, զերեզմանատան եւ վարժարանի խնամակալութեան համար: Կալուածական եւ ժառանգական գործերը կը կարգադրուին քաղաքական ժողովներու կողմէ, զի ասոնք, «կը միացնեն իրենց վրայ թեմին նկատմամբ քաղաքական ժողովոյ եւ քաղաքին նկատմամբ՝ թաղական խորհրդոյ գործառնութիւնները»:

Գահիրէի մէջ կայ մէկ եկեղեցի Ս. Աստուածածին անունով, 1839ին հիմնուած առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոսի ջանքով եւ ժողովուրդին ծախքով: Այս եկեղեցին սակայն, որ Պենի-Սուրէնի թաղին մէջ կը գտնուի եւ կից է առաջնորդարանին, շատ հինցած ըլլալով մէկ քանի ամիսէն նոր մը պիտի կառուցուի քաղաքիս ամէնէն բանուկ պողոտաներէն մէկուն՝ Շարա Ապպասի վրայ, երկաթուղիի կայարանին շատ մօտ եւ ոչ հեռու Հելիոպոլսէն եւ գահիրէի հիւսիսային արեւելեան հայաբնակ արուարձաններէն, որոնք մայրաքաղաքին կապուած են երկաթուղիով եւ թրամուէյով: Նոր կառուցանելի եկեղեցիին ծախքը պիտի հոգացուի բարեյիշատակ Գրիգոր Եղիայեանի կտակին արդիւնքով: Արդէն 13000 եգ. ոսկիէն աւելի դրամ պատրաստ կայ: Այս գումարին վրայ պիտի աւելնան, վաճառելի երկու տուններու եւ մէկ գետնի արժէքն առնուազն 4000 եգիպտական ոսկի:

Գահիրէի մէջ հայերն ունին յատուկ գերեզմանատուն, որը սակայն գրեթէ լեցուած է: Շնորհիւ առաջնորդարանի կողմէ ձեռք առնուած միջոցներուն, յարակից պետական գետինն, իբր 1800 քառակուսի մետր տարածութեամբ, տարին չբոլորած գերեզմանատան պիտի միացուի կէս արժէքին վճարումով:

Այս գերեզմանատան մէջ կայ մատուռ մը մասնաւոր քահանայով:

Հայերն յատուկ եւ պարսպապատ գերեզմանատուն ունին նաեւ ի Զակազիկ:

Աղեքսանդրիոյ մէջ կայ նաեւ գերեզմանատուն, եկեղեցի եւ առաջնորդարան: Վերջին երկուքը կառուցուած շատ գեղեցիկ միջավայրի մը կերպով: Այս միջավայրը շատ ընդարձակ պարտէզ մըն է, ԺԹ. դարուն առաջին կեսին մէջ մեծ մասով նուիրուած մեծանուն Պօղոս պէյ Եուսուֆեանէ: Պարտէզին մէկ բաժնին վրայ շինուած են նաեւ հասութաբեր կալուածներ, քահանայատուն են.:

Ողբացեալ Թագուր փաշայի ջանքերով եկեղեցի եւ առաջնորդարան կը կառուցուին 1884ին: Մինչեւ այն ատեն յիշեալ պարտէզին վրայ գտնուած հիւրանոցի վերնայարկին մէջ էր որ կը կատարուէր հոգեւոր պաշտամունքը:

Գահիրէի մէջ առաջին անգամ «Հայ դպրատուն» կառուցուած է 1828ին Եղիազարեան եղբայրներու բարեգործութեամբ եւ եկեղեցւոյ շրջաբակին մէջ: Անմահ բարերար Կարապետ աղա Գալուստ 1854ին աւելի ընդարձակ մը կառուցանել տուած է եկեղեցւոյ մերձաւոր թաղի մը մէջ: Այս վարժարանին շէնքը կէս դար յետոյ, արդէն խարխլած շատ փոքր կու գար աշակերտաց յարաճուն թիւին առջեւ: Հետեւաբար 1906ին փոխադրուեցաւ հիմակուան տեղը ի Պուլաք իտալական վարժարանին մօտ: Նախակրթարանի գետնի եւ շինութեան ծախքը եղաւ 16000 ոսկի եգիպտական եւ հոգացուեցաւ վսեմ. Պօղոս փաշա Նուպարի բարերարութեամբ: Մանկապարտէզի շէնքը կառուցուեցաւ 1908ին, ծախք եղաւ 6000 եգիպտական ոսկի որ հայթայթուեցաւ ժողովուրդին եւ առաջնորդարանի կողմէ:

Մանկապարտէզը դպրոցական 1922-23 տարուան մէջ ունէր 305 երկսեռ ուսանող, 10 ուսուցիչ եւ ուսուցչուի, ծախք ---- եգիպտական ոսկի, ուսման շրջանն է 4 տարի<sup>4</sup>:

Մանկապարտէզ եւ նախակրթարանը (բարձրագոյն) 1922-23 դպրոցական տարուան մէջ ունին 750 երկսեռ ուսանող, 31 ուսուցիչ եւ ուսուցչուի, ծախք 6059 եգիպտական ոսկի, մէջն ըլլալով աշակերտները փոխադրող ինքնաշարժներու ծախքն 1350 ոսկի. ուսման շրջանն է մանկապարտէզը 3 եւ նախակրթարանը 6 տարի:

Մանկապարտէզ եւ նախակրթարան յանձնուած են միեւնոյն տնօրէնին հսկողութեան:

Աղեքսանդրիոյ հայերը վարժարանի իբր յատուկ շէնք ունեցած չեն մինչեւ 1884. վերոյիշեալ բակին մէջ կառուցուած այն յարկն, որ ի հնում կը գործածուէր իբրեւ մատուռ եւ անկէ վերջն ալ եկեղեցւոյ հանդիպակաց վրայ է, որուն գետնայարկի մէկ մասը ցարդ կը ծառայէ առաջնորդարանի: Սակայն այս յարկը

---

<sup>4</sup> Այս մեքենագրեալ տողերը ջնջուած են:

շատ անձուկ է բաղդատմամբ աշակերտաց թուին եւ հարկ անհրաժեշտ է դպրոցական մասնաւոր եւ բաւարար շէնքի մը կառուցումը:

Այժմու քաղաքական ժողովը, տեղի խնդիրը մասամբ լուծելու համար, վարժարանի շէնքին վրայ կառուցանել կու տայ քանի մը սրահներ:

Քանի մը տարիներէ իվեր Հելիոպոլիսի եւ Զակազիկի մէջ կան մէյմէկ նախնական վարժարաններ ուրոյն հոգաբարձութիւններով: Այս վարժարանները Գահիրէի առաջնորդարանին սնտուկէն նպաստ կ'ընդունին եւ հոգաբարձութիւնները կ'ընտրուին քաղաքական ժողովէն եւ համարատու են անոր:

Հելիոպոլիսի եւ Զակազիկի վարժարանները չունին սեպհական շէնք սակայն ուրախալի է արձանագրել որ վսեմ. Պօղոս փաշա Նուպար յօժարած է Հելիոպոլիսի ընկերութենէն տեղւոյն հայ գաղութին նուիրեալ գետնին վրայ 2000 ոսկւոյ ծախքով վարժարան մը կառուցանել: Շէնքը պատրաստ պիտի ըլլայ դպրոցական այս տարուան մէջ: Իսկ Զակազիկի ափ մը հայերուն վարժարանի սեպհական շէնք մը ունենալու փափաքն ու ջանքերն ամէն գովեստէ վեր են եւ կը մաղթենք որ ի մօտոյ գտնեն կատարեալ յաջողութիւն:

Մասնաւոր հայ վարժարաններ չեն պակսիր ի Գահիրէ: Անոնցմէ յիշենք Մանիսալեան քոյրերու աղջկանց բարձրագոյն համազգային նախակրթարանն (երկրորդական վարժարան մանկապարտէզի բաժինով), հիմնուած 1905ին եւ Թաշճեան քոյրերու երկսեռ վարժարանը հիմնուած 1907ին:

Հայ կաթողիկէ հասարակութիւնը ունի եկեղեցի մ'ի Գահիրէ կառուցուած 1841ին:

Աղեքսանդրիա նախ մատուտ մ'ունեցած է 1890ին, սակայն շէնքին անբաւականութեան պատճառով 1895ին քանդուած է եւ տեղւոյն վրայ եկեղեցի մը շինուած է Խալիլ Խայեթաթ փաշայի բարեգործութեամբ: Հայ կաթողիկէ համայնքը տարիներէ իվեր Աղեքսանդրիոյ մէջ ունի «Անարատ Յղութեան Քոյրերու Վարժարան» 100 աշակերտներով<sup>5</sup>: Իսկ Գահիրէ անցեալ տարուընէ իվեր միայն ունի յատուկ վարժարան:

Հայ աւետարանական հասարակութիւնը չունի եկեղեցւոյ մասնաւոր շէնք, թէ՛ ի Գահիրէ եւ թէ՛ յԱղեքսանդրիա, կրօնական պաշտամունք կը կատարուի ամերիկեան միսիոնարներու եկեղեցիներուն մէջ: Հայ աւետարանականներն յատուկ վարժարան ալ չունին:

#### ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԻՐԵՆՏ ԻՐԱԻԱՍՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Հայ երեք հասարակութիւններն ալ ունին իրենց հոգետոր պետերն ու հովիւները: Հայերն ու հայ կաթողիկէները տեղական կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուած են իբրեւ ուրոյն հասարակութիւններ: Հայ աւետարանականները մաս կը կազմեն այն համայնքին որ կառավարութիւնը ճանչցած է ի պաշտօնէ եւ որ կը բաղկանայ խպտի եւ տեղական ուրիշ աւետարանական եկեղեցիներէ: Մեր աւետարանական եղբայրները քաղաքային վիճակի վերաբերեալ իրենց անձնական գործերը շատ անգամ մեր առաջնորդարանին ձեռքով կատարել կու տան:

<sup>5</sup> Վերջին երկու մեքենագրեալ բառերը ջնջուած են:

Հայոց առաջնորդութիւնը շատ հին է. սկսած է ժԱ. դարուն, երբ Գրիգոր Վկայասէր կաթողիկոս, նոյն իսկ Եգիպտոսի մէջ վիճակաւոր եպիսկոպոս ձեռնադրած է Ներսէս Շնորհալիի իօրեղբայր Գրիգոր իշխանը: Եգիպտոսի առաջնորդութիւնը մինչեւ ժԳ. դարուն սկիզբները ընդհանրական հայրապետներու անմիջական իրաւասութեան ներքեւ գտնուած է: Քրիստոսի 1311 թուականին Երուսաղէմի Սարգիս պատրիարքը Եգիպտոսի սուլթան Մելիք Նասրին հրովարտակով փարաւոններու երկիրն իր աթոռին թեմ ըրած է: Եւ այսպէս շարունակած է մինչեւ ժԹ. դարուն կէսերը, երբ Գաբրիէլ եպիսկոպոս Եգիպտոսի առաջնորդ էր: Այս բազմերախտ առաջնորդին օրով վէճեր ծագեցան Երուսաղէմի եւ Եգիպտոսի միջեւ եւ հետեւանքն այն եղած է որ այս վերջինն անջատուած է Երուսաղէմէն եւ Պոլսոյ պատրիարքարանին ենթակայ եղած է:

Այս թուականէն սկսեալ օսմանեան կայսրերն տուած են Եգիպտոսի առաջնորդներուն հաստատութեան հրովարտակները:

Սակայն Թուրքիոյ եւ Եգիպտոսի միջեւ քաղաքական կապը խզուած ըլլալով այժմ եւ ասկէ ետք առաջնորդներու պաշտօնին տեղական կառավարութենէն ինչպէս ճանչցուելու եւ Եգիպտոսի վիճակին հոգեւորապէս որ իշխանութենէն կախում ունենալու շատ կենսական խնդիրներուն համար պատշաճ եւ անմիջական կարգադրութիւններ անհրաժեշտ դարձած են: Թուականէս մինչեւ շուրջ 20 տարի առաջ՝ Գահիրէի կառավարչատան մէջ հաստատուած մասնաւոր գրասենեակը կը գործադրէր ի մէջ այլոց հայոց առաջնորդարանին կողմէ ամուսնական խնդրոց մէջ արձակուած նաֆաքայի եւ ուրիշ վճիռները կը գործադրէ: Նաեւ երբ առաջնորդարանս իր առանձնաշնորհումն եղող ժառանգական խնդրոց գործադրութեան մէջ դժուարութեան պատահէր եւ կառավարութենէն ոստիկանական օգնութիւն պահանջէր, այդ պահանջքին գոհացում կը տրուէր:

Այժմ առաջնորդարանիս ամուսնական եւ ժառանգական վճիռները կը գործադրուին դատական միջոցներ ի գործ դրուելէ վերջ միայն, եւ այս՝ այն պատճառաւ, որ յունաց պատրիարքարանին եւ ուրիշ կարգ մը առաջնորդարաններու նման, հայոց կանոնադրութիւնն ալ դեռ չէ վաւերացուած կառավարութենէն:

Ժառանգական խնդիրներ ըսելով կը հասկցուին.- ա) ցանկագրել եւ հսկողութեան ներքեւ առնել ոչ... հայերու ժառանգութիւնը երբ անչափահաս, բացակայ կամ խելագար ժառանգորդներ գտնուին. սակայն առաջնորդարանի կողմէ ժառանգութիւնը ցանկագրելու համար պէտք է որ ներկայ եւ չափահաս ժառանգորդները յաւակնին առաջնորդարանի միջամտութեան: բ) տալ ժառանգական վաւերագիր, գ) խնամակալ կարգել անչափահասներու եւ խելագարներու համար, դ) իր հսկողութեան ներքեւ առնուած ժառանգութիւնները իրաւունք ունեցողներուն բաժնել, շիրիի<sup>6</sup> ժառանգական օրինաց տրամադրութեան համաձայն: Այս առանձնաշնորհումներն, 1856ի *խաթթի հիւմայունէն* ալ առաջ եւ աւելի ընդարձակ սահմանի մէջ, Եգիպտոս 19րդ դարուն երկրորդ քառորդին, յաւերժայիշատակ Մոհամէտ Ալի փոխարքայէն նախ հայոց առաջնոր-

---

<sup>6</sup> Այսինքն *շարիի*՝ իսլամական կրօնքի օէնք:

դարանին եւ յետոյ ուրիշ առաջնորդարաններու ալ տրուած են շնորհիւ Պօղոս պէյ Եուսուֆի:

Առաջնորդարանս տեղական կառավարութենէն ճանչցուած կանոնագիր ունենալու խնդրոյն ծագման պահուն, ազգային սահմանադրութեան թարգմանութիւնը ղրկած է կառավարութեան եւ հաղորդած թէ այդ ըլլալով առաջնորդարանի կանոնագիրն, ինքն ալ հաճի ճանչնալ զայն. սակայն կառավարութիւնը այդ հաճութիւնն ունեցած չէ: Առաջնորդարանս ջանացած է յետոյ կանոնագրի յատուկ ծրագիր մը մշակել եւ Պոլսոյ պատրիարքարանի բովէն անցընել յետոյ, ներկայացնել տեղական կառավարութեան, սակայն զանազան տեղական դժուարութիւններ մանաւանդ համաշխարհային պատերազմը ու անոր ծանրակշիռ հետեւանքները որոնք մեծապէս ազդեցին Թուրքիոյ, Եգիպտոսի եւ թէ ամէն տեղերու հայութեան վրայ, մինչեւ հիմա արգելք եղան այս էական խնդիրը կարգադրելու եւ առաջնորդարանը զերծ պահելու կարգ մը անպատեհութիւններէ:

Կաթողիկէ հայոց առաջնորդարանը Եգիպտական կառավարութենէն 1905էն իվեր ճանչցուած կանոնագիր ունենալով արդէն, զերծ է այս տեսակ անպատեհութիւններէ: Իսկ անտարանական հայոց *սթաթի-փերսոնէլի* մասին այս յօդուածին մէջ խօսեցանք արդէն:

Կաթողիկէ հայերը 1894ին է որ ունեցած են թեմակալ առաջնորդ, սակայն իրենց գոյութիւնն Եգիպտոսի մէջ երկու-երեք դարու հնութիւն ունի: Լիբանանի կաթողիկոսներն անոնց կը ղրկէին հոգեւոր հովիւներ, իրենց հոգեւոր պաշտամունքը կը կատարուէր լատինաց եկեղեցիներուն մէջ եւ ննջեցեալները կը թաղուէին լատին գերզմանատունը: Իրենց այս վիճակը շարունակեց մինչեւ որ համայնքն ունեցաւ իր սեփական եկեղեցին ու գերզմանատունը: Այժմ համայնքը թեմ է Պոլսոյ պատրիարքութեան:

Կաթոլիկ համայնքի անդամոց ընդհանուր թիւը կը կարծուի ըլլալ 6000 որոնցմէ 4000ը Գահիրէի շրջանին մէջ եւ 2000 Աղեքսանդրիոյ:

Հայ անտարանական համայնքն հազիւ 40-45 տարուան անցեալ մը ունի Եգիպտոսի մէջ եւ իր թիւը 3-400է անելի չէ:

## ԵԳԻՊՏԱԿԱՅՈՅ ԶԲԱՂՈՒՄՆԵՐԸ, ՀԱՅԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ֆաթիմեաններու օրով, որոնք Եգիպտոսի վրայ իշխեցին 969-1160 հայերն ոչ միայն շատ բազմաթիւ էին այլեւ շատ երջանիկ: Տէրութեան ամէնամեծ քաղաքային եւ զինուորական պաշտօններուն զլուխը շատ մը հայեր կը գտնուէին: Մեծահոշակ Պետր էլ Կեմալն ծագումով հայ մըն էր:

Ֆաթիմեաններու անկումէն յետոյ հայոց աստղը եթէ չխաւարեցաւ բոլորովին Եգիպտոսի հորիզոնին վրայ, շատ զգալապէս նուաղեցաւ:

Գրեթէ անփոփոխ այսպէս տեսց մինչեւ մեծանուն Մոհամէտ Ալիի կայսերական հրովարտակով Եգիպտոսի փոխարքայ անուանումն, որ պատահեցաւ 1805ին: Այդ ժամանակ Եգիպտոս կէս անկախ եղաւ Բ. Դուռնէն, ունենալով յատուկ նախարարութիւն: Հոչակաւոր Պօղոս պէյ Եուսուֆեան շատ երկար տարիներ եղաւ գլխաւոր նախարարն անդրանիկ փոխարքային: Նուպար փաշա շատ

մեծ անուն ձգեց Եգիպտոսի պատմության մէջ: Եգիպտական կառավարութիւնը փոխարքայութեան վերածուելէն մինչեւ անգղիական թեւարկութեան հաստատումը, այսինքն 1805էն 1914, 109 տարուան ժամանակամիջոցի մը մէջ 65 տարիներ հայերն են որ վարած են եգիպտական կառավարութեան արտաքին գործոց նախարարի դժուարին ու փափուկ պաշտօնը: Կառավարական ու պետական ուրիշ բարձր պաշտօններու եւ անհատական փայլուն դիրքերու վրայ բազմաթիւ հայեր գտնուած են Մուհամմէտ Ալիի եւ անոր յաջորդող փոխարքաներու օրով մինչեւ անգղիական թեւարկութիւնը, որ պիտի կրնանք ըսել, փակեց պետական ասպարէզը հայոց առջեւ: Եւ եթէ այս տարի անգղիական թեւարկութիւնը վերցաւ Եգիպտոսի վրայէն, սակայն երկրին պայմաններն ու հանգամանքները այնպէս են որ ալ բնաւ յոյս չկայ որ հայերը այսուհետեւ պետական պաշտօններուն մէջ փայլին անցեալին մէջ եղածին նման: Եւ արդարեւ ներկային մէջ ոչ մէկ նախարար, ոչ մէկ փոխնախարար, ոչ մէկ դատաւոր եւ ոչ մէկ բարձրաստիճան պաշտօնեայ կայ պետական շրջանակին մէջ:

#### ՀԱՅԵՐՈՒՆ ԱՐՇԵՍՆԵՐԸ

Պանքերու եւ զանազան մեծ ընկերութեանց մէջ կան բաւական թուով պաշտօնեաներ, որոնց մէկքանին կարելոր: Կան մէկքանի հողատէրեր եւ վաճառականական կարելոր տուներ: Ծխախոտի առետուորին մէջ հայերն առաջինն են եւ ունին 5-6 մեծ գործարաններ, կան մէկքանի սեղանաւորներ, սակայն մանր առետուորով զբաղողներու թիւը շատ անելի մեծ է:

Ոսկերչութեան մէջ հայերն իրենց հաւասարող չունին: Արուեստի եւ արհեստի բոլոր ճիւղերուն մէջ շատ կամ քիչ թուով հայեր կան եւ յաջողակ են: Կան բաւական թուով մեքենագէտներ, երկրաչափներ, ճարտարապետներ եւ բժիշկներ:

#### ԼԵԶՈՒՆ ԵՒ ԲԱՐՔԵՐԸ

Հին գաղթականները - 1895էն առաջ Եգիպտոս գտնուողները - մեծ մասամբ արաբախօս են. ասոնց մէջ քիչ կայ թրքախօս եւ անելի քիչ հայախօս: Հին գաղթականները գրեթէ ամբողջութեամբ իւրացուցած են խպտիներու բարբերն ու սովորութիւնները:

Նոր գաղթականները եկած են գլխաւորաբար Պոլիսէն եւ Կեսարիայէն, երկրորդական գծին վրայ են Իզմիր, Վան, Արաբկիր, Ատանա, Ակն, Թոքթաթ, Սեբաստիա եւ ուրիշ քաղաքներ: Ասոնք, կեսարացիներու եւ ատանացիներու մէկ մասն ի բացառեալ, կը խօսին հայերէն եւ առայժմ հակամէտ են պահելու իրենց ծննդավայր գաւառներու բարբերն ու սովորութիւնները:

#### ՄԱՄՈՒԼ

Եգիպտոսի անդրանիկ լրագրիրն *Արմաւենիի* առաջին թիւն լոյս տեսած է 1865ին, Աբրահամ Մուրատեանի խմբագրութեամբ: *Արմաւենի* սակայն ութ ամիս վերջ կը թառամէր եւ քսաներկու տարիներ յետոյ՝ 1887ին կը սկսէր հրատարակուիլ *Նեղոս*, որ սակայն անելի շուտ կը ցամքէր: Ինը տարի յետոյ, ող-

բացեալ Յարութիւն Ալփիար կը հիմնէր իր *Փարոսը*, որուն լոյսերն ալ, արծարծուած երկիցս, մարեցան առանց երկար ժամանակ շողալու:

Անկէ յետոյ բազում լրագիրեր ու հանդէսներ հրատարակուեցան. ոչ մէկն ունեցաւ սակայն երկար կեանք: Մասնաւոր յիշատակութեան արժանի է որ հայ գրականութեան ամէնէն փայլուն դէմքերէն Օտեան, Թէքէեան, Պարթեւեան, Կիրճեան եւ եղբայրական գնդակին զոհը անմահն Արփիարեան եղած են եգիպտահայ թերթերու հիմնադիր, վարիչ խմբագիր եւ խմբագրապետ:

Ներկային մէջ կը հրատարակուին մէկ ամէնօրեայ լրագիր *Արեւ* Աղեքսանդրիոյ մէջ, օրկան Ռամկավար [Ազատական] Կուսակցութեան եւ մէկ երկօրեայ լրագիր՝ *Յուսաբեր*, Գահիրէի մէջ, օրկան Հ.Յ.Դաշնակցութեան: Թէեւ Հնչակեան Կուսակցութեան մէկ ճիւղը կայ, սակայն մասնաւոր թերթ չունի:

Կան նաեւ քանի մը հանդէսներ, որոնց գլուխը կը գտնուի Գուրգէն Մխիթարեանի *Նոր Շարժումը*:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած են քանի մը տպարաններ, որոնց ամէնէն հինը հազու 20-25 տարուան հնութիւնն ունի եւ որոնք հանդէսէ գատ առաւել կամ նուազ կարեւոր գրքեր ալ հրատարակած են:

#### ԵՂԻԱՅԵԱՆ ՊՈՒՐՍ

Բարեյիշատակ Գրիգոր Եղիայեան, որուն մահը տեղի ունեցաւ իբր 10 տարի առաջ, ստորին Եգիպտոսի մէջ կտակած է ընդարձակ արտ մը: Այս արտին եկամտոտու վրէպեան 7-800 ոսկի, Գալստեան վարժարանի շրջանաւարտ, նիւթապէս անկարող աշակերտները՝ *քոլէժներու* ընթացքն աւարտելէ յետոյ, կը ստանան համալսարանական կրթութիւն:

Գահիրէի *քոլէժներուն* մէջ այժմ կան քանի մը *պուրսիէներ* եւ երկու հատ ալ Ֆրանսայի համալսարաններուն մէջ: Եղիայեան *պուրսին* գործադրութիւնն, բարերարին կտակին համաձայն՝ յանձնուած է Գահիրէի առաջնորդարանին, որու կողմէ յատուկ յանձնախումբ մը կազմուած է այս նպատակով:

#### ՄԵԼԳՈՆԵԱՆ ԵՂՐԱՐՅ ԿՏԱԿ ԿԱՄ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արժէքը իբր 600,000 եգիպտական ոսկի, ամէնէն հոյակապ նուիրատուութիւնն, որ հայ պատմութիւնն իր ծագումէն ի վեր արձանագրած ըլլայ ի նպաստ ազգին կամ հայրենիքին: Ի վեր եղած դժուարութիւններն հարթուած ըլլալով այժմ, ցանկալի եւ յուսալի է միանգամայն որ գործադրութիւնն սկսի անյապաղ:

#### ՏԵՂԱԿԱՆ ՊԷՏՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ կան մարմնամարզական ընկերութիւններ: Նոյն քաղաքներուն, Թանթայի եւ Զակազիկի մէջ բացուած են զանազան ընթերցարաններ: Ասոնք շատ օգտակար դեր կը կատարեն ժողովուրդին մտաւորական զարգացման գործին մէջ: Կայ նաեւ Հայկական Սրահն, որէ թէեւ մասնաւոր խմբակցութեան մը կը պատկանի, սակայն շատ անգամ հոն կ'ըլլան բանախօսութիւններ եւ հաւաքոյթներ՝ ազգային խնդիրներու շուրջ: Գահիրէն եւ Աղեքսանդրիան ունին ուրոյն աղքատախնամ ընկերութիւններ: Անոնց եկամտութիւնն մէջ մեծ մաս կը բռնեն պետական արտօնութեամբ կազմակերպուած

վիճակահանությանց հասոյթները: Աղեքսանդրիոյ մէջ վերջերս կազմուեցաւ Գեղարուեստասէր Տիկնանց Ընկերութիւն մը:

Ազգին ու հայրենիքին կարօտութեանց ձեռք կարկառելու եւ անոնց սէրն Եգիպտոս բնակող ազգայնոց սրտին մէջ վառ պահելու նպատակով կազմուած մէկքանի արական եւ իգական ընկերակցութիւններ կան ի Գահիրէ եւ յԱղեքսանդրիա: Իր կարեւորութեամբ անոնց զլուխը կը գտնուի ՀԲԸՄիութիւնը, որ, ինչպէս յայտնի է, 1906ին վսեմ. Պօղոս փաշա Նուպարի նախաձեռնութեամբ կազմուած է ի Գահիրէ որու ազգին եւ հայրենիքին ցաւերն մեղմացնելու համար կատարած դերը պարզապէս նախախնամական է: Յետոյ կու գայ Միացեալ Որբախնամ Ընկերութիւնը, որ ներկայիս Ճինիէի (Սուրիա) մէջ կը պահէ տիպար որբանոց մը:

Մասնաւոր յիշատակութեան արժանի են Գահիրէի Հայուհեաց Միութիւնը եւ նորակազմ Հայ Տիկնանց Բարեսիրական Ընկերութիւնը եւն.:

Սուտանի իբր 2-300 հայերն Եգիպտոսի առաջնորդութեան ենթակայ են, Գահիրէի երեսփոխանաց ընտրութեան համար քուէ կու տան եւ առատօրէն կը մասնակցին ազգային ամէն հանգանակութեանց:

Պատերազմի սկիզբէն մինչեւ այսօր Եգիպտոսի եւ Սուտանի հայութիւնը չհաջուելով Բարեգործական Ընդհանուր Միութեան մեծագումար նպաստները եւ այն նպաստները որոնք եղած են յԵգիպտոս գաղթող իր եղբայրներուն համար, արտասահման դրկած է աւելի քան 150,000 ոսկի աղէտեալ եղբայրներու օգնելու համար: Նշանակալից է այս գումարն, քանի որ գրեթէ ամբողջութեամբ հայթայթուած է այն միջակորեար դասակարգէն եւ հասարակ ժողովուրդէն:

Եգիպտոսի առաջնորդարանն իրերու ներկայ կացութեան մէջ եւ ցնոր տնօրինութիւն եւ յանուն Պոլսոյ պատրիարքարանի առժամապէս իր իրաւասութեան ներքեւ ունի Հապէշիստանի կենտունակ հայ գաղութը:

## THE ARMENIAN COMMUNITY OF EGYPT (Summary)

N. M. Aghazarm

This unpublished document, written in 1922-23, gives a brief overview of the Armenian community of Egypt. It starts with a short introduction on the strong political, military and numerical presence of the Armenians in 11<sup>th</sup>-12<sup>th</sup> century Fatimid Egypt, then praises the wise policies of Muhammad Ali, who called in a number of enlightened Armenians and groomed others, who eventually held pivotal positions in the state apparatus. The paper notes that, with the arrival of the British, the Armenians were left out of the political system, and there was no likelihood that with their departure the Armenians would hold any key positions in the state. The paper speaks about the changing number of Armenians in the previous decades, as they fled from the Hamodian massacres, the Cilician holocaust, the Armenian Genocide and the Smyrna tragedy. It notes that some 5000 out of a total of 15,000 Armenians living in Egypt have Egyptian citizenship.

The paper describes, as well, the administrative structure of the community in both Cairo and Alexandria, the schools, the churches, the jurisdiction of the prelacy, the media, philanthropic organizations and the existence of both political and cultural organizations. It also provides a brief overview of the careers of the Egyptian Armenians, languages used, traditions practiced, educational funds, and the Armenian tobacco business.

## From Sudan to Siberia: Mkrtich Ulikian's Odyssey<sup>1</sup>

Artsvi Bakhchinyan  
artsvi@yahoo.com



In the distant 1980s, during one of the faculty English lessons at school, classmate Azatouhi Ulikian showed us a family photo. “This is my grandfather in Sudan,” she said.

In the middle of the black-and-white photo was a man surrounded by half-naked women and men. What a surprise! So the grandfather of one of our schoolgirls in this gray Soviet school lived in distant and exotic Africa and was photographed with the people of one of the local tribes, whose women were half-naked! That photo left a strong impression on me. A few years later, based on that, I made a small painting. And many years later, studying the history of African-Armenian communities, I remembered that photo and decided to follow in the footsteps of Sudanese-Armenian Ulikian.

I found Azatouhi Ulikian, now the holder of a doctorate, an associate professor at the Chair of Computer Systems and Networks at the National Polytechnic University of Armenia, and Educational Engineer at the Armenian National Engineering laboratories. She introduced me to her uncle, Andranik Ulikian, who was born in Sudan. The latter gladly agreed to tell the extremely remarkable story of his family, which I present below.

### AFRICAN DEPORTATION

Mkrtich Ulikian (in English he transcribed his name as Magarditsh Ouliguian) was born in 1904 in Constantinople to Toros and Hnazand Ulikian. He had two brothers, Garbis and Takvor, and a sister, Madeleine. During the Armenian Genocide, the father took the children to an American orphanage in Constantinople, made them climb over the fence, and left, hoping that the children would be safe. Afterwards Toros Ulikian left for Egypt. In 1920, 16-year-old Mkrtich and his brother Takvor left their younger brother and sister at the orphanage and moved to Egypt to join their father.

---

<sup>1</sup>*The Armenian Mirror-Spectator*, June 4, 2020.

From a young age, Mkrtych had a great love for cars, and he became a car mechanic in Egypt. Learning that in neighboring Sudan there was a great demand for car specialists, Mkrtych collected a little money and went alone to the Sudanese city of Obeid, despite knowing no one there. In this city, he met a local man who told him that a wealthy Armenian by the name of Sarkis Agha lived in Obeid. The man took Mkrtych and showed him Sarkis' two-story house. One day Mkrtych went and knocked on the door of the house, asking the Sudanese servant to tell the landlord that a compatriot wanted to talk to him for five minutes. The servant soon told Mkrtych that the landlord had invited him inside. He waited for 10 minutes, was served cold lemonade, and then a large man with a mustache and wearing a house robe came down the stairs.

Sarkis Agha was very happy to meet his young compatriot, looked carefully into Mkrtych's eyes and immediately understood his soul. "How can I be useful, son?" Sarkis Agha asked. Mkrtych said that he wanted to start a truck business, but did not have enough money to buy a car. Five minutes later, Sarkis Agha handed Mkrtych the funds he needed. The young man waited for him to ask for a receipt. "My son," said Sarkis Agha, "I know why you are not leaving. If I had not been an honest man, I would not have given you money. Go and buy what you want with this money, enjoy it, and when you do not need that money, then you will repay your debt."

Thus, thanks to the support of his Armenian compatriot, Mkrtych Ulikian's business started. One truck became two, three and then four, and in the depths of Africa, Mkrtych ran his own business, transporting people and cargo from one Sudanese settlement to another.

Soon, fortune smiled on him in his personal life too. In El Obeid, he met a businessman named Kyriako Hermes, whose wife was an Armenian woman named Aghavni. Some time later, Aghavni's sister's daughter, Azatouhi Matosian, came from Khartoum to see her aunt. Azatouhi was born in Ankara to a large Armenian family. Her father, Minas, had been a soldier in national hero General Andranik's army; then her family was deported and settled in Khartoum, where Minas had several shops. Kyriako Hermes introduced Mkrtych to Azatouhi, and the two hit it off. Mkrtych's parents came from Egypt, and the young couple got married.

Their first son, Andranik, and three others were born in Sudan, while two more were destined to be born in the Soviet Union. Mkrtych gave Armenian names to all the children, except for daughter Madeleine, whom he named in memory of his prematurely deceased sister in Constantinople. The Ulikians were deeply religious people who gave their children a Christian upbringing. Mkrtych Ulikian subscribed to Cairo's *Arev* (Sun) daily newspaper. There was no Armenian school in El-Obeid, and the father ordered them to speak only Armenian.

Mkrtych had a registered cargo office with four trucks belonging to him and working all over Sudan; these provided him with a stable income. He recognized all of Sudan and its peoples, the Arabs, the Ethiopians, the Copts, and the local tribes. He once transported a local clergyman with his 40 wives in the back of a truck.

Once, while passing through a remote village, the truck was surrounded by the members of a local tribe. Mkrkich was told that their leader was ill, and they threatened not to release him until he and his team had helped the patient. Fortunately, Mkrkich had a painkiller that alleviated the condition of the sick chief. The incident is reminiscent of the photo mentioned at the beginning of this article, where Mkrkich Ulikian is standing in front of a sick tribal leader, surrounded by half-naked residents of the village. This was a special honor bestowed on Mkrkich because, according to the laws of that tribe, no one had the right to stand ahead of the tribal leader.

In their free time, Sudanese Armenians spent time together, often with 25-30 people embarking on an outing, during which Mkrkich provided a barrel of beer for them. He always had two guns in his car and one gun in his pocket to protect himself from the dangers on the roads.

There were few Armenians in Sudan, about 800 people, and their number has decreased year by year. Most of them left for Egypt.

#### THE HOMELAND IS CALLING

After World War II, when the repatriation of Diaspora Armenians to Soviet Armenia began, Mkrkich Ulikian also decided to join the caravans.

Receiving the privilege of joining the caravan of repatriates from Egypt, Ulikian sold his house, gave the four trucks and the prosperous life to their Sudanese servants, and left for Egypt with his family. For the trip to Armenia, he bought four new Ford trucks and placed boxes of different goods in each of them: food, clothes, soap and car spare parts. In Alexandria, these cars were delivered to the port to be loaded on the ship. Three other Sudanese-Armenian families, the Nalchajians, the Fabrikatorians and the Semerjians, were also there in their cars. In Cairo, Mkrkich met a well-known Arab businessman who, knowing about his intention to move to the Soviet Union, advised him not to go to a poor country that had just emerged from the war. He advised Mkrkich to return to Sudan and promised to provide him with a more extensive cargo business, sharing the profits with him. Mkrkich also met with his French, Belgian and Danish friends, who proposed moving to Europe together and working together, but Ulikian was not to be swayed.

Those who want to emigrate, because of the quarantine announced in Egypt, were not allowed to leave the country. The Ulikians were forced to stay in Cairo for a year with the others; Andranik's son attended the kindergarten of the local Kalousdian School.

The day of departure arrived. The repatriates boarded the Soviet ship, which had been confiscated during the war from Germany and renamed "Pobeda" (Victory). By the way, the future famous singer Gohar Gasparian was traveling on the same ship. The owners of the cars were informed that, due to the lack of space on the ship, their cars would come on the next Romanian ship, the "Transylvania." Those cars never arrived.

## THE COLLAPSE OF DREAMS

One kilometer from the port of Batumi, “Pobeda” stopped, and the passengers were ordered to dump the food they had into the sea, reasoning that there was everything in the Soviet Union and that it was forbidden to enter the port with food. People started throwing their food into the water, and a few minutes later they were surprised to see that many people were swimming from the shore and taking everything that had not sunk. Seeing this, Mkrtych’s brother-in-law hid four pieces of *basturma* in their woolen blankets. People started looking at the port of Batumi through binoculars and saw with horror that a woman was holding a carbine in her hands near the checkpoint, and another was carting charcoal in a wheelchair. The Egyptian-Armenians, who were mostly wealthy, realized that they had fallen into a trap.

At the port, people filled the barracks, and they were offered sour borscht, which the Egyptian-Armenians had never tasted before. Seeing the low-quality black bread, they mistook it for chocolate cake, until they bit into it and saw it ooze salt water when squeezed.

Arriving in Yerevan, the Ulikians were housed in a three-story building which had just been built by German prisoners of war. Mkrtych started working at a truck repair point. Initially, he went to work in his English suit and tie, until he was told that it was not appropriate attire for a Soviet worker; the boss told him: “Take that rope off your neck!”

After the war, wishing to compensate for the loss of human resources, the Soviet government organized a campaign to bring back to the historical homeland representatives of the people of the USSR who had emigrated. The Soviet state, at the cost of bringing hundreds of thousands of repatriated people into the country, wished to strengthen its image as a powerful state that had won the war. Then it set about freeing itself of the repatriated Armenians by exiling many of them to Siberia and the Altai.

On June 12, 1949, at 2 p.m. someone knocked on the door of the Ulikians’ apartment. An Armenian captain, with two Russian soldiers, entered and ordered them to collect some items immediately and leave the house. Seeing four small children and one in a diaper, the captain was filled with pity. “I am commanded to take you,” he said. “Don’t curse me, big brother. If I don’t take you, they will take me with you. I can only do you a favor now. I should give you ten minutes to collect your property, but I’ll give you half an hour. Take what is valuable with you and, especially, warm clothes.” Mkrtych took his wife’s jewelry, which would later come to their aid in their troubled days, so he remembered that captain with gratitude for the rest of his life. In the commotion, they left the baby in a diaper at home and had to return for him. In the village of Ulukhanlu (now Masis), the Ulikians, along with thousands of other repatriated people, filled the wagons of a freight train. And after a cruel journey of eighteen days, those who had obeyed the call of the homeland, as a result of a cruel game of fate, found themselves in wild and wretched Siberia, as Stalin’s exiles. Their only fault was the desire to live in the

homeland and serve it, for which they had left their quiet life and become the victims of the insidious game of Soviet propaganda.



Mkrtich Ulikian and some of his staff in Sudan

#### LIFE IN THE TAIGA

Thus, for the Ulikians, who had not yet got to know Armenia properly, Sudan was replaced by the Zalesovsky district of Altai Krai for six years. There were 45 exiled Armenian families in that district, 25 of whom were repatriated people. Mkrtich's family was taken 32 kilometers from Zalesovo, deep into the taiga, where there were only three hunting lodges and a small kiosk. They gave him a tent and ordered him to cut down the trees and build a house. Mkrtich built a wooden cabin with the other exiles. The woolen blankets brought from Africa allowed the family to withstand the 35-40 degrees of frost. But even in Siberian conditions, the Ulikians were able to maintain their Christian identity; they taught their children to cross themselves before meals, which was rare in the Soviet reality.

Mkrtich Ulikian learned the reason for his being exiled a year later. One night in 1950, at 2 a.m., there was a knock on the door of his Siberian cabin, and Mkrtich was taken away. Two hours later, he was brought home, beaten and bloody. In order to have grounds for his exile, Mkrtich was told to sign that he was a member of the Armenian Revolutionary Federation, but he refused to sign the confession. The same story was repeated in 1951. He was beaten again and refused to sign again. Moreover, this happened due to an order received from Armenia.

Mkrtich went to work at a local power plant while his wife, Azatouhi, that educated, mollycoddled, aristocratic lady, and her 8-year-old son Andranik tore up the stumps near the cabin to sow potatoes. It was very difficult to get food. Mkrtich soon learned that residents of the nearby village of Obukhovo were selling rabbit meat. Together with his eldest son, he reached the village in the woods, ignoring

the cold and the fear of wild animals, gave away his wife's golden bracelets, and bought frozen rabbits. Thus, in the harsh conditions of Siberia, potatoes and rabbit meat were the salvation of the Ulikians. And the large family was made whole with another daughter who was named after Mkrtych's mother, Hnazand.

#### SURPRISE MEETING IN BARNAUL

Two years after Stalin's death, in 1955, Mkrtych wrote a letter to Kliment Voroshilov, chairman of the Presidium of the Supreme Soviet, stating that they, being from Africa, were not accustomed to the cold climate and asked for permission to return to Armenia. The answer was not long in coming; a letter signed by Voroshilov himself came in 10 days. However, it was written that they could move to any republic of Central Asia, but not to the Caucasus. Mkrtych soon received official permission to leave Siberia. The Ulikians traveled by train to the main city of Altai Krai, Barnaul, from where they were to travel by train to Central Asia. However, as the number of people wishing to leave was high, they could not validate their tickets for three days. At the train station Mkrtych by chance saw another repatriated Armenian, Mardo Pokrachian, who was a boxing champion in the Middle East. Mkrtych did not know him personally, so, wanting to attract his attention, he told his son loudly in Western Armenian, "Son, run and get some boiled water!" Hearing this, Mardo approached Mkrtych and said, "Brother, you are an Armenian. You are one of those who came from there, right?" "Yes, I am from Egypt." "What's your name?" "Ulikian." "Are you Ulik's brother?" Mardo asked, hugging Mkrtych. It turned out that he knew one of Mkrtych's brothers, whom he affectionately called Ulik.

Knowing the plight of the Mkrtych family, Mardo, a tall, very hairy man who had spent four years in prison for beating five Russians for mocking his hairiness, all of whom were frightened, took the family's train tickets. Opening the door with a kick, he entered the station chief's room and, in his broken Russian, demanded written permission to validate the Ulikians' tickets. Then he approached the cash register and forced them to validate the tickets, telling the protesting crowd that he was doing it for a family with six children.

The next train arrived only the next day. Mardo came back to the station with his friend Kevork, also an exiled repatriated person, who, as it turned out, was also known by Mkrtych. Mardo approached the train door and shouted at the crowd, again in his broken Russian, that the first to enter the train was the family with six children. A man with a briefcase and hat approached and yelled at Mardo. The former athlete slapped the man who fell on his back. Only then was the crowd silenced. Kevork was the first to enter the train and take a seat for the Ulikians. Before leaving, Mkrtych asked Mardo if he was going to return to Armenia. "I have found my life by terrorizing the Russians here. Should I go there and be arrested again? No, I will not go," Mardo said. He later visited Armenia, but lived most of his life in Barnaul and died there.

## AND NOW – UZBEKISTAN

The Ulikians reached Uzbekistan and settled in Fergana. As a driver, Mkrtych went to work in a car park in the Toshlok region, 48 kilometers from the city. When he first went there, his son Andranik joined his father to translate the conversation into Russian. Mkrtych, who was fluent in six languages, did not want to learn good Russian, and Andranik, who had gone to school in Siberia, did not learn to read and write in Armenian and always surprised those around him with his impeccable Russian accent. Therefore, we can imagine the extreme astonishment of the Russian officer during his military service when, after praising Andranik Ulikian's perfect Russian, he saw the note "Sudan, Africa" in his passport as his birthplace.

The Ulikians lived in Uzbekistan for a year. During this time, Mkrtych supplied cotton seeds and raw materials to the processing factories in the Toshlok region. He especially remembered a funny incident that happened in Uzbekistan during the years he lived there. Mkrtych reproduced his photo with the Africans and kept a copy in his wallet, realizing that it could be useful when he met traffic inspectors. Once his car was stopped by the senior traffic inspector, a captain, and instead of checking the driver's license, the captain started to study the African photo and asked about it, especially about the naked women. In the end, he refused to return the photo, and instead he did not bother Mkrtych again.

In 1956, the new Soviet leader, Nikita Khrushchev, publicly condemned Stalin's cult of personality. The Ulikian finally received the official certificate of the authorities, according to which they were considered unjustifiably repressed and received the right to return to Armenia.

## "WE DO LIKE EVERYONE ELSE"

Overcoming new kinds of difficulties, Mkrtych's children became owners of businesses and had families in Armenia. Mkrtych himself continued to work as a driver. He never regretted repatriation, did not try to leave the Soviet Union, did not complain about the trials that came into his life, and when his son Andranik sometimes complained about the difficulties of Soviet life, he always said: "Never mind, son, we do like everyone else." Only two days before his death, Mkrtych, re-evaluating his past life, considered it necessary to apologize to his son for bringing them to the Soviet Union. "Never mind, Dad, we do like everyone else," Andranik replied to his father.

Mkrtych Ulikian lived for 93 years, dying in 1997, and his wife, Azatouhi, passed away three years later at the age of 82.

While still living in the depths of Africa, Mkrtych Ulikian expressed concern about the future of his children growing up in unfavorable conditions for Armenians. Today, his descendants continue to live mostly in Armenia, each contributing to his chosen field. Thus, at the cost of certain trials, the efforts of Mkrtych Ulikian to preserve Armenian identity, as we see, have not been in vain.



Mkrtich Ulikian and his family

**ՍՈՒՏԱՆԵՆ ՍԻՊԵՐԻԱ. ՄԿՐՏԻՉ ՈՒԼԻԿԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՈՂԻՍԱԿԱՆԸ  
(Ամփոփում)**

**Արծուի Բախչինեան**  
artsvi@yahoo.com

Գրությունը կենսապատումն է Մկրտիչ Ուլիկեանի եւ իր ընտանքինի: Ան ծնած էր Պոլիս, 1904ին: 1920ին, իր եղբոր հետ կը մեկնի Եգիպտոս, ապա կ'անցնի Սուտան ուր կը հիմնէ ապրանքափոխադրութեան ընկերութիւն, կ'ամուսնանայ եւ 1946ին ընտանեօք կը ներգաղթէ Խորհրդային Հայաստան, ուրկէ ընտանեօք կ'աքսորուի Սիպերիա, 1950ին: Այնուհետեւ կը նկարագրուին Մկրտիչ Ուլիկեան ընտանիքին դիմագրաւած սիպերիական մարտահրաւերները, հուսկ անոնց վերահաստատումը՝ Ուզպեքիստան:

# Սուտանահայ Գաղութը<sup>1</sup>

Պօղոս Շահմելիքեան  
shahmelikian@yahoo.com

Ջարդ, կոտորած եւ տեղահանութիւն, ապա՝ Սփիւռք: Միջին Արեւելքէն Եւրոպա, զոյգ Ամերիկաներ, Աւստրալիա եւ Ափրիկէ: Որո՞ւ մտքէն կ'անցնէր, թէ պիտի ունենայինք հայկական գաղութ մը Ափրիկէ՝ Սուտանի մէջ: Եւ ի՞նչ գաղութ: Քանակով փոքր, սակայն որակով՝ զարգացած, նիւթապէս բոլորն ալ ինքնաբաւ, քանի մը տասնեակ ընտանիք ընդամենը:

Լիբանահայ բոլոր երգիչներու եւ նուագախումբերու նման, Five Fingersի երգացանկը կը բաղկանար օտար երգերէ, իսկ երբ հայերէն էսթրատային երգը մուտք գործեց, մենք եւս մեր համեստ մասնակցութիւնը բերինք արձանագրելով հայերէն ալպոմ մը: Այդ ալպոմը հասած էր նաեւ Սուտան եւ 1974ին Նոր Տարուայ շրջանին, մէկ ամսուայ համար հրաւիրուեցանք ճոխացնելու իրենց երեկոները:

Օղանաւր կ'իջնէ Խարթումի օդակայանը: Քանի մը ազգայիններ եկած են մեզ դիմաւորելու: Առաջին վայրկեանէն կը զգաս իրենց ջերմ ու հարազատ մօտեցումը եւ միեւնոյն ժամանակ կը զարմանաս, երբ մեզի օդակայանէն դուրս կը հանեն քաղաքական մարդոց վերապահուած բաժինէն, առանց պայուսակները քննելու: Այս մէկը կը փաստէ, որ տեղոյն հայերը որքան վստահութիւն ներշնչած են պետական շրջանակներու մէջ եւ որքան մօտ են պետական մարդոց:

Արդէն ուշ է: Մեզ կը հասցնեն պանդոկ՝ խոստանալով յաջորդ օրը մեզ տանիլ հայկական ակումբ: Յաջորդ առաւօտ, քանի մը ազգայիններու ընկերակցութեամբ, արդէն հասած ենք «Հրանդ մարզարան»: Իրականութեան մէջ աւելի համալիր է, քան ակումբ: Հսկայ տարածութիւն՝ օժտուած մեծ լողաւազանով, ֆութպոլի եւ պասքեթպոլի դաշտերով, փոքրերու յատուկ խաղավայրով, բացօթեայ թատրոնով եւ արդիական ճաշարանով: Հողը հայութեան նուիրուած է պետութեան կողմէ: Բոլոր ազգերն ալ ունին նոյնանման համալիրներ, եւ բոլոր համալիրներուն հողը նոյնպէս նուիրուած է պետութեան կողմէ:

Դժբախտաբար, երաժշտութեամբ զբաղած տարիներուս, բնաւ չէի մտածած հետաքրքրուիլ այցելած գաղութներու անցեալի մասին տեղեկութիւններ քաղելու մասին: Քանի մը հոգի, խօսակցութեան մէջ անդրադարձած էին, որ Եգիպտոսէն եկած ու հաստատուած են Սուտան, որովհետեւ այդ տարիներուն գործի պայմաններն ու պատեհութիւնները շատ աւելի լաւ էին, սակայն այդ չի նշանակեր, որ սուտանահայերը բոլորը եկած են Եգիպտոսէն: Հաւանաբար շատեր եկած են, նաեւ իրենց դրացի Եթիովպիայէն: Լիբանանէն հաստատուած միակ մէկ անձի հանդիպեցայ, եւ այդ անձը, միայն քանի մը տարի է հոն էր: Սուրիայէն եկած հայու բնաւ չհանդիպեցայ:

---

<sup>1</sup> Յօդուածին նախնական տարբերակը լոյս տեսած է *Ազդակի* 17 Մարտ 2014ի թիւին մէջ:

Սուտանահայերը մեծամասնությամբ զարգացած, արուեստասեր եւ կեանքի մէջ յաջողած անձնատրուութիւններ են, որոնցմէ քանի մը հոգին մեծ տպատրուութիւն ձգած են վրաս:

Գալուստ Ամիրայեան: Կարճահասակ, քիչ մը լեցուն, միշտ ժպտուն, չափէն անելի կատակասեր ու սրամիտ մարդ մը: Սուտանի մեր ամբողջ կեցութեան ընթացքին մեզի հետ է անդադար: Առաջին օրէն իսկ ծրագիրեր մշակած է՝ ու՛ր կարելի է տանիլ մեզ մեր ազատ ժամերուն: Հակառակ անոր որ վայելքի կեդրոնները հազուագիւտ են, սակայն այնքա՛ն տարբեր են աշխարհի որեւէ շրջանէ: Գիշերային վայրերը մատի վրայ կը համրուին, շարժապատկերի սրահները՝ բացօթեայ՝ հեղձուցիչ տաքին պատճառով: Գալուստ Ամիրայեան ճիգ չի խնայեր իր ժամանակին մեծ մասը մեզի հետ անցընելու: Գէշ կը զգանք, գիտենք, որ գործը երեսի վրայ ձգած՝ միակ մտահոգութիւնը մեզ առանձին չձգել է: «Պայման չէ, որ գործիս գլուխը ըլլամ,- կը պատասխանէ:- Ան իր ճամփան բռնած՝ հեշտութեամբ կը յառաջանայ»: Չենք ալ գիտեր՝ ինչ գործով կը զբաղի, միայն մէկ բան յստակ է. ամէն Հինգշաբթի երեկոյեան ո՛չ ակումբ կը հանդիպի, ո՛չ ալ մեզի հետ կ'անցընէ իր ժամանակը: Սուտանահայերը գիտեն, թէ ան ուր կը գտնուի: Այդ ժամանակի հանրապետութեան նախագահին փոքրիկ խաղընկերն է:

Վարուժան Չիրքինեան: Երկարահասակ, թուխ դէմքով, սակաւախօս, սակայն բոլոր սուտանահայերուն նման ծառայասէր, յաջողած գործատէր մըն է: Կօշիկի իր գործարանը ո՛չ միայն Սուտանի, այլ չափազանցած չեմ ըլլար, եթէ ըսեմ, թէ ամբողջ Ափրիկէի ամէնէն նշանաւորներէն մէկն է: Կը պատրաստեն մեծաքանակ մարզական կօշիկներ, այդ ժամանակ Լիբանանի «Պաթա» վաճառատան կօշիկները պատրաստուած էին Չիրքինեան եղբայրներու հսկայ գործարանին մէջ: Խարթում բնակող որեւէ հայ մտահոգութիւն չունի գործ փնտռելու: Անվարան կը դիմէ Չիրքինեան եղբայրներուն եւ նոյն օրն իսկ արդէն ընդունուած է գործի, տեղացի գործաւորներէն շատ անելի բարձր վարձատրութեամբ: Ինչպէ՛ս կարելի է մոռնալ Չիրքինեան եղբայրներուն ազնուական մայրը: Շաբաթը քանի մը անգամ կը հրաւիրէ մեզ իր տունը եւ հարազատ մօր մը նման կը գուրգուրայ մեր վրայ, իսկ Նոր Տարուան գիշերը, երբ ժամը 12:00 կը հնչէ, եւ ամէն մարդ կ'ողջագուրուի իր ընտանիքի անդամներուն հետ, տիկին Չիրքինեան բեմ կը վազէ, եւ «Ես ալ ձեր մաման եմ» ըսելով՝ կ'ողջագուրուի մեզի հետ, զգալով, որ մեր ընտանիքները ձգած՝ Նոր Տարին կը դիմաւորենք մեր հարազատներէն հազարաւոր մղոններ հեռու, Ափրիկէի մէջ:

Կարօ Վանեան: Թուխ դէմքով անձ մը, որ հանրածանօթ է ո՛չ միայն Սուտանի, այլ նաեւ Անգլիոյ Լոնտոն քաղաքին մէջ: Ձիարշափ ամէնէն նշանաւոր ձիերը իրեն կը պատկանին: Բոլոր ձիերուն տուած է հայկական անուններ, «Արարատ», «Մասիս», «Հայաստան», եւ ձիերուն կռնակին վրայ միշտ կարելի է տեսնել եռագոյն ծածկոց մը: Սակաւախօս է, եւ երբ հետոյ խօսի, կարծես կը քաշուի երեսիդ նայելու, հայեացքը միշտ գետին է:

Արշօ անունով երիտասարդ օրիորդ մը Սուտանի Խարթում քաղաքի ամէնէն նշանաւոր վարսայարդարն է, եւ պետական մարդոց կիները իր վարսատունը կը յաճախեն: Արշօ անունը յանկարծ դէպք մը յիշեցուց ինձի: Մանկութեանս

Ճեմարանի մէջ ունեցած եմ դասընկերուի մը Արշօ անունով, որ Սուտանէն եկած էր: Օր մը հայերէնի պահը կէս ձգելով՝ ուզեց պալէի դասի երթալ: Տակաւին աչքիս առջեւն է պարոն Եփրէմին ջղայնութիւնը. «Դուն որ Սուտանէն մինչեւ հոս եկած ես հայերէն սորվելու, հայերէնի պահը կէս ձգելով՝ կը նախըպրետս պալէի դասի երթա՞ն, գնա՞, ուզածդ ըրէ՛»: Օր մը Արշոյին հարցուցի.

- Պզտիկուց ակնոց կը գործածէի՞ր:
- Այո,- պատասխանեց:
- Պալէ կ'ընէի՞ր:
- Այո:
- Պէյրութ Ճեմարան յաճախա՞ծ ես:
- Այո, բայց այս բոլորը ուրկէ՞ գիտես,- հարցուց զարմացած:
- Դասընկերներ եղած ենք,- ըսի եւ պատմեցի վերը յիշած դէպքս:

Յուզուած ողջագուրուեցաք: Սկսած էր արցունքները սրբել: Ներկաները զարմացած՝ մէկ Արշոյին կը նայէին, մէկ՝ ինծի, առանց հասկնալու մեր յուզումին պատճառը: Անոնք, որոնք Ճեմարան յաճախած են, շատ ւառի լաւ կը հասկնան մեր յուզումին պատճառը: Ճեմարանի դասընկերները իրարու այնքան մօտ են, կարծես հարազատներ ըլլան:

Գօգօ անունով ուրիշ սակաւախօս անձ մը, որուն մակնունը չկրցայ յիշել, կը զբաղի ամերիկացի եւ եւրոպացի զբօսաշրջիկներ վայրի անասուններու որսորդութեան տանելով: Զբօսաշրջիկները հեռուէն միայն կը դիտեն արիեստավարժ սուտանցի որսորդներուն «քաջագործութիւնները»: Գօգոյին տարիքը հազիւ երեսուն կը թուի ըլլալ, սակայն երիտասարդ տարիքին մազերը ամբողջութեամբ ճերմկած են, եւ այդ պատահած է մէկ օրուան մէջ: Պզտիկ փակագիծ մը: Փիղ որսալը ունի իր իւրայատուկ ոճը: Միայն մէկ գնդակ ճիշդ ճակտէն՝ եւ արդէն փիղը անկենդան կը փռուի գետին, իսկ ձախող կրակոցի մը պարագային՝ վայրկենական տասնեակ մը փիղեր կու գան օգնութեան: Գօգօ կը պատմէ, թէ փիղերու ձախող որսորդութեան մը ժամանակ կը նշմարէ տասնեակ մը փիղերու արշաւը իր վրայ: Վախէն՝ անգիտակցաբար փամփուշտ մը օդը կը կրակէ, ու վայրկենական առաջին շարքի փիղը ուղղութիւնը կը փոխէ, անոր կը հետեւին մնացածները: Հրաշքով ազատած էր: «Տուն վերադարձիս, երբ հայելիին նայեցայ, նշմարեցի, թէ վախէս մազերս ամբողջութեամբ ճերմկած էին»:

Գօգօն անգամ մը մեզ տարաւ Սուտանի անտառները: Հեռուէն միայն վայելեցինք վայրի անասունները: Ոչ մէկ գնդակ՝ անասուններուն ուղղութեամբ: Զմայլեցանք անոնց տեսքով: Չտեսանք անոնց սպաննուիլն ու գետին փռուիլը, որովհետեւ որսորդութեան չէինք գացած:

Մեր Սուտան ժամանման առաջին օրն էր: Գաղութի հայերը հաւաքուեցան շուրջերնիս՝ հարցումներու տարափով: «Ծնողներդ ո՞րտեղացի են», «Լիբանան ազգական մը ունիմ, այսինչեաններուն ծանօթ էք» են., ապա կամաց կամաց ցրուեցան: Երբ ամէնքը հեռացան, քիչ մը հեռու կեցած սեւամորթ մը մօտեցաւ եւ մաքուր հայերէնով սկսաւ խօսիլ մեզի հետ: Երբ զարմացած իրարու նայեցանք՝

- Ինչու՞ կը զարմանաք,- ըսաւ,- գոյնս սեւ է ըսելով՝ հայ ըլլալու իրաւունք չունի՞մ»: Մեզի հարցուց, թէ ի՞նչ լեզուներով կ'երգենք: Շարեցինք այդ լեզուները, որ կ'երգենք:

- Թրքերէն ալ չէ՞ք երգեր,- հարցուց ամէնայն լրջութեամբ:

- Ո՛չ, ո՛չ,- բացականչեցինք միաբերան:

- Ինչու՞, ի՞նչ վնաս ունի, թրքերէն շատ անուշ երգեր կան:

- Ո՛չ, անկարելի է, թրքերէն չենք երգեր,- պատասխանեցինք, մինչ այդ արդէն սկսեր էինք նեղութիւն զգալ իր ներկայութենէն: Յանկարծ լրջացաւ:

- Ես ձեզի փորձեցի, եթէ թրքերէն երգէիք, ձեզի մէկ վայրկեան հոս չէի ձգեր,- ըսաւ եւ հայերէն երգ մը սկսաւ մրթմրթալ, մինչ այդ արցունքները սկսան առատօրէն հոսիլ աչքերէն ու հեռացաւ գլխիկոր:

Յետագային տեղեկացանք, թէ ծնողներէն մէկը հայ եղած է, սակայն հայերը շատ երես չեն տուած: Ուզած է հայու հետ ամուսնանալ, բայց բոլոր հայ աղջիկները մերժած են իր ամուսնութեան առաջարկը: Ստիպուած՝ ամուսնացած է սեւամորթի մը հետ, բայց կարճ ժամանակ ետք ան լքած է զինք. անկէ ետք դարձած է գինեմոլ:

Սուտանահայութեան միակ աղքատ հայն էր:

Սուտանահայութեան ապրելակերպը բոլորովին տարբեր է ուրիշ որեւէ հայկական գաղութի: Շատ փոքր գաղութ մը ըլլալուն՝ բոլորը իրարու ծանօթ են անխտիր: Ըստ Սուտանի սովորութեան, կէսօրուան ճաշի դադարը չափազանց երկար է, մօտաւորապէս 4 ժամ, ապա քանի մը ժամ վաճառատուները ետ կը բացուին ու երեկոյեան ժամը 8:00էն ետք կարծես կեանքը նոր կը սկսի: Իրարու տուն չեն այցելեր: Գաղութի հայերուն 99 տոկոսը «Հրանդ մարգարան»ն է ամէն գիշեր: Տունը ճաշ պատրաստելու սովորութիւն չունին: Համալիրը օժտուած է արդիական խոհանոցով: Շատեր նոյնիսկ կէսօրուան ճաշի համար կը նախընտրեն գալ եւ վայելել ամէնէն նշանաւոր ճաշարաններու համագոր ճաշեր, սակայն երեկոյեան՝ անպայման: Ունին մասնաւոր սրահ, ուր ուսանողները առանց խանգարուելու կրնան իրենց դասերը պատրաստել: Փոքրերը ունին յարմար խաղավայր: Աւելի տարեցները կը զբաղին թուղթ կամ նարտի խաղալով, իսկ իգական սեռը իրարու քով հաւաքուած՝ շատ հաւանաբար նորածնութեան կամ այլ նիւթերու շուրջ կը խօսակցին: Ունին մէկ հատիկ հայկական վարժարան, սակայն դժբախտաբար՝ միայն նախակրթարան: Գաղութը օժտուած է հայկական եկեղեցիով:

Հայ աւետարանական կամ հայ կաթողիկէ եկեղեցիներու չհանդիպեցայ, իսկ հայ առաքելական միակ եկեղեցին Էջմիածնական թեմին կը պատկանի:

Համալիրի բացօթեայ թատրոնին մէջ երբեմն կը ներկայացնեն փոքրիկ թատերախաղեր, ընդհանրապէս կատակերգութիւններ: Կուսակցական վէճեր բնաւ տեղի չեն ունեցած ոչ ալ կ'ունենան, քանի որ գաղափար չունին որեւէ հայկական կուսակցութենէ: Եղած են տարբեր հայկական գաղութներու մէջ եւ կը կարծեմ, թէ ամէնէն համերաշխ գաղութն է, որուն հանդիպած եմ:

Հայեր եւ մեծ թիով օտարներ, շաբաթավերջերուն կը լեցնէին «Հրանդ» մարգարանի բացօթեայ հանդիսատեղին, օտար երգերու կողքին վայելելու, նաեւ մեր հայերէն երգերը, իսկ շաբթուայ մնացած օրերուն հանդիսատեսներ

րուն գրեթե բոլորը հայեր կ'ըլլային եւ այդ օրերուն աւելի հայերէն երգերով կը խանդավառէինք ներկաները:

Սուտանահայուն կենցաղը յար եւ նման է արեւմտեան երկիրներու ապրելակերպին, ի մասնաւորի անգլիական կենցաղին: Մեծամասնութիւնը իրենց բարձրագոյն ուսումը ստացած ըլլալով Լոնտոնի մէջ, որդեգրած է այդտեղի ապրելակերպը: Արդիականացած հայեր են եւ հայկական ասանդութիւններէն շատ գաղափար չունին, սակայն կառչած մնացած են մայրենիին: Իրենց հայկական ուսումը միայն նախակրթարանի համազօր է, սակայն տուներէն ներս կամ «Հրանդ» մարզարանին մէջ, անգլիախօսութեան չենք հանդիպիր: Լաւ հայեր են եւ պահած են իրենց հայկական ինքնութիւնը:

Խառն ամուսնութիւնները հազուադէպ էին այդ տարիներուն: Միայն մէկ կամ երկու պարագաներու հանդիպած եմ, սակայն ներկայիս, որ հայութեան թիւը զգալիօրէն նուազած է, կրնայ այդ մէկը պատճառ դառնալ, որ օտար ամուսնութիւններու թիւը բազմապատկուի:

Պուրճ Համուտի նման զուտ հայկական թաղամասեր գոյութիւն չունին: Մեծամասնութիւնը կը բնակին Խարթումի լաւ շրջաններու մէջ, կան նաեւ քանի մը ընտանիք, որոնք գործի բերումով հաստատուած են մօտակայ Օմտուրման կոչուած արուարձանին մէջ, որ Խարթումէն կը բաժնուի կամուրջով մը եւ այնքան ալ հեռու չէ «Հրանդ» մարզարանէն:

Հայերու տուները ընդհանրապէս լաւ կահաւորուած են, ինչպէս նախապէս ըսած էի, մեծամասնութիւնը նիւթականով ապահով է եւ բարեկեցիկ կեանք մը կ'ապրի:

Ամռան չոր ու տաք եղանակին գաղութը գրեթե կ'ամայանայ: Մեծամասնութեամբ կը ճամփորդեն եւրոպական երկիրներ, յատկապէս՝ Անգլիա, Լոնտոն: Գրեթե բոլորը իրենց բարձրագոյն ուսումը կը շարունակեն Անգլիա, եւ միայն երկրորդականի ուսումով գոհացողները հազուագիւտ են:

Մեր մէկ ամսուան համաձայնութեան թուականի աւարտին ողջերթի հսկայ սեղան մը շտկեցին: Ներկայ էր ամբողջ սուտանահայութիւնը: Թոփչըր կէս գիշերին էր: Բոլորը սպասեցին մինչեւ մեր օդակայան մեկնիլը, ողջագուրուելով՝ բարի ճանապարհ մաղթեցին ու մեկնեցան իրենց տուները: Քանի մը ազգայիններ հասցուցին մեզ օդակայան՝ բերանացի պայմանաւորուելով, որ յաջորդ տարի դարձեալ Նոր Տարուան շրջանին վերադառնանք:

Յաջորդ տարի վերադարձանք: Սակայն մեծ դժուարութիւններու հանդիպեցանք Լիբանան վերադառնալու: Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամէնագէշ օրերն էին: Մեր համաձայնութիւնը դարձեալ մէկ ամսուան համար էր, սակայն նոյն շրջանին Պէյրութի օդակայանը գոց մնաց ամիսներով: Սուտանահայութիւնը մէկ մարդու նման տէր կանգնեցաւ մեզի եւ առաջարկեցին, որ հոն մնանք, որքան որ կամենանք: Երեք ամիս ետք վերադարձանք Լիբանան, սակայն խումբի անդամներս մէկ առ մէկ գաղթեցինք Լիբանանէն տարբեր երկիրներ:

Սուտանահայ գաղութը նոյնպէս ապրեցաւ դժուար օրեր քաղաքական փոփոխութիւններու պատճառով: Փոքրաթիւ այդ հիանալի գաղութն այսօր քանի մը ընտանիք միայն մնացած է: Քանի մը հոգիի պատահմամբ հանդիպեցայ

Լոս Անճելըսի մէջ, սակայն մնացածը՝ Աստուած գիտէ՝ աշխարհի ո՞ր անկիւնն են:

Հայկական գաղութ մը ես կորսուեցաւ:

**THE ARMENIAN COMMUNITY OF SUDAN  
(Summary)**

**Boghos Shahmelikian**

As of the 1960s Armenian pop music flourished in Beirut, alongside several Armenian singers. Soon other young singers and bands made their presence felt. These, however, sang mostly English and French songs. Among these bands the Five Fingers was one of the very best. The band soon garnered highly positive recognition and was invited to perform by different Armenian cultural organizations active in different communities of the Middle East countries.

In 1974 the Armenian community of Sudan invited the Five Fingers band to entertain the community during its New Year and Christmas parties.

As a member of the band, Shahmelikian reminisces about his experience in Sudan and describes the journey of the band to Sudan, their interaction with the Sudanese Armenian community, its mindset and the efforts the community made to maintain an Armenian community atmosphere and preserve identity.

# Տեղեկագիր Խարթումի Ազգային Վարժարանի 1954-1955 Տարեշրջանի<sup>1</sup>

Բիզանդ Տիվկերեան

## ՎԵՐԱՄՈՒՏ

Վարժարանիս վերաբացումը տեղի ունեցաւ Երկուշաբթի 1 Սեպտեմբեր 1954ին, ի ներկայութեան 70 աշակերտներու, որոնց թիւը բարձրացաւ 80ի, յաջորդ ամիսներու ընթացքին օգափոխութենէ վերադարձող աշակերտներու եւ նորեկներու արձանագրութեամբ:

1954ի ուսումնական տարեշրջանի վախճանին, վարժարանէս ընթացաւարտ վեց աշակերտուհիներու փոխարէն մանկապարտէզ եւ նախակրթարան ընդունուեցան եօթը նոր մանուկներ ու պատանիներ:

## ԴԱՍ, ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

Վերամուտի առաջին օրէն հոգաձու եղանք օժտել աշակերտները իրենց դասագիրքերով եւ գրենական պիտոյքով եւ ըստ դասացուցակի ու ծրագրի սկսիլ կանոնաւոր դասաւանդութեանց:

Մասնաւորաբար հայերէն լեզուի, ազգային պատմութեան եւ գիտութիւններու ասանդումին առաջնորդ ունեցանք եգիպտահայ ուսումնական խորհուրդի ծրագրի առաջադրութիւնները, եւ մեր ժամանակի հնարաւորութեան սահմաններուն մէջ, ջանացինք թեթեւ յապաւումներով միայն, սպառել ծրագրին առաջադրած նիւթերը:

Անգլերէնի ուսուցման համար յարմար նկատեցինք հետեւիլ գաղութիս օտար վարժարաններու ծրագրային ուղղութեան, որպէսզի մեր շրջանաւարտները կարենան դիւրութեամբ մտնել իրենց տարիքին ու ըմբռնումին համապատասխանող կարգերու մէջ: Այս տարի մեր մշտալար ուշադրութեան եւ հոգաձութեան առարկայ դարձուցինք այդ լեզուին ուսուցումը, նախակրթարանի չորս դասարաններուն համար երկու ուսուցչուհիներ նշանակելով:

Իսկ արաբերէնի համար դեռ չունեցանք որոշ ծրագիր մը, մինչեւ այսօր դասաւանդող ուսուցչուհիին ձեռնհասութեան վստահած ըլլալով այդ լեզուին ուսուցումը: Բայց յառաջիկայ տարեշրջանին, արաբերէնին պիտի տրուի կարելորութիւն, նկատի առնելով այս երկրի պայմաններուն պահանջը, որ այլեւս ստիպողական կը դարձնէ մեր զաւակներուն խօսիլ, կարդալ ու գրել արաբերէնը սահուն ու վճիտ առողանութեամբ:

## ՊԱՐՍԱՄԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁ

Մասնկապարտէզի երեք կարգերուն՝ բողբոջ, կոկոն եւ ծաղիկ, հոգաձութիւնը յանձնուած է միակ ուսուցչուհիի մը խնամքին, որքան ալ գոհունակութիւն պատճառէ մեզի մեր մանուկներուն ցուցաբերած ուսումնական վիճակը, արդար պիտի չըլլար մէկ անձի մը ուսերուն ծանրաբեռնել հազիւ գիտակցութեան

<sup>1</sup> Հեղինակը տնօրէնն էր վարժարանին: Նիւթը լոյս տեսած է *Արեւի* 2, 3 եւ 4 Յունիս 1955ի թիւերուն մէջ: Զայն կ'արտատպենք յապաւումներով:

հասած ու բարբառիլ սկսած փոքրիկներու դաստիարակութեան գործին պատասխանատուութիւնը. մեր այս նկատողութիւնը կ'արդարանայ անո՛վ մանաւանդ, որ մանկապարտէզի սաներուն թիւը հաւասար է գրեթէ նախակրթարանի աշակերտներուն թիւին, եւ որքան տարբեր պիտի ըլլար ուսումնական արդիւնքը այդ փոքրիկներուն եթէ կարելի ըլլար յաջորդ տարեշրջանին մանկապարտէզի բաժիններուն համար ունենալ օժանդակ ուսուցչուհի մը:

Ուրիշ կարեւոր կէտ մը, զոր կ'ուզեմ մեր ծնողքներու ուշադրութեան յանձնել՝ իրենց զաւակներուն մանկապարտէզ ընդունման տարիքի հարցն է:

Մեր գաղութային գրեթէ բոլոր մանկապարտէզները, համայձայն իրենց կանոնագրութեան, չորս տարիքը լրացուցած մանուկներ միայն կ'ընդունին, եւ անոնք այնքան խիստ են այս կանոնին գործադրութեան մէջ, որ չեն արձանագրեր մանուկը եթէ նախապէս ծննդեան թուղթին վրայ չճշտեն անոր տարիքը:

Մեր գաղութը փոքր ըլլալով, եւ կարգ մը ուրիշ արդարացուցիչ նկատումներով, անտեսած ենք այդ օրէնքը, եւ մանկապարտզ կ'ընդունինք հազիւ երեք տարեկան փոքրիկներ:

Ուրեմն կանոնական տարիքէն տարի մը առաջ մանկապարտէզ բերուած մանուկը այս անգամ պարտաւոր է փոխանակ երեք տարիէն բոլորելու մանկապարտէզի ընթացքը, բոլորել չորս տարիէն, առաջին երկու տարիները անցընելով բողբոջ դասարանին մէջ:

Կը խնդրեմ մեր ազնիւ ծնողքներէն, որ նկատի ունենան այս կարեւոր պարագան եւ անոնք որ իրենց զաւակներուն մատղաջ իմացականութիւնը օր առաջ ծանօթութիւններով կահաւորուած տեսնել կ'ուզեն, շատ սխալ կ'ընեն. իրենց անտեղի աճապարանքով կը վնասեն թէ՛ իրենց զակին մտային արթնութեան եւ թէ՛ մեր կրթական գործին ծրագրային արդիւնաւորութեան:

Եգիպտահայ ուսումնական խորհուրդի ծրագիրը կ'առաջադրէ մանկապարտէզի չորս-հինգ տարեկան մանուկներուն երգել, արտասանել հաշուել, գծել եւ անոնց մտքի զգայարանքը զարգացնող բարոյաշունչ պատմութիւններ պատմել:

Հինգ-վեց տարեկան մանուկներուն, անլի ընդլայնուած ծրագրով, պէտք է սորվեցնել հայ տառերը, կատարել տալ առոգանութեան վարժութիւններ, եւ երգերով, արտասանութիւններով, կարճ տրամախօսութիւններով վարժեցնել զանոնք յստակ եւ ուղիղ խօսելու:

Վեց-եօթ տարեկաններուն պէտք է տրուի այբբէնարանը, զոր պարտաւոր են աւարտել ինը ամիսներու ընթացքին:

Այս է, խտացուած գիծերու մէջ, ուսումնական դրութիւնը մանկապարտէզի երեք կարգերուն մէջ:

Թուարանութեան, գիտութեան, կրօնի եւ ազգային պատմութեան դասեր ալ կը տրուին բերանացի, պարզ եւ ամփոփ կերպով, համաձայն ուսումնական ծրագրի առաջադրութիւններուն:

Կրկին անգամ կը խնդրենք ծնողքներէն որ վստահութիւն ունենան վարժարանիս ուսուցչական մարմնին աշխատանքին վրայ եւ ապահով ըլլան, որ իրենց զաւակները ծրագրով նախագծուած իրենց համապատասխան հասակներուն պիտի ստանան մտային ու բարոյական անհրաժեշտ սնունդը:

## ՀԱՅԵՐԷՆ

Խարթումի հայութիւնը յիսուն տարիէ ի վեր թանկագին զոհողութիւններու գնով կը պահէ այս յարկը, ուստի իրաւունք ունի ակնկալելու, որ այս հիւրընկալ ասիերուն վրայ ծնած իրենց զաւակները մեծնան ու տոգորուին տոհմային այն ոգիով ու առաքինութիւններով, որոնցմով պայմանաւորուած է իրենց հայու հոգիին ու նկարագրին պահպանումը: Հայ վարժարանը իր կոչումին կը ծառայէ երբ իրենց յանձնուած մանուկներու մտքին, հոգիին ու սրտին մէջ կը դրոշմէ սէրը՝ մայրենի լեզուին, հայրենի հաւատքին, տոհմային պատմութեան ու գրականութեան անմահ արժէքներուն, վերջապէս կը ներշնչէ անոնց հպարտութիւնը, որ զրահը պիտի կազմէ յետագային պաշտպանելու իրենց հայու հոգին այլասերիչ փորձութիւններէ:

Երկու տարիէ ի վեր մեր նուիրումին նշանակէտը դարձուցինք հայերէնի ուսուցումը, հոգածու ըլլալով որ մեր աշակերտները վճիտ առողջանութեամբ խօսին, կարդան ու գրեն իրենց մայրենի լեզուն, ծանօթանան հրահանգներու վարժութեամբ քերականութեան արուեստին հիմնական կանոններուն եւ կարենան գէթ անսխալ ուղղագրել, ասարտական դասարանին մէջ, տրուած գրական կտոր մը:

Միեւնոյն հոգածութեամբ դասաւանդուեցան տոհմային միւս ճիւղերը, ազգային պատմութիւն, կրօն, ազգային երգն ու սրբազան երաժշտութիւնը, նպատակ ունենալով մեր մանուկներուն միտքն ու հոգին միշտ սեւեռուած պահել հայ անցեալ կեանքի բոլոր սերունդներէն մեզի կտակուած նուիրականութիւններուն:

## ԱՆԳԼԵՐԷՆ

Այս տարի անգլերէն լեզուն դասաւանդեցին նախակրթարանի չորս կարգերուն մէջ, յաւելուածական դասապահերով, երկու ուսուցչուհիներ. մին մնալուն եւ միւսն ալ այցելուի հանգամանքով: Այս կարգադրութիւնը, որ զոհողութեան մը գնով եղաւ, ունեցաւ իր բարերար արդիւնքը, այդ լեզուին մէջ զգալիօրէն յառաջացնելով մեր սաները, որոնք անցեալ տարուրնէ շատ անելի դիւրութեամբ կը կարդան, կը գրեն, կ'արտայայտուին:

Օրիորդ Վարդուհի Դարբինեան երկու տարուան արդիւնալից պաշտօնավարութենէ ետք, կը բաժնուի մեր կազմէն ամուսնութեան պատճառով:

Տիկին Գոհար Դանիէլեան, որ փորձառու մանկավարժուհի մըն է, այս տարի միայն մեր վարժարանին մէջ պաշտօնի հրաւիրուեցաւ, եւ պէտք է ըսեմ, թէ եղաւ այնքան օգտակար, որքան կարող է ըլլալ կրթական ասպարէզի նուիրեալ մը:

## ԱՐԱՐԵՐԷՆ

Երկրի պետական լեզուն ըլլալով, պատ. հոգաբարձութիւնը ծրագրած է նոր շրջանին անգլերէնի եւ արաբերէնի հմուտ օտար ուսուցչուհի մը պաշտօնի կոչել, որպէսզի մեր աշակերտութիւնը, մասնաւորաբար վերի կարգերու մէջ, կարենայ հարազատ առողջանութեամբ կարդալու եւ արտայայտուելու վարժուիլ:

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ստիպում ենք խոստովանելու թէ ուսման այս առակային դասաւանդումը լուրջ ճիգերու կը կարօտի, մենք անձնապէս բաւարարուած չենք ստացուած արդիւնքով, բայց ապահով ենք յառաջիկային, մեր ծրագրի առաջադրութիւններուն համաձայն յառաջացնել աշակերտութիւնը, աւելի հոգածութիւն եւ աւելի ժամանակ յատկացնելով թուաբանութեան դասաւանդումին:

## ՄԱՐԶԱՆՔ-ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍ

Շնորհակալութեան պարտք մը ունինք Պ. Ռ. Դանիէլեանի, որ ընդառաջելով մեր խնդրանքին, ազնուօրէն ստանձնեց վարժարանիս մարմնակրթանքի դասատուութիւնը, ամբողջ տարեշրջանին ճշտապահօրէն կատարելով պաշտօնին պարտականութիւնը:

Մարտ 13ին տրուած մարզահանդէսը, որ այնքան գոհունակութիւն պատճառեց ամէնուս, արդիւնքն էր այն անձնուէր ճիգին, զոր բերաւ մեր երիտասարդ մարզիչը, մեր մանուկներու ֆիզիքական դաստիարակութեան գործին:

## ՆԻՍՏԵՐ

Վարժարանիս պատ. հոգաբարձութեան հետ մեր ունեցած շաբաթական կանոնաւոր նիստերը, կատարուած իրարհասկացողութեան մթնոլորտի մը մէջ, ունեցան իրենց օգտաւէտ արդիւնքը մեր դպրոցավարական ընթացիկ աշխատանքներու, ինչպէս նաեւ յօգուտ վարժարանիս կազմակերպուած ձեռնարկներու կարգադրութեանց մէջ:

Առանձնապէս ամէնքն ալ մշտալար հետաքրքրութեամբ հետեւեցան մեր ուսումնական աշխատանքներուն եւ իրենց յաճախակի այցելութիւններով եւ թելադրութիւններով խրախուսեցին աշակերտութիւնը:

Նոյնպէս Սուտանահայ Ազգային Վարչութեան յարգելի ատենապետը եւ իր եռանդուն գործակիցները իրենց կարելի գոհողութիւնը ըրին որ այս նուիրական հաստատութիւնը տնտեսական ապահով հիմերու վրայ դրուի եւ ի վիճակի ըլլայ կրթական առողջ ուղղութեան մը վրայ լարուած շարունակել իր արդիւնաւէտ ընթացքը:

## ՏՕՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Տեղական մեր ազգային ու կրօնական տօներուն արձակուրդ տուինք աշակերտութեան, արժանավայել հանդիսութիւններով մեր մեծարանքի տուրքը ընծայելով մեր պատմութեան պանծալի դէմքերու յիշատակին:

Հ.Ե.Միութիւնը գործակցութեամբ վարժարանիս հոգաբարձութեան, Ամանորի առթիւ կազմակերպեց հանդէս-խրախճանք, որուն գտած բարոյական եւ նիւթական փայլուն յաջողութիւնը, պարտք կը դնէ մեր վրայ սրտագին շնորհակալութիւն յայտնելու Հ.Ե.Միութեան վարչութեան, ինչպէս նաեւ ձեռնարկին օժանդակող տիկնանց բարեսիրաց միութեան անդամուհիներուն, եւ բոլոր այն կրթասէր ազգայիններուն, որոնք այդ օրը իրենց լիասիրտ նուիրատուութեամբ անգամ մը եւս հաստատեցին իրենց անվերապահ սէրը հայ մանուկներու հայեցի դաստիարակութեան եւ կրթութեան հանդէպ:

### ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Սուտանահայ գաղութի վարչութեան եւ հոգաբարձութեան որոշումով, մեր նախակրթարանը յառաջիկայ տարիէն սկսեալ իր քառամեայ ընթացքէն կը բարձրանայ հնգամեայ ընթացքի, հինգերորդ դասարանի մը յաւելումով: Այս կարգադրութեամբ ուրեմն, աւարտական կարգի մեր աշակերտները տարի մը եւս մեզի հետ մնալով, շրջանաւարտի իրենց վկայականները կը ստանան յաջորդ ուսումնական տարեշրջանի վախճանին:

Թող ծնողքները վստահ ըլլան, որ իրենց զաւակներուն այդ տարուան մը յապաղումը, առաւելագոյն չափով պիտի նպաստէ անոնց մտային ծանօթութեանց ընդլայնումին:

### ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատ. հոգաբարձութեան հետ նկատի առնելով եռամսեայ քննութիւններու յատկացուած ժամանակը, որ աշակերտութիւնը կանոնաւոր դասաւանդութենէ օրերով հեռու կը պահէ, որոշեցինք տարուան մէջ երկու քննութիւն միայն կատարել՝ կիսամեայ եւ ամավերջի:

Քանի մը տարի է արդէն յառաջադէմ երկիրներու մէջ քննութիւնները կորսնցուցած են իրենց հնօրեայ կարեւորութիւնը, եւ նոր մանկավարժութիւնը արդար չի գտներ քննութեանց լաւ կամ վատ արրինքին կապել ուսանողին ճակատագիրը, երբ այդ ուսանողը ամբողջ ուսումնական տարեշրջանին տիպար աշխատող մը եղած է: Բազմաթիւ օտար եւ հայ դպրոցներու մէջ քննութեանց ճնշումէն ազատ կը պահուին բոլոր այն աշակերտները, որոնք ուսման այս կամ այն ճիւղերուն մէջ իրենց ստացած միջիններով յաջողած կը նկատուին:

Մեր գաղութի վարժարանին համար, անշուշտ, դեռ ժամանակի պէտք կայ քննութեանց այս նորաձեւութիւնը որդեգրելու համար:

### ՔՆՆՈՒԹԵԱՆՅ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Ամավերջի քննութեանց արդիւնքները անլի խրախուսիչ կը գտնենք նախորդ տարեշրջանի քննութեանց արդիւնքներէն. աշակերտութեան մեծագոյն մասը յաջողած է, կան քանի մը վերաքննելիներ եւ կարգը կրկնողներ:

Մեր վարժարանի ուսումնական աշխատանքի ընդհանուր միջինը 83 է:

Սիրելի ծնողքներ ...հնչ թերութիւններով ալ ներկայանայ հայ դպրոցը, պարտաւոր էք իբրեւ գիտակից հայեր, գուրգուրալ անոր վրայ, զայն նկատելով ձեր հարազատ տունը, քանի որ ան կանգուն կը մնայ ու կը շնչէ ձեր թանկագին զոհողութիւններով միայն:

Չկայ, հաւատացէք, դպրոց մը որ իր կրթական կոչումին ծառայէ այն խանդակաթ նուիրումով ու հաւատարմութեամբ, որքան հայ դպրոցը կը կատարէ իր զաւակներուն՝ իր ազգային պարտականութիւնները: ...Այն ծնողքը որ կը զրկէ իր զաւակը ազգային դաստիարակութեան բարիքներէն, ազգին խղճմտանքին առջեւ չի կրնար արդարանալ ոչ մէկ կերպով:

## Օծում Խարթումի Նորակերտ Եկեղեցին<sup>1</sup>

Սուտանի հայ գաղութի տարեգրությանց մէջ պատմական եւ յիշատակելի թուական մը պիտի մնայ 1957 Մարտ 3ը: Սուտանահայութեան տարիներէ իվեր փայփայած երազը իրականութիւն դարձած էր եւ ժողովուրդին նիւթական անօրինակ զոհաբերութեամբ հայ վարժարանի կողքին բարձրացած էին Հայաստանեայց Եկեղեցոյ գմբէթները որոնք կը հովանաւորեն գաղութը եւ վարժարանը հաւասարապէս:

Սուտանահայ Գաղութային Ժողովը (ՍԳԺ), եկեղեցոյ կահաւորման եւ բարեզարդման յանձնախումբը, տիկնանց եւ երիտասարդաց միութիւնները, վարժարանի տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը տենդագին աշխատանքի են լծուած, փառաշուք հանդիսաւորութեամբ կատարելու Խարթումի նորակառոյց եկեղեցոյ օծման եւ սրբազործման սրբազան արարողութիւնը:

Անհամբեր կը սպասուի սուտանահայութեան հոգեւոր վերին տեսուչին՝ Մամբրէ Ս. արք. Սիրունեանի Առիս Ապեպայէն Խարթում ժամանումին:

...Արժանավայել ընդունելութիւն մը ընելու համար գաղութին հոգեւոր վերին տեսուչին, ՍԳԺ մասնաւոր շրջաբերականով ժողովուրդին հաղորդեց սրբազան հօր ժամանումին օրն ու ժամը:

### ԺԱՄԱՆՈՒՄ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

Փետրուար 17ին, Կիրակի օր շարժման մէջ է Խարթումի հայ գաղութը, ամէն ոք կ'աճապարէ օդակայան, դիմաւորելու համար նորին սրբազնութիւնը...:

Ժողովուրդը հո՞ծ բազմութեամբ լեցուցած է օդակայանը :...Մամբրէ սրբազան կ'իջնէ օդանաւէն եւ Սեֆէրեան Տան քարտուղարներէն Պ. Եփրէմ Պենկեանի ընկերակցութեամբ կը յառաջանայ օդակայանի շէնքը, ուր զինք դիմաւորելու եկած են իր հոգեւոր զաւակները: Տիար Սարգիս Իզմիրլեան եւ իր ազնիւ տիկինը, ինչպէս նաեւ ՍԳԺի ատենապետը՝ տիար Գրիգոր Պոտուրեան եւ ՍԳԺի անդամներ յանուն ժողովուրդին բարի գալուստ կը մաղթեն Ն. սրբազնութեան:

...Սրբազան հայրը եւ ժողովուրդը կ'ուղղուին եկեղեցի ...[ուր] վարժարանի աշակերտութիւնը «Հրաշափառ»ի երգեցողութեամբ կ'առաջնորդեն սրբազան հիւրը եկեղեցի:

...Եկեղեցական կարճ պաշտամունքէ մը ետք, սրբազանը կը խօսի ներկաներուն եւ շնորհակալութիւն կը յայտնէ ՍԳԺին եւ ժողովուրդին...: Իր գոհունակութիւնն ու ուրախութիւնը կը յայտնէ որ վերջապէս տարիներու յամառ ջանքերով եւ նիւթական անօրինակ զոհաբերութեամբ իրականացած է ժողովուրդին փայփայած երազը եւ այսօր հայ վարժարանի կողքին բարձրացած է Հայաստանեայց Եկեղեցոյ շէնքը:

Սրբազան հայրը կը թուէ այն անփոխարինելի ծառայութիւնները, զորս Հայաստանեայց Եկեղեցին մատուցած է հայոց ժողովուրդին վիշտի եւ ուրախու-

<sup>1</sup> Թղթակցութիւնը լոյս տեսած է *Արեփ*, 8-12 Յունիս 1957 թիւերուն մէջ: Կը հրատարակենք յապաւումներով:

թեան, տառապանքի եւ յաջողութեան օրերուն, քրիստոնէութեան սկզբնական շրջաններէն մինչեւ մեր օրերը:

Կը յանձնարարէ սիրով եւ աղապատանքով շրջապատել մեր աննման գոյգ հաստատութիւնները, հայ դպրոցը եւ Հայաստանեայց Եկեղեցին, պահել գանձնք շէն ու պայծառ, յանձնարարելու համար հայոց ժողովուրդին գոյութեան տեսականացումը:

Սրբազան հօր պահպանիչով վերջ կը գտնէ եկեղեցական պաշտամունքը:

Վարժարանի տնօրէնութիւն եւ հոգաբարձութիւն սրբազանը կ'առաջնորդեն վարժարանի սրահը, ուր նախակրթարանի աշակերտութեան կողքին մանկապարտէզի կարմրով կակաչները մաքուր, կոկիկ եւ գեղեցիկ, խանդավառ ծափերով կ'ընդունին իրենց հոգեւոր հայրը:

Տեղի կ'ունենայ բարեգալստեան կոկիկ հանդիսութիւն մը: Աշակերտ եւ աշակերտուհիներ շատ յաջող կերպով կ'արտասանեն բարի գալուստի գեղեցիկ ոտանաւորներ եւ կ'երգեն անուշ երգեր...: Սրբազան հայրը իր գնահատանքի խօսքը կ'ուղղէ վարժարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան, իրենց արդիւնաւոր աշխատանքին համար:

Կոչ կ'ընէ հայ ծնողաց զգուշանալ իրենց զաւակները օտար հաստատութեանց գիրկը նետելէ, կը յանձնարարէ հրաժարիլ վտանգաւոր այս խաղէն, վասնզի օտար կրթական հաստատութիւններ կ'աշխատին գողնալ մեր զաւակաց մտքէն, սրտէն, հոգիէն այն՝ ինչ որ հայ դրոշմ կը կրէ եւ անոնց տեղ դնել օտարը՝ խորթ մեզի համար եւ մանաւանդ վտանգաւոր մեզի համար:

Ազգին, հայրենիքին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ սիրով տոգորուն կը յայտարարէ սրբազան հայրը հայ ծնողներուն, հայրերուն եւ մայրերուն հաւասարապէս՝ հրաժարիլ միանգամընդմիշտ իրենց զաւակները կրթական օտար հաստատութեանց գիրքը նետելէ, վասնզի այս անխորհուրդ արարքը պիտի նշանակէր դաշունահարել հայ ազգին սիրտը, վիրաւորել մեր ազգային արժանապատուութիւնը, մեծագոյն հարուածը տալ մեր ազգային գոյութեան:

Հայ տղան հայ վարժարանով եւ հայ դաստիարակներով կրնայ կրթուիլ եւ դառնալ ազգին համար ուժ մը, կարելիութիւն մը եւ ապագայ հայոց ժողովուրդը:

Սրբազանը կ'օրհնէ ուսանողութիւնը, ուսուցչութիւնը, հոգաբարձութիւնը եւ ժողովուրդը եւ պահպանիչով վերջ կը գտնէ այս գողտրիկ հանդիսութիւնը:

Գահիրէէն հասաւ Տ. Յուսիկ քինյ. Նշանեանը:

ՍԳԺԻ կարգադրութեամբ, սրբազանը պիտի մնայ Grand Hotel, իր Խարթում գտնուած միջոցին: Grand Hotelը Նեղոսի վրայ շինուած Խարթումի լաւագոյն պանդոկն է:

#### ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ Ի ՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

ՍԳԺԻ կարգադրութեամբ, երեկոյեան ժամը 7ին Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյթ մը:

Եղան յաւուր պատշաճի արտասանութիւններ, երգչախումբէն զատ երգեցին դպրոցի աշակերտները, առաջնորդութեամբ իրենց տնօրէն Պ. Բիւզանդ Տիւկերեանի:

Խօսք առաւ ՍԳԺի յարգելի ատենապետը, ...երախտագիտութեամբ յիշեց անունը գաղութի յարգուած դէմքերէն տիար Սարգիս Իզմիրլեանի, որ ամբողջ երեսուն տարիներ իբրեւ նախագահը գաղութին, վարած է արժանատրապետ սուտանահայ ազգային կեանքը՝ իր աշխատակիցներովը: Յարգանք ընծայեց տիար Շաւարշ Վանեան վարչութեան, որ առանց իր տրամադրութեան տակ ունենալու նիւթական գումարներ՝ անտրամաբանելի վճռականութեամբ մը շինելէ ետք վարժարանը, ձեռնարկած է եկեղեցւոյ շինութեան գործին: Իր վարչութեան օրով տեղի ունեցաւ հիմնարկէքը մեր սիրելի սրբազան հօր ձեռամբ... Եւ հաւատք յայտնեց որ շնորհիւ սրբազան հօր ի մօտոյ գաղութը պիտի ունենայ իր արժանատր հովիւը:

Ընդհանուր խանդավառութեան եւ ծափերու մէջ բեմ առաջնորդուեցաւ Մամբրէ սրբազանը, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք ՍԳԺին եւ իրեն գործակից բոլոր միութիւններուն, ի պատիւ իրեն կազմակերպուած գեղարուեստական երեկոյթին համար, յայտարարեց. «Ո՛րքան իրաւամբ ըսած է շահապաստան արշաւանքներու ստուգապատում պատմիչը Առաքել Դարիժեցի"՝" Ի վերայ Աջոյն Ս. Լուսաւորչի եւ ի վերայ Ս. Էջմիածնի հաստատեալ կայ ամենայն ազգն հայոց"»:

...Մամբրէ սրբազան շնորհատրեց ներկայ գաղութային ժողովը, որ «աշխատեցաւ զմայելի նուիրումով մը եւ իզուլս հանեց շինութիւնը եկեղեցիին...»: Սրբազանը վերջացուց իր խօսքը օրհնելով ժողովուրդ եւ ժողովականք, ամէնուն մաղթելով երկար եւ առողջ կեանք:

Դպրոցի սաներուն կողմէ երգուած «Հայր մեր»ով ու սրբազան հօր պահպանիչով վերջ գտաւ գեղարուեստական այս սիրուն հանդիսութիւնը:

#### ՄԱՄԲՐԷ ՍՐԲԱԶԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՊՏԷԼ ՐԱՀՄԱՆ ԷԼՄԱՀՏԻԻ

Մասնատր ժամադրութեամբ մը՝ Մամբրէ սրբազան, ընկերակցութեամբ ՍԳԺի անդամներէն տիար Լեւոն Վանեանի, կ'այցելէ Սուտանի ազատագրութեան շարժման ղեկավար Ապտէլ Րահման էլՄահտիի, որ իբրեւ կրօնապետ կը վայելէ սուտանցի ժողովուրդին սէրն ու համակրանքը:...

...Ն. Բարձրութեան անձնական կառքը պատուիրակով մը սրբազանը կ'առաջնորդէ պալատ:

Ն. Բարձրութիւն էլՄահտի ուրախութիւն եւ շնորհակալութիւն կը յայտնէ սրբազան հօր՝ անոր այցելութեան համար:

Սրբազան հայրը պատասխանելով կը յայտարարէ. «Ինձի համար նուիրական պարտականութիւն մըն էր եւ գերագոյն վայելք մը այցելել Ձեր Բարձրութեան եւ անձամբ ներկայացնել Ձեզի իմ երախտագիտութիւնս եւ շնորհակալութիւններս՝ իմ ժողովուրդիս՝ Սուտանի ժողովուրդին եւ Ձեր Բարձրութեան կողմէ գրած ասպնջականութեան եւ վայելած սիրոյն եւ համակրանքին համար»:

Ն. Բարձրութիւնը, պատասխանելով սրբազանին կը յայտարարէ. «Մենք կը սիրենք հայերը, վասնզի անոնք աշխատասէր բարի եւ բարոյականով բարձր ժողովուրդ մըն են եւ օգտակար փարր մը մեր երկրին համար: Կրնաք վստահ ըլլալ,- կ'ըսէ Ն. Բարձրութիւնը,- որ ինչպէս անցեալին՝ այսուհետեւ եւս հայերը պիտի վայելեն մեր ամէնուս համակրանքն ու սէրը»:

## ՍՐԲԱԶԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԷ Ն. ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Փետրուար 21ին, սրբազանը, Տ. Յուսիկ քինյ. Նշանեանի, տեարք Գրիգոր Պոտոուրեանի եւ Լեւոն Վանեանի հետ կ'այցելէ Ն. Բ. Ալի ԷլՄիրզանիի՝ երկրորդ կրօնապետը Սուտանի ժողովուրդին, Ն.Բ. փափաքին համաձայն՝ երկար տեսնուելու եւ խօսելու համար՝ երեկոյեան ժամը 7ին: Ն. Բ.ն իր ապարանքին մէջ կ'ընդունի իր հիւրերը: Տեսակցութիւնը կը տեւէ ամբողջ երեք քառորդ ժամ:

## ՓԵՏՐՈՒԱՐ 23, ՇԱԲԱԹ

Մամբրէ սրբազան, ընկերակցութեամբ տեարք Գրիգոր Պոտոուրեանի եւ Լեւոն Վանեանի, կ'այցելէ նախագահական պալատ եւ կ'ընդունուի Ն.Վ. նախագահէն:

Ընդունելութիւնը կը տեւէ քառորդ ժամ, Ն.Վ.ն կը յայտարարէ, Սուտանի մէջ այժմ նախագահները թուով հինգ են. անոնցմէ չորսը մահմետական եւ մին քրիստոնեայ, որ ես եմ. սակայն կրօնի այս տարբերութիւնը պատճառ մը չէ որ մենք հինգերս յաճախ չզանք իրարու եւ հաշտ ու համերաշխ չխորհինք մեր հայրենիքին յառաջդիմութեան եւ զարգացման համար:

..Սրբազանը պատասխանելով Ն.Վ.ին, կը յայտարարէ. *«Ձերդ վստմութիւնը եւ սուրանական կառավարութիւնը կրնան վստահ ըլլալ որ սուրանաբնակ իմ ժողովուրդս ինչպէս անցեալին՝ մա'նաւանդ ներկայիս եւ ապագային շատ անկեղծօրէն եւ երախտագիտական զգացումներով փողփողուն պիտի ապրին այս պատրաստական երկրին մէջ եւ սուրանցի ժողովուրդին հետ ձեռք ձեռքի պիտի աշխատին Սուրանի բարգաւաճման եւ յառաջդիմութեան համար»:*

Ն.Վ.ն շնորհակալութիւն կը յայտնէ սրբազան իր յայտարարութեանց համար, աւելցնելով որ *«հայերը միշտ ասպնջականութիւն պիտի գտնեն այս երկրին մէջ իբրեւ աշխատասէր եւ օգտակար փարր՝ սիրուած ամէնէն»:*

...Սրբազան հայրը կ'այցելէ Էսրթումի կառավարիչին, որուն հիւանդութեան պատճառով այցաքարտը կը յանձնէ քարտուղարին ու կը մեկնի:

## ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երեկոյեան ժամը 9ին սրբազանը կը խօսի Հայ Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ, հոժ բազմութեան մը ներկայութեան:

Ինք որ երիցս այցելած է Հայաստան՝ 1933ին, 1945ին եւ 1955ին, բաղդատականը կ'ընէ այս երեք շրջաններուն եւ յուժ մխիթարական ու յուսադրիչ կը գտնէ Հայաստանի ներկայ կացութիւնը եւ կատարուած յառաջդիմութիւնները, հաւասարապէս բոլոր մարզերու մէջ:

...Սրբազանը կ'աւարտէ իր խօսքը հետեւեալ յայտարարութեամբ. *«Առանց Ս. Էջմիածնի, առանց հայոց ընդհանրական հայրապետութեան եւ առանց հայ մշակոյթին ու հայ գրականութեան կարելի չէ ըմբռնել հայոց ժողովուրդը, վասնզի ի վերայ աջոյն Ս. Լուսաւորչի եւ ի վերայ Ս. Էջմիածնի հաստատեալ կայ ամենայն ազգն հայոց»:*

ՓԵՏՐՈՒԱՐ 25, ԵՐԵՔՆԱԲԹԻ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սրբազանը կ'այցելէ ներքին գործոց նախարարին տեսաք Գրիգոր Պոտուրեանի եւ Լեւոն Վանեանի հետ: Ն.Վ. նախարարը անակնկալ կերպով կանչուած ըլլալով վարչապետարան, սրբազանը կ'ընդունի փոխնախարարը, որ սիրալիր ընդունելութեամբ կը պատուէ սրբազանը եւ իրեն ընկերացող ժողովականները:

Սրբազան հայրը կը հրաւիրէ Ն.Վ.ն ներկայ ըլլալու եկեղեցոյ օծման հանդիսութեան:

Բ. ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փետրուար 25, Երեքշաբթի երեկոյ սրբազանը կը հրաւիրուի խօսիլ Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ ՀԲԸՄիութեան ոսկեայ յոբելեանին առթիւ: Ան կոչ կ'ընէ ժողովուրդին ուժ տալ Բարեգործականին, ազգին ամէնամեծ կազմակերպութեան, զայն զօրացնել որպէսզի կարենայ աւելի լայն չափերով ծառայել ազգին՝ զօրացած մեր ազգին նիւթական եւ բարոյական աջակցութեամբ:

ՓԵՏՐՈՒԱՐ 28, ՀԻՆԳՇԱԲԹԻ. ՎԱՐԴԱՆԱՆՔԸ ԽԱՐԹՈՒՄԻ ՄԷՋ

Այս տարի Վարդանանքը արտակարգ շուքով տօնուեցաւ Խարթումի մէջ, նախագահութեամբ սրբազան հօր եւ մասնակցութեամբ ազգային վարժարանի աշակերտութեան:

Երեկոյեան ժամը 6ին տեղի ունեցաւ ժամերգութիւն: Ժողովուրդը, հոծ բազմութեամբ, լեցուցած էր նորաշէն եկեղեցին: Եկեղեցոյ աւարտէն ետք, ազգային վարժարանի աշակերտութիւնը, առաջնորդութեամբ տնօրէն Պ. Բիւզանդ Տիվկերեանի, երգեց «Նորահրաշ»ը: Աշակերտ մը մաքուր առոգանութեամբ արտասանեց Վարդանի ճառը եւ աշակերտուի մը շատ մաքուր եւ զգածուած շեշտով արտասանեց Ոսկեղնիկն Եղիշէի գրիչէն հոսած հայ կանանց եւ աղջկանց փառաբանութիւնը եղող «Տիկնայք փափկասունք հայոց աշխարհին»ը: Երգ եւ արտասանութիւն յաջորդեցին իրարու:

Բեմ բարձրացաւ սրբազան հայրը եւ քարոզեց հետեւեալ բնաբանով. «Յայսմ հաւաքոց ոչ ոք կարէ խախտել զմեզ, քանզի հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք եւ մայր զառաքելական եկեղեցի հայոց»: Ապա ան շարունակեց՝ ...«Կենդանի պահենք մեր մէջ Վարդանանց եւ Ղեւոնդեանց հոգին, խանդավառուինք Վարդանանց եւ Ղեւոնդեանց յիշատակովը, ապրինք իբրեւ նոր Վարդաններ եւ Ղեւոնդներ: Ունենանք Վարդանանց մաքուր ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը, ունենանք Ղեւոնդեանց ապառաժեայ հաւաքը եւ հայ փափկասուն փիկնանց պարկեշտութիւնն ու աշխատասիրութիւնը, ապրելու եւ մեր գոյութիւնը յաւերժութեան տանելու համար»:

Սրբազանը վերջացուց իր խանդավառող գեղեցիկ քարոզը մաղթանքներով եւ ժողովուրդը մեկնեցաւ եկեղեցիէն հոգեպէս կազդուրուած եւ մխիթարուած:

## ՄԱՐՏ 2, ՇԱՔԱԹ

Եկեղեցւոյ օժման արարողութիւնները կը սկսին այս առտու: ՄԳԺն արդէն անցնող Հինգշաբթի օր, մասնաւոր շրջաբերականով հաղորդած էր ժողովուրդին որ եկեղեցւոյ օժման արարողութիւնը պիտի սկսի Մարտ 2ին, Շաբաթ առտու, պիտի շարունակուի Շաբաթ երեկոյ եւ վերջ պիտի գտնէ Կիրակի առտու, հանդիսաւոր պատարագի մատուցմամբ:

...Կը հասնի սրբազան հայրը: Ժամը 8ին կը սկսի ժամերգութիւնը որ կ'աւարտի ժամը 9ին: Ապա Մամբրէ սրբազան ընդհանուր յուզումի եւ բարեպաշտունակ երկիւղածութեան մէջ կ'օժէ սրբալոյս միւռոնով Տիրամօր, Խաչելութեան, Յարութեան, Ս. Լուսաւորչի, Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի իղաներկ պատկերները, ինչպէս նաեւ եկեղեցւոյ պատերուն վրայ զետեղուած մարմարեայ խաչերը:

...Ամէնէն վերջը Մամբրէ սրբազան կ'օժէ Աագ Սեղանին համար շինուած արծաթեայ մեծ խաչը եւ նորած խաչով կ'օրհնէ ժողովուրդը եւ կ'արձակէ:

Երեկոյեան եկեղեցական պաշտամունքը կը սկսի ժամը 5.30ին: Ժողովուրդը, հոծ բազմութեամբ, լեցուցած է եկեղեցին: «Լոյս զուարթ»ը կ'երգէ Նշանեան քահանան անուշ եւ դաշն ձայնով:

Երկեղեցական արարողութեան աւարտէն ետք, սրբազանը կ'օժէ Յարութեան պատկերը, մկրտութեան աւազանը եւ կարգ մը մարմարեայ խաչեր:

Ժամը 7.30ին վերջ կը գտնէ եկեղեցական արարողութիւնը եւ ժողովուրդը ուրախ եւ հոգեպէս մխիթարուած կը մեկնի եկեղեցիէն:

## ՄԱՐՏ 3, ԿԻՐԱԿԻ. ՕԾՈՒՄ ԽԱՐԹՈՒՄԻ ՀԱՅՈՅ ՆՈՐԱԿԵՐՏ ԵԿԵՂԵՑԻՆ

...Ամէն բան կարգադրուած, եկեղեցւոյ մէջ եկած ու բազմած են հայոց մեծ սուրբերը, Ս. Լուսաւորիչը, Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, Սրբուհի Հռիփսիմէն: Տէրունի պատկերներ կը զարդարեն սեղանները՝ Տիրամայրը, Խաչելութեան ու Յարութեան գեղեցիկ պատկերները: Եկեղեցին կերպարանափոխ եղած է՝ զգեցած է տօնական օրուան փառաշուք երեւոյթը:

Կը հասնի պատարագիչ սրբազանը եւ ժամերգութիւնը կը սկսի ժամը ճիշտ 7.30ին:

Եկեղեցին լեցուած է հաւատացեալներու հոծ բազմութեամբ:

Պատարագը կը սկսի ժամը 8.30ին: Պատարագիչ սրբազանը՝ փառաւոր զգեստաւորումով եւ դպիրներու երգեցողութեամբ կը յառաջանայ ու կանգ կ'առնէ եկեղեցւոյ աւագ դռան առջեւ, ուր կեցած է տիար Յակոբ Սեֆէրեան, իր ազնի տիկնոջ հետ, ափսէի մը մէջ ունենալով եկեղեցւոյ բանալիները:

Կը սկսի օժման արարողութիւնը: Մամբրէ սրբազան սրբալոյս միւռոնով կ'օժէ եկեղեցւոյ աւագ դուռը, զարդարող երկու խաչերը՝ անուանակոչելով եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ի յիշատակ հանգուցեալ Գրիգոր Սեֆէրեանի, որուն այրիին՝ տիկին Չուարթ Սեֆէրեանի եւ զաւակներուն Յակոբի, Նարդուհիի եւ Եդուարդի նուիրատուութեամբ հնարաւոր եղաւ ամբողջացնել եւ աւարտել շինութիւնը Ս. Լուսաւորիչ եկեղեցիին:

Եկեղեցւոյ զանգակը հնչեց առաջին անգամ: Պ. Յակոբ Սեֆէրեան սրբազան հօր յանձնեց եկեղեցւոյ բանալիները, կատարուեցաւ դռնբացէքի յուզիչ ա-

րարողութիւնը եւ պատարագիչ սրբազանը «Հրաշափառ»ով մուտք գործեց եկեղեցին, որ կը շողար լոյսերու մէջ:

Ժամը 10ն է, դասին մէջ տեղ գրաւած են օտար եկեղեցեաց ներկայացուցիչներ, դեսպաններ, նախարարներ, տէր եւ տիկին Յակոբ Սեֆէրեան եւ պետական բարձր պաշտօնատարներ:

Աւագ սեղանը կը մերկանայ իր զարդ ու զարդարանքէն ամէնը լարուած ուշադրութեամբ կը հետեւին օծման հետաքրքրական արարողութեան:

Պատարագիչ սրբազանը՝ սրբալոյս միռոնի աղանին ի ձեռին կը կատարէ միռոնաթափի արարողութիւնը վէմ քարի կեդրոնական մեծ խաչին վրայ եւ «Առաքելոյ աղանոյ» շարականի երգեցողութեամբ: ...

Օծման արարողութիւնը ասարտելուն՝ օտար հիւրերը կը հիւրասիրուին վարժարանի տեսչարանին մէջ, Գաղութային Ժողովոյ ու տիկնանց միութեան կողմէ եւ իրենց հիացումը յայտնելէ ետք Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգ ու սարքին եւ երաժշտութեան, կը մեկնին շատ լաւ տպաւորութեամբ:

...Կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ Գրիգոր Սեֆէրեանի հոգւոյն համար:

Եղան մեծ թիւով Ս. հաղորդութիւն ընդունողներ, որոնք երկիւղածութեամբ մօտենալով Ս. սեղանին, ընդունեցին Ս. հաղորդութիւն՝ պատարագիչ սրբազանին ձեռքէն:

...Նոյն օրը ցերեկէ ետք, սրբազան հայրը Տ. Յուսիկ քինյ. Նշանեանի հետ, կը կատարէ տասնվեց մկրտութիւն եւ կը դրոշմէ Անկլիքան Եկեղեցւոյ միջոցաւ մկրտուած փոքրիկներ, թիւով 8:

## ՄԱՐՏ 6, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Առտու տեղի կ'ունենայ առաջին արեւագալը, ի ներկայութեան ժողովուրդի ստուար բազմութեան: Սրբազան հայրը կը քարոզէ բացատրելով պահքի նշանակութիւնը իր լայն առումին մէջ եւ կը յանձնարարէ ըլլալ ճշմարիտ պահողներ:

Եկեղեցական արարողութեանց ասարտէն ետք սրբազանը կ'այցելէ վարժարան. տնօրէն Բիւզանդ Տիւկէրեաի ընկերակցութեամբ, կը տեսնէ աշակերտները իրենց դասարաններուն մէջ, հարցումներ կ'ընէ անոնց եւ կը ստանայ խելացի պատասխաններ: Բոլոր աշակերտներն ալ առողջ, կայտառ, մաքուր ու կոկիկ՝ շատ լաւ տպաւորութիւն կը թողուն սրբազան հօր վրայ:

Սրբազանը ապա կ'անցնի մանկապարտէզի բաժինը, ուր կարմիր գոգնոցաւորներ՝ սիրունիկ, առոյգ ու կայտառ, իրենց վարժուհիին՝ տիկ. Զապէլ Տիւկէրեանի առաջնորդութեամբ կ'արտասանեն, կ'երգեն, կը պատմեն մեծ հաճոյք պատճառելով զիրենք տեսնելու եկած եկեղեցւոյ ներկայացուցիչին:

...Սրբազան հօր բարի գալուստի այցելութիւն տուին Սուտանի Կաթոլիկ Եկեղեցւոյ պետը՝ Արք. Պոննի, ղպտաց զոյգ եպիսկոպոսները, ասորի կաթոլիկ եւ մարոնիթ հասարակութեանց հոգեւոր պետերը, որոնց ամէնուն շնորհակալութեան այցելութիւն տուաւ սրբազան հայրը, տիար Գրիգոր Պոտուրեանի հետ:

Սրբազան հայրը, տիար Գրիգոր Պոտուրեանի հետ, այցելեց անկլիքան եպիսկոպոսին եւ շնորհակալ եղաւ որ տարիներ շարունակ եւ անտրտունջ, Ն.

սրբազնութեան կարգադրութեամբ Անկլիքան Եկեղեցին հովուած է Սուտանի մեր գաղութը, հասնելով անոր կրօնական բոլոր կարիքներուն՝ պսակ, մկրտութիւն եւ թաղում: Անկլիքան եպիսկոպոսը, ...իր ուրախութիւնը եւ հիացումը յայտնած է Հայաստանեայց Եկեղեցւոյ արարողութեանց եւ երգեցողութեանց եւ ապա աւելցուցած. *«Այս ուրախ առիթով Անկլիքան Եկեղեցին կը փափաքի նուէր մը ընել Ս. Լուսաւորիչ եկեղեցիին եւ կ'ուզենք գիտնալ թէ ինչ բանի պէտք ունիք»:*

Մամբրէ սրբազան պատասխանելով Ն. սրբազնութեան, յայտարարած է թէ *«Շնորհակալութեամբ պիտի ընդունինք Անկլիքան Եկեղեցւոյ կողմէ մեր եկեղեցիին ըլլալիք նուէրը եւ զայն պիտի պահենք խնամքով, ցոյց տալու համար մեզի յաջորդող սերունդներուն այն գնահատելի ծառայութիւնը զոր Անկլիքան Եկեղեցին երկար տարիներ մատուցած է Սուտանի մեր գաղութին»:*

...Սրբազան հայրը Տ. Յուսիկ քինյ. Նշանեանի եւ տիար Գրիգոր Պոտուրեանի հետ կ'այցելէ նաեւ Սուտանի եգիպտական դեսպանին: ...

### ՄԱՐՏ 8, ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅ

Նախագահութեամբ սրբազան հօր եւ ի ներկայութեան խումն բազմութեան, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր «Եկեցէ»ի սրտառուչ եւ հոգեպարար արարողութիւնը:

### ՄԱՐՏ 10, ԿԻՐԱԿԻ ՕՐ

Պատարագեց Տ. Յուսիկ քինյ. Նշանեան. դարձեալ եկեղեցին լեցուած էր հաւատացեալներու բազմութեամբ:

Քարոզեց սրբազան հայրը հետեւեալ բնաբանով. «քաջալերացուք Ես եմ, մի երկնչիք»: ...

### ՄԱՐՏ 12, ԵՐԵՔՆԱԲԹԻ

Սուտանի հոգեւոր վերին տեսուչը, գեր. Տ. Մամբրէ սրբազան արք. Սիրունեան կը վերադառնայ Գահիրէ: Ն. սրբազնութեան երեք շաբաթներու ներկայութիւնը Խարթումի մէջ եղաւ կրօնական, գրական եւ գեղարուեստական վալեքներու շրջան մը: Անվերջ հրաւերներ, ընտանեկան ճաշկերոյթներ, ժողովրդային հաւաքոյթներ հասարակութիւնը պահեցին խանդավառ վիճակի մէջ: ...

Սրբազանը կը խօսի օղակայան փութացած ժողովուրդին... *«Քաղցր յիշատակներով ու գոհունակ սրտով կը թողում Խարթումը եւ հրաժեշտ կ'առնեն ձեզմէ. եղայ ձեզի հետ անխտիր, տեսայ ձեր բարօք կացութիւնը ձեր փունն ու տեղը եւ ձեր ընտանեկան օրինակելի կեանքը, գիտակ եղայ ձեր շինած համբաւին ո՛չ միայն կառավարութեան եւ տեղացի ժողովուրդին մօտ, այլեւ օտար հասարակութեանց մօտ. պարագայ մը որ ոչ միայն ուրախութիւն կը պատճառէ ինձի, այլեւ հպարտութեամբ կը լինու իմ սիրտս ու հոգիս»:*...

## Սուտանահայ Կեանք<sup>1</sup>

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Խարթումի Հայ Երիտասարդաց Միութիւնը ունեցաւ իր բեղուն գործունէութիւնը՝ տրուած պայմաններուն չափով:

...Լաւագոյն է հպանցիկ կերպով անցնիլ [գործունէութեանց վրայէն] եւ ծանրանալ վերջին քանի մը ամիսներու գործունէութեանց վրայ:

Եղանակի բացման շրջանէն (Նոյեմբեր 1959) մինչեւ Մարտի կէսերը տեղի ունեցան զանազան ազգային եւ միջազգային պարահանդէսներ որոնք թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս յաջողութեամբ պսակուեցան:

Ս. Ծնունդի եւ Ս. Զատկուան առիթով կազմակերպուած զուտ ազգային պարահանդէսները խանդավառ մթնոլորտի մէջ տօնուեցան:

Դժբախտաբար յարմար մարզադաշտի մը պակասին պատճառաւ մարզական կեանքէն միայն պասքէթպօլը կայուն վիճակ մը ստացած է: Ուրախութեամբ իմացանք թէ կառավարութիւնը վերջերս վաւերացուցած է նոր ակումբի շինութեան յատակագիծը եւ թէ կարելի պիտի ըլլայ այս տարուան վերջաւորութենէն առաջ սկսիլ շինութիւնը, եթէ կամքէ անկախ արգելքներ չպատահին:

ՀԵՄը ունի իր կողքին մշակութային յանձնախումբը, որուն գործունէութիւնը կը կայանայ ազգային ոգին վառ պահելու մէջ եւ իր ձեռնարկներով երիտասարդութեան եւ ընդհանրապէս գաղութին տալու զանազան առիթներ՝ համախմբուելու եւ վայելելու հայկական հաճելի երեկոյթներ:

Այս նպատակով է որ այս տարի ՀԵՄի մշակութային յանձնախումբը ձեռնարկեց հայոց պատմութեան դասախօսութեանց շարքի մը, որուն առաջին բանախօսը եղաւ տեղոյս առաջնորդ հոգշն. Զաւէն վրդ. Չինչինեանը: Հայր սուրբը տուաւ շատ շահեկան եւ հետաքրքրական տեղեկութիւններ հայ ազգին ծագման եւ կազմաւորման շրջաններուն մասին:

Երկրորդ բանախօսը եղաւ Պ. Յովհաննէս Եթենէկեան՝ գաղութիս ազգային վարժարանին տնօրէնը, որ երկու յաջորդական դասախօսութիւններու ընթացքին անդրադարձաւ մեր պատմութեան միջին շրջանի մասին՝ վեր առնելով միշտ մեր ազգային արժանիքները եւ ցոյց տալով միանգամայն գործուած սխալներէն քաղուելիք բարոյական դասերը:

Վերջին բանախօսը եղաւ օր. Շաքէ Քեշկէկեան, որ յաջող կերպով ներկայացուց մեր պատմութեան վերջին շրջանը եւ խանդավառ կերպով թելադրեց ներկաներուն՝ թէ՛ մեր անցեալի փառքերուն արժանի ըլլալու համար եւ թէ՛ մեր պատմութեան բիրաւոր զոհերուն կեանքը անմահացնելու համար պէտք է *հայ ապրիլ*, անոր ոգիին համեմատ գործել եւ մեռնիլ:

Մշակութային յանձնախումբը կազմակերպեց մէջընդմէջ շարժանկարային եւ վիճաբանական երեկոյթներ, որոնք խանդավառեցին ներկաները:

ՀԵՄի վարչութիւնը կազմակերպեց նաեւ բարեկենդանի իր տարեկան միջազգային պարահանդէսը որ յաջող անցնելէ աւելի հանդիսացաւ Խարթումի պարահանդէսներուն լաւագոյնը:

---

<sup>1</sup> Թղթակցութիւնը քաղուած է *Արեւի* 16 Յունիս 1960ի թիւէն:

Մշակութային յանձնախումբը, շարունակելով իր գործունեությունը, այս տարի բեմադրեց Շիրվանզադեի *Չար ոգին*, բաական երկար պատրաստութենէ մը ետք: Տրուած պայմաններուն եւ ուժերուն համեմատ, բաական յաջողութեամբ ներկայացուեցաւ *Չար ոգին* եւ վայելք մը եղաւ գաղութիս հասարակութեան որ հոծ բազմութեամբ քաջալերեց ձեռնարկը:

Սուտանի ազգային վարչութիւնը որոշեց այս տարի մասնաւոր խնամքով տօնել Ապրիլ 24ի եւ մեր ազգային զոհերուն յիշատակի տօնը եւ այս նպատակաւ անոր կազմակերպութիւնը յանձնեց տեղւոյս Տիկնանց Բարեսիրաց Միութեան, որուն աջակցեցաւ ՀԵՄի մշակութային յանձնախումբը:

Կիրակի 24 Ապրիլին, հոծ բազմութիւն մը ներկայ էր մեր զոհերուն յիշատակը յարգելու համար: Գաղութիս նախագահ Պ. Գրիգոր Պոտուրեան ճամփորդած ըլլալով արտասահման իդիմաց վարչութեան Պ. Նազարէթ Էօմիրեան կատարեց հանդէպին բացումը: Եղան զանազան աւուր պատշաճի արտասանութիւններ եւ մեներգեր՝ գաղութիս լաւագոյն ուժերուն կողմէ: Օրուան բանախօսն էր Պ. Տիգրան Յարութիւնեան, որ ազգային պատմութեան քիչ մը հեռու շրջաններէն սկսելով ներկայացուց անցեալի մեր կրած տառապանքները, միեւնոյն ատեն վեր առնելով մեր ցեղային տոկունութեան գիծերը: Ան թելադրեց ներկաներուն կապուած մնալ մեր ազգային ասանդութիւններուն: Տեղի ունեցան նաեւ երկու կենդանի պատկերներ, ներկայացնելու համար օրուան խորհուրդը, որոնք պատրաստուած էին Պ. Շահէ Երէցեանի կողմէ: Ազահանդէսին գնահատելի երեւոյթներէն մէկն էր նաեւ սուտանահայ երգչախումբին կողմէ երգուած աւուր պատշաճի երգերը: Իսկապէս յայտագրին բոլոր կազմողներուն կողքին շնորհաւորելի են նաեւ երգչախումբին բոլոր անդամները, որոնք իրենց ժամանակը տրամադրեցին եւ յոգնութիւն յանձն առին գեղեցիկ արդիւնք մը յառաջ բերելու համար: Նոյնքան ալ շնորհաւորելի է Պ. Արթօ Գույումճեանը, որ ամէնայն համբերատարութեամբ եւ զոհողութեամբ ուսոյց երգչախումբին երգերը եւ ղեկավարեց գայն նրբօրէն:

Փակումը կատարեց տեղւոյս առաջնորդ հոգշ. Տ. Զաւէն վրդ. Չինչինեանը որ շատ տպաւորիչ կերպով խօսեցաւ Ապրիլ 24ի նահատակներու յիշատակին մասին: Ան ըսաւ որ, *«Եթէ մենք անկեղծօրէն կ'ուզենք մեր անցեալի զոհերուն իրէպին հաւատարիմ մնալ եւ անոնց փափաքը լիովին իրագործել, ըլլանք միշտ սիրով իրարու հետ եւ անձնական օրինակով ըլլանք կարարեալ հայեր, օգնենք ազգապահպանման գործին եւ մանաւանդ հեռու ըլլանք եւ չբարոյնք զանազան խմբակցական շահադիպումներէ»:*

Ազահանդէսը վերջացաւ «Հայր մեր»ով, որ երգուեցաւ երգչախումբին կողմէ, եւ հայր սուրբին պահպանիչով:

Վերի յիշուած բոլոր ձեռնարկներն ալ եղան բաական կոկիկ եւ ներկայանալի ձեւով: Որքան որ ալ անոնք ունենան պակասներ ու նոյնիսկ քննադատելի կէտեր՝ այդ բոլորը ներելի են եւ կը բաւէ որ Սուտանի մէջ կայ եւ յուսանք պիտի մնայ հանդարտ գաղութ մը որ կը ջանայ լաւագոյնը ընել ազգապահպանման գործին մէջ, ազգային ոգի ու հպարտութիւն ներշնչելով մանաւանդ նոր սերունդի երիտասարդներուն որոնք ամէնէն աւելի պէտքը ունին անոր:

# Սուտանահայ Գաղութը Այսօր<sup>1</sup>

Զաւէն վրդ. Արզումանեան

Սուտանահայ գաղութը իր պատմութիւնը կերտած է վերջին յիսնամեակին: 1902 թուականէ սկսեալ հայեր սկսած են գաղթել Ափրիկէի կեդրոնը գտնուող երկիրը՝ Սուտան, եւ հոն կազմել գաղութ մը: Սկզբնական թուականներուն Սուտան հաստատուող հայերու մեծամասնութիւնը եղած են արաբկիրցիներ եւ կեսարացիներ: Այս երկրին մէջ հայ գաղութը աճած է Ա. համաշխարհային պատերազմէն ետք: Այսօր սուտանահայ գաղութը իր մէջ կը հաշուէ մօտաւորապէս 800 հոգի, շուրջ 200 ընտանիքի վրայ բաշխուած: 635 հոգի կը բնակին մայրաքաղաք Խարթումի եւ Օմտուրման քաղաքին մէջ, մնացեալ մասը կը բնակի գիւղերու մէջ:

## ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

### **Ա. Սուտանահայ Գաղութային Ժողով**

Սուտանահայ Գաղութային Ժողովը կը բաղկանայ եօթ հոգիներէ, որոնք կ'ընտրուին երեք տարին անգամ մը գաղութահայութեան կողմէ: Ան իրաւատէրն է ազգային անշարժ եւ շարժուն կալուածներուն ու պատասխապնատուն է պետութեան առջեւ, որպէս ներկայացուցիչը սուտանահայ գաղութին: Ժողովին կը նախագահէ օրուան հոգետըր հովիւը:

Սուտանահայ Գաղութային Ժողովի ներկայ անձնակազմը հետեւեալն է.- ՊՊ. Գրիգոր Պոտուրեան՝ ատենապետ, Թորոս Պարսամեան՝ փոխատենապետ, Տիգրան Յարութիւնեան՝ ատենադպիր, Միսաք Փափազեան՝ փոխատենադպիր, Նազարէթ Էօմիրեան՝ գանձապահ, Լեւոն Վանեան՝ փոխգանձապահ, Լեւոն Չոլաքեան՝ խորհրդական:

Ըստ կանոնագրի, ժողովը ունի հետեւեալ իրաւասութիւնները.-

1.- Վերին հսկողութիւն սուտանահայ ազգային գործունէութեանց եւ միութիւններու:

2.- Հսկողութիւն գաղութի հանդարտութեան եւ համերաշխութեան վրայ:

3.- Ի պահանջել հարկին միջամտութիւն գաղութին մէջ որեւէ ազգային գործունէութեան:

4.- Քննարկում կտակային, ամուսնական եւ անձնական խնդիրներու:

Սուտանահայ Գաղութային Ժողովէն կը բխին եկեղեցւոյ եւ դպրոցի հոգաբարձութիւնները, որոնք ենթակայ են անոր տնօրինութեան:

### **Բ. Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն**

Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կը նշանակուի Սուտանահայ Գաղութային Ժողովին կողմէ. ան կը հսկէ եկեղեցւոյ եւ գերեզմանատան գործառնութեանց: Ներկայի անձնակազմն է.- ՊՊ. Պարոյր Կիւմիւշեան՝ ատենապետ, Վաղինակ

<sup>1</sup> 10 Դեկտեմբեր 1968 թուականի այս գրութիւնը լոյս կը տեսնէ *Արեւի* 2 Յունուար 1969ի թիւին մէջ: Զայն կը հրատարակենք առանց յապաւումի, մանր հպումներով:

Լուսինեան՝ ատենադպիր, Հայկ Տերպետրոսեան՝ գանձապահ, Եդ. Ընքապապեան եւ Աւետիս Մարկոսեան՝ խորհրդականներ:

#### **9. Դպրոցի Հոգաբարձութիւն**

Դպրոցի հոգաբարձութիւնը եւս կը նշանակուի Սուտանահայ Գաղութային Ժողովին կողմէ: Ան կը հսկէ ազգային վարժարանին ուսումնական, վարչական եւ տնտեսական գործունէութեանց վրայ: Ներկայ անձնակազմն է.- ՊՊ. Հայկ Պոտտորեան՝ ատենապետ, Գէորգ Պլըքեան՝ ատենադպիր, Նշան Բարձիկեան՝ գանձապահ, Յակոբ Խաչիկեան՝ փոխգանձապահ, Եփրէմ Պենկեան՝ հաշուապահ:

#### **7. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի եւ Ե. Խարթումի Ազգային Վարժարան**

Եկեղեցիին ու դպրոցին շէնքերը միացած են առանձին բաժանումներով եւ յարմարութիւններով: Հողն ու շէնքը ազգային կալուածներ են: Հողը՝ մօտաւորապէս 6000 քառ. մետր, նուիրուած է հայ գաղութին Սուտանի կառավարութեան կողմէ: Եկեղեցիին ու դպրոցին շէնքերը սկսած են շինուիլ 1953ին եւ լրացած 1956ի վերջաւորութեան: Եկեղեցոյ հիմնարկէքը կատարուած է 1953ին եւ օծումը 1957ին...:

Եկեղեցոյ եւ դպրոցի զոյգ շէնքերը կառուցուեցան գաղութի ազգայիններու կարեւոր աջակցութեամբը եւ բարերարութեամբը Սեֆէրեան ընտանիքի...: Եկեղեցոյ դռան վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տաճարս տէրունեան նուիրեալ յանուն հօրն հաւատոյ Հայաստեայց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի մայրաքաղաքի աստ Սուտանի, ի Խարթում, ի վայելս ազգին հայոց, արդեամբ եւ ծախիւք բարեպաշտուի տիկին Զուարթ Սեֆէրեան եւ հարազատի նորին Յակոբայ, Նարդուհոյ եւ Եդուարդի ի հանգիստ հոգոյ ամուսնոյն եւ հօրն իւրեանց Գրիգորի Սեֆէրեան հանգուցեալ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Ի հայրապետութեան ամենայն հայոց Տ.Տ. Վազգէնայ Ա. սրբազնագոյն կաթողիկոսի, ի պատրիարքական տեղապահութեան Սրբոյ Երուսաղէմի Տ. Տիրանայ սրբ. արք.ի, ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Գարեգնի սրբ. արք.ի, յառաջնորդութեան հայոց Եգիպտոսի Տ. Մամբրէ սրբ. արք.ի յամի Տեառն 1957 եւ ի մերումս թուականութեան ՌՆԶ»:

Եկեղեցոյ շէնքը կառուցուած է վայելուչ կերպով ու հայկական ոճով, ունի ամէն յարմարութիւն, զգեստներ, անօթներ եւ այլ կարասիներ:

Դպրոցի շէնքը ունի սրահ մը, տեսչարան մը եւ չորս դասարաններ: Կրթական ծրագիրը բաժնուած է մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններով: Մանկապարտէզին մէջ կան երեք դասարաններ տասնմէկ աշակերտներով, իսկ նախակրթարանին մէջ հինգ դասարաններ երեսուներեք աշակերտներով: Դպրոցի աւագ ուսուցիչն է Պ. Յովհաննէս Եթենէկեան: Ուսուցչական կազմը բաղկացած է չորս հոգիներէ:

Վարժարանին մէջ կ'աւանդուին հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուները, թուաբանութիւն, հայոց պատմութիւն, կրօնք, աշխարհագրութիւն, գիտու-

թին եւ երգեցողութիւն: Եկեղեցոյ եւ դպրոցի համար անշարժ եւ եկամտաբեր կալուածներ չկան. հանգանակութիւններով կը հակակշռուի անոնց պիտոճէն: Եկեղեցոյ եւ դպրոցի զոյգ շէնքերը արժած են 26,000 անգլ. ոսկի:

## **2. Հայկական Ակումբ**

Հայկական ակումբը բաւ մըն է իր շէնքով, որ կը ծառայէ գիշերային ժամանցի: Ազգային կալուած մըն է զոր վարձած է ակումբը ազգային իշխանութենէն: Ակումբը ունի իր վարչութիւնը հինգ հոգիներէ բաղկացած: Անդամներուն թիւն է վաթսունհինգ:

## **Է. Հայ Երիտասարդաց Միութիւն**

Այս միութիւնը հիմնուած է 1940ին, իր տրամադրութեան տակ ունի «Հրանդ» անունով մարզարան մը: Հողը տարածութեամբ 16,000 քառ. մէթր, նուիրուած է միութեան՝ կառավարութեան կողմէ: Մտադրուած է այս հողին վրայ կառուցանել նոր մարզադաշտ մը եւ շէնք մը: Ներկայ մարզադաշտը եւ շէնքը տարիներէ իվեր կը ծառայեն իրենց նպատակներուն որոշ բաւարարութեամբ: Միութեան նպատակն է հաւաքել երիտասարդութիւնը եւ անոր մէջ պահել հայկական ոգին, մարմնամարզութեան եւ մշակոյթի ուղիներով:

## **Ը. Հայ Բարեսէր Տիկնանց Միութիւն**

Միութիւնը հիմնուած է 1952ին: Անդամներուն թիւն է 100: Ունի իր վարչութիւնը: Միութեան հաւաքավայրն է «Հրանդ» մարզարանը: Միութեան նպատակն է աշխատիլ եկեղեցոյ բարեգարդութեան համար, ըստ որում իրենց եկամուտին մէկ չորրորդը կը յատկացնեն եկեղեցիին, նաեւ օգնել խեղճերուն, որոնց կը յատկացուի եկամուտին կէսը: Մնացեալ քառորդը կը յատկացուի միութեան ծախքերուն:


## **ԿՏԱԿՈՒԱԾ ԵՒ ԿՏԱԿԵԼԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ՀԱՐՑ**

Հարցը կը խանդավառէ ազգային իշխանութիւնը: Սուտանահայ Գաղութային Ժողովին կողմէ մասնաւոր ջանքեր կը տարուին կտակներ ապահովելու ուղղութեամբ:


Պետական շրջանակներու եւ յարանուանութեանց հետ յարաբերութիւնները սերտ են եւ համերաշխ: Մինչեւ հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին կառուցումն ու օծումը հովուական ու ծխական պարտականութիւնները սիրով յանձն առնուեցան Անկլիքան եւ Ղպտի Եկեղեցիներուն կողմէ:

Սուտանահայ գաղութին հովուական այցելութիւններ տուած են հետեւեալ հոգեւորականները.- Ամէն. Տ. Տիրան արք. Ներսոյեան, Տ. Մամբէ արք. Սիրունեան, Տ. Պարգեւ եպս. Վրթանէսեան, Տ. Զաւէն վրդ. Արզումանեան, Տ. Խորէն քնյ. Մելիք Շահ, Տ. Յուսիկ քնյ Նշանեան, Տ. Պետրոս քնյ. Ֆենէրճեան:


**Սուտանի մէջ գործած կազմակերպութիւններու,  
 հաստատութիւններու, դպրոցի, եկեղեցիի,  
 միութենական եւ ընտանեկան փաստաթուղթեր,  
 նամակաթուղթի վերտառութիւններ, նկարներ<sup>1</sup>**



Ստացագիր ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղին, 1 Նոյեմբեր 1911



Նամակ ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղէն, 16 Դեկտեմբեր 1911



Տեղեկագիր ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղի, 21 Դեկտեմբեր 1913

<sup>1</sup> Քաղուած ՀԲԸՄ Գահիրէի արխիւէն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Երևան, 31 Դեկտեմբեր 1911

Գառ. Կեղ. Վարչ. Ժողով Զ. Ռ. Բ. Միտրևյան,

Տար. Ասեղազորի,

Ստացանք Ներսիսյան 15 Կոնստանդնուպոլիսի և Կոնստանդնուպոլիսի գրասենյակից շնորհակալ հարցարանին:

Ստացանք Տար. Ասեղազորի և Մասնաժողովի Կանոնադրոյի Կանոնադրոյի

(արտադրութեան համար)

1.— Ներկայ եղանակիցը Մասնաժողովի ո՞րն անդամ ունի:	- 22 -
2.— Ներկայ եղանակիցը Կանոնադրոյի ո՞ր անդամ ունի:	- 25 -
3.— Ներկայ եղանակիցը Մասնաժողովի Կանոնադրոյի անդամ պակասը:	2-ից 4-ի մինչև 4-ից 5-ի մինչև
4.— Այսօր Կանոնադրոյի անդամ ունի:	- 47 -
5.— Ստացող եղանակիցը ո՞րն անդամ արձանագրել կը յուսաւ:	- 10-15 -
6.— Ներկայ եղանակիցը ո՞րն անդամ մուտքի սուրբ գանձակ:	- 1090 - 2. 11
7.— Ո՞րն անդամակցեալ:	- 4080 - 11
8.— Ո՞րն անդամակցեալ:	- 40 - 11
9.— Կ՞ից գումարի նուիրատու պակասեցի:	այլը
10.— Ներկայ եղանակիցը ո՞րն անդամ ունի:	- 40 - 11. 11
11.— Ներկայ եղանակիցը ո՞րն անդամ դրամ գրեցիցի Կեղան:	- 5050 - 11
12.— Այսօր ո՞րն անդամ դրամ ունի:	այլը
13.— Այսօր գանձակիցը ո՞րն անդամ պակասեցի:	- 1200 - 11
14.— Ներկայ եղանակիցը Կանոնադրոյի Կանոնադրոյի:	- 7 -
15.— Տեղից Մասնաժողովի Կանոնադրոյի անդամ. բնից. Կից գումարեց:	- 1 -
16.— Ներկայ եղանակիցը Կանոնադրոյի նուիրատու և անդամ ստացիցի:	այլը
17.— Ե՞րբ սեղի ունի. Մասնաժողովի կիսովին նորոգման:	24 Դեկտեմբեր 1911 թ.
18.— Ներկայ եղանակիցը պատշաճեցան Կանոնադրոյի նման յղեալ է:	- 54 -
19.— Այսօր ո՞րն անդամ սեղի ստացիցի անդամ (նշանակել իրերը):	X- 23 - 11-ից - 28/50 -
20.— Ո՞րն անդամակցեալ իրերը (նշանակել իրերը):	- 219 - 11 - 82 - 301
21.— Ո՞րն անդամակցեալ իրերը (նշանակել իրերը):	- 98 - 11 - 3 - 100
22.— Ո՞րն անդամակցեալ (նշանակել իրերը):	այլը
23.— Ո՞րն անդամակցեալ:	- 11 -
24.— Ո՞րն անդամակցեալ կոնսիլ:	- 11 -
25.— Այսօր Կանոնադրոյի անդամ և անդամակցեալ կարող ունի:	- 11 -
26.— "Ո՞րն-Ո՞րն" Կանոնադրոյի անդամ և անդամակցեալ:	18, 10-11 և 11-ից

ՀԲԸՄ Խարթում/Սուտանի մասնաճիւղի 1911 տարուան տեղեկագիրը

ՀԲԸՄ. ԲԱՐԵՎ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Երևան, 28 Յունիս 1930

UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE

CONSEIL LOCAL

Մարտի 11-ից Կեղան


Զ. Ռ. Բ. Միտրևյան

Երևան, 28 Յունիս 1930


Նամակ ՀԲԸՄ Սուտանի մասնաճիւղին, 28 Յունիս 1930




ՀԲԸՄ Խարթումի մասնաճիղ, 1910ականներ (Ապրել Սեմէրճեանի արխիւն)  
(տրամադրուած դրկտ. Արծուի Բախշինեանի կողմէ)




Հայկական Շահերու Պաշտպան Ընկերակցութիւն, 10 Մայիս 1917




Վարչութիւն Սուտանի Հայկական Գաղութի, 12 Յունար 1927




Յովհաննէս Սեքւնեան Հաստատութիւն, Օմտուրման, 4 Օգոստոս 1913




Հաճրկեան եւ Գրիգորեան Հաստատութիւն, 4 Մայիս 1917




Սարգիս Իզմիրլեան Հաստատութիւն, 18 Փետրուար 1926




Ե. Թերզեան Հաստատութիւն, 23 Ապրիլ 1927




Ս. եւ Ս. Վանեան Հաստատութիւն, 23 Ապրիլ 1927




Գեորգ Ճիլերճեան Լաստատուփին, 1924, 1933, 1942




Փայլակ Տէրունեան Լաստատուփին, 12 Փետրուար 1933




Արթին Պոյաճեան Լաստատուփին






Պաղտասար Մանկասարեան Հաստատույին, 31 Յունուար 1942




Մանթաշէֆ Հաստատույին, 9 Մարտ 1942



Յակոբ Բիւրճեան Հաստատույին, 28 Մարտ 1942




Պետիկեան Տպարան, 1 Մարտ 1943



Ֆիլիպ Գալփաքեան Հաստատութիւն



ՀԲԸՄ Խարթում/Սուտանի մասնաճիւղի առաջին կնիքը



ՀԲԸՄ Խարթում/Սուտանի մասնաճիւղի եւ Ուլիկեան Ընկ. կնիքները



Որբերեան Հաստատութեան բացիկը, Ճիպութի (տրամադրուած դրկտ. Ռուբէն Ատալեանի կողմէ)




Խարթումի հայկական մանկապարտեզի աշակերտներ. ծախին՝ Սիրվարդ Զարեան, աջին՝ Մանուէլ Քէօսէեան (տրամադրուած Ս.Զարեանի կողմէ)



Խարթում, Հրանդ մարզադաշտը (տրամադրուած Ս. Զարեանի կողմէ)



Խարթումի հայոց եկեղեցին (տրամադրուած Ա. Զարեանի կողմէ)



Խարթումի հայոց վարժարանի նամակաթուղթի վերտառութիւն եւ պաշտօնէութեան ցանկ (տրամադրուած դոկտ. Արծուի Բախչինեանի կողմէ)

PASSPORT جواز السفر  
SUDAN GOVERNMENT  
حكومة السودان

City Khartoum المدينة

I, John McRob Humphrey أنا  
Civil Secretary to the Sudan سكرتير اداري حكومة السودان  
Sudan Agent وكيل حكومة السودان  
Government, request on behalf  
of the Governor-General all  
those whom it may concern to  
allow the bearer, who belongs  
to the Sudan, to pass freely  
without let or hindrance, and  
to afford him  
every assistance and protection  
of which he may stand  
in need.  
GIVEN at Khartoum  
this 31<sup>st</sup> day of August  
1938 سنة ١٩٣٨  
هذا اليوم  
الامضاء John McRob Humphrey  
(Signature)

1  
يستعمل هذا الجواز على  
٣٢ صفحة

PASSPORT  
جواز السفر  
SUDAN GOVERNMENT  
حكومة السودان

Number of Passport 3407 رقم الجواز

Name of bearer Arakel Ohan Semerdjian اسم حامل الجواز

Accompanied by his wife Azmiq Yasmadjian  
(Maiden name) معها مصحوب بزوجه  
(اسم الزوجة قبل زواجها اذا كانت مسافرة معه)

And by two children سبعة  
اطفال

Առաքել Սեմերճեանի ստտանական անցագիրը  
(այս եւ յաջորդող նկարները տրամադրուած են Ա. Սեմերճեանի կողմէ)

4  
PHOTOGRAPH OF BEARER  
صورة حامل الجواز الشمسية

Signature Arakel Ohan Semerdjian

5  
COUNTRIES FOR WHICH THIS PASSPORT IS VALID  
البلدان التي يعمل فيها بهذا الجواز  
Egypt, Syria, Cyprus,  
Palestine & Greece

The validity of this Passport expires:  
ينتهي العمل بهذا الجواز في:  
30th August, 1943  
unless renewed.  
الا اذا جدد

Issued at Khartoum بتاريخ  
Date 31<sup>st</sup> August, 1938 التاريخ



Առաքել Սեմէրճեանի ընտանեկան պատկերներ





Սուտանահայ միութենական պատկեր



Սուտանահայ Առաքել Սեմէրճեան կը բանակցի

**ՆԵՐԳԱՂԹԻ ԿԵՐՐ. ԿՈՄԻՏԷ — ԳԱՀԻՐԷ**

Մականուն, Անուն Ալֆրեդ Կարապետ  
 Հասցի: 14, Sidi Gaber Helioopolis

Յարգելի հայրենակից,  
 Ներգաղթի Բ. կարաւանին մասնակցելու եւ անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար, հանձնեմք ներկայանալ Ներգաղթի Կոմիտէին, Գալուստեան Ազգ. Վարժարան:

ՆԵՐԳԱՂԹԻ ԿԵՐՐ. ԿՈՄԻՏԷ

Կարգաթիւ. 439 Կեր, Կոմիտէի ստորագր. [Signature]  
 Տօնիկի թիւ 41 Բժիշկին » [Signature]  
 Անձնրու թիւ 5 Արձանագրողին » [Signature]

**ԱՆՆՐԱՃԵՏ ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
 Միասին թրեել՝ 1) Յական լուսանկար, 2) Եղիա՝ հայաստանեան քաղաք կամ անձագիր, 3) Տարուելիք գոյներու ցանկը: — Նամակաւանձ անձերը պատշաճ միասին ներկայանալ՝ առաւօտ ժամը 9—1, կէտրէ վերջ՝ 4—6:

Առաքել Սեմէրճեանի ներգաղթի արձանագրաթուղթը



Սուտանահայ պսակ, Խարթումի Անկլիքան եկեղեցին մեջ



## Names and Ages of the “Arba Lidjoch” in 1923<sup>1</sup>

Luther Aghnoughian	14	Krikor Krikorian	16
Yervant Atamian	12	Vahan Krikorian	15
Krikor Chalgedjian	14	Moushegh Maghakian	14
Tadeus Chalgedjian	14	Hovhannes M. Malkhassian	14
Messrob Dernerseccion	14	Hovhannes Y. Malkhassian	14
Krikor Garabedian	15	Karekin Mardirossian	15
Baghdasar Gharibian	14	Antranig Markarian	16
Garabed Gudlugian	15	Jirayr Markarian	13
Avak Hagopian	13	Shavarsh Nalchadjian	15
Setrag Hagopian	14	Hamyak Ouzounian	18
Yervant Hagopian	15	Ardashes Panossian	14
Garabed Hakalmazian	15	Kevork Sarkissian	13
Vahram Haroutunian	15	Vahan Sarkissian	14
Khachig Kachigian	17	Papgen Seferian	15
Vazken Kevorkian	16	Sahag Torossian	15
Sahag Khachadourian	13	Haroutiooun Tovmassian	15
Sarkis Khachadourian	15	Nishan Tovmassian	13
Kevork Khaserdjian	15	Mardiros Vagharshagian	15
Krikor Khoudavertian	14	Moushegh Vartanian	15
Haig Krikorian	11	Margos Zakarian	13

---

<sup>1</sup> *Note by V. N.*- In 1932 after the completion of the initial agreement, twelve of the “Arba Lidjoch” left Ethiopia to join family members in Iraq, Syria, and Lebanon. Papgen Seferian died in a battle against the fascist Italian forces.

## **Armenian Employees of the Ethiopian Government in 1930**

### **In the court**

1	Abraham Keorhadjian	Accountant and Treasurer of the Court
2	Nigoghos Djidedjian	Goldsmith
3	Krikor Chalgedjian	Goldsmith
4	Robert Yazedjian	Carpet Weaver
5	Garabed	Textile Weaver

### **Court workshop employees**

1	Hagop Baghdassarian	Director of Mint and Goldsmith
2	Dikran Hazarian	Mechanic
3	Ghevont Baghdassarian	Goldsmith
4	Hrant Baghdassarian	Goldsmith
5	Panos Vartanian	Goldsmith
6	Hagop Messrobian	Agronomist
7	Kevork Mekhdjian	Metalworker and gunsmith
8	Mihran Hazarian	Carpet Weaver
9	David Aslanian	Carpet Weaver
10	Araxi Yazedjian	Supervisor of Weaving
11	Vahan Kaloustian	Supervisor of the hot springs
12	Hagop Douzdjian	Rug Maker
13	Samuel Meneshian	Weaver
14	Kasbar Boyadjian	Weaver
15	Avedis Meneshian	Weaver

### **Teferi Mekonen School**

1	Vahram Mistik (Baboukhian)	Teacher
2	Sarkis Aintablian	Teacher
3	Baghdig Papazian	Teacher
4	Kevork Nalbandian	Teacher

### **Ministry of Agriculture**

1	Haroutioun Ourfalian	Advisor
2	Stepan Papazian	Architect Engineer
3	Abraham Terzian	Supervisor of Government Grinding Mills
4	Dr. Mihran Kaymakian	Dentist
5	Armenak Sarafian	Mechanic
6	Mekhitar Sarlian	Farmer
7	Hovsep Toroian	Horticulturalist

### **Ministry of Finance**

- |   |                  |            |
|---|------------------|------------|
| 1 | Vahram Terzian   | Accountant |
| 2 | Paylag Yazedjian | Auditor    |

### **Ministry of Education**

- |   |                   |               |
|---|-------------------|---------------|
| 1 | Stepan Papazian   | Arts Advisor  |
| 2 | Kevork Nalbandian | Music Advisor |

### **Ministry of Defense**

- |   |                  |                    |
|---|------------------|--------------------|
| 1 | Hmayak Bablanian | Major Army Trainer |
| 2 | Mamas Aznavorian | Embroider          |
| 3 | Yervant Atamian  | Goldsmith          |

### **Municipality of Addis Ababa**

- |    |                      |                               |
|----|----------------------|-------------------------------|
| 1  | Minas Kherbekian     | Civil Engineer                |
| 2  | Amassia Soukiassian  | Civil and Mechanical Engineer |
| 3  | Stepan Daghavarian   | Accountant                    |
| 4  | Roupen Babigian      | Accountant                    |
| 5  | Hovhannes Bedrossian | Secretary                     |
| 6  | Messrob Ayvazian     | Secretary                     |
| 7  | Garabed Hakalmazian  | Music Instructor              |
| 8  | Hrant Krikorian      | Joiner – Carpenter            |
| 9  | Yervant Kherbekian   | Driver – Mechanic             |
| 10 | Noubar Purzetian     | Mechanic                      |

### **Dire Dawa Customs**

- |   |                  |                 |
|---|------------------|-----------------|
| 1 | Stepan Yazedjian | Customs Officer |
| 2 | Michael Topdjian | Metalworker     |
| 3 | Onnig Shahvekil  | Customs Officer |

### **Harar Municipality**

- |   |                      |                    |
|---|----------------------|--------------------|
| 1 | Phillipos Kherbekian | Joiner – Carpenter |
|---|----------------------|--------------------|

### **Others who worked for the government**

- |    |                         |                               |
|----|-------------------------|-------------------------------|
| 1  | Dikran Ebeyan           | Goldsmith                     |
| 2  | Avedis Yamalian         | Agronomist – Chef             |
| 3  | Boghos Markarian        | Envoy                         |
| 4  | Levon Yazedjian         | Painter – Police Commissioner |
| 5  | Arsen                   | Mechanic                      |
| 6  | Bedros Boyadjian        | Court Photographer            |
| 7  | Sarkis Terzian          | Warrior, Envoy                |
| 8  | Garabed Geovderelian    | Government Farms Supervisor   |
| 9  | Krikor Hovian           | Civil Engineer                |
| 10 | Dikran Bzdigian         | Agricultural Supervisor       |
| 11 | Mardiros Chaghatsbanian | Joiner                        |

# Եթովպահայ Գաղութը Այսօր<sup>1</sup>

Զաւէն Արդ. Արզումանեան

Եթովպահայ գաղութը իր պատմութիւնը կը կերտէ վերջին յիսնամեակին, շրջան մը՝ ուր փայլած է հայ տարրը քրիստոնեայ այս աշխարհին մէջ՝ իր մատուցած գնահատելի աշխատասիրութեամբ, պահպանելով հայեցի ու կրօնաշունչ ոգին: Ստորեւ կու տանք ամփոփ գիծերով եթովպահայ գաղութի ազգային-կրօնական հաստատութիւնները եւ միութիւնները: Այժմ, եթովպահայ գաղութը կը հաշուէ իր մէջ մօտ 1000 անձեր, գրեթէ ամբողջութեամբ Առիւ Ապեպայի մէջ, 53 հոգի Տիրետաւայի մէջ (Հարար նահանգ), 34 հոգի Ճիպութի մէջ (Ֆրանսական գաղութ), 22 հոգի Ասմարայի մէջ (Էրիթրէա):

## ԵԹՈՎՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Եթովպահայ գաղութի յատուկ կանոնագրութեան համաձայն, գաղութին ազգային կրօնական բոլոր գործերը կը վաւերացուին եւ ուղղութիւն կը ստանան Եթովպահայ Գաղութային Ժողովէն (ԵԳԺ): ԵԳԺ կը բաղկանայ եօթը եթովպահայատակ ազգայիններ, որոնք կ'ընտրուին գաղութահայութեան կողմէ անխտիր, չորս տարուան շրջանի մը համար: Ժողովի անդամներուն ընտրութիւնը կը տեղեկացուի Եթովպիոյ ներքին գործոց նախարարութեան եւ Եգիպտոսի ազգային առաջնորդարանին՝ ի հաստատութիւն: ԵԳԺին կը նախագահէ օրուան հոգեւոր հովիւը: Ներկայիս անձնակազմը հետեւեալն է.- հոգ. Տ. Զաւէն արդ. Արզումանեան՝ նախագահ, Մարտիրոս Տարագճեան՝ ատենապետ, Պօղոս Եղիայեան՝ փոխատենապետ, Անդրանիկ Կէօշէրեան՝ ատենադպիր, Աղասի Պօղոսեան՝ գանձապահ, Եղուարդ Կարապետեան՝ անդամ, Գէորգ Սվաճեան՝ անդամ, Գրիգոր Փողարեան՝ անդամ:

ԵԳԺէն կը բխին ուսումնական խորհուրդը եւ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը. ան իրաւատէրն է գաղութի ազգային շարժուն եւ անշարժ կալուածներուն, իրեն վերապահուած է արտօնել ամուսնութիւն, ամուսնալուծում եւ վերամուսնութիւն. իր իրաւունքն է նաեւ վաւերացնել ամէն ազգային, մշակութային եւ կամ մարզական միութիւններ, գաղութէն ներս: Պետութեան առջեւ հայ գաղութին միակ պատասխանատուն է ան:

## ԱՏԻՍ ԱՊԵՊԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Եթովպահայ գաղութը իր սկզբնական տարիներուն դժբախտաբար ունեցած չէ իր աղօթատեղին: Աւելի ուշ կրցած է ունենալ իր սեփական հողի մը վրայ փոքրիկ մատուռ մը, ուր մինչեւ 1944 թուականը կրցած է աղօթել, երբ կատարուեցաւ օծումը նորակերտ Ս. Գէորգ եկեղեցւոյ:

Ս. Գէորգ եկեղեցին հայ ժողովուրդի ոգին եւ վեհ զգացումները բարձր կը պահէ յաշս տեղացի ժողովուրդներուն. ան կառուցուած է հայկական ոճով, գեղակերտ երկնասլաց իր գմբէթով կը կանգնի քաղաքի կեդրոնական պողոտային վրայ: Այս գեղեցիկ տաճարը, համաձայն մայր դռան ճակտին գտնուող ար-

<sup>1</sup> Քաղուած՝ *Զարթօնքի*, 15 եւ 16 Դեկտեմբեր 1955 թիւերէն:

ձանագրությանց, կառուցուած է 1934 թուին՝ եթովպահայ ազնուահոգի ազգայիններէն Միհրան Մուրատեանի ծախքովը, ի յիշատակ իր հոր Գէորգ Մուրատեանի: Միհրան Մուրատեան նուիրած է նաեւ ազգին՝ եկեղեցոյն շրջաբակին հողը:

Այս է յիշատակարանը եկեղեցոյն. «Եկեղեցիս Ս. Գէորգ շինեցաւ արդեամբք եւ ծախիւք Միհրանայ Մուրատեան յանուն եւ յանմահ յիշատակ հոգելոյս հոր իւրոյ Գէորգայ Մուրատեանի յամի Տեառն 1934 եւ ի թուին հայոց ՌՁԳ, ի հայրապետութեան Տեառն Խորենայ Վեհ. Կաթողիկոսի, ի Պատրիարքութեան Սրբոյ Սաղիմայ Տեառն Թորգոմայ Սրբազան Արք.ի, ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տեառն Մեսրոպայ Սրբազան Արք.ի»:

Եկեղեցոյ հիմնարկէքը կատարուած է 1928ին, հոգելոյս Տէր Գէորգ արք. Արսլանեանի կողմէ, իսկ օծումը 1944ին՝ եգիպտահայոց առաջնորդ Տ. Մամբրէ արք. Սիրունեանի կողմէ:

Այժմ եկեղեցոյ ներքին մասը, որմնանկարներով, սինազարդումներով, իւրաներկումներով եւ կահաւորումով նախանձելի վիճակ մը ունի, այն օրէն իվեր երբ գաղութիս նորակազմ Հայ Տիկնանց Եկեղեցասէր Միութիւնը անլի քան 2000 անգլ. ոսկի զոյացնելով հիմնական նորոգութեան ենթարկեց տաճարը:

Գաղութս մնայուն եւ կամ այցելու գտնուած են Տ. Գէորգ արք. Արսլանեան, Տ. Մամբրէ արք. Սիրունեան, Տ. Յովսէփ եպս. Կարապետեան, Տ. Եղիշէ եպս. Տէրտէրեան, Տ. Յովհաննէս Ա. քինյ. Կեհէրեան, Տ. Մկրտիչ քինյ. Չլլատեան, Տ. Վարդան քինյ. Տէրասատուրեան: Եկեղեցին ունի իր հոգաբարձութիւնը, նշանակուած ԵԳԺի կողմէ:

#### ՀԱՅՈՑ ԱՁԳԱՅԻՆ ԳԵՈՐԳՈՖ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Շնորհիւ ազնուազարմ ուրիշ հայու մը, Մաթիկ Գէորգոֆի, եթովպահայութիւնը ունեցած է իր կրթական յարկը, ուր սնած են վերջին քսանհինգ տարուան հայ գաւակները: Դպրոցին հողը արդէն ազգային կալուած ըլլալով, շէնքը կառուցուեցաւ 1932ին արդեամբք եւ ծախիւք Մաթիկ Գէորգոֆի: Ընդարձակ շէնք մըն է երկյարկանի, լուսաւոր դասասարահներով, ընդարձակ բակով եւ այլ անհրաժեշտ յարմարութիւններով: Կառուցման թուականէն իվեր կրթական տարեշրջաններ բոլորած է վարժարանը վերին հոգողութեամբ ԵԳԺ եւ անմիջական հսկողութեամբ մերթ դպրոցի հոգաբարձութեան եւ մերթ ուսումնական խորհուրդի:

1954-58 տարեշրջաններուն, Ազգ. Գէորգոֆ վարժարանը ունեցած է միջին հաշուով 180 աշակերտ, 95 նախակրթարանի մէջ եւ 85 մանկապարտէզի մէջ: Տնօրէնութիւնը վարած է Պ. Գառնիկ Թոփալեան, որ նոյն պաշտօնին վրայ է մինչեւ այսօր: Դպրոցը վերջին չորս տարեշրջաններուն ասանդած է լեզուներ (հայերէն, եթովպերէն, անգլերէն, ֆրանսերէն) հայագիտութիւն (հայ գրականութիւն, հայոց պատմութիւն), ուսողութիւն անգլերէն լեզուով, երաժշտութիւն (երոպական ծայնագրութիւն, ազգային եւ եկեղեցական երգեր, գործիքային նուագ, դաշնակ, ձեռնադաշնակ, Զուֆակ): Ներկայ տարեշրջանի ուսուցչական կազմը մանկապարտէզի եւ նախակրթարանի համար կը բաղկանայ 18 ան-

դամներէ. պիտոճէն կը հասնի 45,000 եթովպական թալէրի, որուն կէսը միայն կարելի կ'ըլլայ ապահովել աշակերտներէն:

#### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մինչեւ վերջին ուսումնական տարեշրջանը, ազգային վարժարանի տնտեսական եւ ուսումնական կարիքներուն համար գոյութիւն ունէին Վարժարանի հոգաբարձութիւնը եւ ուսումնական խորհուրդը: ԵԳԺն այս տարի յարմար նկատեց որ զոյգ մարմինները միանան եւ միացեալ ուժով «ուսումնական խորհուրդ» անունին ներքեւ պատասխանատու դառնան վերոյիշեալ կարիքներուն: Խորհուրդը, բխած ԵԳԺն, հետեւեալ կազմը ունի.- Պերճ Պապայեան՝ ատենապետ, Պաղտասար Ճերմակեան՝ փոխատենապետ, Հայկաշէն Ուզունեան՝ ատենադպիր, Պետրոս Ներսէսեան՝ գանձապահ, Էլիաս Ճերահեան, Մուշեղ Երեանեան՝ անդամներ եւ Պօղոս Եղիայեան՝ ԵԳԺի ներկայացուցիչ:

#### ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Եթովպահայ գաղութը բախտաւորուած է Եկեղեցասէր Հայ Տիկնանց Միութիւնով (ԵՀՏՄ): Ինքնաբոլոս կերպով կազմուած միութիւն մըն է իսկապէս եկեղեցասէր տիկիներու: Միութիւնը կազմուած է 1955 Հոկտ. 20ին, նախաձեռնութեամբ տիկ. Մարիան Ճերմակեանի, որ ատենապետուիին է: Միութեան նպատակն է Ատիս Ապեպայի Ս. Գէորգ հայոց եկեղեցւոյ հոգատարութիւնը եւ բարեգործութիւնը: ԵԳԺն գոհունակութեամբ վաւերացուց յիշեալ միութիւնը: Միութեան անդամուիիները կը հաշուըփն 120: ԵՀՏՄի առաջին եւ խիստ գնահատելի գործը եղաւ հիմնական վերանորոգութեան ենթարկել քաղաքիս Ս. Գէորգ եկեղեցին: Հանգանակութեան մը ձեռնարկեց եւ կրցաւ գոյացնել 2000 անգլ. ոսկիի գումար մը, որուն միջոցաւ հիմնական նորոգութեան ենթարկուցաւ եկեղեցին: Միութիւնը յաջորդաբար պատրաստեց պատարագիչ քահանայի զգեստներ, դպիրներու յատուկ շապիկներ, եւ կահաւորեց ազգային առաջնորդարանը ազգապատկան միայարկ շէնքը:

#### ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ԲԱՐԵՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Գաղութս օժտուած է նաեւ Հայ Տիկնանց Բարեսիրաց Միութիւնով, որ սկիզբ առած է 1956 Փետրուարին: Միութեանս գլխաւոր նպատակն է հայթայթել գումար մը՝ յատկացնելու թշուառին եւ դժբախտին, մասնաւորաբար Ազունիէի Ազգային Բուժարանին, ընդհանրապէս հայ աղքատ աշակերտներուն եւ քաղաքիս աղքատ հիւանդանոցներուն:

#### ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Եկեղեցւոյս պայծառութեան մէջ հիմնական տեղ մը կը գրաւէ քաղաքիս Մուրատեան երգչախումբը, իր անունը առնելով Ս. Գէորգ եկեղեցւոյ բարերար Մուրատեան գերդաստանի անունէն: Մուրատեան երգչախումբը հիմնուցաւ 1939 Յունուար 24ին, ղեկավարութեամբ Պ. Ներսէս Նալպանտեանի: Երգչախումբը սկսաւ իր նպատակի իրագործման 20 անդամներով եւ առաջին առիթով բժախնդիր աշխատանքովը Պ. Ներսէսի, պատրաստուցաւ երգելու Եկ-


մալեան պատարագը Ս. Գէորգ եկեղեցիէն ներս: Ս. Պատարագի երգեցողութենէն անկախ Մուրատեան երգչախումբը տուած է 5-6 երգահանդէսներ, այսպէս, *Սօս եւ Վարդիթեռ* երգախառն տրամը, ու *Արշին Մալ Ալան* օփերէթը: Վերջին անգամ երգչախումբը երգահանդէս մը նուիրած է Կոմիտասի յիշատակին:

#### ՄԱՐՄԼԱՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՈՒԹԻՒՆ


Գաղութս ունի իր մարմնամարզական միութիւնը, ուր երիտասարդներ կը հետեւին մարմնակրթութեան, կը կատարեն զանազան մրցումներ: Միութիւնը կազմուած է 1941 Դեկտեմբերին, նախաձեռնութեամբ ՊՊ. Արամ Ազիրեանի, Մանուկ Խոտանեանի, Երուանդ Տէրենցի եւ Ներսէս Նալպանտեանի: Շէնքը, երկյարկանի, իր յատուկ սրահով ու ժողովարահներով ազգին կը պատկանի, մարզադաշտը (մօտ 1500 քառ. մեթր) կը պատկանի դարձեալ ազգին: Միութիւնը ունի իր յատուկ կանոնագրութիւնը, անդամները սկսած են 30 թիով եւ այսօր հասած 120ի: Միութիւնը ունի իր վարչական կազմը:

Մարմնամարզական Արարատ Միութիւնը կատարած է բազմաթիւ ձեռնարկներ, գլխաւորաբար մրցումներ ֆութպոլի, վոլիպոլի, թենիսի. պարահանդէսներ, դասախօսութիւններ, թատերական երեկոներ, երգահանդէսներ եւն.:


**Եթովպիոյ մէջ գործած կազմակերպութիւններու,  
հաստատութիւններու փաստաթուղթեր,  
նամակաթուղթի վերտառութիւններ<sup>1</sup>**



Ն. Մախադուրյան եւ գաւակներ, Ընկերութիւն, 15 Հոկտեմբեր 1906




Մաթիկ Գեորգոֆ Ընկերութիւն, 1909 եւ 1912




Օննիկ Փափազեան Ընկերութիւն, 1907 եւ 1913


<sup>1</sup> Քաղաած ՀԲԸՄ Գահիրէի արխիւէն՝




Գրիգորիոս Թորոսեան Ընկերութիւն, 5 Դեկտեմբեր 1911




Վահան Փ. Փողարեան Ընկերութիւն, 28 Դեկտեմբեր 1911




Վահրամ Թերզեան, 13 Յուլիս 1917




Ե. Կարիկեան Ընկերութիւն, 10 Յունիս 1918






Յ. Թուլումպաճեան Ընկերութիւն, 5 Մեյստեմբեր 1919




Ա. Մարտինեան Ընկերութիւն, 30 Յուլիս 1929



Սամուել Պեհեսնիլեան Ընկերութիւն, 18 Մայիս 1928




Յովհաննէս Ասատուրեան Ընկերութիւն, 1912, 1914, 1918



Գէորգ Մուրադեան Ընկերութիւն, 7 Փետրուար 1929




Վախրիճ Դասմաճեանի նամակաթուղթի վերտառութիւն



Թ. Սարեան Ընկերութիւն, 16 Մայիս 1929



Հայ Ռամկավար Կուսակցութիւն, Ասիս Ապեպայի ակումբ, 6 Հոկտեմբեր 1923



Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ասիս Ապեպայի ակումբին կնիքը




Գորգ. «Եթովպիա, Հայկական Կրթարան, Ատիս Ապեպա»

**Եթովպահայ ականաւոր դէմքերու, ակումբի եւ  
եկեղեցիի նկարներ ու փաստաթուղթեր<sup>1</sup>**



Գրիգորիոս Պողոսեան եւ Գրիգոր Հովեան



Տիգրան Էպիեան եւ Սարգիս Թերզեան

---

<sup>1</sup> Տրամադրուած Վարդգէս Նալպանտեանի կողմէ:



Գէորգ Նալչանտեան եւ Աինաս Խտերպէկեան



Յակոբ Պաղտասարեան եւ Պօղոս Մարգարեան



Արշահան Բէօրհաճեան եւ Պետրոս Պոյաճեան



Եթովպահայութիւնը կը դիմաւորէ Արարատեան որբանոցին փողերախումբը



Նուագախումբը Հայլե Սելասիէ թատերասրահին մէջ եւ Ներսէս Նալպանտեան





6

ARMENIAN  
"ARARAT" CLUB

አርመን "አራራት" ክለብ



4

ST.KEVORK (GEORGE)  
ARMENIAN APOSTOLIC  
CHURCH

ቅዱስ ኬጆርክ (ጊዮርጊስ)

የአርመን ሐዋርያዊት ኦርቶዶክስ

ቤተክርስቲያን



## Համառոտ Մատենագիտություն

- Աշոտ Աբրահամեան, *Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմության, հյր. 2*, Հայաստան հրատ., Երևան, 1967:
- Արշակ Ալպոյաճեան, *Արաբական Միացեալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը)*, Գահիրէ, Նոր Աստղ, 1960:
- Արշակ Ալպոյաճեան, *Թորգոմ պատրիարք Գուշակեան*, Սեւան, Գահիրէ, 1940:
- Ա. Ալպոյաճեան, *Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշիստան ժէ. դարուն*, Տպ. «Նոր աստղ», Գահիրէ, 1946:
- Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը*, 3 հատոր, Գահիրէ, Սահակ-Մեսրոպ, եւ նոր Աստղ, 1941, 1955, 1961:
- Լեւոն Աճէմեան, *Եգիպտոսի փարեցոյցը, 1925-1926*, 2 հատոր, Գասապեան, Աղեքսանդրիա, 1925-26:
- Յ. Անասեան, «Աւետիք Բաղդասարեան Տիգրանակերտցու աշխատութիւնները», *Մանր երկեր*, Լոս Անճելլոս, 1987, էջ 829:
- Աւետիք Արասխանեանց, *Արեւելեան ազգերի հին պատմութիւն. Եգիպտոս, Փիւնիկիա, Միջագետք, Իրան*, տպ. Բոստիւնեանց, Թիֆլիզ, 1891:
- Գէորգ արք. Արսլանեան, *Ուղեւորութիւն յ'Եթովպիա, Կիւթնակերկ*, Կ. Պոլիս, 1930:
- Հայկ Բաթաբան, *Արդի Եթովպիա եւ հայ գաղութը*, Վենետիկ-Ս. Ղազար, 1930:
- Ս. Գասապարեան, *Սփիւռքահայ գաղթածախներն այսօր (մշակութային կեանքի ուրուագիծ)*, Հայաստանի պետ. հրատ., Երևան, 1962:
- Արտաշէս Գարտաշեան, *Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար*, հտր. Ա., տպ. Նուպար, Գահիրէ, 1943 եւ հտր. Բ. Վենետիկ-Ս. Ղազար, 1986:
- Տիգրան Գէորգեան, *Եգիպտոսի հայ կաթողիկէ համայնքը (անցեալը եւ ներկան)*, Գահիրէի ՀԲԸՄ «Սաթենիկ Ճ. Չազըր» հիմնադրամի հրատ., Գահիրէ, 2001:
- Թորգոմ պատր. Գուշակեան, *Եգիպտոսի հայոց հին եւ արդի եկեղեցիները եւ պատմութիւն շինութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորաշէն եկեղեցոյ Գահիրէի*, տպ. Յարէթ-Պաղտասար, Գահիրէ, 1927:
- Խ. Ս. Գուրեան, *Հայ բողոքականութիւնը Եգիպտոսի (որպէս հասարակութիւն եւ եկեղեցի). իսկական տեղեկագիր Հայ Աւետարանական Եկեղեցոյ Ամերիկեան Միսիոնի շէնքը*, Էզպէթիյէ-Գահիրէ, տպ. Յարէթ Պաղտասար, Գահիրէ, 1936:
- Կարլէն Դալլաքեան, *Հայ սփիւռքի պատմութիւն (համառոտ ակնարկ)*, Հրաչեայ Աճառեան Համալսարան, Երևան, 1998:
- Աւետիս Եսփոմեան, *Եգիպտոսի մշակոյթի պատմութիւն*, Գահիրէ, 1981:
- Եգիպտոսի հայերը գիտաժողովի նիւթեր 2 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018)*, խմբ. Ա. Տազէսեան, Haigazian University Press, Beirut, 2022:
- Մուշեղ Երեւանեան, *Եթովպիայի գաղութը 1941-1975 շրջան*, 1996(°):

- Մանուկ Թաշճեան, *Հայահամար Եգիպտոսի եւ Սուրանի 1939*, Մատենաշար Ոսկետառ, թիւ 4, տպ. Ոսկետառ, Գահիրէ, 1939:
- Ա. Թերզիպաշեան, *Երկու տարի Արիս Ապապայի մէջ* տպ. Տէրյակոբեան, Փարիզ, 1944:
- Յարութիւն Թուրշեան, «Հապէշ կրօնական գործիչ Ս. Եւստաթէոսը եւ հայ եկեղեցին», *Էջմիածին*, IV-V եւ VI:1956:
- Յովհաննէս Թովուզեան, *Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն (1805-1952)*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978:
- Յովհաննէս Թովուզեան, «Տիմոթէոս Սափրիչեանի ուղեգրութիւնը որպէս Եթովպիայի ԺԹ. դարի պատմութեան աղբիւր», *Արեւելեան աղբիւրագիտութիւն*, հիպր. 1, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1988:
- ԺԵ.-ԺԸ. դարերի ուղեգրութիւններ, գիրք Բ., թարգմ., առաջաբան եւ ծանօթ.՝ Ա. Մադոյեան, «Նայիրի» հրատ., Երեւան, 2005:
- Թ. Կարապետեան, եւ Ե. Եղիազարեան, *Եգիպտոս*, Երեւանի Պետական Համալսարան, Երեւան, 1958:
- Վարդգէս Համազասպեան, *Սովետական Հայաստանը եւ Սփիւռքը*, Գիտելիք, Երեւան, 1980:
- «Հայերն աշխարհում» *հանրագիտական համառօտ բառարան*, կազմ.՝ Ամալիա Պետրոսեան, Ալբերտ Իսոյեան, Կոստանդին Խուդավերդեան, Հայագիտակ, Երեւան, 1995:
- Յովիկ Մելիքսեթեան, *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1985:
- Գէորգ Մսրըլեան, *Ականատր հայեր Եգիպտոսի մէջ. արաբական գրաւումէն մինչեւ չերքէզ մեմլուքներու իշխանութեան միջին շրջանը, 640-1441*, տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1947:
- Գարեգին Յովհաննէսեան, *Եգիպտոսի պատմութիւնը սկիզբէն մինչեւ մեր օրերը. ճոխացուած ազգ. պատմութեան դրուագներով*, տպ. Փափագեան, Գահիրէ, 1937:
- Անտիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, «Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ, այսպէս է», *Բազմավէպ*, 10:1897:
- Տոքթ. Սուրէն Պայրամեան, *Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ*, հրատ.՝ Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի, Գահիրէ, 2017:
- Տոքթ. Սուրէն Պայրամեան, *Հայ գիրքը Եգիպտոսի մէջ, 1881-2011, մատենագիտական ցուցակ*, Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի Բօլ Քիլտճեան հրատ. ֆոնտ, Նուպար տպագրատուն, Գահիրէ, 2012:
- Տոքթ. Սուրէն Պայրամեան, *Հայ մամուլը Եգիպտոսի մէջ, մատենագիտական ցուցակ*, Գահիրէի ՀԲԸՄ Ճանիկ Չազըր հիմնադրամ, Նուպար տպագրատուն, Գահիրէ, 2005:
- Սուրէն Պարթեւեան, *Եգիպտահայ տարեցոյցը, 1914-1918*, տպ. Պէրպլերեան, Գահիրէ, 5 հատոր:
- Տօքթ. Մ. Սալբի, *Ալեականեր եւ իլեականեր. հայ վրանաքաղաքին տարեգիրքը*, Տպագրութիւն Ա. Գսասապեան, Աղեքսանդրիա, 1919:

- Արամ Սարգսեան, «Սուտան», *Հայ Սփիւռք հանրագիտարան*, Հայկական հանրագիտարան հրատ., Երեւան, 2003:
- Տ. Սափրիչեան, *Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան, կամ բարոյական, քաղաքական եւ կրօնական վարք հապէշից, գիրք Ա-Բ*, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1871:
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 90-ամեակին նուիրուած ցուցահանդէս*, պատր.՝ Դերենիկ արք. Սահակեան, Nubar Digital, Գահիրէ, 2019:
- Յ. Սուֆեան, *Եգիպտոսի հայ մեմլուքներն ու իշխանները Ֆարսիմեան շրջանին*, տպ. Լուսարձակ, Գահիրէ, 1928:
- Նուպար Տէրմիքայէեան, *Եգիպտոսի գաղութը 10-15րդ դարերում*, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 283 էջ:
- Հ. Եղիա Փեչիկեան, «Հ. Յովհաննէս Թովմաճանի ուղեւորութիւն յԵթովպիա», *Բազմավէպ*, Վենետիկ, 6-9 եւ 12:1937:

### **Օտար լեզուներով՝**

- Boris Adjemian, “Du récit de soi à l’écriture d’un Grand Récit de la migration”, *L’Homme*, 211:2014.
- Boris Adjemian, “Du récit de soi à l’écriture d’un Grand Récit: une autobiographie collective arménienne en Éthiopie”, *Diasporas. Histoire et sociétés*, 22:2013.
- Boris Adjemian, “Foreignness in Ethiopia, through the Eye of Armenian Diaspora”, *African Diaspora*, 8:2015.
- Boris Adjemian, *La fanfare du négus. Les Arméniens en Éthiopie (XIX<sup>e</sup>-XX<sup>e</sup> siècles)*, Éditions de l’EHESS, Paris, 2013.
- Boris Adjemian, “Les Arméniens en Éthiopie, une entorse à la ‘raison diasporique’? Réflexion sur les concepts de diaspora marchande et de minorité intermédiaire”, *Revue européenne des migrations internationales*, 28(3):2012.
- Boris Adjemian, “L’invention d’un homeland arménien en Éthiopie: Exil et sédentarité dans l’écriture d’une mémoire d’hôtes en diaspora”, *Tracés. Revue de Sciences humaines*, 2(23):2012.
- Boris Adjemian, “Traditions et filiations des savoirs européens et orientaux dans une Géographie arménienne: l’Éthiopie d’Agonc’ en 1802”, *Cahiers du CRA*, 9:1998.
- Victortia Archarouni, *Nubar Pacha, un grand serviteur de l’Égypte (1825-1899)*, Alexandrie, Imp. des Pères Dom-Bosco, 1951.
- “Avedis Terzian: Memories of Ethiopian–Armenian Relations” selected and transcribed by Richard Pankhurst and Kathy Marshall, *International Journal of Ethiopian Studies*, 1-2(8):2014.
- Seta Dadoyan, *The Armenians in the Medieval Islamic World: Paradigms of interaction – seventh to Fourteenth Centuries*, Vols. 1, 2, and 3, Transaction Publishers, New Jersey, USA, 2011, 2013, 2014.
- Seta Dadoyan, *The Fatimid Armenians: Cultural and political interaction in the Near East*, Leiden, Brill, 1997.

- James De Lorenzi, "A Cruel Destiny: The Armenian Stranger in Twentieth-Century Ethiopia", *The International Journal of African Historical Studies*, 3(49):2016.
- James De Lorenzi, "Caught in the Storm of Progress: Timoteos Saprichian, Ethiopia, and the Modernity of Christianity", *Journal of World History*, 19(1):2008.
- Dr. Mohammed R. AlEmam, *Onnig of Cairo (Onnig G. Alexanian): 50+ Years of the Life of an Armenian Egyptian Jeweler*, Cairo, Nubar Press, 2001/ د. محمد رفعت الامام, اونيج اوف كايرو +50 عاماً من حياة صانع ارمني مصري, القاهرة, دار نوبار للطباعة, 2001.
- Yann Grunfest, "An Ethiopic-Armenian Phrase-Book from the 18<sup>th</sup> Century," in Sven Rubenson éd., *Proceedings of the Seventh International Conference of Ethiopian Studies*, Addis Abeba, 1984.
- Ignazio Guidi, *Annales Iohannis I, Iyasu I, Bakaffa*, Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptorum Aethiopicum, Series altera, 5, Librairie Charles Poussielgue, Paris, 1903.
- Markus Haile, "Ethiopia's Armenians – A Lost Diaspora? A Study of the Role of Identity in the Armenian Diaspora", Department of Social Anthropology Bachelor's thesis, Stockholm University, 2006.
- James Ray Kirkland, "Armenian Migration, Settlement and Adjustment in Australia, with Special Reference to the Armenians in Sydney," Ph.D. thesis, Australian National University, 1980.
- Memoires de Nubar Pacha*, Introductions et notes de Mirrit Boutros Ghali, Librairie du Liban, Beyrouth, 1983.
- Vartkes Nalbandian, *I Want to Die with a Flag: Ethiopia, My Delusions and Disillusionment*, 2019.
- Vrej Nersessian & Richard Pankhurst, "The Visit to Eighteenth Century Ethiopia of the Armenian Jeweller Yovhannes T'ovmacean," in Dickran Kouymdjian éd., *Études arméniennes in Memoriam Haïg Berbérian*, Fondation Calouste Gulbenkian, Paris, 1986.
- Dimitri A. Olderrodge, "L'Arménie et l'Éthiopie au IV<sup>e</sup> siècle (à propos des sources de l'alphabet arménien)", *IV congresso internazionale di studi etiopici*, Accademia Nazionale dei Lincei, Roma, 1974.
- Richard Pankhurst, "Menilek and the Utilisation of Foreign Skills in Ethiopia," *Journal of Ethiopian Studies*, V(1):1967.
- Richard Pankhurst, "The History of Ethiopian-Armenian Relations," *Revue des Études Arméniennes*, 12:1977, Ibid. 13:1978-79, Ibid. 15:1981.
- Carlo Conti Rossini, "Miniature armene del MS. Et. N. 50 della Biblioteca Vaticana", *Rassegna di Studi Etiopici*, xx:1942.
- Harold Takooshian, "Armenian Immigration to the United States from the Middle East", *Journal of Armenian Studies*, 1-2(3):1986-1987:
- The Armenian Inscriptions from the Sinai*, ed. Michale Stone (ed.), Harvard University Press, Cambridge Mass., 1982.

“The Visit to Ethiopia of Yohannes T'ovmacean, an Armenian Jeweller, in 1764-66,” translated by V. Nersessian, edited and annotated by Richard Pankhurst, *Journal of Ethiopian Studies*, 15:1982.

Khachig Tölölyan, “Elites and Institutions in the Armenian Transnation”, *Diaspora: A Journal of Transnational Studies*, 1(9):2000.

Bedros Torossian, “In search of a Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in British-Occupied Egypt (1882-1914)” Part I & II, *Haigazian Armenological Review*, 40:2020, & 42:2022.

Emeri J. Van Donzel, *Foreign Relations of Ethiopia (1642-1700). Documents Relating to the Journeys of Khodja Murad*, Nederlands historisch-archaeologisch Instituut, Istanbul, 1979.

Bahru Zewde, “The Forgotten Patriot: The Life and Career of Johannes Semerdjibashian in Ethiopia,” *Armenian Review*, 38(2):1985.

أحمد عبد الرحيم مصطفى (دكتور)، *عصر حكيكيان، سلسلة مصر النهضة، الهيئة المصرية العامة للكتاب، القاهرة، 1990.*

حلمي أحمد شلبي (دكتور)، *الأقليات العرقية في مصر في القرن التاسع عشر، مكتبة النهضة المصرية، القاهرة، 1993.*

فؤاد حسن حافظ (مستشار)، *تاريخ الشعب الأرمني منذ البداية حتى اليوم، دار نوبار للطباعة، القاهرة، 1986.*

نجيب مخلوف، *نوبار باشا وما تم على يده، القاهرة، 1904.*

آرداشيس كارداشيان، *مواد لتاريخ الأرمن في مصر، ثلاثة أجزاء، الجزء الأول، القاهرة، 1948، الجزء الثاني والثالث، فينيسيا، 1986.*

Եգիպտահայ մշակոյթի պատմութեան ուսումնասիրութեան անգնահատելի նպաստ են եգիպտահայ բանասէր, Ժրագրան աշխատասիրող Հայկ Աւագ-եանի հրատարակութիւնները՝ նուիրուած եգիպտահայ կամ Եգիպտոսի մէջ պահ մը գործած հայ մշակոյթի դէմքերու: Այս հրատարակութիւնները լոյս կը տեսնեն իբրեւ Գահիրէի Զահակիրի յաւելուած: Ստորեւ կը հրատարակենք ոչ-ամբողջական ցանկը անոնց:

*Աղեքսանդրիոյ հայկական երաժշտական կեանքի ուրուագիծ (ըստ ազգագիրներու եւ յայտագիրներու),* հաւաքեց՝ Հ. Աւագեան, Զահակիրի յաւելուած Զ., Գահիրէ, 2017:

*Արմենակ Շահ-Մուրադեան. Ժամանակագրութիւն, յօդուածներ, երգացանկ,* պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Զահակիրի յաւելուած ԺԸ., Գահիրէ, 2017:

Գաբրիէլ Լէքէճեան, *Ժողովածու լուսանկարներու երկու հատորով,* հտր. Ա. եւ Բ., հաւաքեց եւ նախաբանը գրեց՝ Հայկ Աւագեան, Զահակիրի յաւելուած ԼԷ. եւ ԼԸ., Գահիրէ, 2020:

*Դաշնակահար եւ մանկավարժ Նուարդ Տամարեանի կեանքի ուղեգրութիւնը (ըստ վաւերաթուղթերու եւ փաստագրութիւններու),* հաւաքեց եւ պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Զահակիրի յաւելուած Ը., Գահիրէ, 2017:

*Խմբավար եւ երաժշտահան Հայկ Սարգիսեանի Եգիպտոսի շրջանի գործունէութեան ուրուագիծ (ըստ վաւերաթուղթերու եւ փաստագրութիւններու),* հաւա-

- քեց եւ պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած Է., Գահիրէ, 2017:
- Ուղեցոյց եգիպտական սինեմայի հայ դերասաններուն եւ գործիչներուն*, պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած ԽԶ., Գահիրէ, 2021:
- Ուղեցոյց եգիպտական սինեմայի հայ դերասաններուն եւ գործիչներուն*, պատրաստեց՝ Հայկ Աւագեան (արաբերէն), Ջահակիրի յաւելուած ԽԷ., Գահիրէ, 2021:
- Ուրուագիծ Գոհար Գասպարեանի Եգիպտոսի շրջանի գործունէութեան (1940-1948)*, պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած Թ., Գահիրէ, 2017:
- Վանիա Էքսէրճեան. բազմերանգ աշխարհ մը համակ կենսունակութեամբ*, պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած ԺԱ., Գահիրէ, 2017:
- Տիգրան Գէորգեան, *Երկեր երեք հատորով*, Ա., Բ. եւ Գ. հատորներ, հաւաքեց եւ հրատարակութեան պատրաստեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած ԼԱ., ԼԲ եւ ԼԳ., Գահիրէ, 2020:
- Տիրան Կարապետեան. յօդուածներ իր մասին, նկարներու ալպոմ (ծննդեան 135-ամեակին առիթով)*, հաւաքեց՝ Հ. Աւագեան, Ջահակիրի յաւելուած Ժ., Գահիրէ, 2017:
- Քիրագ. ընտրանի եգիպտական շրջանի երգիծանկարներու*, հաւաքեց՝ Հայկ Աւագեան, Ջահակիրի յաւելուած ԻԱ., Գահիրէ, 2019:
- Հայկ Աւագեան, *Ալեքսանդր Խաչիսեանի պատմական այցելութիւնը Եգիպտոս եւ Հայաստանի Անկախութեան Փոխառութիւնը. ուղի մը հաւաքականութենէ դէպի անձնականութիւն*, Ջահակիրի յաւելուած ԼԵ., Գահիրէ, 2020:
- Հայկ Աւագեան, *Արամ Խաչատրեանի ընկալումը եգիպտական շրջանակներու մէջ. փոխուող յարացոյցներ*, Ջահակիրի յաւելուած ԻԳ., Գահիրէ, 2019:
- Հայկ Աւագեան, *Եգիպտական սինեմայի առաջին հայ դերասանները*, Ջահակիրի յաւելուած ԽԱ., Գահիրէ, 2021:
- Հայկ Աւագեան, *Եգիպտական սինեմայի առաջին հայ աստղը՝ Ֆայրուզ*, Ջահակիրի յաւելուած ԽԲ., Գահիրէ, 2021:
- Հայկ Աւագեան, *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Ա. Արեւելեան պարուհի՝ Հոլա Շամս Ալ-Տին*, Ջահակիրի յաւելուած ԽԳ., Գահիրէ, 2021:
- Հայկ Աւագեան, *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Բ. Արեւելեան պարուհիներ՝ Հերմին եւ Ծովինար*, Ջահակիրի յաւելուած ԽԴ., Գահիրէ, 2021:
- Հայկ Աւագեան, *Եգիպտական սինեմայի հայ պարուհիներ. Գ. Դասական պարուհի՝ Սոնիա Սարգիս*, Ջահակիրի յաւելուած ԽԵ., Գահիրէ, 2021:
- Հայկ Աւագեան, *Ջապէլ Եսայեանի երկու այցելութիւնները Եգիպտոս (1918-1920)*, Ջահակիրի յաւելուած ԼԶ., Գահիրէ, 2020:
- Հայկ Աւագեան, *Էլբուին Ժերար Համամճեան. գաղափարապէս համակուած արուեստագէտը*, Ջահակիրի յաւելուած ԽԹ., Գահիրէ, 2022:
- Հայկ Աւագեան, *Մառի Պէլլերեանի Եգիպտոսի փարիները (1896-1909) եւ ընկերվարական ֆեմինիզմը*, Ջահակիրի յաւելուած Ծ., Գահիրէ, 2022:
- Հայկ Աւագեան, *Վահան Թէքէեանի յօդուածները Արեւ լրագիրին մէջ. հնարատրութիւն թէ դիմադրութիւն*, Ջահակիրի յաւելուած ԻԲ., Գահիրէ, 2019:

Հայկ Աւագեան, *Ուրուագիծ ջութակահար Ժիրայր Գանթարճեանի Եգիպտոսի շրջանի գործունէութեան (1931-1953)*, Զահակիրի յաւելում ԼԹ., Գահիրէ, 2021:

Հայկ Աւագեան, *Ուրուագիծ երգչուհի-դերասանուհի Վալանթին Ամիրայեանի Եգիպտոսի շրջանի գործունէութեան (1920-1931)*, Զահակիրի յաւելում Խ., Գահիրէ, 2021:

*Papasian & Co. երաժշտական ընկերութիւնը (ըստ ազդագիրներու եւ յայտագիրներու)*, հաւաքեց՝ Հ. Աւագեան, Զահակիրի յաւելում Ե., Գահիրէ, 2017:

Haig Avakian, *Edwin Gerard Hamamdjian: An Artist in the Service of Ideas*, translated by Marie Sargsyan-Luscombe (in English), Զահակիրի յաւելում ԾԲ., Գահիրէ, 2022:

## Համառոտ Կենսագրութիւն Հեղինակներու

### Նազարէթ Աղազարմ (1861-1927)

Հեղինակ է *Եկեղեցական կալուածներ եւ Գահիրէի միթինկը* (1903) ու *Նոթեր Եգիպտահայ գաղութին վրայ* (1911) գիրքերուն:

### Դոկտ. Պորիս Աճէմեան

[boris.adjemian@gmail.com](mailto:boris.adjemian@gmail.com)

Դոկտորականը պաշտպանած է 2011ին՝ École des hautes études en sciences sociales (EHESS, Փարիզ) եւ Նափոլիի “L'Orientale” Համալսարանին մէջ: Տնօրէնն է Փարիզի ՀԲԸՄ Նուպարեան Մատենադարանին: Պատասխանատու խմբագիրն է *Études Arméniennes Contemporaines*ին եւ խմբագրակազմի անդամ է *20 & 21 Revue d'histoire*ի (նախապէս *Vingtième Siècle: Revue d'histoire*): Centre de recherches historiques (EHESS)ի անդամ է իբրեւ ընկերակից հետազոտող: Հեղինակն է *La Fanfare du Négus: les Arméniens en Éthiopie (19e-20e siècles)* (2013), *Les Petites Arménies de la vallée du Rhône: histoire et mémoires des immigrations arméniennes en France* (2020) հատորներուն, եւ շարք մը այլ գիտական յօդուածներու: Համախմբագիրն է *Le Témoignage des Victimes dans la Connaissance des Violences de Masse/Victim Testimony and Understanding Mass Violence (Études Arméniennes Contemporaines, no. 5, June 2015)*, ինչպէս նաեւ՝ *Jerusalem in the Making: Spaces and Communities (Études Arméniennes Contemporaines, no. 9, September 2017)* բացառիկներուն: Իր habilitation à diriger des recherchesը պաշտպանած է մայիս 2022ին՝ Փարիզի École normale supérieureին մէջ *Archives, exil et politique: Aram Andonian et la Bibliothèque arménienne de Paris (1927-1951)* նիւթով:

### Արժ. Դոկտ. Զաւէն Ա. քինյ. Արզումանեան

Ծնած է 1933ին, յաճախած է Գահիրէի Ազգային Գալուստեան վարժարանը: 1949ին կ'ընդունուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընծայարանը եւ 1954ին կը դառնայ արեղայ: Լոնտոնի համալսարանին մէջ երեք տարի ուսանած է աստուածաբանութիւն, ապա Թեմփրլ Համալսարանին մէջ պաշտպանած մագիստրականը՝ աստուածաբանութեան մէջ: Երկրորդ՝ փիլիսոփայութեան մագիստրականը ստացած է Նիւ Եորքի Քոլումպիա Համալսարանէն, ուր եւ պաշտպանած է դոկտորականը 1983ին:

1957-59՝ հոգեւոր հովին է Եթովպիոյ հայոց, ապա կ'անցնի Մ. Նահանգներ, ուր քսանամեակ մը կը հովուէ Ֆիլատելֆիոյ հայոց եկեղեցոյ հօտը, ապա կ'անցնի Ֆլորիտա, ուրկէ՝ Փասատենա:

Ան քաջածանօթ է իբրեւ Մաղաքիա արք. Օրմանեանի կոթողական *Ազգապատումի* շարունակողը՝ երեք գիրքերու մէջ (Ա. գիրք՝ 1910-1930, Բ. գիրք՝ 1930-1955, Գ. գիրք՝ 1955-1995) հեղինակելով *Ազգապատում Դ. հայորդ* (1995, 1997, 2003): Անոր երախտաշատ ճիգին կը պարտինք անգլերէն թարգմանութիւնը եւ հրատարակութիւնը միջնադարեան շարք մը հայ մատենագիրներու երկերուն, ինչպէս՝ *Eznik of Kolb; Cyril of Alexandria; Constantine Porphyrogenitus* (1976), *Bishop Sebeos; Lewond the Priest; Kirakos of Gandzak*

(1981), *Ghewond Erets'* (1982), *History of Armenia by Bishop Ukhtanes of Sebastia* (2 հատոր՝ 1988 եւ 2008): Ան հեղինակ է նաեւ Հայ Եկեղեցւոյ դասնաբանութեան նուիրուած անգլերէն գիրքերու:

2004ին արժանացած է Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանին՝ Գարեգին Բ. կաթողիկոսին կողմէ, իր յիսնամեայ կրօնական եւ գրապատմական գործունէութեան համար: Իր նորագոյն հրատարակութիւնն է հայերէն եւ անգլերէն լոյս տեսած *Յիշարժան անդրադարձ/Reflections in Retrospect: Memoirs of a Pastor's Six Decades of Service* յուշերու հատորը, որ լոյս տեսաւ Մ. Նահանգներ, 2017ին:

**Դոկտ. Ճոն Արմաճանի**

**JARMAJANI@CSBSJU.EDU**

Դասախօս է Սընթ Պենետիքթ Քոլէճի աստուածաբանութեան բաժանմունքին եւ Միննըտթայի Սընթ Ճոնզ Համալսարանին մէջ: Դոկտորականը պաշտպանած է Քալիֆորնիոյ Համալսարանին մէջ (Սանթա Պարալրա)՝ կրօնագիտական ուսմանց ծիրին մէջ, կեդրոնանալով իսլամական եւ միջինարեւելեան տարածքին վրայ:

Իր ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն իսլամի եւ քաղաքականութեան յարաբերութիւնը՝ Միջին Արեւելքի, Հիսիսային Ափրիկէի ու Հարաւային Ասիոյ մէջ: Հեղինակն է *Dynamic Islam: Liberal Muslim Perspectives in a Transnational Age* (2004), *Modern Islamist Movements: History, Religion, and Politics* (2012) գիրքերուն: Ճէյմս Լինձիի հետ խմբագրած է *Historical Dimensions of Islam: Pre-Modern and Modern Periods; Essays in Honor of R. Stephen Humphreys* (2009) հատորը: Ներկայիս կ'ամբողջացնէ *Shia Islam and Modern Politics: Iran, Iraq, and Lebanon* եւ *The Armenian Diaspora and Modern Political Systems: Religious and Ethnic Minorities in their Historical Contexts* հատորները: Վերջինս լոյս պիտի տեսնէ Հայկազեան Համալսարանի Հրատարակչատունէն:

**Աննա Աազեան**

**annaavagyan\_07@gmail.com**

Ծնած է 1996ին, Երեւան: 2013-2017՝ ուսանած է Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան Հիմնարկի Արաբագիտութեան Բաժինը: 2017էն մագիստրականի ուսանող է Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան Հիմնարկի Թրքագիտութեան Բաժինին մէջ:

**Դոկտ. Արծուի Բախշինեան**

**artsvi@yahoo.com**

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական «Վահան Տէրեանի ստեղծագործական աշխատանքներու.ոգր» նիւթով: 2009էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթավայրերի եւ Սփիւռքի բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդ-ուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shemakha"* (համահեղինակ՝ Վարդան Մատթէոսեան, 2022): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն

ու պատմամշակութային առնչությունները, հայ շարժանկարը, պարարուեստը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ...: 1998էն կ'աշխատակցի ՀՀՀին: 2001-21՝ ՀՀՀ ներկայացուցիչն էր Երեւանի մէջ:

**Դոկտ. Մուհամմատ Րիֆաաթ Էլիմամ Mohamed\_elemam1966@yahoo.com**  
Ծնած է 1966ին, Գահիրէ: Դոկտորականը ստացած է 2000ին, Այն Շամս Համալսարանէն: Իր ակադեմական հետաքրքրությունները կ'առնչուին Գահիրէի փողոցաբնակ փոքրերուն, Եգիպտոսի հայերու պատմութեան, ցեղասպանագիտութեան, Արեւմուտք-մահմետականութիւն-Հայոց Յեղասպանութիւն եռանկիւնին, ժամանակակից եգիպտական լուսանկարչութեան, Փորթ Սայիտի հայոց գաղթակայանին, ԺԹ. դարու եգիպտահայ ինքնութեան, Նուպար ընտանիքին, Իսրայէլ-Կովկաս զուգակշիռին, Օսմանեան Կայսրութեան մէջ կաթողիկէ եւ անետարանական յարանուանութիւններու յառաջացման եւ միսիոնարական շարժումին, Եգիպտոս-Հայաստան միջպետական յարաբերութեանց, արաբական մամուլի հայկական նիւթերուն եւ..:

**Դոկտ. Տիգրան Դանալանեան tghanalanian@yahoo.com**  
Ծնած է Երեւան: 2016ին ԵՊՀ հայոց պատմութեան ամբիոնէն պաշտպանած է թեկնածուական՝ «Սփիւռքի Ներքին Տեղաշարժերը 1945-1988 թթ.» նիւթով: 2008-16՝ իբրեւ փորձագէտ պաշտօնավարած է «Նորավանք» ԳԿՀի մէջ: 2014էն դասախօս է (2022էն դոցենտ) ԵՊՀ պատմութեան բաժանմունքի հայոց պատմութեան ամբիոնին: 2021-22 եղած է ասագ գիտաշխատող Հայաստանի Պատմութեան Թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի մէջ: 2022էն գիտաշխատող է ԵՊՀ հայագիտական հետազոտություններու հիմնարկի սփիւռքագիտական հետազոտություններու բաժնի մէջ: Հեղինակ է գիտական յօդուածներու, մենագրութեան, համահեղինակ՝ գիրքերու: Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքի պատմությունն ու սփիւռքագիտությունը:

**Գրիգոր Պասմաճեան Greg@KVBArchitects.co.uk**  
Ծնած է Եթովպիա, 1952ին: Երրորդ զաւակն է ճարտարագէտ Վահոյիճ Պասմաճեանի: Աւարտած է Ատիս Ապեպայի English Schoolը, ապա՝ Միացեալ թագաւորութեան Պաթի Kingswood Schoolը, զոր աւարտելէն ետք անցած է Plymouth/Portsmouth University, ուր աւարտած է արտօնեալ ճարտարապետի մասնագիտութիւնը, 1985ին: Իտես Հայլէ Սելասէ կայսեր գահընկեցութեան եւ երկրի քաղաքական անկայունութեան, կ'որոշէ չվերադառնալ Եթովպիա եւ մնալ Մ. Թագաւորութիւն: 1998էն կը բնակի Hertfordshire, ուր հաստատած է իր անձնական ճարտարապետական ընկերութիւնը:

**Դոկտ. Արտակ Մաղալեան artak\_77@mail.ru**  
Ծնած է Երեւան, 1997ին: 2007ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արցախի Մելիքությունները եւ Մելիքական Տները XVII-XIX դդ.» նիւթով, որ նոյն տարին

լոյս տեսած է իբրեւ մենագրութիւն (2012ին՝ ռուսերէն): 2003էն կ'աշխատի ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկը որպէս աագ գիտաշխատող: 2015էն Մաշտոցի անուան Մատենադարանի Միջնադարեան Ձեռագրագիտութեան Բաժնի աագ գիտաշխատող է:

Պատմաբան-աղբիւրագէտ Մաղալեան հեղինակ է պատմագիտական յօդուածներու եւ հինգ գիրքերու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ նաեւ Իրանի տիրակալ Նասիր շահի գործունէութեան սկզբնաղբիւրները: 2010ին լոյս տեսած է իր աշխատասիրած *Նադիր Շահի Ղարաշրջանի Պատմագրական Յուշարձանները* գիրքը, ուր ընդգրկուած են Իրանի ԺԸ. դարու պատմութեան երկու սկզբնաղբիւրներու հայերէն թարգմանութիւնները: Իր աշխատասիրութեամբ 2016ին լոյս տեսած է նաեւ ԺԹ. դարու պատմագիր Միրզա Աղիկեօզալ-բէկի *Ղարաբաղնամէ* աշխատութեան հայերէն թարգմանութիւնը:

**Վարդգէս Նալպանտեան**

**vartkes@sassouent.com**

Ծնած է 1949ին, Ատիս Ապեպա: Երկրորդ գաւակն է Ներսէս Նալպանտեանի եւ Էլիզ Որբերեանի չորս գաւակներուն: Նախնական ուսումը ստացած է Ատիս Ապեպայի Ազգային Գէորգոֆ Վարժարանը, ապա աւարտած Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, 1966ին: Վկայուած է Մագիստրոս Գիտութեան վկայականով՝ Երեւանի Պոլիտեխնիկական Հաստատութեան «Էլեկտրական Մեքենաներ եւ Ապարատներ» մասնագիտութեամբ: 1974ին վերադարձած է Եթովպիա եւ ստանձնած քիմիական նիւթեր վաճառող անգլիական ընկերութեան մը առեւտրական ներկայացուցիչի պաշտօնը: 1977էն իվեր ընտանեօք Ս. Գէորգ Եկեղեցին բաց պահելու պարտականութիւնը յանձն կ'առնէ եւ վճռական դեր կ'ունենայ համայնքը վերականգնելու աշխատանքներուն մէջ: 1989ին ընտանեօք կը հիմնէ կաշիի գործարան մը արտածելով տաւարի կաշի մինչեւ 2008՝ երբ պետական նոր օրէնքով կ'արգիլուի կիսամշակուած կաշիի արտածումը: Այժմ կը զբաղի շինարարութեամբ եւ Եթովպահայ պատմութեան գրառման աշխատանքով:

**Պօղոս Շահմելիքեան (1945-7 Օգոստոս 2019)**

Ծնած է Պէյրութ: Յաճախած է Նշան Փալանճեան ճեմարան, իսկ երկրորդականի վերջին երեք տարիները՝ Մխիթարեան վարժարան, ուրկէ շրջանաւարտ եղած է: Ճեմարանին մէջ ուսուցիչ ունեցած է Մուշեղ Իշխանն ու Գառնիկ Բանեանը, որոնք իր մէջ արթնցուցած են հայ գրականութեան սէրը: 1981ին հաստատուած է Լոս Անճելըս, ուր որոշ շրջան մը շարունակած է երաժշտական ասպարէզը՝ ընկերակցելով գաղութի զանազան հայ երգիչներու: Հեղինակ է երկու հատորներու՝ *Յիշատակներ. անցած օրեր* (2012) եւ *Ճամփորդութիւն յիշողութեան մէջ* (2018), աշխատակցած է *Ասպարէզի* եւ *Ազդակին*:

**Դոկտ. Անդրանիկ Տազէսեան**

**adakessian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը: 1993-2017՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է

Հայկազեան Հայագիտական Հանդէսին: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Եգիպտոսի, Սուրանի եւ Եթովպիոյ հայերը/1 գիտա-ժողովի նիւթեր* (2022), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը (1919–1920)* (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920–2005)* (2015):

Հրատարակած է Թրիփոլիի հայոց, հայ պղնձագործութեան, լիբանահայ ընտանիքին/մշակոյթին/թատրոնին/գրատպութեան/ինքնութեան/համարկումին /1918–40ականներու պատմութեան, Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններուն նուիրուած ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու եւ ենթօճախներու պատմութեան հարցերը:

### **Արժ. Վարդան քնյ. Տիւկէրեան (1910–“)**

Եղած է տնօրէնը Սուտանի հայոց վարժարանին (1950ականներու կէս), ապա անցած Մ. Նահանգներ ուր քահանայագործած է, միաժամանակ աշխատակցած սփիւռքահայ մամուլին: 12 տարիներ ան եղած է Ուիլիլմ Սարոյեանի ծխատէր քահանան: Հեղինակ է երեք գիրքերու՝ *Կեանքը գերեզմանէն անդին* (1962), *Կիրակնօրեայ խոհեր* (1966), եւ *Կեանք եւ յաւերժութիւն – ժամանակակից նիւթեր* (1988):

### **Ռուբինա Սվաճեան-Քինկուէլ**

**rubina.kingwell@yahoo.com**

Ծնած է 1955ին Խարթում, Սուտան: Ան երկրորդ զաւակն է Ծովինար (ծն. Վանեան) եւ Պետրոս Սվաճեան ընտանիքին: Ընտանեօք տեղափոխուած են Ատիս Ապեպա, ուր յաճախած է Lycée Guébré-Mariamը եւ English Schoolը, ապա մեկնած Մ. Թագաւորութիւն, Օքսֆորտի St. Clare's Hallի մէջ համալսարանական կրթութեան: 1974ի յեղափոխութենէն ետք բնակութիւն հաստատած է Լոնտոն:

Ներկայիս ան կ'ուսումնասիրէ կենսագործունէութիւնը իր հօր, որ Եթովպիոյ կայսր Հայլե Սելասէի ոսկերիչն էր: Իր պրպտումներուն շնորհիւ Ռուբինա յաջողած է յայտնաբերել իր հօր ոսկերչական ստեղծագործութիւններէն մաս մը, որոնք պատուիրուած էին կայսեր կողմէ: Ան այս մասին յօդուածներ ստորագրած է *Armenian Weekly*ի մէջ, եւ տուած դասախօսութիւններ՝ Սփիւռքի զանազան վայրերու մէջ Լոնտոն, Մոնթրէալ, Նիկոսիա, Թորոնթօ, Վանքուվըր, եւ Ուաշինկթըն Տի.Ս.:

Հեղինակ է *In the Shadow of the Sultan* պատանեկան պատմավէպին, որ կը ներկայացնէ 1896ի համիտեան ջարդերը: Անոր *The Darker Shadow* հատորը կը վիպագրէ Հայոց Յեղասպանութեան առաջին տաս ամիսներուն՝ 1914 Սեպտեմբեր-1915 Յունիս ժամանակահատուածը: Յեղասպանութեան նուիրուած այս եռագրութեան երրորդ հատորը՝ *The Long Shadow*, լոյս տեսաւ 2022ին: Ան կ'ընդգրկէ 1915-22 շրջանը եւ կը ներկայացնէ դէպքերը՝ Կիլիկիոյ, Սուրիա-Լիբանանի եւ Կիպրոսի մէջ:

## Հիմնական Տեղեկություններ Սուտանի Հանրապետության Մասին

«Սուտան» անունը արաբերէն արտայայտութիւն է վերաբերած՝ Սուտանի ու անկէ հարաւ սեւամորթներով բնակուած տարածքներու:

Պատմականօրէն, փարաւոնական Եգիպտոսը տիրացած է իր հարաւի տարածքին Ք.ա. 2100-1720 շրջանին: Աւելի ետք հիւսիսային Սուտանի Նեղոսի շրջանի հնամեայ Քուշ թագաւորութիւնը հանգուցունելով Եգիպտոսին, առնչուած է Միջին Արեւելքի պատմութեան:

Հարաւի երեք թագաւորութիւններ՝ Մաքրուիա, Նուպթիա եւ Ալլոտիա քրիստոնէացուած են 2. դարուն, մինչ մահմետականութիւնը մուտք գործած է հիւսիսային Սուտան Է. դարուն, իսկ Նեղոսի հովիտով ծաւալած հարաւ՝ ԺԴ.-ԺԵ. դարերուն, երբ Եգիպտոսէն արաբ ցեղախումբեր հոսած են Սուտան: Օսմանցիք ներթափանցած են 1500-1821ին եւ կազմուած են մահմետական զանազան թագաւորութիւններ, իսկ արաբերէնը դարձած է ընդհանրական լեզուն 1720ականներէն:

Եգիպտոսի փոխարքայ Մուհամմէտ Ալի գրաւած է Սուտանը 1820ականներուն, իսկ 1881ին յառաջացած է Մետտիի պետութիւնը՝ ի հակադրութիւն անգլո-եգիպտական գերիշխանութեան: 1896էն մինչեւ անկախութեան հռչակում՝ 1956, երկիրը գտնուած է անգլիական տիրակալութեան տակ (Սուտանի հանդէպ տարածքային ու տիրակալ ախորժակներ ունեցած են նաեւ Պելճիքան եւ Ֆրանսան): Այս շրջանին յստակացած են սահմանները եւ ձեւաւորուած է 1,840,687 քառ. քմ. տարածքով եւ երկու մեծ շրջաններէ բաղկացած Սուտանի պետութիւնը՝ Հիւսիսային (գրեթէ միալեզու՝ արաբերէն, մեծամասամբ մահմետական, վեց՝ խարթումի, Քորտոֆանի, Տարֆուրի ու Արեւելեան, Հիւսիսային եւ Կապոյտ Նեղոսի նահանգներ) եւ Հարաւային (բազմալեզու, մեծամասամբ քրիստոնեայ):

Երկիրը ունի տաք եղանակ՝ հիւսիսի մէջ, մինչ հարաւը բարեխառն է: Քարիւղի պաշարներ ունեցող այս երկիրը հարուստ է դաշտային հսկայ տարածութիւններով, որոնք կ'ոռոգուին Նեղոսով եւ իր վտակներով: Կ'երագուէր որ ան դառնայ արաբական աշխարհի երկրագործական բերքատուն: Ան ունի երկրագործական հինգ գօտի՝ հիւսիսէն հարաւ.- անապատային, կիսաանապատային, թեթեւ-անձրեային, առատ անձրեային եւ լեռնային:

Երկիրը թատերաբեմ եւ անուղղակի փորձադաշտ եղած է.- ա) միջերկրականեան եւ ափրիկեան քաղաքակրթութեանց, բ) ափրիկեան կրօնքներու, մահմետականութեան եւ քրիստոնէութեան, գ) արաբ եւ ափրիկեան լեզուներու, դ) արաբ եւ ափրիկեան ցեղախումբերու, ե) այլազան կենցաղներու (նստակեացութիւն եւ թափառաշրջութիւն) շփման: Այս այլազանութիւնները մնայուն մարտահրաւէր դարձան երկիրը համախոհական իշխանութեամբ մը ամրապնդելու փորձերուն: Մանաւանդ իսլամականացման, ապակրօնացման եւ արաբականացման, արեւելեան եւ արեւմտեան բեւեռներու շուրջ խարխափումները մնայուն անկայունութիւն պարտադրեցին երկրին քաղաքական, ընկերային, տնտե-

սական բնագաւառներուն. յառաջացան միլիոնաւոր ներքին տեղահանուածներ, արձանագրուեցան միլիոնաւոր սովահարեալներ, եղան ցեղային զտումներ:

1956ին հռչակուած անկախութենէն ի վեր երկիրը թատերավայր եղաւ ներքին (1955-72, 1983-2005, 2003-10) եւ արտաքին պատերազմներու (Չատի եւ Եթովպիոյ, Հարաւային Սուտանի հետ...) զինուորական յեղաշրջումներու քաղաքացիական ըմբոստութիւններու:

2005ին հիւսիս-հարաւ համաձայնութեամբ Հարաւային Սուտանը դարձաւ ինքնավար, իսկ 2011ի հանրաքուէով հռչակուեցաւ անկախ պետութիւն, Ճուպա մայրաքաղաքով: Սակայն հիւսիս-հարաւ սահմանային վէճերը դուռ բացին բախումներու, մինչ նոյնինքն Հարաւային Սուտանը դիմագրուեց քաղաքացիական պատերազմ մը՝ 2013-20ին:

2019ին երկարատեւ ցոյցերէ ետք զինուորական բռնահարուածով իշխանութեան հասած Օմար էլՊաշիր հրաժարեցաւ եւ զինուորաքաղաքային իշխանութիւն մը յառաջացաւ անցումային շրջանի մը համար: 2020ին Սուտան համաձայնեցաւ բնականոնացնելու իր յարաբերութիւնները Իսրայէլի հետ, բայց նոյն տարին իսկ սկիզբ առին Եթովպիոյ Թիկրէյի շրջանի կռիւները, որոնց առնչուեցաւ Հիւսիսային Սուտանը, իսկ 2021 Հոկտեմբեր-Նոյեմբերին զինուորական նոր յեղաշրջում մը ձեռք առաւ Հիւսիսային Սուտանի իշխանութիւնը: Սակայն քաղաքացիական ընդդիմութիւնը պարտադրեց որ զինուորաքաղաքային իշխանութիւն մը գոյացուի, անցումային շրջանի մը համար:

Այսօր Հիւսիսային Սուտանի բնակչութիւնը անցած է 46 միլիոնը: Բնակչութեան տարբեր խմբաւորումներ (արաբներ, նուպիացիք եւ ֆըրեր) կը գործածեն երեք տարբեր լեզուներ: Բնակչութիւնը այլազան է նաեւ ֆիզիքապէս ու մորթի գոյնով, ցեղայնօրէն, կենցաղով, բնակավայրերով:

Ամփոփելով, կարելի է ըսել թէ անկախութեան հռչակումէն ի վեր թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին պատճառներով Սուտան ենթարկուած է մնայուն անկայունութեան, պատճառ դառնալով մարդկային արհաւիրքներու, երկրին աղքատացման:

## **Հիմնական Տեղեկություններ Եթովպիոյ Դաշնակցային Հանրապետության (Եթովպիա) Մասին**

Եթովպիա/Ապիսինիան Ափրիկէի հնագոյն երկիրներէն է, ուր քաղաքակրթութիւնը հազարաւոր տարիներու պատմութիւն ունի: Ան հիմնադիր-անդամ է ՄԱԿին, Չէզոք Երկիրներու Համախմբումին եւ Ափրիկեան Միասնականութեան:

Գաղթի ու ընդարձակման միջոցներով Եթովպիան վերածուած է իւրօրինակ կայսրութեան, ընդգրկելով այլալեզու հաւաքականութիւններ, ինչպէս՝ ամհարաներ, օրոմօներ, սոմալներ, թիկրէյներ, աֆարներ, սիտամաներ, կուրակներ, ակաուններ, հարարներ: Ք.ա. Ժ. դարուն գոյացած Տմիթի թագաւորութենէն ետք, նշանաւոր է Ք. ե. Ա. դարու Աքսիումի թագաւորութիւնը Թիկրէյի մէջ, որ հզօրանալով Կարմիր ծովու ափերուն, գրաւեց Եմէնը: Դ. դարուն (330) քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեցաւ, իսկ մահմետականութիւնը մուտք գործեց 660ականներուն: Վերջինիս տարածումը Արաբական Թերակղզիին մէջ՝ փոխեց առեւտրական ուղիները շրջանին, կղզիացնելով քրիստոնէայ Եթովպիան մինչեւ ԺԳ. դար, երբ սողմունեան գերդաստանը (1270–1529) եկաւ իշխանութեան գլուխ: Այդ շրջանին, գրաւումներով ու կցումներով երկիրը ընդարձակուեցաւ, տիրանալով Ափրիկէի Եղջիւրին, մինչ փորթուկալ միսիոնարներ ժամանեցին շրջանը:

Միջկրօնական առաջին պատերազմները մղուեցան 1529–43ին երբ Ատալի սուլթանութիւնը – Օսմանեան Կայսրութեան աջակցութեամբ – փորձեց գրաւել Ապիսինիան, որ սկսած էր ունենալ Փորթուկալի աջակցութիւնը: Այս պատերազմները տկարացուցին երկիրը, առիթ ծառայելով օրոմօ ժողովուրդին՝ լեռնավայրերը տարածուելու եւ գրաւելու Ատալ Սուլթանութիւնն ու Ապիսինիան: Մինչ փորթուկալ ներկայութիւնը սկսաւ զգալի դառնալ 1555–32ին, Օսմանեան Կայսրութիւնը թափանցեց ժամանակակից Էրիթրէայի տարածք: Փորթուկալեան միսիոնարները փորձեցին երկիրը կաթօլիկացնել, որ դուռ բացաւ քաղաքացիական պատերազմի եւ կաթօլիկներուն արտաքսումին: 1632ին նոր մայրաքաղաք՝ Կոնտարի հաստատումով, խաղաղութեան եւ ծաղկումի շրջան մը յառաջացաւ մինչեւ ԺԸ. դարու միջ-աւատատիրական պատերազմները:

1855ին Թաւետորոս Բ. զանգուածային սպանութիւններու, հողակցումներու, բռնի կրօնափոխումներու միջոցով իր իշխանութեան տակ միաւորեց արդի Եթովպիոյ մեծ մասը, եւ երկիրը դարձաւ բազմացեղային, բազմակրօն, բազմէթնիք: Մենելիք Բ.ի օրով երկիրը կարեւոր քայլեր առաւ դէպի արհեստագիտական զարգացում ու արդիականացում ու ձեւաւորուեցաւ ժամանակակից Եթովպիա երկիր-պետութիւնը: Հազարաւոր եթովպացիներու արեան գնով դուրս մղուեցան – 1876ին՝ եգիպտական եւ 1896ին՝ իտալական ներխուժումները – եւ Եթովպիան մաս կազմեց միջազգային աշխարհակարգին: Իտալիան երկրորդ ներխուժում մը կատարեց 1935ին եւ զայն գրաւած պահեց մինչեւ 1941 երբ դաշնակիցները դուրս մղեցին իտալացիք երկրէն եւ Հայլե Սելասիէ կայսրը

(1892-1975, իշխած՝ 1930-35 եւ 1941-74) վերատիրացաւ իր գահին: Եթովպիոյ եւ Էրիթրէայի համադաշնութիւնը գոյատեւեց մինչեւ 1961, երբ կայսրը Էրիթրէան վերածեց եթովպական նահանգի, կայծը տալով Էրիթրէական անկախութեան պատերազմին, որ տեւեց երեք տասնամեակ, եւ աւարտեցաւ 1993ի հանրաքուէով ու Էրիթրէայի անկախութեան հռչակումով:

Կայսրը 1974ին գահընկեց եղաւ զինուորական յեղաշրջումով, որուն յաջորդեցին Սոմալիի՝ Օկատէնը կցելու անյաջող փորձի պատերազմը (1977), իշխանութեան բռնարարքները, սովը (մէկ միլիոն զոհեր, 1984) եւ քաղաքացիական պատերազմը, որ դուռ բացաւ 1991ի յեղաշրջումին ու Դաշնակցային Եթովպիոյ յառաջացումին:

Միշտ ալ կեդրոնաձիգ եւ դաշնակցային վարձաչեւերու միջեւ խարխափած այս երկիրը ներկայիս կը շարունակէ տառապիլ քաղաքացիական անկայունութենէ եւ բախումներէ:

Այսօր Եթովպիան բազմէթնիք դաշնակցային պետութիւն է, ուր կը խօսուին ամհար, սոմալի, օրոմօ, թիկրէյ եւ աֆար լեզուներ: Վարչապետը կը գլխաւորէ երկրին գործադիր իշխանութիւնը, մինչ օրէնսդիր իշխանութիւնը կը բաղկանայ 108 անդամ հաշուող դաշնակցային եւ 547 անդամանի ներկայացուցիչներու պալատներէն: Անձով այս երկիրը բաժնուած է էթնօլեզուական հիմքերով կազմուած 11 նահանգներու: Երկրին մէջ օրոմօ ժողովուրդը բնակչութեան 34% է եւ կը գրաւէ երկրին մայրաքաղաքային շրջանն ու երկրագործական բերքառատ վայրերը, 24-27%ը՝ ամհարա, 6%ը՝ թիկրէյ (վերջին երկուքը լեզուով եւ մշակոյթով մօտ են իրարու), եւ 6%ը՝ սոմալ է: Քրիստոնէութիւնը մեծամասնութեան կրօնքն ըլլալով հանդերձ կան մահմետականներ եւ ցեղային կրօնադաւաններ: Բնակչութեան 49 տոկոսը գրաճանաչ է, իսկ երկրագործութիւնը կը գոյացնէ երկրի տնտեսութեան 36 տոկոսը: Իր 1,100,000 քառ.քլմ. տարածութեամբ եւ աւելի քան 113 միլիոն բնակչութեամբ Եթովպիան կը հանդիսանայ Ափրիկէի երկրորդ եւ աշխարհի 13րդ ամէնաբազմամարդ պետութիւնը:

## Համառոտ Ուրուագիծ Սուտանի Հայօճախին

Եգիպտոսի բարեկարգիչ Մուհամմետ Ալի Սուտանի զաւթումով եւ յիսնամեակ մը ետք Սուէզի ջրանցքի բացումով փոքրաթիւ հայեր - մանաւանդ եգիպտահայեր - կ'անցնին Սուտան, նախ կը հաստատուին ծովեզերեայ քաղաքներ՝ Փորթ Սուտան եւն. ապա կը խորանան երկրին մէջ՝ իբրեւ փոքր առետորականներ, ներկայացուցիչներ, ներածողներ...:

Սուտանի եւ սուտանահայ պատմութեան համար յատկանշական են երկու Առաքելներ, որոնք կարճատեւ շրջաններով վարած են Սուտանի որոշ նահանգներ: Սուտանի մէջ առաջին քրիստոնեայ կառավարիչ հանդիսացած Առաքել Նուպար իր կառավարման կարճատեւ շրջանին (1857-58, մահացած՝ պաշտօնավարութեան շրջանին) հռչակուած է իր բարեկարգումներով: Ան նպաստած է երկրին արդիականացումին: Իսկ Առաքել Ապրոյեան որ նոյնպէս կառավարած է կարճատեւ շրջան մը (1874-75, մահացած՝ եգիպտական բանակին ընկերակցութեամբ Սուտանի գրաման ճակատամարտի ընթացքին), կը նշանատրուի Եգիպտոսի ծաւալողական քաղաքականութեան իր բերած նպաստով:

Դրուագային ու հատուկենտ պարագաներէ անդին, հայերու ներկայութիւնը Սուտանի մէջ նկատելի կը դառնայ 1900ականներու սկիզբին, երբ եգիպտահայ ծխախոտի եւ առետորական այլ ընկերութիւններու ներկայացուցիչներ, փոքր առետորականներ, մեծանուն ներածողներ, հանքարդիւնաբերողներ, կը հաստատուին հոն, գոյացնելով ոչ-աւելի քան 100 հոգի հաշուող անկազմակերպ հաւաքականութիւն մը:

1910-40ականներուն, սուտանահայութիւնը կը բոլորէ կազմաւորման-ձեւաւորման ու հաւաքականացման/տնտեսական ամրապնդման հանգրուան մը: Անոր թիւը կ'աճի 150 անձէ շուրջ 125 ընտանիքի, որով եւ կը սկսի տեղաւորման-արմատաւորման հանգրուանը եւ 1940ականներու վերջ-50ականներու սկիզբին կը գոյանայ հայօճախը, կորիզ ունենալով եգիպտահայեր, որոնց վրայ տակաւ կ'աւելնան Արեւելեան Միջերկրականէն հաստատուած հայեր:

1910ականներուն ձեւաւորուիլ սկսած գաղութը (1909ին կազմաւորուիլ կը սկսի ՀԲԸՄ մասնաճիւղը), 1917-18ին պետական հովանաւորութիւն եւ ճանաչում կը ստանայ, անոր կը տրամադրուի հող՝ ազգային հաստատութիւններ կառուցելու: Կետարէֆի մէջ հայկական առաջին դպրոցը կը բացուի 1923ին: Այս շրջանին՝ սուտանահայութիւնը կը տարուբերի ազգային հաստատութիւններ կառուցելու իր սահմանափակ հնարաւորութիւններուն եւ համահայկական օրակարգերու միջեւ: Անոր՝ տեղական միութիւններ գոյացնելու, ինքնուրոյն ակումբ կառուցելու փորձերը չեն յաջողիր: Ան կը դիմագրաւէ երկատումները միջկուսակցական-միութենական պայքարներու, որոնք կը ջլատեն իր վտիտ ուժերը: Հայօճախը տասնամեակներ կը փայփայէ երազը դպրոցի եւ եկեղեցիի շինութեան, որոնք լիարժէք իրականութիւն կը սկսին դառնալ 1940ականներու վերջէն, երբ 1950ականներու սկիզբին պետութեան տրամադրած հողաշերտին վրայ կը սկսին կառուցուիլ դպրոցաշէնքն ու եկեղեցին:

Այնուհետև քսանամեակ մը՝ անկախութեան հռչակումէն - 1956էն մինչեւ 1970ականներու կէս - հայօճախը կ'ապրի ծաղկուն օրեր, երբ կը գործեն եկեղեցին, դպրոցը եւ աշխուժ է միութենական կեանքը:

1969ին զօր. Նումէյրիի զինուորական յեղաշրջումին յաջորդող եւ այնուհետև երկիրը քաղաքական, տնտեսական, ապահովական, սովի, ցեղային զտումներու, քաղաքացիական պատերազմներու արհաւիրքներուն գլորած անվերջ տագնապները արհինաքամ կ'ընեն արդէն իսկ փոքրաթիւ հայօճախը, որ այսօր դադրած կը թուի ըլլալ, չունենալով զինք կենսատրող նուազագոյն բաղադրիչները:

Ամփոփելով կրնանք ըսել, թէ Սուտանի հայութիւնը ունեցաւ հարիւրամեայ պատմութիւն մը, որուն ծաղկուն օրերը զուգահիւսեցան յետանկախական առաջին շրջանին: Հայօճախը ունեցաւ սաղմնատրման, ձեւատրման կազմատրման եւ հուսկ՝ գոհացուցիչ ինքնագոյութեան կարճատեւ շրջանը: Ան սակայն, չգոյատեւեց երկրին դիմագրաւած ներքին ու արտաքին մեծ վերիվայումներուն պատճառով:

Այսօր հայօճախէն մնացած կը թուի եկեղեցին՝ իբրեւ պատմական յուշարձան:

## Համառոտ Պատմություն Եթովպիոյ Հայօճախի

Հայ եթովպական յարաբերությունները ունին գէթ մէկուկէս հազարամեակի պատմութիւն: Կրօնադաւանանքային հիմքերով սկսած այս յարաբերութիւնները ծաւալած են սուրբգրային/վարքագրական երեսակներով, ընդգրկած են Երուսաղէմ-Եթովպիա-Կիլիկիան<sup>1</sup>, ներառած ձեռագրային արուեստը: Իսկ քաղաքական առումով այդ յարաբերությունները ունեցած են հակասումանեան ազատագրական-պաշտպանական եւ ասպնջականութեան ընթացք:

Հայոց՝ Եթովպիոյ մէջ նոր ժամանակներու ներկայութեան պատմական վկայութիւնները սկիզբ կ'առնեն ԺԷ դարուն որոշակի յառաջադրանքներով կամ ծրագրերով Եթովպիա մեկնած անհատներով:

Եթովպիոյ գաղթօճախը կը ձեւաւորուի ԺԹ դարավերջէն, երբ 1860ականներուն հոն հասած հայեր, ամրանալով երկրի տնտեսական վտիտ շուկային մէջ կը ներքաշեն հարազատներ ու հայրենակիցներ, եգիպտահայ ու պոլսահայ տնտեսական հաստատութիւններու ներկայացուցիչներ (1900ականներուն, Ատիս Ապեպայի տնտեսական գործառնութեան 35%ը հայապատկան էր): Առաջին այս սերունդը բացառիկ նպաստ կ'ունենայ երկրին կղզիացումէն դուրս գալուն եւ աշխարհին բացուելուն: Գաղթօճախին թիւը 80էն կը բարձրանայ շուրջ 250ի՝ համիտեան ջարդերուն, Կիլիկիոյ կոտորածին, բայց մանաւանդ Հայոց Յեղասպանութեան հետեւանքով ու Կիլիկիոյ պարպումով, երբ կիլիկեհայեր կ'ապաստանին եթովպաբնակ հարազատներու քով: 1940ականներու աւարտին այս թիւը կը հասնի շուրջ 900ի:

Եթովպահայ այս սերունդը, դիմագրաւելէ ետք 1890-1920ի հայկական եւ համաշխարհային արհաւիրքները, կը կայունանայ եւ կ'արմատաւորուի երկրին մէջ: Ան կը նշանաւորուի իր թարգմաններով, դեսպանատուններու պաշտօնատարներով, մանր ու միջակ առեւտրականներով, փոքրաթիւ արհեստաւորներով, ճարտարարուեստականներով: Ոմանք կը նպաստեն երկրին արդիակաւնացման, պետական խորհրդանշաններու ծնունդին (դրամ, քայլերգ), պետականութեան ամրապնդման գործընթացին (մայրաքաղաքի յատակագծում, բարեկարգում, կալուածային տոմարներու մշակում), կը հակադրուին 1935ի իտալական ներխուժումին: Այս սերունդն է որ օսմանահպատակութենէ կ'անցնի գերմանական, ռուսական, ապա եթովպական հովանաւորութեան եւ՝ քաղաքացիութեան: Ան կ'առնէ հիմնական քայլերը եթովպահայ գաղթօճախը փոխակերպելու սփիւռքեան հայօճախի. կը հիմնէ առաջին համագաղութային վարչութիւնը՝ 1902ին (ծրագիր-կանոնագիրը վերամշակուած 1911ին), Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին՝ 1923ին (մնայուն քահանայով), ապա եւ Ս. Գէորգ

---

<sup>1</sup> Եթովպիոյ Եկեղեցիին սուրբերէն Եւտասիոս մահացած ու թաղուած է կիլիկեան հայկական վանքի մէջ: Եթովպիոյ Եկեղեցիին սուրբերուն շարքին են Գրիգոր Լուսաւորիչը, Տրդատ թագաւորն ու Հռիփսիմէն: Հայ Եկեղեցին եւս իր սուրբերուն շարքին դասած է եթովպական սուրբեր:

եկեղեցին՝ 1928ին (օծումը՝ 1934ին), Արարատեան դպրոցին՝ 1918ին<sup>2</sup>: Հայօճախը աւելի կ'երիտասարդանայ Երուսաղէմի Արարատեան որբանոցի փողերախումբին Եթովպիա պաշտօնակոչումով:

Իսկ եթովպացիներն առաջին սերունդը կը յատկանշուի ասպարէզային բազմազանութեամբ. քաջածանօթ է ամհարերէն լեզուին: Այս սերունդէն շատեր եւս կը ծառայեն կայսեր եւ կայսերական վերնախաւին, կը դառնան պետական պաշտօնատարներ, երկրագործութեան նախարար, բանակի զօրավար, նախարարութիւններու (տնտեսութեան, պաշտպանութեան), պետական տնտեսական (ծխախոտի, կաշեմշակման եւն.) թէ մարզական հաստատութիւններու (ֆութպոլ եւն.), քաղաքապետարաններու պաշտօնատարներ, կ'իրականացնեն պետական բարեկարգումներ (ստրկավաճարութեան վերացում), եւ կը կոփեն տեղաբնիկ պաշտօնատարներ: Այս սերունդը 1945ին կը հիմնէ Արարատ Մարզական Միութիւնը, կը ջանայ հաւասարակշռել արտաքին՝ համահայկական եւ ներքին եթովպահայ օրակարգերու ընդառաջումը: Կ'առնչուի Բ. համաշխարհայինին, ներգաղթին, Հայլէ Սելասիէ կայսեր յետպատերազմեան իշխանութեան վերատիրացումին ու տնտեսական վերելքին, կը բացուի Սփիւռքին:

Իսկ 1970ականներու նորահաս սերունդը, որ համալսարանական մասնագիտութիւններով պիտի նոր որակի նպաստ հաղորդէր երկրին, պետութեան եւ հայօճախին՝ կ'արգելակուի 1974ի զինուորական յեղաշրջումով: Ընկերվարացումը, պետականացման քաղաքականութիւնը կը սեփականագրկէ եթովպահայերը իրենց մեծ ու միջակ գործարաններէն, կալուածներէն, երկրորդ եւ յաւելեալ բնակարաններէն՝ առանց հատուցումի: Բռնահարուածին յաջորդած այլատեսակ անապահովութիւններն ու անկայունութիւնը պատճառ կը դառնան որ հայօճախին վերին խաւը ամբողջութեամբ, իսկ միջին խաւը մեծմասամբ հեռանայ երկրէն՝ գրեթէ անհնար դարձնելով հայօճախին վերականգնումը:

Ամփոփելով՝ եթովպահայութիւնը կը յատկանշուի իր 1880-1930ականներու նախանձի, միջկուսակցական երկպառակութենէ միահամուռ եւ կազմակերպ, մեծ ընտանիք-հայօճախի մը փոխակերպումով: Ան ցանցաւորուած էր միջընտանեկան պսակներով, ամրակուռ էր իր հպարտադիւ տեղական բանաւոր պատմութիւններով եւ ձեռքբերումներով: Ան փաստացի հաւաստիք է որ շուրջ 1000 հոգի հաշուող փոքրամասնական հաւաքականութիւն մը – թիկունքովը շրջանային աւելի մեծ հայօճախի եւ՝ կայացած համահայկական միութեան – կրնայ գոյացնել կուռ, զօդուած հայօճախ մը, իր ազգային հաստատութիւններով ու գոյատեւել, բարգաւաճիլ, նուիրուիլ երկրին եւ կենսական նպաստ բերել անոր տնտեսական-պետական-մշակութային-ընկերային վերելքին: Պայման են սակայն, երկրին տնտեսական-ընկերային-քաղաքական կայունութիւնն ու իշխանութիւններուն ոչ-խտրական քաղաքականութիւնը:

---

<sup>2</sup> 1912ին անձնական նախաձեռնութեամբ կը սկսկին հայերէնի դասաւանդութիւնները: Ս. Սահակ Մեսրոպ դպրոցը կը բացուի 1922ին: Դպրոցները կը միանան 1925-26ին՝ իբրեւ Արարատեան դպրոց, կ'երկատուի տասնամեակի աւարտին եւ կը վերամիաւորուի 1935ին իբրեւ Ազգային Գէորգոճ վարժարան, որ 1993էն կը սկսի ընդունիլ ոչ-հայ աշակերտներ եւս:

## Content of the Book

The book is the second volume of the proceedings of the conference entitled “Armenians of Egypt, Sudan and Ethiopia”.<sup>1</sup> The conference was organized by the Haigazian University-based Armenian Diaspora Research Center and was held in Cairo on April 12 & 13, and at Haigazian University on May 29-30, 2018.

The book includes the papers on the Armenians of Sudan and Ethiopia presented during the conference, a number of additional papers, and their English summaries, a rich appendix, biographies of the contributors, a short bibliography, brief narratives of both Sudan and Ethiopia as well as short narratives on the Armenian communities of both Sudan and Ethiopia and the list of books published by the Haigazian University Press.

The papers included in the volume are the following:

- Dr. Boris Adjemian, “Les Arméniens en Éthiopie jusqu’au milieu du 20<sup>e</sup> siècle”
- Prof. Jon Armajani, “The Constitutions of North Sudan and Ethiopia, and Minority Rights”
- Anna Avagyan, “The Armenian Community of Sudan (brief overview)”
- Greg Basmadjian, “Vahritch Krikor Basmadjian (Architect/Builder): His Life in Ethiopia (1923-1977)”
- Dr. Antranik Dakessian, “A Microhistory of the AGBU Chapter of Ethiopia (1906-36, 1944-63)”
- Dr. Antranik Dakessian, “A Microhistory of the AGBU Chapter of Sudan (1909-45, 1957)”
- Dr. Muhammad Refaat Ellmam, “The Armenians in Sudan and Ethiopia”
- Dr. Tigran Ghanalanyan, “Depopulation of Two African Communities: Armenians’ Emigration from Ethiopia and Sudan”
- Dr. Ardag Maghalian, “Armenian Travelers on Ethiopia and Ethiopian-Armenian Relations”
- Vartkes Nalbandian, “A Compendium of Armenians of Ethiopia (1515-2020)”
- Rubina Sevadjian-Kingwell, “Commentary on the Life and Works of Bedros A. Sevadjian (1918-76), in the Context of His Family and Other Armenians of Ethiopia”

The book is the seventh volume of a series which will feature aspects of the Armenian communities in Middle Eastern countries.

---

<sup>1</sup> The papers on the Armenians of Egypt constituted the first volume.

## الكتاب في سطور...

يغطي هذا الكتاب الجزء الثاني من مؤتمر "الأرمن في مصر والسودان والحبش" الذي نظمه "مركز الأبحاث للشثات الأرمني" في "جامعة هايكازيان"، والذي انعقد في القاهرة بين 12 و13 نيسان وفي حرمها بين 29 و30 أيار 2018. وقد شارك فيه 31 اختصاصياً وأكاديمياً حضروا من الولايات المتحدة، أرمينيا، سوريا، مصر، المملكة المتحدة، الحبش، ولبنان.

يحتوي الكتاب المحاضرات الـ7 التي أُلقيت عن السودان واثيوبيا وخلصاتها، بما فيه السيرة الذاتية للمحاضرين.

في عودة إلى المحاضرات، لقد تنطّرت تباعاً إلى المواضيع التالية:

"دساتير جمهوريتي السودان واثيوبيا وحقوق الاقليات" (البروفيسور جون ارماجاني)؛

"الارمن في اثيوبيا حتى منتصف القرن العشرين" (الدكتور بوريس عجميان)؛

"الجالية الارمنية في السودان (نظرة مقتضبة)" (انّا افاكيان)؛

"الأرمن في السودان واثيوبيا" (الدكتور محمد رفعت الإمام)؛

"الرحالة الارمن عن اثيوبيا والعلاقات الارمنية الاثيوبية" (الدكتور ارداك ماغاليان)؛

"خلاصة وافية عن الارمن في اثيوبيا (1515-2020)" (فارتكيس نالبنديان)؛

"تلخيص عن حياة واعمال بدروس سيواجيان (1918-1976)، ضمن اطار عائلته

وارمن اثيوبيا" (روبينا سيواجيان-كينغويل).

كذلك يضم الكتاب 4 محاضرات إضافية حَمَلت العناوين الاتية:

"فاهريج كريكور باسماجيان (مهندس ومعماري) ، حياته في اثيوبيا بين عامي 1923

و1977" (غريغ باسماجيان)؛

"صفحات من تاريخ نادي الجمعية الخيرية العمومية الارمنية في السودان (1909-

1945, 1957" (الدكتور انترانيك داكسيان)؛

"صفحات من تاريخ نادي الجمعية الخيرية العمومية الارمنية في اثيوبيا (1906-

1936, 1944-1963" (الدكتور انترانيك داكسيان)؛

"انخفاض عدد الجاليات الارمنية من دولتين افريقيتين: نزوح الارمن من السودان

واثيوبيا" (الدكتور ديكرا غانالانيان).

وتجدر الملاحظة إلى أنّ الكتاب هو المجلد السابع من سلسلة "الشثات الأرمني" التي

تصدر تباعاً عن "مركز الأبحاث للشثات الأرمني" والتي تُعنى بتسليط الضوء على واقع الأرمن في دول الشرق الأوسط.

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆ ԳՐԱՑԱՆԿ  
LIST OF BOOKS PUBLISHED BY  
HAIGAZIAN UNIVERSITY PRESS**

- 1) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community*. Edited by Aida Boudjikianian, Beirut, 2009, 35\$.
- 2) Alfred de Zayas, J.D., Dr. Phil., *The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*, Beirut, 2010, 10\$.
- 3) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut, 2011, 30\$.
- 4) Dr. Zaven Messerlian, *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009*, Beirut, 2014, 25\$.
- 5) Dr. Vahram L. Shemmajian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Beirut, 2015, 50 & 60\$.
- 6) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, 2<sup>nd</sup> ed., Beirut, 2015, 30\$.
- 7) *Հաճնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ*, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տազեսեան, Պէյրութ, 2013, 228 էջ, 10\$:
- 8) *Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մարտնագիտական Ցանկ*, աշխատասիրեցին դոկտ. Անդրանիկ Տազեսեան եւ դոկտ. Արմէն Իրնէշլեան, Պէյրութ, 2013, 20\$:
- 9) *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԼԳ./Haigazian Armenological Review, Vol. 33, 2013, 566 էջ, 20\$:
- 10) *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԼԴ./Haigazian Armenological Review, Vol. 34, 2014, 656 էջ, 20\$:
- 11) *Հայկազեան Համալսարան. Հայ Տպագրութեան 500-Ամեակի Ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ 2013*, Պէյրութ, 2014, 104 էջ:
- 12) *Հայկական Անդրասիմանային Տարածականութիւնը եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013)*, խմբ. Անդրանիկ Տազեսեան, Հրատ. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկական Սփիւռք Ա., Պէյրութ, 2014, 246 էջ, 10\$:
- 13) *Հարիւրամեակ Հայոց Յեղասպանութեան. Հերեանքներ եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար 2015)/Armenian Genocide Centennial: Addressing the Implications*.

- Proceedings of the Conference (January 31-February 1, 2015)*, կազմ. Ես խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան/Compiled and edited by Antranik Dakessian, Beirut, 2015, 240 էջ, 10\$:
- 14) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ./Haigazian Armenological Review, Vol. 35, 2015, 944 էջ, 20\$:*
  - 15) Անդրանիկ Տազէսեան, *Լիբանանի Հայօճախը. Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)*, Պէյրութ, 2015, 174 էջ, 10\$:
  - 16) Յակոբ Ա. Եագուպեան, *Քննադատական Մտածողութիւնը Լիբանանահայ Վարժարաններու Մէջ*, Պէյրութ, 2016, 158 էջ:
  - 17) *Իմ Ընդանիքիս Պատմութիւնը*, կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տազէսեան, Պէյրութ, 2016, 296 էջ:
  - 18) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԶ./Haigazian Armenological Review, Vol. 36, 2016, 700 էջ, 20\$:*
  - 19) *Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի Մը Երաժշտացումը*, աշխ.՝ Անդրանիկ Տազէսեան, Պէյրութ, 2017, 670 էջ, 20\$:
  - 20) *Լիբանանի Հայերը (Բ.) Գիտաժողովի Նիւթեր (14-16 Մայիս 2014)/Armenians of Lebanon (II) Proceedings of the Conference (14-16 May 2014)*, խմբ. Ա. Տազէսեան, Պէյրութ, 2017, 366 էջ, 20\$:
  - 21) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume I, 1922-1972*, Beirut, 2017, 654 pages, 30\$:
  - 22) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume II, 1972-2017*, Beirut, 2017, 680 pages, 30\$:
  - 23) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԷ./Haigazian Armenological Review, Vol. 37, 2017, 720 էջ, 20\$:*
  - 24) *Սուրիոյ Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (24-27 Մայիս 2015)/Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* (2018), խմբ. Ա. Տազէսեան, Պէյրութ, 2018, 720 էջ, 30\$:
  - 25) Aghop Der-Karabetian, *Armenian Ethnic Identity in Context: Empirical and Psychosocial Perspective*, Beirut, 2018, 270 pages, 20\$:
  - 26) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ./Haigazian Armenological Review, Vol. 38, 2018, 852 էջ, 20\$:*
  - 27) Hagop Babigian, *The Adana Massacres: An Eyewitness Account*, translated and annotated by Dr. A. B. Gureghian, foreword (and Overview) by Dr. A. B. Gureghian, Beirut, 2018, 140 pages, 10\$.
  - 28) *Յորդանանի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (22-24 Մայիս 2016)/Armenians of Jordan: Proceedings of the Conference (22-24 May 2016)* (2019), խմբ. Ա. Տազէսեան, Պէյրութ, 2019, 520 էջ, 30\$:
  - 29) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԹ./Haigazian Armenological Review, Vol. 39, 2019, 928 էջ, 20\$:*

- 30) *The Symbolism of Water in Religion, Proceedings of an interreligious conference on water and Religion*, Religion, Education and Contemporary Concerns, vol. 1, edited by Wilbert van Saane, Beirut, 2019, 166 p., 10.000LL.
- 31) Հ.Բ.Ը.Միութեան Հաճընի Որբանոցը, 1919-1920/*The AGBU Hadjin Orphanage, 1919-1920*, Introduction, translation and annotation by Antranik Dakessian, Beirut, 2020, 288 էջ:
- 32) *The Relevance of Intercultural Studies in the 21<sup>st</sup> Century, Proceedings of the Symposium*, Religion, Education and Contemporary Concerns, Vol. 2, edited by Arda Ekmekji, Beirut, 2020, 88 p., 10.000LL.
- 33) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Խ./*Haigazian Armenological Review*, Vol. 40, 2020, 928 էջ, 20\$:
- 34) Այիս Քիփ Քլարք, Նամակներ Կիլիկիայէն (Օրագրութիւն), թարգմ., ներած. եւ ծանօթ.՝ Անդրանիկ Տազէտեան, Հրատ. Հաճնոյ Հայրենակցական Միութեան, Պէյրութ, 2020, 168 էջ:
- 35) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Յորելեանական Հատոր (1970-2020), 2020, 422 էջ, 30\$:
- 36) Իրաքի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (29-31 Մայիս 2017)/*Armenians of Iraq: Proceedings of the Conference (29-31 May 2017)*, Խմբ. Ա. Տազէտեան, Beirut, 2021, 770 էջ, 30\$:
- 37) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԱ./*Haigazian Armenological Review*, Vol. 41, 2021, 816 էջ, 20\$:
- 38) *Centennial of Greater Lebanon: Constituting the Idea of a “Lebanese Identity” Perspectives from the Lebanese Arts and Letters/ مئويّة لبنان الكبير: تشكيل الهوية اللبنانيّة انطباعات من التراث اللبناني في الاداب والعلوم (Proceedings of the Symposium Organized on the Centennial of Greater Lebanon, February 5, 2021)*, edited by Antranik Dakessian, Beirut, 2022, 128 pages.
- 39) Վահան Թէքէեան, Արեւի Խմբագրականներ, (1915-1945) (Կազմ. եւ Խմբ.՝ Պետրոս Թորոսեան, Անդրանիկ Տազէտեան), Պէյրութ, 2022, 706 էջ:
- 40) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ. Գիրք 1, *Haigazian Armenological Review*, Vol. 42/1, 2022, 644 էջ, 20\$:
- 41) Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 1 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/*Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018)*, Խմբ. Ա. Տազէտեան, Պէյրութ, 2022, 784 էջ:
- 42) *Dealing with the Past, Memory for the Future: A Compilation of Haigazian University Project Submissions*, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 1, Beirut, 2022, 156 p.
- 43) Noura Amikah, *The Narratives of the Survivors of the Beirut Port Blast in Relation to their Recollections of Past Tragedies in Lebanon*, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 2, Beirut, 2022, 108 p.

- 44) Reem Rehimi, *Anxiety, Depression, and Persistent Complex Bereavement Among the Families of the Enforced Disappeared and Deceased during the Lebanese Civil War*. “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 3, Beirut, 2022, 66 p.
- 45) *Religion, Education, and Peace, Proceedings of an Online International Conference Held in March 2021*, Religion, Education and Contemporary Concerns, Vol. 3, Jon Armajani and Wilbert van Saane(eds.), Beirut, 2021, 162p.
- 46) Հայկազեան Հայագիտական Հանդես, Հոր. ԽԲ. Գիրք 2, *Haigazian Armenological Review*, Vol. 42/2, 2022, 656 էջ, 20\$:
- 47) Efronia Khatchadourian, *The Story of My Life*, translated by Herant Katchadourian, Haigazian University Press, Beirut, 2023, 260 p.
- 48) Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 2 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/*Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018)*, Խմբ. Ա. Տազէտեան, Beirut, 2023, 350 էջ:
- 49) هرانت دينك, *امتان قريبتان... جاران بعيدان*  
 translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012, 160 էջ, 10\$:
- 50) د. نورا أريسيان, *100 عام على الإبادة الأرمنية: 100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)*, Beirut 2015, 10\$:

**Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ Հայերը/2**  
**Armenians of Egypt, Sudan and Ethiopia/2**  
**Տպաքանակ՝ 250**  
**Գին՝ Լիբանան 200,000L. Ոսկի**  
**Արտասահման 30 Տոլար**  
**Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.**

**Haigazian University**  
**Armenian Diaspora Research Center**  
**P.O.Box 111748 Beirut Lebanon**  
**Fax: 01349230/1, 03712058**  
**Email: [adakessian@Haigazian.edu.lb](mailto:adakessian@Haigazian.edu.lb)**



